

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





1

Ն. ՈԳՆԵՎ




# ԿՈՍՏՅԱ ՈՅԱԲՅԵԿԻ

ՈՐԱԳ  
ԻՇԵ



Մասոն 298

ՊԵՏՏԵՐԱԾ-1929-ՅԵՐԵՎԱՆ




882

Ն. 09664

# ԿՈՍՏՅԱ ՐՅԱԲՑԵՎԻ ՈՐԱԳԻՐԸ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՑԵՐԿՈՐԴ ԱՍԻՔԱՆԻ ԴՐՈՅԻ ԿՅԱՆՔԻՑ

Վարոս կրնատումներով քարզի. ՍԻՄԱԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵԱԿ. Ա. 1929

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեալ. № 1733 թ.      Հրատ. № 950      Պատկ. № 236  
Տիրաժ 3000

## ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐ

15 սեպտ. 1923 թ.

Արդեն սեպտեմբերի կեսն ե, բայց դպրոցում պարապմունքները դեռ չեն սկսվել: Թե յերբ կակսվեն—հայտնի չե: Ասում եյին, թե դպրոցը վերանորոգում են, իսկ յես եսոր առավոտը զնացի դպրոց ու տեսա, վոր վոչ մի վերանորոգում չկա: Ընդհակառակը ենտեղ վոչվոք չկար, և մարգ ել չգտա, վոր հարցնեմ: Դպրոցը դատարկ եր և զուռ ու պատուհանը բաց: Հանապարհին մի յերեխայից յերեք կիտրոնով գնեցի այս տեսրակը:

Յերբ տուն լեկա, մտածեցի, վոր անելու բան չկա, ու վորոշեցի որագիր գրել: Այս որագրում յես զանազան պատահած դեպքեր կգրեմ:

Յես շատ եմ ուզում «Կոստանդին» անունը փոխել «Վլադիկեն»-ի թե չե «Կոստյա» անունով շատ շատերը կան: Բացի դրանից, Կոստանդինը՝ դա տաճկական մի թագավոր եր, վոր տիրեց Կոստանդնուպոլիս քաղաքին, իսկ յես, Սերյոժա Բլինովի ասածի նման, վեցերորդ հարկից ել չեյի թքի նրա վրա: Բայց յերեկ գնացի միլիցիատուն, ու այնտեղ ինձ ասացին, վոր մինչև 18 տարեկանը չի կարելի: Կնշանակի, դեռ յերկու տարի ու կես պետք ե սպասեմ: Այսու:

16 սեպտեմբերի.

Յես կարծում եյի, թե ստիպված կլինեմ մտածել, թե ինչ գրեմ որագրումս. բանից զուրս ե գալիս, վոր ինչքան ասես բան կա գրելու: Եսոր առավոտան գնացի Սերյոժկա Բլինովի մոտ: Նա ասաց, վոր դպրոցում պարապմունքներն սկսվում են ամսի քսանին: Բայց ամենազլիսավորը իմ և Սերյոժկայի խոսսկցությունն եր լինա Գ-ի մասին:

Նա ինձ ասաց, վոր յես եդ աղջկա հետ ել ման չգամ, վորովհետեւ նա կրոնավորի աղջիկ ե, ու ինձ համար, իբրև աշխատավորի վորդու, ամոթ ե ընդհանուրի ուշադրությունն հրավիրել ինձ վրա: Յես նրան պատասխանեցի, թե նախ յես վոչ մի ընդհանուր ուշադրություն չեմ հրավիրում ինձ վրա, և հետո՝ լինան մեր խմբիցն ե, ու յերկուս մի նստարանի վրա յինք նստում, ուստի և միանգամայն հասկանալի յե, վոր յես նրա հետ եմ ման գալիս: Բայց Սերյոժկան ինձ պատասխանեց, վոր պրոլետարական ինքնազիտակցությունը այդ թույլ չե

տալիս և, բացի գրանից, դպաշխների և նախկին բոլոր աշկոմների կարծիքով յես (իրեր թե) նրա վրա վատ ազգեցություն եմ ունենում, վոր նա սովորելու փոխարեն փողոցներում թափառում և ինձ հետ և առհասարակ կարող ե գաղափարականապես փոտել Սերյոժան այն ել ասաց, վոր յեթե ուզում ես կոմմոնոլի մէջ մանել պետք և աղջիկների հետ, իրեւ այդպիսիների հետ, ամեն տեսակ ման գալուն վերջ տասւ Յես ու Սերյոժկան իրար հայհոյեցինք, յես յեկա տուն և այժմ գրում եմ որագրումս այն, ինչ վոր շասացի Սերյոժկալին Լինան, իրեւ կին, ինձ համար դոյություն չունի, այլ միայն իրեւ ընկեր. և ընդհանրապես յես մեր աղջիկներին մի տեսակ արհամարհանքով եմ նայում նրանք շատ են հետաքրքրվում փալասներով ու ժապավիճակներով ու հետո պարերով; իսկ վոր ամենագլխավորն ե, բամբասանքներով; Յեթե բամբասելու համար բանտ նստեցնեյին, աստ մեր խըմբից վոչ մի աղջիկ չեմ մնաւ: Իսկ վոր անցյալ տարրի յես ու Լինան միասին կինու եյինք գնում, զե զա նրանից եր, վոր ուրիշ վոչիք չկար, վոր հետը գնալի: Իսկ Լինան ել ենապես սիրում և կինոն, ինչ պես յես Զարմանալու վոչինչ չկա:

Անհամբերությամբ սպասում եմ դպրոցի բացվելուն Դպրոցն ինձ համար նույնն ե, ինչ վոր տունը: Ու նույնիսկ ավելի հետաքրքիր ե:

## 20 սեպտեմբերի.

Վերջապես դպրոցը բացվեց: Սոսկալի ազմուկ ու իրարանցում եր, Մեր խմբում բոլոր հին ընկերներն են, ավելացել և միայն յերկու աղջիկ: Մեկը—մի շեկ թարթիչներով աղջիկ ե, մազերը հուս արած և պրոպելլերի նման ժապավեն կապած: Նա թեև արտասահմանցի չե, ուսւ ե, բայց անունը Սիլֆիդա յե: Աղջիկներն իսկուն Սիլվա դրեցին նրա անունը: Նրա ազգանունը Դուրինինա յե: Իսկ մուսը—մի սեռուկ աղջիկ ե, մազերը կտրած, սև շորերով և առհամարակ բոլորովին սե, ու իսկի չի ծիծաղում: Հենց վոր նրան մի բան ես ասում, նա իսկուն շոգեշարժի նման «Փու, փու-փու, փփի-փփու, փփի» յե անում: Հետո նա շարունակ կուզեկուզ և անում և ստվերի պես ե ման գալիս: Նրա անունը Զոյա Տրավենիկովա յե:

## 27 սեպտեմբերի.

Մեր դպրոցում դալտոն-պլան են մտցնում: Սա հնապիսի մի սիստեմ ե, վոր դպաշխները վոչինչ չեն անում, ու աշակերտներն ստիպված են ամեն բան իրենք իմանալ: Գոնե յես ալդպիս հասկացաւ Հիմիկա նման դասեր չեն լինի, այլ առաջադրություններ կտրվեն աշշակերտներին: Ալդ առաջադրությունները կտրվեն մի ամսվա համար. կարելի յե պատրաստել և դպրոցում, և տանը. իսկ յերբ պատրաստել

ևս,—զնա լարորատորիա, պատասխանիրու Դասարանների տեղ լարուրատորիաներ կլինին: Ամեն մի լարորատորիայում մի դպաշխ կլինի, իրք մի տեսակ մասնագետ իր գործի որինակ, մաթեմատիկականում քարշ կզա Ալմակֆիշը, հասարակագիտականում՝ Նիկպետովը և այլն: Նրանք ինչպես սարդեր, իսկ մենք՝ ճանձեր:

Մենք վորոշեցինք այս տարվանից բոլոր դպաշխների ազգանուններն, արագութեան համար, կրճատել Ալեկսեյ Մակսիմիչ Ֆիշերը այժմ կլինի Ալմակֆիշ, Նիկոլայ Պետրովիչ Ոժիգովը՝ Նիկպետով:

Լինայի հետ չեմ խոսում: Նա ուզում է իմ մոտից ուրիշ նստարանի նստել:

### 1 նոկտեմբերի.

Դատոնն-պլանն սկսվեց: Նստարաններն ամեն տեղից դուրս բերեցին, միայն մի դասարանում թողեցին—ենտեղ լսարանը կլինի: Աշակերտական նստարանների տեղ յերկար սեղաններ ու նստարաններ բերեցին: Յես ու Վանյա Պետուխովն ամբողջ որը թափառում ելինք արդ լարորատորիաներում և յես շատ հիմար դրության մեջ եյի:

Դպաշխներն ել գեռ կարգին չեն հասկացել, թե ինչ պիտի անհինանց ես դալտոնի հետ: Նիկպետովը, ինչպես միշտ, բոլորից խելոք գուրս յեկավ: Նա պարզապես յեկավ ու դաս տվեց, ինչպես միշտ երտայիս, միայն թե մենք վոչ թե աշակերտական, այլ հասարակ նստարանների վրա ելինք նստած: Իմ կողքին Սիլվիդա Դուբինինան եր նստած, իսկ կենան բոլորովին հակառակ ծալլումն եր: Իս, գրողը տանի: Սկի ել պետքս չի:

Եսոր բոլորիս ծիծաղեցրեց Զոյյա Տրավուհիկովան: Նա սկսեց աղջիկներին քարողեր իրը թե մեռելները գիշերները վեր են կենում և հայտնվում կենդանիներին: Տղաներից միքանիսը մոտեցան ու ականջ դրին: Իսկ Վանյա Պետուխովն ել հարցրեց.

— Ե, հետո, գու ինքդ մեռելներին տեսել ես:

— Հա, այս, տեսել եմ:

— Բա ի՞նչ տեսակ են մեռելները, հարցնում ե Վանյան:

— Նրանք ենպես կապույտ են ու գունատ, ու կարծես շատ յերկար ժամանակ հաց չեն կերել, ու վոռնում են:

Եստեղ Զոյյան դեմքը սարսափելի կերպով ծամածոեց և ձեռքերը տարածեց: Վանյան ել ասաց.

— Դու եդ բոլորը սուս ես ասում: Իմ կարծիքով մեռելները գորշ-մուգ-մոռի գույնի յեն և ամ եսպես խանչում են՝ խու, խույի...—ու խոճկորի նման խոնչացրեց:

Զոյան նեղացավ ու իսկուն ել ֆոթկացրեց, շողեշարժի նման Փռփռացրեց, իսկ տղերքը ծիծաղեցին:

### 3 հոկտեմբերի.

Դալտոնից խելքը գլխին բան չի դուրս գալիս: Վոչվոք վոչինչ չի հասկանում, վոչ զպաշխները, վոչ մենք: Դպաշխներն ամեն իրի կուն շարունակ խորհրդակցում են: Իսկ մեզնում միակ նոր բանն այն է, վոր աշակերտական նստարանների տեղ հասարակ նստարաններ են և զրքերը դնելու տեղ չկա: Նիկպետոժն ասում ե, վոր այժմ դա իսկի հարկավոր ել չի: Տվյալ առարկայի բոլոր զրքերը պետք ել լարորատորիայում մի հատուկ պահարանում լինեն: Ու ամեն մարդ կիերցնեն են, ինչ վոր իրեն պետք ե: Բայց դեռ պահարաններ ել չկան:

Տղերքն ասում են, վոր եղ ինչ-վոր մի լորդ Դալտոն և յեղել—բուրժուլի մեկը—և վոր նա յե հնարել եղ պլանը: Յես եսպես եմ ասում: մեր ինչին և պետք եղ բուրժուական պլանը Են ել են ասում, վոր եղ լորդին կերպում եյին միայն սագի լյարդով ու զոնդողով: Երբ նա հնարում եր եղ պլանը: Նրան մի ութերորդ սկ հաց ու փառած ձուկ պետք ետապիր ու զիտեյիր: Կամ թե պետք ետապիր զյուղեգյուղ թափառել, վոնց վոր մենք: Թե չե սագի լյարդ ուտելով: ով ասես, բան կննարեր:

Սիլֆիդան շարունակ պտույտ-պտույտ ետապում, ու նրա կողքին նստելն անհարմար է: Յես միքանի անգամ սատանի ծոցն ուղարկեցի: Նա յել ինձ սրիկա ասաց: Աղջիկներին նրա սոցիալական ծագման մասին եմ իմացա, վոր նա—զրաշարի աղջիկ է: Ափսոս վոր նա բուրժույի աղջիկ չե, թե չե յես նրան ցույց կտալի:

### 4 հոկտեմբերի.

Եսոր ընդհանուր ժողով կար—ինքնավարության մասին: Վերլուծ ծում ելին անցյալ տարվա թերությունները և թե ինչպես պետք են աղատվել դրանցից: Գլխավոր թերությունը—զա տուգանքի մատլանն է: Բոլոր դասկոմները, նույնիսկ ամենալավերը, հենց վոր մի բան ելինում, իսկույն տուգանքի մատյանով են սպառնում: Բայց միենանույն ե, բան չի դուրս գալիս: Վերջիվերջո վորոշեցին մի ամիս վերացնել ալբատուգանքները, փորձել թե դրանից ինչ դուրս կդա: Բոլորը շատ ուրախ եյին և «ուռա» ելին կանչում:

Իսկ Զոյա Տրավերկովան բոլորիս զայրացրեց: Վերկացավ և անդըրշիմիւն ձախով ասում է:

— Իմ կարծիքով՝ պետք ետաթ պատժասենյակը գցել, մանականդ տղաներին: Այլ կերպ նրանց հետ չես կարող վարվել:

Բոլորն ենպես են գոռում, ենպես են սուլում: Սկզբում բոլորը զայրացան, հետո նա ներողություն խնդրեց և ասում ե, թե կատալ-

Եյր անում: Հավ կատակ ե, խոսք չկա: Նա ամբողջովին սև ե, վոտքից գլուխ, ու հիմա նրան «Սև Զոյա» յեն ասում:

Բնդհանուրից հետո նոր աշկոմի ժողով լեզավ: Նրանք մի ամսով են ընտրված:

5 նոլիտեմբերի.

Նոր մեր ամբողջ խումբը վրդովվեց: Ա՛յ, ինչ եր պատահել: Նոր դպաշխուհի յեր լեկել Յելենա Նիկիտիչնա Կառլբովա—բնագիտուհի, իսկ մեր ձևով Յելնիկիտկա: Ակսեց առաջադրություն տալ, ու ամբողջ խմբին ասում ե.

— Յերեխաներ:

Են ժամանակ յես վեր կացա և ասում եմ.

— Մենք յերեխաներ չենք:

Են ժամանակ նա ասում ե.

— Ի՞արկե, զուք յերեխաներ եք, և յես ձեզ ուրիշ կերպ չեմ ել ասի:

Ապա յես նրան պատասխանում եմ.

— Թաղաքավարի յեղեք, խնդրեմ, թե չի կարող եք և զուրս կորչել:

Ահա բոլորը: Ա բողջ խումբն իմ կողմը բռնեց, իսկ Յելնիկիտկան ամբողջովին կարմրած խոսում ե.

— Այդ դեպքում նեղություն կրեցեք՝ զուրս գնալ դասարանից, Յես պատասխանեցի:

— Նախ սա դասարան չե, այլ լաբորատորիա, ու մեզ ել դասարանից զուրս չեն անում:

Նա ասում ե.

— Անկիրթ ես:

Յես ել՝

— Դուք ավելի հին դպրոցի ուսուցչուհու լեք նման. Եղ միայն նրանք եղանակ իրավունքներ ունելին:

Ահա բոլորը: Ամբողջ խումբն իմ կողմն եր, Յելնիկիտկան դպաշմածի նման դուրս թռափ: Ել պրծմանք... կսկսվի: Աշկոմը կխառնվի, հետո դպաշխանոցը (դպաշխաների ընդհանուր ժողովը), հետո դպրոցական խորհուրդը, իսկ իմ կարծիքով, ես բոլորը դատարկ բան ե, և Յելնիկիտկան ուղղակի հիմար ե:

Հին դպրոցում յերեխաների գլուխը լվանում եյին դպաշխաները, ինչպես ուզում եյին: հիմա մենք թույլ չենք տալ: Նիկակետոժը «Թեմականցու պատմություններ» գրքից կարդացել ե մեզ, վոր նույնիսկ մեծահասակ պատանիներին ծեծում եյին ուղղակի դասարանում, շեմքի մոտ, բացի դրանից յես ինքս ել եմ կարդացել զանազան գրքե-

բում, թե ինչպես եյին ստիպում անգիր անել, աշակերտներին զանազան ածականներ ու մականուններ ելին տալիս Բայց ևս ժամանակվայերին իսկի գաղափար ել չունեյին ես ժամանակների մասին, վոր մենք ստիպված ենք ապրել Չե վոր մենք քաղց, սառնամանիք ու քայլայում ենք տեսել ու կրել, մենք ստիպված ենք լողել և ընտանիք կերակրել, և ինքներս հաղարավոր վերստ հեռու հացի գնալ իսկ վուանք քաղաքացիական կովին ել են մասնակցել Դեռ յերեք տարի յել չի անցել ինչ կովը վերջացել եւ Յելնիկիտկայի հետ պատահած աղմուկից հետո յես ես բոլորի մասին մտածեցի, և իմ մտքերի պարզաբանման ու ստուգման համար ուզում եյի խոսել Նիկպետոմի հետ, բայց նա զբաղված եր. ամրող լարուրատորիան լիքն եր Այս ժամանակ յես գնացի մաթեմատիկականը՝ Ալմակիթիշի մոտ ու պատմեցի նրան, թե յես ինչ եյի մտածում մեր կյանքի մասին, Ալմակիթին ինձ անհասկանալի պատասխան տվեց, Նա ինձ ասաց, վոր այն բոլորը, ինչ վոր մենք ապրել ենք, ցուց ե տալիս մեր ժամանակացրջանի առատությունը—քանակապես, իսկ վորակապես նա բարու և չարի են կողմն ե գտնվում:

Յես ամենեին եղ չեյի մտածում. յես ուզում եյի միայն ապացուցել, վոր իրավունք չունեն մեզ հետ վարվել ինչպես յերեխաների կամ պեշկաների հետ, բայց չկարողացանք մինչև վերջը խոսել, վորովհետև հենց եղտեղ յերեխաներ յեկան—մաթեմատիկալից հարցնելու նրան. Ինձ այնպես ե թվում, վոր վոչ բարություն կա, վոչ չարություն. ավելի ճիշտ՝ ինչ վոր մեկի համար չար ե, մուսսի համար կարող ե բարի լինել և ընդհակառակը. Յեթե խանութպանը հարյուր տոկոս ե վաստակում, դա նրա համար բարիք ե, իսկ գնողի համար՝ չարիք. Գոնե քաղզրագիտությունից եղած ե յերեսում:

### 6 հոկտեմբերի.

Այս վրա տվին առաջադրությունները հա... Մի ամսում, նույն իսկ եղքան ել չկա, այսինքն մինչև նոյնմբերի 1. ը պետք ե անազինքանակությամբ զրբեր կարդալ, տասը զեկուցում զրել, ութ հատ դիագրամմա գծել, դեռ բերանացի յել պատասխանել կարողանալ, այսինքն նույնիսկ չպատասխանել, այլ անցածի մասին խոսել, զբաղվել. Ամեն մի աշակերտ իր առաջադրությունն ունի. Ու բացի դրանից, պետք ե ելի գործնական աշխատանքներ կատարել ֆիզիկայի, քիմիայի և եկատրուտեխնիկայի առաջադրություններից. Ուրեմն մի ամբողջ շաբաթ պետք ե քարշ գանք ֆիզիկական լաբորատորիալում: Եսոր ինձ ու Սիլիկոդային աշկոմ կանչեցին: Իսկ աշկոմում նստած են Սերբութա Բլինովը և ուրիշները: Բանից զուրս ե գալիս, վոր նա բամբառել ե ինձ, վոր յես նրան ամեն տեսակ խոսքերով հայհոյում եմ—ինչ-

այս հերթի կանգնելիս: Ամենեին, եղալիսի բան չի լեզել: Ցերք դուրս լեկանք, յես նրա մաղերի ժապավենից ձիգ տվեցի, նա գոռաց ու—պուլի: Չե, աղջիկների կողքին նստելը—ինտելիգենտություն եւ եգուց ուրիշ տեղ կնատեմ:

### 7 նոկտեմբերի.

Դպաշխանոցում վորոշել են, վոր իմ ու Յենիկետկայի գործը հանձնեն դպրոցական խորհրդին, և առաջարկել են գործը քննել ընդհանուր ժողովում: Ընդհանուր ժողովը վաղն եւ ինչով կվերջանա—պարզ չե, բայց մենք թույլ չենք տա մեզ յերեխա ասել:

Այսոր լույս տեսալ «Կարմիր աշակերտ» պատի լրագրի առաջին համարը: Սկզբում բոլորը հետաքրքրվում եյին, իսկ հետո բանից դուրս լեկավ—ախմախություն: Հոդվածիկները ձանձրալի եյին: Բոլորը սովորելու և իրենց լավ պահելու մասին ե զրգած: Խմբագրական կոլլեգիան են—Սերյոժա Բիլինովը և ուրիշները:

Մի տոմս ստացա, «Շուր զուր ես կոտրատվում, աղջիկները բոլորն ել չեն ուղղում քեզ հետ վոչ մի գործ ունենալու: Իսկ լես չզիտեմ, թե եղ վոնց եմ կոտրատվում: Հավանականաբար—Լինան եւ Նաշատ մտերմացել են նոր աղջկա հետ—Սև Զոյայի: շարունակ նստում են վառարանի մոտ ու փսփսում: Նույնիսկ են ժամանակ, լերը բոլորը խաղում են, նրանք վառարանից պոկ չեն դալիս: Հավանականաբար նրանք շատ են ուղղում, վոր մեկը մոտ-մոտ անի իրենց, իսկ տղաները նրանց վրա ուշագրություն չեն դարձնում: Շատ հարկավոր եւ Սև Զոյային «Փաշխատուհի» յել են ասում, վորովհետև Փաշխատներն ել են միշտ սև շոր հագնում: Իսկ նա թեև չի հասկանում, բայց չարանում եւ Ընդհանրապես մեր աղջիկները քաղաքականությունից ավելի քիչ են հասկանում, քան տղաները:

### 8 նոկտեմբերի.

Յես հենց նոր յեկա դպրոցից: Ընդհանուր ժողովը, ուր քննվում էր իմ ու Յենիկետկայի գործը, նոր վերջացավ: Ամենից խելոք խոսում եր Նիկապետոֆը: Նա ասաց, վոր եղ բոլորը դատարկ բաներ են, վոր ամեն մի դպրոցական աշխատավոր պետք ե գիտենա, թե ինչպես պետք ե մոտենալ աշակերտներին, իսկ Յելենա Նիկիտիչնան այդ մերձեցումը դեռ չի մշակել, կմշակի հետու: Իսկ իմ մասին դպաշխներն ստացին, վոր լես կոպիտ պատանի յեմ, և ինձ վրա բարոյական աղդեցություն պետք ե ունենալ: Իսկ Զինայիդիշչան կամ Զին-Պալնան—դա մեր վարիչն եւ ասաց, վոր յես խոր տղա յեմ, բայց իմ բնաղդները զսպել չգիտեմ: Թե եղ ինչպես պետք ե զսպել, չգիտեմ, բայց յերբ նա ինձ յերեխա յե ասում—տանել չեմ կարող: Բայց Զինայիդիշչայի հետ վիճելը դժվար եւ մի բան լինի թե չե, կկանչի ուսուցչանոց

ու կսկսի նախատել։ Եդ տեսակ նախատինքից հետո ամբողջ որը թթվում ես։

Ելի կրկին ընդհանուր ժողովի մասին։ մեկ ել վոչ ես, վոչ են, գուրս յեկավ ֆաշիստուհին, Զոլա Տրավիկովան, ու ասում ե, վոր իմ ձեռքից հանգիստ չկա, վոր աղջիկների յետեիցն եմ ընկնում և այլն։ Եստեղ յիս սոսկալի զալրացաւ նախ յիս նրան վոչ մի խոսք չիմ ասել, յերկրորդ, նա վոչ մի ապացուց չի կարող բերեր Մեր ամրողջ խումբը թշաց նրա վրա, վորովհետեւ դա խմբի ամեն տեսակ որենք-ների դեմ ե—ընդհանուր ժողովում հենց եր ընկերոջ դեմ ցուցմունք-տալ վերջը վորոշեցին, վոր յիս սոսկալի զալրացաւ նախ յիս նրան վոչ մի խոսք չիմ ասել, յերկրորդ, նա ներողություն խնդրի, վոր անդ յերեխաներ ասաց։ Հիմա գործը կանցնի դպրոցական խորհրդին։ Յես կարծում եմ, վոր Յելնիկիտկան կսկսի բնագիտությունից ինձ սղմել, ուրիշ վոչինչ։

Վանկա Պետուխովի հետ ելինք տուն գալիս։ Վանկան ել ինձ ասաց, վոր անձնատուր չինեմ, վոր անձնատուր լինելն ավելի վատ ե։ Վանկան ծխախոտ ե վաճառում, բայց թուլլավության թուղթ չունի։ Ավագ միլիցիոները Վանկային քշում եր համ քշում իր անկունից, բայց Վանկան իսկի անձնատուր չեր լինում, հիմա միլիցիոները ձանձրացել ե, ու Վանկան ազատ առուտուր ե անում։ Դե, նա չի կարող առուտուր չանել, վորովհետեւ հիվանդ հորաքույր ունի և քույր, — իսկ միակ աշխատողն ինքն ե—բացի դրանից պետք ե և սովորի։ Լավ ե, վոր յիս հայր ունեմ—դերձակ ե, յիս ել նրա միակ վորդին եմ, թե չե յիս ել ստիպված կլինելի ծխախոտ վաճառել։

### 10 նոկտեմբերի.

Եսոր լսարանում Յելնիկիտկան առաջազրություն եր բացատրում։ իմ կողքին, նույն նստարանին նստած եր Սիլվան ու շարունակ պառկատ-պառկատ եր անում, մեկ ել հանկարծ արմունկս կպավ նըրան—նա յել ճշաց։ Յելնիկիտկան հարցրեց, թե եդ ինչ ե, Սիլվան ել, իհարկե, բամբասեց։ Յելնիկիտկան ասաց, վոր յիս խուլիզան եմ, յիս ել նրան հարցրի, թե «խուլիզան» ինչ ե և ինչպես պետք ե հասկանալ այդ բառը։ իսկ նա կարգին չկարողացավ բացատրել։ Հետո յիս նիկպետոժին հարցրի, թե ինչ ե «խուլիզանը»։ Բանից դուրս ե գալիս, վոր խուլիզանը են տեսակ մարդ ե, վոր մի ուրիշին չարիք ե հասցնում—առանց վորևե շահ ունենալու։ Իսկ Սիլվային յիս ինչ չարիք հասցրի։ Նրա աչքը հանեցի, ինչ ե։

### 11 նոկտեմբերի.

Եսոր, հայտնի չե թե վորտեղից, լույս տեսավ մի նոր պատի լը-րագիր—«Ի՞սա»։ Եդ «Ի՞քս»-ում բոլորին ներկած ե, ե՛ դպաշխներին, և՝

Դալտոնին, և՝ աղջիկներին, վոր ծածուկ պարում են, իսկ վոր գլխավորն ե, «Կարմիր աշակերտ»-ին:

Դալտոնի մասին մի վոտանավոր կար: Ենքան դուք յեկավ ինձ, վոր արտագրեցի:

Բանն այն ե, վոր լարորատորիաները հենց սկզբից ել դատարկ մնացին: Ճիշտ ե, դպրոցական զրադարանից քաղցրադիտության բուլոր գրքութիւները տարել են հասարակագիտականը, իսկ ակվարիումն ու կոլեկցիաները տարել են բնագիտականը—բայց թե հենց եղ ե: Այնինչ իսկապես պետք ելինի, վոր ամեն մի լարորատորիայում տվյալ առարկայի վերաբերյալ ամեն տեսակ գրքեր ու պիտույքներ լինին: Այն ժամանակ աշակերտը կարող ե ազատ շարժվել, տնօրինելու աշխատանքները և իսկապես պատրաստել առաջադրությունները:

12 նոկտեմբերի.

Մեծ դասամիջոցին մենք դահլիճում տրեխ ելինք խաղում: Իսկ տրեխը՝ դա ձմեռվա խաղ ե—Փուտրոլի պես: Տրեխը մենք սանդուխքների տակն ենք պահում ու ենտեղից հանում ենք, իերը պետք եխաղանք: Բոլորը մի շրջան են կազմում և վոտքով սկսում են, ինչքան ուժ ունեն, հենց եղ տրեխը զցել, վոր դուրս շպրտեն շրջանից: Իսկ մեջտեղը մեկը կանգնած ե, վորը բռնում ե տրեխը: Յեթե բռնեց, նա կանգնում ե նրա տեղը, ով վերջին անգամ խփել եր վոտքով: Եղակես խաղացինք-խաղացինք, տրեխը սավառնակի պես եր թուչում, մեկ ել հանկարծ լես խփեցի, տրեխը շրջանից դուրս թռավ և ուղիղ Զինալիդիշչայի յերեսին: Այդ ժամանակ նա զահլիճ եր մտնում: Այս կատաղեց, այս փրփրեց: Իսկուն վոտքը գետին խփեց,—դա նրա սովորությունն եր,—ու աղաղակեց:

— Խնդրեմ դադարեցնեք: Եղ ժգ եր:

Բոլորը լուցին: Եստեղ նա սկսեց վողորմելի խոսքեր ասել: — Ես կարծում եյի, թե մեր դպրոցում դեռ կա են որենքը, վոր մեղավորնենքը խոստովանում ե, նա վախկոտ ե... և այլն:

Եես չհամբերեցի և հարցրի:

— Իհարկե, մեղավորը պետք ե խոստովանի, միայն թե ինչ ե նրա մեղքը:

— Այս,—պատասխանեց Զինայիդիշչան, — վոր իրեն խիստ շարժումները չի զսպում ու հաշվի չի առնում, վոր կարող են ամեն տեսակ մնանակը առաջ գալ:

Են ժամանակ ասացի, վոր յես եմ: Զինայիդիշչան մոտեցավ ինձ, ձեռքից բռնեց ու ասաց:

— Գնանք:

Եստեղ լես մի տեսակ քարացա ու նրա յետեկից գնացի: ուսուց-

չանոց։ Սկսեց ինձ նախատեհի ։ Իսկ դա իմ ամենաատած բանն եւ Ցես-  
ել ասացի նրան։

— Եղ գեպքում ինքնավարությունն ել ինչու համար եւ, յեթե  
դպաշխներն ամենի բանի խառնվում են և շարունակ նկատողություն  
են անում, Դիմիցեք աշկումին, նրանք ինձ կարդի կհրավիրեն։ Իսկ  
նա պատասխանում եւ.

— Ամենից առաջ դուք պետք եւ հիշեք, վոր դուք դեռ մարդ չեք,  
այլ միայն մարդու փշրանք։ Դուք ձեր արաւքների համար չեք կա-  
րող պատասխանել։

Ու ելի սկսեց զլուխս լվանալ։

Յերբ յես վերադարձա, «տրեխն» արդեն վերջացել եր, նույնպես  
և մեծ դասամիջոցը։ Յեթե յես առաջվա նման բարեկամ լինելի Սե-  
րյոժիկա Բլինովի հետ, կզնալի նրա մոա և կիսուելի ինքնավարության  
և դպաշխների մասին։ Իսկ հիմա յես ընկեր չունիմ, Գուցե Վանկա  
Պետութովին .. Յես արդեն վազուց եմ ուզում բջիջի մեջ զրվել, բայց  
մեր բջիջը շատ անզործունյա լի, նաև շատ լավ կարող եր զողաշխների  
քրքրվելուն վերջ տալ, բայց զպրոցական վոչ մի գործին չի խառնը-  
վում. բջիջի նիստերը բողոքի համար բաց են, բայց ենքան տաղակա-  
լի լին, վոր անկուսակցականներից վոչվոք չի գնում, են ե՞ շարու-  
նակ քաղաքականություն, համ արզունաբերություն, — ձանձրալի դա-  
սի նման։ Իսկ յեթե տղաներից մեկը մի զեկուցում եւ սկսում, ել  
պրօճար, քունդ տանում եւ.

### 13 նոկտենբերի.

Դպրոցական խորհուրդ եր, Իմ ու Յելնիկիտկալի գործն ելին քըն-  
նում։ Զինայիդիշչան ել վերցրեց ու տրեխի մասին պատմեց, Վորոշ-  
վեց ինձ վրա բարոյապես ազդել Նիկափետոնդը ինձ մի գատարկ լարո-  
րատորիա տարավ ու սկսեց հետո խոսիլ։ Միայն նա իմ ընավորու-  
թյան մասին վոչ մի խոսք չասաց, — շարունակ Դալտոնի մասին եր  
բացարձում։ Նա ասում եր, վոր ուսուցիչները դասավանդության վրա  
ենպես չեն նայում, ինչպես հնումն եր։ Առաջ ենպես ելին նայում, թե  
վորքան կարելի լի շատ աշակերտի գլուխն ինչով ասես լցնեն, իսկ  
յերբ աշակերտը զպրոցը վերջացնում եր — մեկ, յերկու, ու բոլորը նրա  
գլխից դուրս եր թռչում։ Մի խոսքով՝ դատարկ ամանը պետք եր լըց-  
նել, իսկ թե ինչ կարելի յեր լցնել — եղ իսկի նրանց չեր հետաքրքը-  
րում։ Իսկ հիմա աշակերտին նայում են ինչպես մի խարույկի, վոր  
միայն պետք եւ վառել իսկ այնուհետու ինքը կայրվի։ Այ գալտոն-  
պլանն ել հենց դրա համար են մացնում, վոր աշակերտները, վորքան  
կարելի լի, իրենք իրենց զիսով աշխատեն։

Յես ասացի, վոր դա շատ դժվար եւ, ու դժվար թե մեկն ու մե-

կը մինչեւ նոյեմբերի 1-ը իրեն առաջադրությունը տա: Նիկպետովն ել ասաց, վոր կարենը դա չե, և վերջիվերջո բոլորն ել հասկանան Դալտոնի ոգուալը: Յես վոր դեռ չեմ հասկանում: Հետո յես նըանհարցրի, թե նրա կարծիքով—յես խուլիզան եմ թե չե:

Նա ասաց, վոր, խղճով ասած, եղակես բան չի մտածում, բայց թե յես կոպտություններ ունեմ, վոր տարիների ընթացքում կանցնեն: Յերբ յես Նիկպետովի մոտից գնացի, ենպես ուրախ եյի, վոր յերգելով գնացի Յելնիկիտկայից ներողություն խնդրելու: Մոտեցարնափառկան լարորատորիային, մին ել ենատեղից դուրս թռավ Յելնիկիտկան ու սկսեց ինձ հանդիմանեւ վոր յես ինքս չեմ պարապում, ուրիշներին ել չեմ թողնում պարապել և այլն, և այլն: Յես վիրավորվեցի, լեզուս հանեցի ու գնացի:

Հիմա ելի դպրոցական խորհուրդ կքաշեն: Հորս ել նորից կկանչեն: Թքած նրանց վրա:

Իմ կարծիքով՝ Յելնիկիտկան հեջ ել չի վառում խարուկել, այլ ավելի շուտ հանգնում եւ:

Ինձ ելի տոմսակ են ուղարկել.

«Թեե մի Ա. սիրահարված ե քեզ, մի կարծիք, վոր շատ հետաքըրելիք եւս Հետո հայնովանքներին վերջ պետք ե տալ, թե չի քեզ հետչեն ուղղում խոսել»:

Իմ կարծիքով—ելի լինան եւ:

15 նոկտեմբերի.

Յերեկ կիրակի յեր, յես ու Սիլվան կինո գնացինք: Ինչի՞ հենց Սիլվալի հետ գնացինք. վորովհետև բանից դուրս ե գալիս, վոր նահնարավորություն ունի կոնտրամարկաներ ձեռք բերել: «Զարդված նավերի կղզին» եին ցույց տալիս: Դեռ նախասենյակում յես նկատեցի Լինային և Սև Զօյալին. նրանք շատ են մտերմացել ու շարունակ փափսում են: Մին ել հանկարծ նկարը տեսնելուց հետո լինան մոտենում ե ինձ և ասում:

— Մի բոպե մի եստեղ արի:

Յես գնացի, իսկ Սիլվան իսկուն տուն գնաց: Են ժամանակ Լինան տասաց.

— Թեե դու ինձ հետ չես խոսում, բայց յես քեզ պետք ե ասեմ, թե կարող ե պատահել, վոր շուտով ել իսկի չտեսնես ինձ: Ումեկ ել՝ Սիլվալին ասա, վոր յես նրան ատում եմ:

Յես շուռ յեկա, անցա Սև Զօյալի մոտով, իսկ նա արձանի նման կանգնած եր: Ի՞նչ են սրանք կպել ինձ եւ:

20 նոկտեմբերի.

«Իքս»-ը շարունակ լույս ե տեսնում, ու վոչվոք չի կարողա-

Նում իմանաւ թե ով ե զրում: Հիմա յել սկսել են ձեռքե-ձեռք տալ—  
կարդալու, միայն խիստ նախազգուշացումով, վոր դպաշխները չտես-  
նեն.—անունն ե «Հ—Հ»: Սա կնշանակի. «Հ-ի հավելված» եղ  
«Հ—Հ»-ում ամեն տեսակ պետը բաներ կան, ծիծաղելի յե (զրողը  
տանի) անսահման:

### 23 հոկտեմբերի.

Ինչպես ե յեղել՝ «Հ—Հ»-ն Նիկպետոժի ձեռքն եր լնկել Նիկ-  
պետոժն յեկավ ու սկսեց դուրս տալ սիրո և տղամարդու ու կնոջ հա-  
րաբերության մասին—միթում մենք վոչինչ չզիտենք: Սակայն ինձ  
զարմացրեց այն, վոր նա ասաց, իբր թե սերը մի ծաղկած այգի յե,  
իսկ ով վոր անվայել բաներով ե զբաղվում, նա կեղտուում ե եղ այ-  
պին: Վաղողկա Շմերցն ել հարցրեց.

— Միթե ճշմարիտ ե, վոր ծաղկած այգի յե:

Նիկպետոժն ել պատասխանեց, վոր այն, ու են ել ինչպիսի՞—ժըպ-  
տուն, պայծառ, վոսկե ու արծաթե: Տղերքը հոհուում եյին, աղջիկնե-  
րը նրանց շվացնում եյին, իսկ Սև Զոյան—Փաշխտուհին վերկացավ  
ու ասաց.

— Բացի գրանից—սերը լինում ե մինչև զագաղը:

Նիկպետոժը նրան հարցրեց.

— Ալսինքն՝ ինչպես թե մինչև զագաղը:  
Նա յել թե՝

— Վոչ թե միայն մինչև գերեզման, այլ նույնիսկ գերեզմանից  
հետո, թես,—ասում ե,—մի մարդ եյի ճանաչում, վոր մի մեռած աղ-  
ջըկա յեր սիրում:

Այդ առելիս նրա սֆաթն ենպես սոսկալի յեր, կարծես թե ինքն  
ել մեռել եր. նույնիսկ տղերքն ել չելին հոհուում: Իսկ Նիկպետոժն  
ասաց, վոր դա արդեն անբնական բան ե, ու վոր մեռած մարմինն  
այնպես արագ ե քայլալիվում ու հող զառնում, վոր մեռածներին սի-  
րելու մասին վոչ մի խոսք չի կարող լինել:

### 24 հոկտեմբերի.

Արդեն շուտով հոկտեմբերի հաշիվները պետք ե տալ, այնինչ  
յես դեռ վոչինչ չեմ պատրաստել Անիծյալ Դալտան.—կարծես դլուխս  
բամբակ ե ճիշտած, թես չելի յենթադրում, վոր մենակ պարապելն ես-  
քան դժվար ե:

### 25 հոկտեմբերի.

Մի նոր պատի լրագիր ե լուկս տեսնում, վոր հրատարակում ե  
«մանր խմբերի միացլալ կոլեկտիվը». կոչվում ե «Ճախարակ», Այդ  
լրագրով միանգամից բոլորը հետաքրքրվեցին, վորովհետեւ նա անկե-  
տա հայտարարեց՝ «կարող ե պատահեր, վոր մեր դպրոցում աղջիկն ու

աղան մտերմանանք: Յես արտագրեցի այն պատասխանները, վոր Արագրի կողքին կախված եյին պատեց.—

1. Յեթև բնավորությունները բռնի—կարող են:

2. Աղջիկը չի կարող մտերմանալ տղալի հետ, վորովհետեւ աղջիկն ու տղան բոլորովին տարբեր համոզութիւններ ու շահեր ունեն (սա ֆաշիստական եր զրել):

3. Յես կարծում եմ կարելի լի, բայց վոչ բոլորի հետ: Մեր դըպրոցում ալգսես եր: Բայց հենց վոր լավ հարաբերություններ են սկսվում, իսկույն ամեն կողմից ծաղրում են նրանց և ստիպում են ակամա դադարեցնել: Ամեն բան այլ լուսաբանությամբ են հասկանում:

4. Վճռ: Աղջիկները—հակածառության վորին են (սա լիս ելի գրել:

5. Կարելի յե, յեթե աղջիկներից վոմանք են պես արհամարհանքով չվերաբերվեյին տղաներին, վորով մեացած աղջիկների վերաբերմունքն ել փչացնում են:

6. Այս հարցին պատասխանելը, համենայն դեպս, դժվար ե: Որինակ՝ յես մտերմությունը յերկու կերպ եմ հասկանում: Նախ աղջիկների ու տղաների միջև պետք ե կոլլեկտիվ, ընդհանուր մտերմություն լինի, ու իմ կարծիքով՝ դա հնարավոր ե: Բայց կա յերկրորդ տեսակի մտերմություն—դա առանձին անհատների միջև յեղող մըտերմությունն ե, վոր վորեն կերպ մոտենում են և մտերմանում: Ու այդ մտերմությունը կարող ե լինել տղալի ու աղջկա միջև, բայց, իհարկե, վոչ ամեն տղայի ու աղջկա միջև և ընդհակառակը: Ընդհանրապես մտերմությունը լավ ու բարձր բան ե, վորին մենք բացասաբար չպիտի վերաբերվենք:

7. Իմ կարծիքով՝ այժմյան ժամանակում չի կարելի, վորովհետեւ ամեն մի մտերմությունը վերջիվիրչո հանդում ե սի սկելի ուժեղ ըգգացման—այս կամ այն կողմից (սա լինան զրեց—յես տեսա):

## 26 նոկտեմբերի.

Մի լուրջ դեպք պատահեց:

Զոյա Տրավուիկովային վաղուց են մկրտել «Սև Զոյա» և «Ֆաշիստկա», և վոչվոք այդ բանի վրա վոչ մի ուշադրություն չեր դարձնում, միայն ինքը վիրավորվում եր: Բայց եսոր լսարանում Նիկպետովը Մուսսոլինիի և Փաշիստների մասին պատմեց—ամենայն մանրամասնությամբ, թե սեաշապիկներն ինչպես են վերցրել Հռոմը, ու թե հետո ինչպիս են դատել ու պատճել կոմմունիստներին:

Մեծ դասամիջոցին տղերքը խոսքերը մեկ արին, Զոյային շրջապատեցին և սկսեցին յերգել.

Յաշխտոներից մենք չենք վախում  
Ու ձեռնամարտի յենք գնում...

Չոյան սկզբում վոսնում եր, հետո սկսեց կովել, իսկ մենք մե-  
տին ծիծաղում եյինք. Մին ել հանկարծ Չոյան՝ թրախոկ, փովեց հա-  
տակին: Մենք իսկուն դադարեցրինք յերգը, մոտեցանք նրան, իսկ  
նա վոնց վոր մեռած: Դեմքը գունատվել ե, ատամներն իրար սղմվել:  
Իսկ նա ուշքի չի գալիս: Մոտ վազեց Յելնիկիտկ ան: Նա հերթապահ  
եր, սկսեց հայնոյել, բարկանալ մեղ վրա, հրամայեց գեղատնից նա-  
շաշտիրի սպիրտ բերել: Մենք բերեցինք: Յելնիկիտ կան Չոյայի թիթ  
տակ բռնեց, նա շունչ քաշեց ու կարծես սկսեց ուշքի գալ: Եսանց  
Յելնիկիտկան կրկին հարձակվեց մեղ վրա և բոլորիս հեռացրեց:

Դրանից հետո Նիկպետոսդը, իրրե մեր խմբի ղեկավար, մեղ բո-  
լորիս հավաքեց լսարան, և զրույց ունեցանք մականուններ տալու  
մասին: Սկզբում պարզեցինք, թե ում ինչ մականուններ են տալիս:  
Բանից յերեաց, վոր աղջիկներից ամեն մեկը միքանի մականուն ու-  
նի: աղաներն ավելի քիչ մականուն ունեին: Աղջիկներից մեկին ա-  
սում ելին շուն, աղիք, փիս պառավ, կաղամբը Յերկար վիճեցինք և  
վերջն այսպես վորոշեցինք, վոր ովլ վոր բոլորի իր մականվան դեմ,  
նրան այլես մականուն չտալ: Իսկուն աղջիկներն աղմկեցին և մեկը  
մլուսի յետերից պահանջեցին, վոր իրենց մականուններ չտանք: Եղ  
բոլորը գրվեց:

Միայն թե, իմ կարծիքով, եղ բոլորը ինտելիգենտություն ե-  
մայ, ինձ ալծ են ասում, ու յես ամեննեին չեմ վիրավորվում:

## 27 հոկտեմբերի

Մեղ մոտ «պիոներական կոլեկտիվ» կազմվեց: Պետք ե հանդի-  
սավոր խոստում տալ, հետո կանոնավոր քայլվածքով անցնել դահլի-  
ճի շուրջը, հետո չծխել և ամեն տեսակ դրա նման բաներ: Բոլոր ցու-  
ցամոլները գրվեցին: Իսկ, իմ կարծիքով, դա փոքրերի համար ե, վոր  
կարմիր փողկապ կապեն: Իսկ յես ավելի լավ ե սպասեմ, մինչև կոմ-  
յերիտ կը նդունեն: Իմ համոզմունքներով յես կոմմունիստ եմ:

Իսկ Չոյան ու Լինան պիոներ չգրվեցին, վորովհետև «պիոներ-  
ներն աստծուն զեմ են»: Նրանք եսպես են ասում թե իրար մեջ, թե  
ուրիշ աղջիկների: Նրանք յերկուսն ել անդիտակից հիմարներ են,  
վորովհետև աշխարհը բջիջից ե առաջ յեկել ու այդ բանը կարելի յե  
փառավոր կերպով ապացուցել, իսկի յել աստված չի սաեղծել: Նոյեմ-  
բերի առաջադրությունը բացատրելիս Յելնիկիտկային անպատճառ  
կհարցնեմ աստծու մասին: Նա իրրե բնագետ պետք ե մանրամասն  
բացատրի:

## 29 նոկտեմբերի.

Սերգութկա Բլինովի հետ ունեցած խոսակցությունը: Նա ասում ենք.

— Այ, յես թեև աշկոմի մեջ եմ, բայց, այնուամենայնիվ, մեր ինքնավարությունը վատն եմ համարում: Սա յել ի՞նչ ինքնավարություն է, յեթե մենք ամեն բան պետք ե դպաշխների ցուցմունքով անենք: Հին դպրոցից շատ բան ե վերցրած: Որինակ՝ բարե տար պարտականությունը: Ամեն մի աշակերտ որվա մեջ առաջին անգամ դպաշխի պատահելիս պետք ե բարե տա: Դա ճիշտ չե, իսկ յեթե աշակերտն այն դրության մեջ ե, վոր բարե տալու սիրտ չունի: Կամ թե չե, այ, դպաշխի դասարան մտնելիս վոտքի կանգնելը: Ճիշտ ե, դա մեզնում խոշոր նշանակություն չունի, վորովհետև մենք դասարաններ ել չունենք, իսկ լսարանում հաղվագյուտ ե արդպիսի բան լինում:

Յես նրա հետ համաձայնեցի: Են ժամանակ Սերգութկան ինձ հարցրեց՝ յեթե ինքը դուրս գա խոսի ինքնավարության արդպիսի ձեր մասին, յես իրեն կպաշտպանեմ, թե չե: Յես ասացի, վոր կպաշտպանեմ: Դե ախար իսկապես ճիշտ ե. ճիշտն ասած, վոչ մի ինքնավարություն ել չկա: Յեթե աշկոմը մի բան ե վորոշում, ապա այդ վորոշումը դեռ պետք ե դպաշխնոց գնա, հետո դպրոցական խորհուրդ, — ու միայն այն ժամանակ ե իսկական ուժ դառնում, յերբ դպրոցական խորհուրդը հաստատում ե: Կամ թե չե, որինակ, դպաշխներից ամեն մեկն լրավունք ունի աշակերտին ինչքան ուզի սղմի: Քանի եդպիսի դեպք ե պատահել ինձ հետ:


## 30 նոկտեմբերի.

Եսոր Աև Զոյան նորից ուշաթափվեց: Իրենց սովորության համաձայն նա ու Լինան նստած եյին վառարանի մոտ, հետո նրանք վիճեցին թե ինչ, մին ել հանկարծ Զոյան—թրա՛խկ—հատակին: Ելի ջուր բերեցին, նաշատիր. հազիվ ուշքի բերին: Զինալիդիշան նրան ուսուցչանոց կանչեց ու յերկար ժամանակ խոսում եր հետը: Տարորինակ աղջիկ ե այդ Զոյան: Իմ կարծիքով, նա շատ շատ ե մտածում մեռելների մասին, դրա համար ուշաթափվում ե:

## 31 նոկտեմբերի.

Վաղին սկսվում ե մեր հաշվետվությունը: Յերեկ ամբողջ գիշերը նստեցի, եսոր ել ստիպված եմ նստել: Ամենավատն են ե, վոր գիրք չկա: Լարորատորիալից և գրադարանից տղերքը բոլոր գրքերը վերցըրել են—նրանք ել են պատրաստվում: Վարտեղից ճարեմ, Գնեմ—փող չունեմ: Եսոր հասարակագիտության դիագրամմաները կզնիմ:

Ինչ ել լինի, դպրոցում զուր են ժամանուն մտցրել:



## ՅԵՐԿՐՈՐԴ ՏԵՏՐ

### 1 նոյեմբերի.

Մաթեմատիկայից ու Փիզիկալից, իհարկե, կարվեցի, իսկ բնագիտությունից նույնիսկ չփորձեցի յել ստուգման գնալը Բանից դուրս ե գալիս, վոր դա «պարտք» կհամարվի. Յերբ կտամ կտամ, իսկ մինչ այդ՝ խաչ չեն գնի: Համենայն դեպս յես անհարմար եմ զգում ինձ. մեր խմբի մեծամասնությունը բոլոր ստուգումները տվել են Նիկպետառժինն, իհարկե, տվեցի յես: Դիազրամմաներն ել ներկայացրի:

Սկսում են հոկտեմբերյան հանգեսների համար պատրաստվել ինձ ընտրեցին հանձնաժողովի անդամ. մեր խմբից, բացի ինձանից, ընտրեցին Սիլֆիդա Դ-ին:

### 2 նոյեմբերի.

Մենք վորոշեցինք գպրոցի ամբողջ շենքը ինչպես հարկն ե զարդարել կանաչով և գրոշակիներով: Դպաշխներն ասացին, վոր իրենք չեն խառնվելու, ու ամեն բան մենք ինքներս պետք ե անենք: Ե՞-հա-առանց գպաշխների ինչքան գուրեկան ե, Բանից դուրս ե գալիս, վոր Սիլվան ենալես հիմար ու ինտելիգենտների չե, ինչպես յես կարծում եյի: Նա պարել չի սիրում, իսկ ժապավենը պրոպելերի նման ե կապում, վորովհետև մայրն եղակես ե հրամայում: Յես նրան խորհուրդ տվեցի ուշազրություն չգարձնել իսկ նա պատրասխանեց, վոր մորը սիրում ե ու զրա համար ել լսում ե նրան: Այ, ես բանը յես միքիչ չեմ հասկանում, —համոզմունքներին հակառակ ժապավեն կառել: Յես վոչ մի դեպքում ժապավեն չելի կապի, թեև հալրիկին շատ եմ հարգում ու սիրում:

Վաղը յեղենիներ բերելու համար կգնանք քաղաքից դուրս ուղարկում:

### 3 նոյեմբերի.

Համարլա ամեն ինչ պատրաստ ե: Ուղիղ մեծ մուտքի վերել կարմիր աստղի ձևի հրավառություն ենք սարքել: Բոլոր լաբորատորիաները, գահին ու լսարանը զարդարել ենք դրոշակիներով և եղենիներով: Բոլորը գովում են. ինձ ել ե դուր գալիս:

### 4 նոյեմբերի.

Բոլորը գնացել են ցույցի, նույնիսկ հալրիկը, իսկ յես տանն եմ: Պառկած եմ անկողնում և իսկի չեմ կարող ման գալ: Յերեկ բարձրացա տանիքը, վոր գլխավոր դուան վրա «Կեցցեն խորհուրդները» վեր-

նազիրը կպցնեմ, վայր ընկա և վոտքս ցավեցրի: Սոսկալի ցավում եր. հիմա վոչինչ, միայն նույնիսկ կանգնել չեմ կարողանում: Իսկ Սիլվան հենց ենտեղ, մայթի վրա վոտքս բաց արավ և սկսեց մաժել, տրորել Սկզբում յես քացի-քացի ելի անում, հետո վոչինչ: Նույնիսկ կարծես գուր եր գալիս:

Հետո նա կանչեց Վանկա Պետուխովին և ուրիշներին, մի տեղից պատգարակ գտավ և ինձ տուն քարշ տվին: Կնշանակի և աղջիկները կարող են լավ ընկեր լինել: Սա պետք և նկատի ունենալ և այդ մասին խոսել Վանկա Պետուխովի հետ: Հիմա պարապ եմ մնացել ու բոլորի մասին կդրեմ:

Վանկա Պետուխովը շատ խորամանկն եւ նոյեմբերի 1-ին ըուլորը գնացին Ալմակֆիշին մաթեմատիկայի ստուգում տալու, իսկ ստուգումը կարելի յէ տալ—յերբ ուզես: Այ, եղ Վանկան չգնաց: Հետո իմացավ՝ Ալմակֆիշը ամենից շատ վոր թեորեմաներն եւ հարցնում, 3-ին գնաց ստուգինու, և տվից: Եղանք ել մլուս առարկաներն եւ անում: Ու հիմա Վանկան վոչ մի բան «պարտ» չմնաց: Իսկ յես եղապես չեմ կարող անել: Իմ կարծիքով դրանից վոչ մի խարուկ չի վառվի: Պետք և ինքդ ամեն բան իսկապես սոնցնես, այ են ժամանակ կիմա զիսումդ: Ու ընդհանրապես բոլոր տղերքը լարորատորիայի մոտ կանգնած քչփում են՝ «Ի՞նչ եւ հարցնում, ի՞նչ եւ հարցնում»—ճիշտ այնպես, ինչպես քննությունների ժամանակ: Իսկ և իսկ հին դպրոցը:

Այժմ—թե դպաշիներից ով ում եւ հետեւում: Յելնիկիտկան ինձ տանել չի կարող, իսկ Ալմակֆիշը՝ Սիլվային նա Սիլվային կտրեց և մաթեմատիկայից և Փիզիկայից: Սիլվան հիմա լաց եւ լինում: Իսկ Ալմակֆիշը շատ չար ու նենդ մարդ եւ Սիլվան ասում եւ, թե նա միշտ իր ժապավենն եր ակնարկում, «Ժապավեն կապել գիտես, — ասում եւ, — իսկ մաթեմատիկայից յետ ես մնում»: Իմ կարծիքով նա իսկի իրավունք ել չունի: Այդպիսի իրավունքներ հին դպրոցի ուսուցիչներն ունենին:

Իսկ Զինալիդիշչան հետեւում եւ Վանկա Պետուխովին: Նրա համար են Զինայիդիշչա ասում, վոր նա շատ բարձրահասակ եւ: Յերբ նա անցնում եւ դահլիճով, կարծես Սուխարեկի աշտարակը լինի: իսկ մինք բոլորս վաճառականներ \*): Նույնիսկ մինք եղանիսի խաղ ենք խաղում: Յերբ Զինացիդիշչան յերեւում եւ դահլիճում, իսկույն սկսվում եւ:

- Գաթաներ, տաք-տաք գաթաներ:
- Գլանակ, լուցկի, զլանակ:
- Այ լավ չե՞թ, ել բարձրաքիթ:
- Հին շոր, հին շոր, կհագնես մի որ:

\*) Մոսկվայում Սուխարեկի աշտարակի մոտ մի շատ մեծ հրապարակ կա, ուր առևտուր են անում մանր կրպակներում կամ ուղղակի ձեռքի վրա: Ծ. Թ.

Իսկ Զինայիդիշան անցնում և դահլիճով և բավականությունից ռեխը բաց անում, ծիծաղում և, վորովհետեւ վոչինչ չի հասկանում: Իսկ նրա բերանը ընը՝ մեծ, մի հատ կենտ գեղին ատամ ունի ։ Նա մտածում է. «Ճնշ ե, ինչ լավ խաղում են յերեխաները... Յեթե կենտրոնից մարդ գա, կզովի մեզ»: Իսկի չի յել կասկածում, վոր մենք իրեն Սուխարեկ աշտարակ ենք շինել ու խաղում: Ինչ ել լինի, նրանից վախենում են, ու իմրե նա մեզ մի բան և ուղում տահը, ապա վոտքը գետնովն և տալիս ու ճշում. «Զգաստ»: Ու բոլորը միանդամից լուսւմ են: Թեև մենք զինվորներ չենք, և մեղ հրամակելու բան չկաւ:

Վանկա Պետուխովին նա չի սիրում, վորովհետեւ սա ծխախոտ և ծախում: Նրա համար Վանկան նույնն է, ինչ վոր մի անապաստան, ու նա կարծում է, թե նա արագ ել և խմում, թուղթ ել և խաղում, մարութետ ել և քաշում, կանանց հետ ել և ապրում... նա ուղղակի ասում է Վանկային. «Դու ամբողջ դպրոցը կարող ես վարակելու Վանկան, ձիշտ ե, ծխում ե, վորովհետեւ յես ել եմ ծխում, Սերյոժկա Բլինովն ել և ծխում, վորին Զինայիդիշան միշտ բոլորին որինակ և բերում, իսկ մյուս մնացած բաները փչոց եւ ձիշտ ե, բոլոր անապաստանները Վանկային ճանաչում են, վորովհետեւ իրենք անզրագետ են, և Վանկան նրանց համար զրգեր և կարգում. նույնիսկ յես ել մտքում զրել եմ գնալ, տեսնել նրանց: Նրանք ապրում են մի տան քանդված ներքնատանց: Տունը քանդված եւ ներքնատունն ավերակ, հենց եղ ներքնատանն ել ապրում են նրանք... Վանկան նրանցից չի վախենում, ասում եւ նրանց մեջ լավ տղերք կան. կարելի յե թեկուզ մեր դպրոցն ել ընդունել, միայն անզրագետ են: Առաջներում նրանք Վանկային շատ եյին նեղացնում. հարձակվում ելին, իրեն ել, արկդիկն ել զետին զլորում ու ծխախոտները թոցնում, դեռ յերեսին ել հասցենում:

Այս, Վանկան ել զրգերը վերցնում, գնում եւ ծխախոտ և տանում, նրանց համեցեք անում ու սկսում եւ կարդալ: Բանից դուրս եւ դաշիս, վոր նրանք հեքիաթներ սիրում են, ինչպես փոքրերը: Դրանից հետո նրանք Վանկային ել ձեռք չեն տալիս: Իոկ Զինայիդիշան ես բոլորի վոչինչ չգիտի և շարունակ մըթմըթում եւ Վանկայի վրա: Ճիշտն ասած, մի անգամ յես ու Վանկան փորձեցինք մարուֆետ քաշել, միայն վոչինչ դուրս չեկավ. սկզբում իմրկումիս գլուխն ել ցավեց, հետո սիրաներս խառնից: Մի խոսքով՝ զզիկիլի բան եր: Իսկ անապաստանները, Վանկայի ասելով, առանց մարուֆետի իսկի ապրել ել չեն կարող:

Նիկաբտուժը վոչվոքի յետեկոց չի ընկնում, եղ պատճառով ել ամբողջ խումբը վստահություն ունի նրա վրա: Ու հետո նա ասում է, թե մեր խմբով հպարտանում ե, վորովհետեւ կոլլեկտիվ գիտակցությունը զարգացած ե: Թեև յես եղ բանին ենքան ել համաձայն չեմ. տղաների

մեջ գեռ ելի կա կողեւկտիվ գիտակցություն, իսկ ինչ վերաբերում ե աղջիկներին... հա, զուցե միքանիսը...

Բալց՝թե, պետք ե պարապել. Ալմակֆիշի խնդիրները կվճռեմ.

### 10 նոյեմբերի.

Եսոր յես առաջին անգամ տանից գուրս յեկա—և ուղիղ՝ զպրոց։ Ասում են՝ ցուցցերի ժամանակ շատ ուրախ ե յեղել ու հիմա իրը թե մողա լի դարձել փողոցում բորիկ վոտքերով ման գալ մարմամարզական շորերով,—բոլորը, աղջիկներն ել, Յես կարծում եմ, վոր դա շատ լավի, վորովհետեւ շրջազգեստը փոշի յէ անում, ու հետո նրա վրա զուր տեղը շատ կտղեղեն ե գնում. ախար գե միկնույն բանն ե, չե—կանալք ել վարախիք են հազնում։ Ու իրը թե ցուցցերի միջոցին կոմյերիտական բոլոր աղջիկները տրուսիկ են հագած յեղել։

Հազիվ եյի զպրոց հասել վոր իսկույն տոմսակ եմ ստանում.

«Եսաեղ ասանց քեզ շատ եյինք ձանձրանում։ Գուշակիր, իմացիր՝ ով ես։ Իսկի յել չեմ ուզում իմանալ։

Ալմակֆիշի մաթեմատիկայի ստուգումը տվեցի. այ, ինչ կնշանակի առնը պառկել։

### 11 նոյեմբերի.

Եսոր կիրակի յի։ Մի շատ յերկար ընդհանուր ժողով յեղավ։ Նախ նախկին աշկումը հաշվետու զեկուցում տվեց։ Ամեն բան առաջիկա պես առաջ եր զնում, յերբ հանկարծ նախկին աշկումի նախագահ Սերյոժկա Բլինովը հայտարարեց, թե ինքը վերջին անգամ յեղավ աշկումում, ել չի մասնակցել և ընդմիշտ հրաժարվում ե իր թեկնածությունը դնելուց։ Իսկ պատճառն այն ե, վոր աշկումը «դպաշխների ձեռնախալութին հենված մի հաշմանդամ» ե, այսինքն ինքնուրույն կերպով վոչ մի բան չի կարող ձեռնարկել այլ ամեն բանում պիտի համաձայնի դպաշխների հետ։ Վորովհետև Սերյոժկան փոխանակ «դըպրոցական աշխատավորներ»-ի գործածեց «դպաշխ» դարձվածքը, դըպաշխներից մի մասն իտկույն բոլորեցին։ Հետո խոսք առավ Զին-Պալ-նան և Սերյոժկային հարցրեց, թե ինչ ե կարծում նա—աշակերտները դպրոցական աշխատավորներին բոլորովին բանի տեղ չպիտի՞ դնեն և նրանց մարդ չպիտի՞ համարեն, թե համենալն դեպս մարդկային կոչումը թողնում ե դպրոցական աշխատավորներին։ Սերյոժկա Բլինովը սաստիկ վիրավորվեց ու ել չեր ուզում խոսել, բայց տղերքը խնդրեցին նրան։ Են ժամանակ Սերյոժկան կրկին ասաց, վոր ինքը եղ զանազան տեսակի բարե տալն ու վոտքի կանգնելը նախապաշարութեր և համարում, և վոր ինքն անձամբ չի հապատակվի դրանց։ Զինայիդիշան նրան պատասխանելով ասաց, վոր միշտ նրան որինակելի աշա-

կերտ և համարել և հիմա զարմանալի լե, թե ինչ քամի յե փշել նրա խելքին: Բացի դրանից նա սանրվելն ու լվացվելն ել նախապաշառութեանը և համարում: Սերլուժկան նորից վիրավորվեց և ել չեր ուզում խոսակցությունը շարունակել: Են ժամանակ դուրս լեկավ Ալմակփիշը և ասաց, վոր ես բոլորն իրեն ենքան ել չի զարմացնում, և վոր բանակապես սա ժամանակաշրջանի առատությունն ե, իսկ վարակապես բարու յել չարի են կողմն և գտնվում: Ինձ թվում ե, թե նա ես միենալուն ասաց ինձ իմ և Յելնիկիտկայի ընդհարման առթիվ, և նույնական վոչ զանձ ա, վոչ տանձ ա: Թեև զպաշխները համոզում ելին, Սերլուժկա Բլինովը մնաց իր կարծիքին, և զպրոցի մեծամասնությունը նրա կողմն եր: Միայն միքանի աղջիկներ կարծես թե զպաշխների կողմն են, նրանց թվում լինան և Սև Զոյան: Գոնե Զոյան ամեն անգամ Սերլուժկայի խոսելիս «Փոթթապաթացնում» եր շոգեմեքենալի նման:

Այդ միջադեպից հետո տեղի ունեցավ նոր աշկոմի ընտրությունը: Յես բոլորովին զարմացա և իսկի չեյի ուզում, բայց աշկոմ ընկա և յես: Մեր խմբից բացի ինձանից աշկոմ ընկավ ՍիլՓիդա Դուրինինան: Նրա բանը հաջողում ե: Հենց վոր մի տեղ ինձ ընտրում են, ենտեղ ել նրան: Եղ վոչինչ, նրա հետ կարելի լե աշխատել, նա մլուս աղջիկների նման չի: Աշկոմն ինքնավարության բարձրագույն մարմինն և համարվում: Աշկոմին են յենթարկվում և սանկում, և կուտակում, և բոլոր մյուս կոմերը: Ալիինքն եղ միայն եղակես ասվում ե, թե յենթարկվում ե, այնինչ խսկապես ինչ ուզում են՝ անում են:

Միջանցքում Յելնիկիտկան պատահեց ինձ և հարցնում ե.

— Քաղաքացի Շարցև, յԵրբ եք մտադիր հաշվետվություն տալ: Յես ել պատասխանում եմ.

— Այ, կոտվորեմ, քաղաքացի Կառւրովա, են ժամանակ ել կտամ: Են ժամանակ նա ասաց.

— Հիմա բոլորն ել նոյեմբերի նոր առաջադրություններն են սովորում, իսկ դուք պոչումն եք:

Յես պատասխանեցի:

— Կհասցնեմ, —ու պ՛տկու:

Տանել չեմ կարողանում նրան:

### 13 նոյեմբերի.

Հենց նոր ելին ինձ աշկոմի անդամ ընտրել, վոր հանկարծ մի կարևոր գործ բացվեց: Պարապմունքների հենց սկզբից զպրոցում գողություններ են լինում: Դեռ մի ամիս առաջ մեծերից մեկի նկար-չական գործիքների արկղիկը կորավ, հետո նախաճաշիկներ ու փող շատ անգամ եր կորչում: Իսկ հիմա հանկարծ միանգամից Վանկա

Վետուխովի վեց լիմուրդը \*) կորավի նա թողնում եւ հանդերձաբանում—  
վերաբերուի գըպանում ու գնում, մին ել գալիս եւ—փողը չկա, Բայց  
բանն այն ե, վոր Սերյոժկա Բիլինովն անց ե կացել հանդերձաբանի մո-  
տով և տեսել ե՝ Ալյոշկա Զիկինն ինչ-վոր փսփսում ե ենտեղ, իհարկե  
իսկույն ուղեցին Ալյոշկա Զիկինին հարցնել, բայց նրա «իզն ու թողն  
ել չկա»։ Յես ու Սիլֆիդա Դուրինինան, իբրև 3-րդ խմբից աշկոմի  
անդամներ, ստիլված ելինք Զիկինի բնակաբանը գնալը Մենք գնա-  
ցինք նրանց բնակաբանը, իսկ նա տանը չեր. մեզ հանդիպեց Զիկինի  
հայրը—կոշկակար եւ—հարբած։

— Ի՞նչ եք ուղում։

Մենք պատմեցինք։

Հայրն ել ասաց։

— Եդ նրա արածն ե, շան վորդու, յես նրան գիտեմ, նա գող ե,  
յես նրա կաշին տիկ կհանեմ։

Են ժամանակ մենք զղացինք, վոր ասացինք. գուցե իսկի յել  
Ալյոշկան չի արել բայց հայրը նրան կդնքսի. Յես ու Սիլվան բակում  
մնացինք, հսկում ենք և սպասում Ալյոշկային. Սպասեցինք-սպասե-  
ցինք, հետո մեկ ել հանկարծ բոլորովին մթնումը Ալյոշկան գալիս ե։  
Յես մոտեցա նրան և հարցնում եմ.

— Դու ինչու ժամանակից շուտ հեռացար դպրոցից։

— Ե՛, քեզ ինչ, ի՞նչ քո բանն եւ։

— Ա՛յ, բանն են ե, վոր փող ե կորել։

Են ժամանակ Ալյոշկան ուսով հրեց ինձ—ուղում եր տուն  
գնալ—և ասաց։

— Թող, յես գնում եմ տուն։

— Ավելի լավ ե մինչե գործի պարզելը դու տուն մի գնալ, թե  
չե հայրդ դունչ ու պոռնգդ կջարդի։

Են ժամանակ Ալյոշկան գոռաց։

— Ա՛մ-ա, ուրեմն դուք նրան ասել եք։ Յես ձեր վեց լիմուրդը  
չեմ վերցրել։

Եստեղ նա հարձակվեց ինձ վրա և սկսեց ուղղակի դունչս ջարդել։  
Հանկարծ նրա յետեկից Սիլֆիդա Դ-ն բռնեց նրան, ու մենք Ալյոշկին  
պատին կպցրինք ու հարցնում ենք։

— Բա դու վրտեղից գիտես, վոր վեց լիմուրդ եր։ Մենք քեզ  
չասացինք։

Պատասխանի տեղ նա սկսեց մռնչալ, մալր հայհոլել ու թքել  
մեզ վրա, Եստեղ յերկուսով—Սիլվայի հետ, նկատեցինք, վոր նրանից  
արագի հոտ ե զալիս, Եստեղ նա դուրս պրծավ մեր ձեռքից ու փա-  
խավ։ Վորովհետեւ մութն եր, մենք չեյինք կարող նրան հասնել ու

\*) Են ժամանակվա միլիոնանոց թղթագրամ։

զնացինք դպրոց։ Ենտեղ բոլոր աշկոթները մեզ սպասում ելին, ումենք բոլորը պառմեցինք։ Կասկածն, իհարկեավելի մհծացավ, բայց իսկական ապացուցներ չունեյինք։ Հերթապահ դպաշխը Յելնիկտկան եր, նա յել ուղղակի հարցնում ե մեզ.

— Բա գուք ինչու նրան չխուզարկեցիք։

Մենք բացարեցինք, թե ինչու չեյինք կարող խուզարկել բայց ճշշտն ասած՝ իսկի մտքներովս ել չանցավ եղ բանը։  
Վորոշեցին գործը հետաձգել վաղը։

#### 14 նոյեմբերի.

Ալլոշկա Զիկինը դպրոց յեկավ, իբր թե վոչինչ չի պատահել նրան իսկույն աշկոմ կանչեցին։

— Հանդերձանում լինչ ելիր շինում։

— Իմ վերնաշորիգրապանից հաց ելի վերցնում, —պատասխանում ե։

— Իսկ ինչու ժամանակից շուտ դպրոցից փախար։

— Տանը գործ ունելի։

— Բայց Շյաբցեն ու Դուրինինան յեկել են, ու դու տանը չես յեղել։

— Գնացել ելի։

— Բա քեզնից ինչու յեր արազի հոտ գալիս։

— Սուտ են ասում նրանք։

— Բա գու վժրտեղից իմացար, վոր ուղիղ վեց լիմուրդ ե կորել։

— Եղ յես հիմա յել չգիտեմ։

Եստեղ, իհարկե, նա անամոթաբար ստում եր, վորովհետեւ մենք նրան չսասացինք, ու ինքն սկսեց վեց լիմուրդի մասին գոռալ Դե, բոլորի համար ել պարզ եր, վոր նա յե գողացել ու բոլորն ել սկսեցին նրա հետ չխօսել։ Այժմ մի հսպիսի հարց ե բարձրանում. ես ամբողջ գործը ինչպիստանենք։ Դպաշխները գեռ լոռում են, և շատ լավ ե։ Միայն թե նրանք չխճճեն-չխառնվեն։ Բայց մլուս կողմից, գործն եսպիս թողնել չի կարելի։ Մենք բոլոր աշկոթներս շատ յերկար խոսեցինք, հետո ցըկեցինք ու վոչինչ չվորոշեցինք։ Յեթե մենք վաղն ել վոչինչ չվորոշենք, ապա ստիպված գործն ընդհանուր ժողով պիտի տանենք։ Մերյոժկա Բլինովն ինձ ասաց, վոր հավանական ե՝ գործը վոչ մի բանով ել չվերջանա, և վոր Վանկա Պետուխովն ինքն ե մեղավոր, վոր փողը թողել ե վերաբրկում։ Եղ հո եղանակ ե, բայց դե չի կարելի, վոր դպրոցում գողություն լինի, են ժամանակ ել աշկոմներն ինչի՞ համար են, յեթե բոլոր գործերը վոչնչով պիտի վերջանան։

#### 15 նոյեմբերի.

Ալլոշկա Զիկինի գործին խառնվեց Զին-Պալնան, նա Ալլոշկային առանձին յերկու ժամ խրատեց, —հետո նրա մոտից նա դուրս թռավ

լաց յեղած ու—պուկի Եղպես ել դպրոցից փախավ։ Են ժամանակ մենք աշկոմներս գնացինք Զին-Պալնայի մոտ և հարցըրինք, թե ինչ հիման վրա նա; առանց ինքնավարության, խառնվում և այն հարցերին, վոր իրենց, աշակերտներին են վերաբերում։ Իսկ Զին-Պալնան ասում են, վոր ինքը նախ պատասխանատու լի դպրոցում կարգ լինելու համար, հետո լեկ՝ նա ամենեին չի խառնել գործը, այլ փորձել և Ալլոշայի վրա բարուապես ազդել։ Լավ։ Ընդհանուր ժողովում կխոսենք։

Յելնիկիտկան մեղ բոլորիս հավաքել և իր լարորատորիան և մանրազիտակով բացատրում և ձարխոտի բազմացումը. եստեղ լիս նրան հարցըրի։

— Դուք ինչ եք կարծում՝ Բնչպես և առաջացել մարդը և ընդհանրապես ամբողջ աշխարհը։

Նա բոլորովին կարմրեց և պատասխանում եւ.

— Ինարկե կենսաբանական ճանապարհով։

— Այսինքն Բնչպես թե կենսաբանական։

Յելնիկիտկան սկսեց բացատրել բջիջի մասին։ Բայց ինձ դա չեր հարկավոր, և հարցըրի։

— Իսկ աստված կմ, թե չեւ։

Նա նորից կարմրեց և ասում եւ.

— Մեկի համար կա. մյուսի համար չկա. դա ամեն մեկի անհատական գործն եւ։

Եստեղ Սև Զոյան խելագարի պես գոռաց։

— Յես գիտեմ, թե նա ինչու համար և հարցնում, Եղ նա նրա համար և հարցնում, վորպեսզի ապացուցի, թե աստված չկա։ Իսկ յես, այ, հավատում եմ աստծուն, ու դա իմ գործն եւ, և վոչվոք չի համարձակվիլ արգելել ինձ։

Յես ուզում եյի նրան պատասխանել, վոր վոչվոք նրան չի արգելում, և վոր հարցն սկզբունքային տեսակետից պետք եւ պարզել, բայց նա վոչինչ ել չեր ուզում լսել. յես նույնիսկ մտածեցի, թե նա կուշաթափվի, կընկնի։ Բայց եստեղ Յելնիկիտկան նորից սկսեց ձարխոտի մասին։ Զոյան հանգստացավ, ու յես վորոշեցի՝ դեռ սպասել։ Իսկ յերբ բնագիտությունը վերջացավ, Միլվան մոտեցավ ինձ և ասում եւ.

— Գիտես, նրանք յեկեղեցի լել են գնում։

— «Նրանք» ովքեր են, — հարցըրի յես։

— Զոյան ու Լինան։

— Իսկ դու—չ՞ես գնում։

— Չե, չեմ գնում։ Յես աստծուն չեմ հավատում, թեև մայրս ինձ դրա համար սաստիկ պատժում եւ, — պատասխանում է Միլվան։ — Իմ մայրը հին համոզումների տեր եւ, իսկ հայրս՝ նոր։ Յես մորս ել

եմ սիրում, հորս ել, իսկ նրանք շարունակ հայնոլում են իրար և նույնիսկ կովում: Հայրս պատկերները վերցրեց, իսկ մայրս նորից կախեց: Սկզբում յես մորս կողմն եյի, իսկ հետո հայրս ինձ համոզեց:

— Իսկ ով ե քո հայրը:

— Գրաշար եւ Հետո, վոր նա ինքն առաջ դեղին ե լեզել նույնիսկ գործադուլ ե արել ու կովել ե խորհ. իշխանության զեմ. իսկ հիմա կարմիր ե գարձել: Այս մայրս ել գրա համար նախատում ե նրան: Մեր բակի բոլոր կանայք ել հորս դեմ են: Հավաքվում են սպիտակեղեն փոելու—և ենպիսի զլվոց են բարձրացնում—վոր ել չասած:

— Իսկ առաջ դու գնում եյիր յեկեղեցի:

— Այս, յերբ Դունյա եյի, գնում ելի: Հետո յես ու հայրս վորոշեցինք, վոր նա ինձ Միլֆիդա կասի, ու դրանից հետո ել չեմ գնում: Մայրս լսել ել չի ուզում Միլֆիդայի մասին. ասում ե՞ դա կախարդական անուն ե:

Են ժամանակ յես մտածեցի և ասացի Միլվալին, վոր նա ինձ վկաղին ասի: Նա համաձայնեց:

### 16 նոյեմբերի.

Եսոր Սև Զորան Ալմակիշշին հոկտեմբերի ստուգումն եր տալիս, ու մեկ ել հանկարծ ուշագնաց յեղավ, փովեց: Ե՛, հիմի գրա վրա ել վոչվոք չի զարմանում: Իսկույն ջուր սրակեցին, նաշատիրից հոս քաշել տվեցին, ու նա վեր կացավ: Բայց աշկոմի ժողովում հարց բարձրացավ նրան ուշագնաց լինելուց ազատել (յետ սովորեցնել), և յես ինձ վրա վերցրի այդ բանը: Միաւն ինձ առաջարկեցին այնպես անել, վոր առողջությանն ամենալին չվնասի: Եղ յես ել եմ հասկանում:

### 17 նոյեմբերի.

Աշկոմի ժողով եր Ալոշկա Զիկինի գործի մասին: Բանն այն է, վոր նա վոչ դպրոց ե գալիս և վոչ տուն ե գնում: Հայտնի չե, թե ուր ե կորել: Վորոշեցին հալտնել դպրոցական խորհրդին, վոր աշկոմի ամենալին դեմ չե, վոր Զիկինին միլիցիայի միջոցով փնտունք: բայց միայն չպետք ե հայտնել վոր նա փող ե գողացել:

### 23 նոյեմբերի.

Յես Նիկպետոժին ասացի, վոր ուզում եմ կոմիերիտական դառնամ, նա յել խրախուսեց ինձ: Նա ասաց, վոր յեթե ինքն ել իմ տարիքին լիներ, ինքն ել կոմյերիտ կզրվեր:

Հետո յես նրան կրկին հարցրի, թե ինչ բան ե «դիալեկտիկա»-ն, նա յել ինձ մի լրագիր տվեց կարդալու. եղ լրագրում մի պատմվածք ինձ շատ դուր յեկավ:

Հենց վոր տղերքն աղաղակեցին, թէ Զոյան ելի ուշաթափվեց, յես իսկույն վազ տվեցի բակը, մի բան վերցրի և յետ դարձա վազելով. հարցնում եմ՝ վնրտեղ եւ ինձ ասում են, վոր լսարանումն եւ իսկույն մտնում եմ լսարան: Տեսնեմ, ինչպես միշտ, ընկած ենա, գունատ ու ատամները սեղմած:

Ասում եմ.

— Նրան միքիչ բարձրացրեք:

Տղերքը բարձրացրին, իսկ յես մի զունդ ձյուն կոխեցի նրա վիզը. Նա ենպես վեր թռավ ու ենպես ե գոռում, կարծես ինքը չի-նի: Տղերքը հոհուացին, արդեն Յելնիկիտկան ել նաշատիրը ձեռքին վագում եւ:

— Ի՞նչ ե պատահել:

— Ա՛յ, Զոյան ուշաթափվեց, իսկ Կոստյա Բլաբցել նրան բժշկեց:

— Ի՞նչպէս բժշկեց:

— Զյունով:

Եստեղ Յելնիկիտկան հարձակվեց ինձ վրա, վոր դա տմարդություն ե, վոր դա ընկերական չի, և վոր նա իմ հարցն ընդհանուր ժողովում կդնի: Բայց Զինայիդիշչան յեկավ, նայեց Զոյային, նայեց ինձ և ասում ե.

— Հանգստացեք, Յելնատ Նիկիտիչնա: Զոյան ալևս չի ուշաթափվիլ:

Զոյան իր մեծ-մեծ աչքերը փալեցրեց, շոգեմեքենայի նման փռփռացրեց ու պուկ, իսկ Զին-Պալնան ասում ե ինձ.

— Միայն, ինդրեմ, մյուս անգամ իմ գիտությամբ:

Ու գնաց: Իսկ ինչու նրա գիտութլամբ: Յես վոր աշկոմ եմ—կնշանակի և պարտական եմ:

Շուտով նոյեմբերի առաջադրությունները պիտի ստուգեն, իսկ յես հոկտեմբերինն ել բոլորը չեմ տվել: Աշկոմությունը շատ ե խանգարում: Դեռ խմբկոյն ել պահանջում ե, վոր «Կարմիր աշակերտ»-ում գրեմ, իսկ յես վոչ մի բանի ժամանակ չունեմ:

26 Առյօնիմբերի.

Կոմիերիտմիության ցուցակագրությունն սկսվեց, և յես ու Սիլվան դիմում տվեցինք բջիջին: Ասում են, թէ շուտով մեր բջիջը կկցեն մի ուրիշ արտադրական բջիջի: Դա շատ կարևոր ե, թէ չե մեր ժողովները սոսկալի ձանձրալի լին:

27 Առյօնիմբերի.

Յես ու Վանկա Պետուխովը գնացինք անապաստանների մոտ և ահա-

թե ինչ դուրս յեկավ դրանից: Յես շատ եմ սիրում գաղտնիք, իսկ սա շատ գաղտնի պետք եր անել վորովհետեւ յեթե զպաշխներն իմաստնան, ապա դա կարող եր ամրող որինակ դառնալ: Դա հսպես յեղավ: Ժամը ինսին Վանկան յեկավ իմ յետեից, իրը թև կիսո պիտի դնացինք, ու զնացինք: Խիստ սառնամանիք եր—քսան սատիճանի: Գնացինք հենց են քանդված ներքնահարկը: Սկզբում մեղ ներս չելին թողնում, հետո թողեցին: Ահազին ներքնահարկ ե, և այնտեղ նույնպիսի սառնամանիք ե, ինչպես փողոցում, զրա համար ել զանազան անկյուններում փոքրիկ խարուցիներ են վառած, միայն զանազան բաներով պատաժ են, վորպեսզի փողոցից նկատելի չլինի: Յերբ յես ու Վանկան թափթփված քարերի միջով անցնում ելինք, սասարիկ յերկուղալի յեր, ենպես, ինչպես կինոյում խուզարկուները թագնվում են: Սկզբում նրանք մեղ ձեռք չեյին տալիս, վորովհետեւ Վանկային ճանաչում են և իրենցն են համարում: Նրանք բոլորը սոսկալի ցընցոտիներ են հավնված, իսկ եղ տղաներից ենպիսի գարշահոտություն և գալիս, ինչպես արտաքնօցից, թեև սառնամանիք եւ Բավական շատ-վոր են, ու տաքանում են զանազան խարույկների մոտ: Մեկի մոտ բոլորին տեղ չի լինիւ չենց վոր Վանկան մոտավ, բոլորը հարձակվեցին նրա վրա:

— Դե, հեքիաթ...

Վանկան նստեց խարույկի մոտ և նրանց համար կարգաց արծաթե սկսուանդի և հյութալից խնձորի հեքիաթը: Սոսկալի՛ ախմախ բան: Յես յերեք չելի կարծում, թե գրքում եղպես ախմախություն կլինի տպված: Հետո անապաստան տղաները խնդրեցին, վոր ելի կարդա, բայց Վանկան չուզեց: Են ժամանակ նրանք արագ հանեցին և սկսեցին հյուրասիրել: Վանկան միքիչ խմեց, իսկ յես հրաժարվեցի: Հետո նրանք սկսեցին թուղթ խաղալ, մենք ել ուղում ելինք գնալ, վոր հանկարծ մեկը քաշ և տալիս ինձ խարույկի մոտ: Յես ընդդիմացա, բայց նա քարշ տվեց ուղիղ կրակի մոտ ու գոռում ե.

— Տղերք, սա քերծե լի (վորսի շուն):

Լավ նայեցի, տեսնեմ—Ալյոշկա Զիկինը, միայն ամբողջովին կեղտոտված և ցնցոտիների մեջ—իսկի չեր ել ճանաչվում: Ասում ե.

— Տո սրիկա, դու ինչի՞ յես եկել: Մեղ վրա ծիծաղելու յես եկել:

— Գնա, կորի.—պատասխանեցի ու դուրս պրծա: Վանկան, իհարկե, ինձ պաշտպանեց, մենք դուրս պրծանք... Նրանք մեր լիտեկցին ընկան, մենք սկսեցինք պաշտպանվել: Եստեղ մեկը ինչ-վոր պինդ բանով ուղիղ աչքիս տակը հասցրեց: Յես գոռացի, վորովհետեւ սասարիկ ցավից, բայց յես ու Վանկան դուրս թառնք փողոց ու պուլէկ: Նրանք ուղում ելին մեղ հալածել, բայց արդեն լուսավոր փողոցումն ելինք, և միլիցիոներ կար կանգնած: Նրանք յետ մնացին: Իմ աչքը շատ սաստիկ

յավում եր և ուռավի Եստեղ յես ու Վանկան սկսեցինք խորհրդակցել, թե ինչ անենք և արժե վորսե մեկին պատմել Ալլոշկա Զիկինի մասին: Վորոշեցինք լոել և վոչվոքի չպատմել, վորովհետեւ կարող են նրան ստափիկ պատժել. իսկ տուն ավելի լավ ե իսկի զնա, վորովհետեւ ես բոլորից հետ հայրը կարող է սպանել: Վանկան եստեղ ինձ պատմեց, վոր ես ներքնատանը «Թոցնողներ» են ապրում: Նրանք եսպիս են անում. մեկը դռան տակին թագնվում ե, իսկ մյուսը միլիցիների նման շրջում ե փողոցում: Հենց վոր քսակը ձեռքին մի տիկին ե գալիս, իսկուն են քալողն ամբողջ թափով ընկնում ե եղինոջ վոտքերի տակ, իսկ մյուսը դռան տակից դուրս եթոշում, քսակը ճանկում ու յերկուսն ել հայրա, պուլկը Կան ենպեսներն ել, վոր ուղղակի գրավանից գողանում են: Կամ տներն են մտնում: Միքանիսն իսկի ուսւերեն խոսել ել չգիտեն, միայն—թուրքերեն, բայց գողության մեջ յետ չեն մնում:

Յերբ յես տուն լեկա, աչքիս տակի կապտածը մեծացավ, ամբողջ թուշը բռնեց. հայրիկս իսկուն և թե նկատեց և հարցնում ե, թե ինչ է լեղել: Յես ստեցի, թե վոտքս սլկվեց ու ընկա: Նա պղնձե հինգ կոպեկանոց կապեց: Սրա վրա ուռուցքը միքիչ նստեց, բայց միենույն ե, վաղն ստիպված եմ դպրոց գնալ կապտած յերեսով:

28 նոյեմբերի.

Բոլոր տղերքն, իհարկե, հարցրին կապտածի մասին, մանավանդ շատ եր հարցնում Սիլվան, այնպես վոր յես նրան նույնիսկ գրողի ծոցն ուղարկեցի: Յելնիկիտկան նալեց կասկածով և ուղղակի ծաղրով, բայց յես չուզեցի նոր աղմուկ բարձրացնել ու լոեցի:

«Կարմիր Աշակերտ»-ում մի ճիշտ հողված ե գրած՝ հասարակական աշխատանքների մասին: Յես արտագրեցի.—

«Մեր դպրոցում դալտոն-պլան ե գործադրվում: Մի ամսվա առաջադրություններ են տալիս բոլոր առարկաներից, և մենք ինքնուրույն կերպով պետք ե մշակենք: Դասատուն ասում ե, զոր այս-ինչ առաջադրությունը պետք ե մշակել այս գրքի համաձայն, իսկ այդ գիրքը հնարավոր չե ձեռք բերել, իսկ ամեն մի առաջադրության համար գիրք գնելն ել անմտություն ե:

«Հետո, բայց առաջադրություններից, հասարակական աշխատանքներ ել են տարվում, ու գրա համար նշանակվում կամ ընտրվում են են տղաները, վորոնք այդ բնագավառում ավելի ուժեղ են. ու մի անհարմար բան ե ստացվում, վոր զրանք ծանրաբեռնված են հասարակական աշխատանքով, իսկ մյուսները բոլորովին ազատ են: Պետք ե ասել, վոր մեր գիտական լարորատորիաներում շարունակ այնպես աղմուկ ե լինում, վոր շատ դժվար ե վորսե աշխատանքի վրա կենտրոնանար գրա համար ել աշակերտներն ստիպված են առարկաներով

պարապել տանը։ Պարապմունքները վերջանում են ժամը 7-ին, հետո նրանք, վորոնք հասարակական աշխատանք չունեն, հանդիսա գնում են, իսկ նրանք, վորոնք ծանրաբեռնված են հասարակական աշխատանքներով, սախպված են մաս դպրոցում կատարել այդ աշխատանքները։ Իհարկե, յերեկոյան վոչինչ չես կարող շինել, ստիպված են հասարակական աշխատանքի համար հավաքվել առավոտան, յերբ առաջին հերթն ե աշխատում, իսկ յերբ մեր յերկրորդ հերթն ե հավաքվում—ելի լաբորատորիայում աշխատել հնարավոր չե, վորովհետև աղմուկ ե... եղանակում ամեն որ։ Ամիսն անցավ, առաջարությունները տալու ժամանակն ե, բայց վոչինչ չկա պատրաստ։ Իսկ ով հասարակական աշխատանք չունի—հանդիսա տանը պատրաստում են առաջարությունները և ժամանակին տալիս։

Ենտեղ ելի կա գրած, բայց սա ել բավական ե՝ տեսնելու համար, վոր աշկոմները սատկելու ժամանակ ել չունեն Բացի գրանից հստեղ գեռ խմբկոյն ե, զարդարող կոմիսսիա ու դասկոմ, գեռ ամբողջ խմբի համար դպաշխների հետ բացատրություններ տուր... զրոյը տանի Դալտոնին, գետինը մտնի։

### 30 նոյեմբերի.

Վաղը նոյեմբերի առաջարությունները պետք ե տալ, իսկ իսո, իհարկե, վոչինչ չեմ տալ. իսկ թե յերբ կտամ—հայտնի չե... Միքանիսն ել նույն դրության մեջ են. Լավ ե, վոր իմ աշկոմության ժամանակը լրանում ե, թե չե բոլորովին կիրավելի։ Միակ հույսս ձմռան արձակուրդներն են։ Սիրվան ել հույս չունի, թե մի բան կտա—աշկոմության պատճառով։ Գրնդը տանի Դալտոնին։

Դպրոցից հետո ամբողջ յերեկոյան Սիրվայի հետ ման ելինք գալիս փողոցում, ու նա իր կյանքի մասին շատ շատ բան պատճեց ինձ։ Բանից գուրս ե գալիս, վոր հալը մորից ուզում ե բաժանվել դաստարանով, ու հիմա ինքը չգիտի, թե ում մոտ զնա ապրելու։ Ու նրանց տանը շարունակ կռիվ ու աղմուկ ե։ Դրա համար ել ինքն աշխատում ե, վորքան կարելի լե, քիչ մնալ տանը։ Հետո նա սկսեց հարցնել ինձ կյանքի նպատակի մասին։ Յես նրան ասացի, վոր կյանքի նպատակն ե—ապրել ու ոգուտ տալ թե իրեն, թե ուրիշներին և հետո պատքարել համաշխարհային կոմմունիզմի համար։ Են ժամանակ նա խոստովանեց ինձ, թե իր դրությունն ենպես ծանր եր, վոր նույնիսկ ուղեցել ե անձնասպան լինել։ Յես նրան պատասխանեցի, վոր դամեծ հիմարություն ե, և վոր կան մարդիկ, վոր մեզնից վատ են ապրում, որինակ՝ անապատանները։ Ու հետո—ինքնասպանությունը—զա ինտելլիգենտականություն ե։ Հին դպրոցում ինքնասպանություն եյին գործում դպաշխների պատճառով, իսկ մենք ենպիսի դրության մեջ

ենք, վոր գեռ կարող ենք պայքարել դպաշխների դեմ. ու բացի գրանից կոմսոմոլ կա, և հավանական ե, վոր մեղ կընդունեն կոմիտետիտմիության անդամ, վորովհետև մենք յերկուս ել սոցիալապես պրոլետարական ծագության ունենք: Են ժամանակ Սիլվան հանդստացավ, ու յես նրան տուն ուղեկցեցի:

### ՅԵՐՈՌԻ ՏԵՏՐ

3 դեկտեմբերի.

Ինձ ու Սիլվային կոմյերիտմիության թեկնածու հաստատեցին: Շատ լավ, միայն վատն այն ե, վոր բջիջի նիստերին հաճախելը պարտադիր ե, իսկ յես առանց են ել ժամանակ չունեմ: Լավ, Մի կերպ կանեմ:

4 դեկտեմբերի.

Եսոր պարապմունքների ժամանակ միլիցիան յեկավ դպրոց: Զին-Պալնային կանչեցին ու հարցըրին.

— Աղեքսեյ Զիկին աշակերտ ունե՞ք:

Նա պատասխանում ե, վոր ունենք:

— Դե վոր եղագես ե, այ ստորագրությամբ ընդունեցիք նրան, թե չե նա իր հասցեն չի ասում, իսկ մենք նրան պահելու տեղ չունենք:

— Իսկ նա բնչագես ե միլիցիա լնկել, — հարցնում ե Զին-Պալնային:

— Անապաստաններին սպիտամբ հավաքելիս (օբլավ) նա յել ձերբակալվել է:

Են ժամանակ Զին-Պալնան հանկարծ ասում ե.

— Վոչ, յես հրաժարվում եմ նրան ընդունել: Տարեք անապաստանների հավաքատեղին (կոլլեկտօր):

Ես բանը տղաներից միքանիսը լսել են, և իսկույն ամբողջ դըպրոցն իմացավ: Ընդհանուր ժողովի զանգը տվեցին: Ու ամեն կողմից վաղում են յերեխանները, զբքները մի կողմը գցեցին, ով վոր լաբորատորիայում պատասխանում եր, նա յել պատասխանը կիսատ թողեց ու ծըլկ... Դպաշխներն աչքները չուցին: Դրա պատճառն այն եր, վոր ընդհանուր ժողովի մասին սովորաբար առաջուց հայտնի յեր լինում, իսկ հիմա հանկարծ, առանց դես-դենի—պարապմունքի ժամին: Ահա յերեխանները հավաքվեցին դահլիճ: Սոսկալի աղմուկ ե, աղաղակ: Զին-Պալնան գալիս ե բոլորովին գունատված: Մյուս դպաշխներն ել՝ նույնապես, — յերեսում ե, վոր խիստ ալլայլված են:

— Ընդհանուր ժողովի զանգն ով տվեց:

- Յես — պատասխանեց Սերլոժկա Բլինովը:  
 — Դասերի ժամանակ, ի՞նչ իրավունքով:  
 — Հենց այն իրավունքով, վոր նոր ամբողջ դպրոցը մի սոսկալիր  
 բան իմացավ, ու մենք բոլորս ուզում ենք բողոքել:  
 Սերլոժկան ասում ե ես ու ինքն ել գունատվիկ և ու կակազում ե:  
 — Եղ ի՞նչ անարդարացի բան ե, — հարցնում ե Զին-Պալնան:  
 — ԱՌ են, վոր Զիկինին դպրոցը չի ընդունել, Զիկինը մեր ըն-  
 կերն ե, և պարտավոր եյթ մեզ հարցնել:  
 Եստեղ արդեն բոլորը գոռում են.  
 — Ճիշտ ե, Բլինով! Թող կորչեն դպաշխները:  
 Զին-Պալնան ձեռքը բարձրացրեց. յերկար ժամանակ եղան  
 կանգնեց, վորովհետև աղմուկ եր, հետո ասաց.  
 — Եղ հարցը պետք ե մանրամասն քննել! ԱՌ, ասում եք՝ անար-  
 դարացի յե: Իսկ յես նրան չեյի կարող ընդունել, վորովհետև նախ  
 եստեղ մանկատուն չե, և նրան պահելու տեղ չկա, և հետո, նա ապրել  
 ե անապաստանների հետ, կնշանակի, նա կարող ե ամեն տեսակ հի-  
 վանդություններով վարակված լինել և բոլորին ել վարակել: Յեզ վեր-  
 ջապես քանի վոր նա հայր ունի, ապա նրան պետք ե ուզարկել հոր  
 մոտ և վոչ թե դպրոց...
- Եստեղ յես վեր կացա և ասացի.  
 — Նրան հոր մոտ չի կարելի ուզարկել, վորովհետև հայրն այժմ  
 կսպանի նրան: Նրա հայրը հարբեցող ե, ու յերեկ տանն ենքան ել  
 համով չեն ապրում, յեթե նա փախել ե քանդված ներքնահարկը:  
 — Եղ ի՞նչ քանդված ներքնահարկ ե, — հարցնում ե Զին-Պալնան:  
 — Ամենահասարակ, — պատասխանում եմ յես:  
 — Իսկ դուք վժըսեղից զիտեք այդ, Րյաբցև,  
 — Ենտեղից զիտեմ, վոր յես ինքս լեղել եմ ենտեղ և տեսել եմ  
 նըան:
- Եստեղ բոլոր յերեխաները գոռացին.  
 — Կեցցես Րյաբցև, կտրէչ ես:  
 Իսկ յես պատասխանում եմ.  
 — Խնդրում եմ իզուր տեղը չգոռալու Յեթե յես աշկոմ եմ, կնշա-  
 նակի յես պարտական եմ:  
 — Ուրեմն, — ասում ե Սերլոժկա Բլինովը, — դպրոցը բողոքում է  
 այն բանի դեմ, վոր վարիչն առանց դպրոցին հարցնելու, Զիկինին  
 հավաքատեղի ուղարկեց: Ու բացի զրանից խնդրում ենք իսկուն և մարդ  
 ուղարկել քաղաքամաս և դպրոց բերել նըան:  
 — Բայց ի՞նչ պիտի անենք մենք նրան, — հարցնում ե Զին-Պալնան:  
 — Եղ հետո կտեսնենք: կգնանք նրանց տուն և հորիցը կպա-  
 հանջենք, վոր չծեծի նրան:

— Հան, են ե՛, նա յել կլսի ձեզ, — չարախնդությամբ մեջ ընկալվ Յելնիկիտկան:

— Ավելի շուտ մեղ կլսի, քան ձեզ. — պատասխանում ե Սերյոժկան, — ու համենայն դեպս, հարցնում ենք դպրոցական աշխատավորներին՝ ինչ են կարծում, ինքնավարությունը դպրոցում վորեն նշանակություն ունի, թե չե՞

— Այս, այս, Խնդրում ենք պատասխանել — աղաղակեցին բոլոր յերեխաները:

— Յես զարմանում եմ, — ասում ե Զին-Պալնան, — թե սա ինչ անկազմակերպ գրություն ե, վոր տիրում ե ևս բոպելիս: Պարապմունքները խանգարեցին, ընդհանուր ժողով արին: Ե՛, դրա հետ ելի դեռ կարելի յե հաշտվել, յերբ եսպիսի մի արտակարգ գեղք ե պատահել: Բայց ինչպես ետարփում ես արտակարգ ընդհանուր ժողովը: Վոչ նախագահ կա, վոչ քարտուղար: Հարցերն իրար են խառնված: Դրվում ե Զիկինի հարցը, առանց վճռելու, իսկույն թռչում են մի ուրիշ, սկզբունքային հարցի: Յես հրաժարվում եմ ներկա լինել եսպիսի ժողովի ու հեռանում եմ, վորովհետեւ, իմ կարծիքով, եսպիսի ժողովը խալսառակություն ե դպրոցի համար:

Ու գնաց. նրա յետեկոց ել իսկույն Յելնիկիտկան, նրա յետեկոց ել կողքահանց Ալմակիթիշը և մյուս դպաշխները: Մնաց մենակ Նիկպետովը: Նսաել ե ու լսել կարծես բերանը ջրով լիքը լինի: Յերեխաները լուսցին, հետո նորից աղմկեցին: Իսկ Սերյոժկան բռունցքով թխկացրեց սեղանին ու ասում ե.

— Յես գոնե կարծում եմ, վոր եղ նախագահներ են, ինչ են, նույնպես նախապաշարումն ե: Փառավոր կերպով, առանց նախագահի յել կարելի յե: Լսեցեք, տղերք, լսու առաջարկում եմ, վոր եստեղ մնա միայն նա, վոր չի ընդունում ենալիսի ինքնավարություն, ինչպիսին մերն ե, Ու մենք կվորոշենք, թե ինչ պետք ե անել: Իսկ մյուսները թող գնան: Խոսքս վերաբերում ե, իհարկե, և բոլոր դպրոցական աշխատավորներին:

Նիկպետովն իսկույն վերկացավ ու գնաց: Փոքը յերեխաներից ել միքանի հոգի մնացին իսկույն աղջիկներից կարծես ցույցի համար դուրս գնացին Սև Զոյան և Լինան: Մնացածները մնացին և «միություն» հիմնեցին: «Միությունը» վորոշեց չընդունել ինքնավարությունը, իր համար կանոնավրություն մշակել և նրան յենթարկվել: Վերացնել պարտադիր բարե տալն ու վոտքի կանգնելը: Լարորատորիայում, լսարանում, դալիճում, ով ուզում ե, կարող ե զլիխարկով ման գալ, ով ուզում ե՝ գլխարկը վերցնել: Մյուս բաներում գործել կանոնավրության համաձայն, իսկ կանոնավրություն մշակելը հանձնեցին Սերյոժկա Բլինովին և ելի միքանի տղաների:

Միանգամից յես ինձ ուրախ դպացի: Հենց լավ եր, իմ աշկոմությունն ել վերջացավ:

Տ դեկտեմբերի.

Դպրոցում այժմ յերկու կուսակցություն կա՝ «գպրոց» և «միություն»: Բանից զուրս յիկավ, վոր դպաշխների կողմը բավական շատ ժողովուրդ կա: Եսոր «գպրոցականներն» ընդհանուր ժողով ունելիին՝ նոր աշկոմ ընտրելու. այդ ժողովին դպրոցի կեսը ներկա յեր: Մենք՝ «միութենականներս» ել ժողով ունեյինք. ընդունեցինք «միության կանոնադրությունը»: Այդ կանոնադրության համաձայն վոչվոք վոչվոք չի յենթարկվում. հաստատվում ե միայն ինքնակարգապահություն: Ամեն տեսակ դատարկ բաներ, ինչպես պարտադիր բարեւ տալը, վերանում ե, բայց «միութենականներից» ամեն մեկը պարտավոր ե հետևել ինքն իրեն—վարքի տեսակիտից: Եսպես, որինակ պարապմունքի ժամանակ կովել ու ազմկել չի կարելի: Դպաշխների և «գպրոցականների» հետ հարաբերությունների համար ընտրված ե «արտաքին գործոց կոմիսար»—Սերյոժկա թլինովը:

Առաջին գործը, վոր հանձնարարվեց Սերյոժկային, այն եր, վոր նա դպաշխներին համոզի և ստիպի, վոր Ալլոցկա Զիկինին հավաքատեղից բերեն գպրոց: Հետո միտինգ լեզավ, և բոլորը ճառ ասացին:

Հետո Սերյոժկան ինձ մի կողմը քաշեց և ասաց, վոր—վորովհետև Նիկպետովն ինձ սիրում ե, ապա յես գնամ նրա մոտ և հարցնեմ, թե նա ինչ ե մտածում մեր «միության» մասին, նույնպես և մյուս դպաշխները: Իհարկե, յես համառոյնեցի: Միալն մի բան ինձ անհասկանալի յի—եստեղ ինչ կապ ունին դպաշխների կարծիքները. Դրանք իրենց համար, մենք մեզ համար: Համենայն զեպս յես գնացի: Նիկպետովն ինձ հետեւալն ասաց.

— Յես ձեր փորձը հետաքրքրական եմ համարում: Իմ կարծիքով շուտով ինքներդ կհամողվեք, վոր առանց կարգապահության ապրել չի լինիլ:

Յես պատասխանեցի, վոր մենք ինքնակարգապահություն ենք մտցնում:

— Ինքնակարգապահությունը յերկու ծալը ունի,— ասաց Նիկպետովը: — Մի ծայրից նա կարծես լավս ե թվում, վորովհետև ամեն տեսակ բռնություն վերացնում ե, իսկ մլուս կողմից նա շատ ավելի ծանր ե, քան թե արտաքին կարգապահությունը: Դեմ, մտածիր մի՞—ստիպված ես շարունակ հետեւել ինքդ քեզ, վորպեսզի վորեւ կերպ չըտուզանվես: Դա շատ շուտ ե ձանձրացնում:

Են ժամանակ յես հարցը, թե ինչպես ե նայում ես զործին Զին-Փալնան:

— Դուք նրան թերագնահատում եք, — պատասխանեց Նիկպետովը, — դուք կարծում եք, վոր նա դպրոցում ըռնություն և գործադրում, հետեապես և բոլոր աշակերտների ընդհանուր թշնամին եւ իսկապես եղ եղապես չեւ: Նա բոլոր լերեխաներին շատ սիրում եւ, և յեթե ստիպված ե կարգապահությանը հետեւել, դա յել նրա համար, վոր նրա վրա ծանր պատասխանատվություն ե զրված: Իսկ ձեր «միության» վրա վարիչը նայում է եսպես, թե ձեզ չկետք ե խանգարել. «Թող, ասում ե, իրենք համոզվեն, վոր իրենց արածներն անմիտ բաներ ենք:

Յես ևս բոլորը պատմեցի Սերլուժկալին. Նա լսեց ինձ, բայց վոչինչ չսասց: Դպրոցից տուն դառնալիս սկզբում յես Սիլվիոյային ճանապարհ դրեցի, հետո՝ նա ինձ, ու ճանապարհին խոսում եյինք «միության» մասին: Նա ասում եր, թե չի հավատում, վոր «միությունը» յերկար դիմունա, իսկ «միության» մեջ մտել ե ընկերաբար, և վոր ինքն այժմ շատ ուրախ ե ապրում: Յես ասացի, վոր լիս ել, Մենք նույնիսկ բաժանվելիս իրար ձեռք թոթվեցինք, մի բան, վոր յերբեք չեյինք անում:

### 6 դեկտեմբերի.

Կարծես ամեն բան կարգի յե ընկեր: Դպաշիներն ենպես են ցույց տալիս, վոր կարծես չեն նկատում «միությունը», մենք ել կարծես չենք նկատում դպաշիներին: Վորովհետեւ «միությունը» վորոշել ե վոչ մի կերպ չծաղրել «դպրոցականներին», ապա մենք նրանց ձեռք չենք տալիս, մանավանդ վոր նրանք մեծ մասամբ փոքրեր են, իսկ յեթե մեծեր ել կան—դե նրանք սկզբունքորեն ալլ կերպ են մտածում, քան մենք:

Յես ամեն ջանք գործ եմ դնում առաջադրության ստուգումներս տալ, վորպեսզի ձմռան արձակուրդի ժամանակ զբոսնեմ: Նիկպետովին նոյեմբերը տվեցի: Ինձ համար ամենաղժվարը մաթեմատիկան ու բնագիտությունն եւ:

### 7 դեկտեմբերի.

Վանկա Պետուխովը դպրոց չեկավ, իս ել զնացի նրա տուն: Բանից գուրս ե գալիս, վոր նա ամբողջովին ջարդված պառկած եւ նրան անապաստաններն են ջարդել, վորովհետեւ կարծել են, թե նա իրենց մատնել ե, դրա համար ել հավաքական կալանքի յենթարկել իրենց: Նրանք Վանկայի տախտակն ու ծխախոտներն ել են վերցըրել: Նա հիմի ուղում ե գործարան մտնել, մանավանդ վոր այժմ դեռահաններին ավելի յեն ընդունում, բան առաջ: Յես նրան հարցըրի, թե՝ «բա վժնց կսովորես», նա յել ասույ ե, վոր դեռահասները միայն

վեց ժամ են աշխատում, ու նրանց ամեն տեսակ արտօնություններ են տալիս—սովորելու համար։ Նրանց տանը բոլորը լաց են՝ լինում, վորովհետև նա համարյա մենակ ինքն ե պահում բոլորին։ Շատ ծանր տպավորությամբ գնացի նրանց տանից։

### 8 դեկտեմբերի.

Յես զահիճովն անցնում եյի, վոր հանկարծ կոխվ սկսվեց «զըպ-ըրցականների» և «միութենականների» միջև։ Նրանք հարձակվեցին մեզ վրա,—վոտք զցեցին Վալողկա Շմերցին։ Իսկույն մերոնք վրա հասան, և սկսվեց տուրուզմիոցը։ Իհարկե, կռվում եին «հանաքավարի», մեծ մասամբ չարություն եյին անում։ Ու հանկարծ ներս ե թուչում Զինալիդիշչան, սկսում ե վոտքը գետին խփել և խելազարի պես աղաղակել։ «Դաշտարեցրեք», «վերջ տվեք»։ Մենք, իհարկե, դադարեցրինք, իսկ նա հարձակվեց մեզ վրա, թե մենք գպրոցը փողոց ենք դարձրել թե եղաղիսի թշնամություն անթուլատրելի էի, թե «միության» գոված ինքնակարգապահությունն իրեն ցույց տվեց։ Են ժամանակ յես չհամբերեցի և ասացի, թե ինքնակարգապահությունն եստեղ վոչ մի կապ չունի, վորովհետև մենք չեյինք կռվում, այլ հենց ենակես բոթքում եյինք։ Բայց նա թույլ չտվեց, վոր յես վերջացնեմ խոսքս, ու հայտնեց, վոր ինձ հետ գպրոցական խորհրդում կը խոսի։

Տեսնենք ինչ կինի։ Վերջապես հոկտեմբերի մաթեմատիկայի ստուգումն ել տվեցի։ Հիմա ել ենքանշատ չի մնացել, իսկ յես զոռ քը շուտ եմ։

### 10 դեկտեմբերի.

Շատ ուրախ եր, վորովհետև մեծ դասամիջոցին մենք, բոլոր «միութենականներս» դուրս վազեցինք բակը և սկսեցինք ֆուտբոլ խաղալ։ Տեղանակը բավական տաք եր, ձյունն ել արորած, դրա համար ել խաղալը հեշտ եր, իսկ սպրոցականները նախանձով նալում ելին մեզ։ Նրանք ել շատ ելին ուզում խաղալ, բայց նրանց դպրոցական որենքներով ֆուտբոլ խաղալը մինչև գարուն արգելված ե—գոյն դպրոցի բակում։ Ուրիշ խաղեր կարելի էի խաղալ, վոր մարմնամարզը թույլ ե տալիս, իսկ ֆուտբոլ չի կարելի, վորովհետև ինչպիս Զինալիդիշչան ասում ե, «ֆուտբոլը վատ ե անդրադառնում պարապմունքների վրա»։

Դասամիջոցը վերջացել եր, բայց մենք դեռ խաղում ելինք։ Ախտոս, վոր շուտ ե մթնում, թե չի եղացես անվերջ կիսաղալինք։ Յես տասը գոլ տվեցի—աջ կողմի ծալրին եմ խաղում։ Սկզբում աղջիկներն եյին խաղում, իսկ հետո, յերբ կանոնավոր կամանդա կազմակերպվեց, աղջիկներին դուրս արեցին։

## 11 դեկտեմբերի.

Յերեք որ առաջ լես Սև Զոյալին և Լինա Գ-ին տեսա, վոր յեկեղեցուցն երին գուրս գալիս. իսկ յերեկ ըջիջի նիստ եր, ուր վորոշվեց. գպրոցում հակակրոնական քարոզն ուժեղացնել. Այդ առթիվ յս անցա բնագիտական լարորատորիան, յերբ ենտեղ բավական շատ մարդ կար, և հարցնում եմ Յելնիկիտկային.

— Յելնա Նիկիտիչնա, բացատրեցեք, խնդրեմ, աստծու մասին—ասալած կա, թե չե՞:

— Միանգամ արդեն—ասում ե—յս ձեզ ասացի, Ռյաբցև, վոր մեկի համար կա, իսկ մյուսի համար չկա. դա ամեն մեկի անհատական գործն ե:

— Չե, իսկ ընդհանրապես:

— Ընդհանուր հայացք գոյութիւնն չունի:

— Իսկ ընապատմութիւմը ինչպես ե. գոյութիւնն ունի, թե չե:

— Բնապատմութիւնը կրոնական հարցերով չի գրաղվում:

Եղանակ ել խախալի գլուխը բան չգցեցի, բայց յս Յելնիկիտկային հրապարակ կքաշեմ: Միջանցքով անցնելիս հանկարծ յետերց հասնում ե Սև Զոյան և ասում:

— Սպասիր:

Յես կանգ առա, իսկ նա բոլորովին կռացավ, կուչ յեկավ և շըշըշալով ասում ե.

— Յես քեզ, ասում ե, ատում եմ և մարդ չեմ համարում, բայց, համենայն զեպս շատ եմ խղճում քեզ.—Նախազգուշացնում եմ, վոր եղ բոլորը անպատիժ չի անցնիլ, ու դու պատասխան պիտի տաս:

— Եղ հմատ պատասխան պիտի տամ:

— Ենտեղ կիմանաս՝ ում: Սուրբ հրեշտակները քեզնից յերես են թեքել:

Յես ենակես ծիծաղեցի, վոր ուղղակի փորս ցավեց:

— Ես ել տար—ասում եմ—իմ կողմից սուրբ հրեշտակներին նըշվեր:—Ու հասցը նրա մեջքին: Նա վոֆուացրեց ու հեռացավ ինձնից: Իհարկե, յես նրա յետերց չընկա. չեմ սիրում նրան, ուղղակի տանել չեմ կարող: Նրանից լեկեղեցու հոտ ե գալիս, մի տեսակ ձեթի հոտ:

## 12 դեկտեմբերի.

Եսոր յես ստիպված յեղա բաժանվել իմ սիրելի ընկերոջից—Վանկա Պետուխովից: Նա վերջին անգամն ե յեկել—գործարան ե մըտնում: Յես ուզում եյի նրան պատմել մեր գպրոցի գործերը, բայց յերկե նա ել չի հետաքրքրվում: Նրա ջարդվածքներն առողջացել են: Նա քսան ուլերեք ոսւրի վաթսուն կոպեկ կստանա:

— Ծխախոտով՝ տսում ե—ավելի չես վաստակի: Յես սաստիկ ցավում եմ, վոր նա գնում ե մեղնից: Նախ նա լավ ընկեր ե, ուզդակի հատը չկա, հետո նա խելոք տղա լե և շատ բարի յի: Յեմ կարծում եմ, վոր աղայի հետ մտերմանալը բոլորովին այն չե, ինչ վոր աղջկա հետ մտերմանալը, թեկուզ ենպիսի խելոք աղջկա հետ, ինչպիսին Սիլվան ե: Ճիշտ ե, յես նրա հետ շատ բանի մասին եմ խոսում, բայց և այնպես, վոչ ամեն բանի մասին: Դե, ախար նա շատ բան չի հասկանալ: Նա, հետո, միթե նրա հետ կարելի լե անապատանների մոտ գնալ: Նա, գուցե կզնա եւ, բայց նրա գունչը կջարդեն, իսկ նա ինքն իրեն պաշտպանել չի կարող: Հետո, այ, որինակ, աղջիկներն ինչքան ել աշխատեն, չեն կարող ինչպես հարկն ե փուտրոլ խաղալ: Հետո նրանց աչքը հաճախ թաց տեղն ե... Մի խոսքով վոնց ել անես, շատ արգիլքներ կան, վոր խանգարում են իսկական մտերմության: Ուրիշ բան և մտերմությունը տղայի հետ: Ափսոս Վանկան... Իհարկե, մենք նրա հետ կտեսնինք, բայց թե զե, ել են չի:

### 13 ՊԵԼՏԵՄԲԵՐԻ.

Եսոր «միության» պատճառով մի նոր միջադեպ պատահեց: Սիլֆիդա Դ-ն գնաց Ալմակֆիշին նոյեմբերի ստուգումը տալու, նա յել կտրեց Սիլֆիդային, թեև սա ասում ե, վոր բոլոր հարցերին պատասխանց և բոլոր թերորմաներն ապացուցեց: Են ժամանակ Սիլֆիդան ասում ե նրան:

— Եգ գուք ինձ նրա համար եք կտրում, վոր լես «միութենական» եմ:

Ալմակֆիշը սաստիկ զայրացել ե, նրան «անպիտան աղջիկ» ե ասել և լարորատորիայից գուրս ե արել Ամբողջ խումբը սաստիկ վրդովվեց, ու մենք պատգամավորություն ուղարկեցինք Զինայիդիշայի մոտ, վորպեսզի Ալմակֆիշը ներողություն խնդրի Սիլֆիդայից: Յես ել պատգամավորության մեջ եյի, ու յերբ մենք ուսուցչանոց մըստանք, Ալմակֆիշն ել ենտեղ եր: Նա լսեց մեր պահանջն ու ասում ե:

— Լավ, յես ներողություն կինդրեմ, յես տաքացա, բայց նախ թող Դուքինինան ներողություն խնդրի ինձնից, վոր նա ինչ-վոր կողմնակի պատճառաբանությունների մասին կասկածում ե իմ վարմունքի նկատմամբ:

Են ժամանակ լես ասացի:

— Յես չգիտեմ կողմնակի պատճառաբանություններ կային, թե չե, բայց ամբողջ դպրոցը գիտի, վոր գուք Դուքինինային տանել չեք կարող և հալածում եք:

Են ժամանակ Ալմակֆիշը գաղաղեց, սկսեց ճշալ, վոր լես հանդուգն ու կոպիտ տղա լեմ, վոր յեթե ինձ չզսպեն, ապա ինքը կթող-

Նի դպրոցը, վորովհետեւ պարապելու վոչ մի հնարավորություն չկար Ու նա զիրքը շպրտեց սեղանին ու դպրոցից գնաց: Զինալիդիշչան ինձ պահեց ուսուցչանոցում ու սկսեց խոսել ինձ հետ: Նա ինձ ապացուցում եր, վոր յեթե եսպես շարունակվի, ապա սովորելու վոչ մի հնարավորություն չի լինիլ, և վոր մենք շարունակ «միությունով» տարվելով, զլիսավոր և միակ նպատակը—սովորելը մոռանում ենք: Իսկ յեւ նրան պատասխանեցի, վոր յես դրա հետ համաձայն եմ, բայց թե վոչ միայն մենք ենք մոռանում, այլ և զպաշխաներն են մոռանում, թե մենք ել նույնպիսի մարդիկ ենք, միայն յերիտասարդ, և գուցե նըրանց պես փորձված չենք: Որինակ՝ չի կարելի մեզ «յերեխաներ», «կոպիտ ու հանգույն աղաներ», «անպիտան աղջիկներ» ասել ու նըման բաներ, ու եղ բանը միշտ ել վատ ընդհանրությունի պատճառ կըդառնաւ: Եստեղ Զինալիդիշչան ինձ ասաց, վոր վոչ թե «պատճառ կըդառնա» պետք ե ասել, այլ «առիթ կտա»: Մի խոսքով մենք վորոշեցինք, վոր վաղը յես ներողություն կինողեմ Ալմակֆիշից և կազդեմ Սիլֆիդայի վրա—նույն մտքով:

Իսկ բջիջի ժողովում վճռվեց առաջարկել զպաշխնիրին և «միությանը» մի համաձայնեցնող հանձնաժողով կազմել ընդհարմանը վերջարարությամբ, վորոշեց պարտադիր բարեւ տալն ու վոտքի կանգնելը վերացնել: Աշկոմի իրավունքներն ընդլայնած են:

Եսպես, որինակ, միայն աշակերտներին վերաբերող գործերը այժմ միայն աշկոմն ել կքննի: զպաշխանոց ու դպրոցական խորհուրդ կգնան միայն այն գործերը, վորոնք վերաբերում են և զպաշխներին, և աշակերտներին: Ֆուտորով խաղալ կարելի յեւ:

«Միությունը» վերջացավ:

#### 16 դեկտեմբերի.

Հենց են եւ յես կարծում եյի, թե ամեն բան վերջացել ե, վոր մեկ ել հանկարծ ձմեռվա արձակուրդից առաջ զպաշխանոցում զպաշխները կազմել են բոլոր աշակերտների ընութագիրը. և ով ուզինար, կարող եր կարդալ իր բնութագիրը: Յես վոչ միայն կարդացի իմը, այլ և արտագրեցի:

«Մյացե կոստյա, 15 տարեկան: Տարիքի համաձայն ընդհանուր

զարգացումը անպարման անբավարար եւ Մեծ դժվարությամբ ե կարողանում սովորել Խնքնավտահությունն—անսահման եւ Հասարակական աշխատանքին վերաբերվում ե բացառիկ ջերմությամբ ու նյարդայնությամբ, բայց արագ սառչում եւ Դեսահասության շքջանն ու սեռական հասունության—արբունքի շրջանը բացառիկ դժվարությամբ ե անցկացնում: Բնազդները գերակշռում են և իր խառնվածքի ուժի համեմատ անհապաղ յելք են պահանջում: Կոպիտ ե, հանդուզն և ծալքահեղ խիստ: Սենսորական և շարժողական կենտրոնների աշխատանքը—ըստ իր ուժի—բացառիկ հիվանդագին ու ծակող յեսակենտրոնացումն և ստեղծում: Դեպի ապագա հասակավոր կյանքն ունեցած կիսագիտակից վերաբերմունքը սնունդ և տալիս բանականությանն ու նրա աշխատանքներին—բնազդների նկատմամբ: Այդ աշխատանքը կատարվում ե և, առայժմ քիչ նկատելի, բայց պտուղներ տալիս ե: Տիպիկ դեռահաս ե՝ ըստ Ստենլի Հոլլի:

Ո՞վ ե եղ Ստենլի Հոլլը: Յերեկ Դալտոնից պակաս մի բուրժույշ չե... գնացի նիկալետուի մոտ հարցնելու, թե ինչ և «յեսակենտրոնացում»: Նա բացատրեց, վոր դա նույն յեսականությունն է, միայն ափելի վատը: Դուրս ե գալիս, վոր յես—յեսական եմ: Յես կարծում եմ, վոր յես յեսական չեմ, բայց, ինարկե, դպաշխներին համոզել չի լինի: Բանն այդ չե: Ա՛յ, նրանք գրում են, վոր յես շատ մեծ դժվարությամբ եմ կարողանում սովորել: Եղ գուցե և եղափես ե, բայց բացատրած չե, թե ինչու: Իսկ դա եղափես ե—վորովհետեւ Դալտոնն է: Դալտոնը լիներ, յես ել ենպես կոսվորեյի, ինչպես բոլորը:

Անցյալ տարի յես ուրիշներից լավ չեյի սովորում, բայց վատ ել չելի սովորում—դեռ կարդալու ժամանակ ել եր մնում: Իսկ հիմա Դալտոնի պատճառով յես ժամանակ չեմ ունենում: Սիլվայի բնութագիրն ել սրա նման մի բան եւ: Յես նրա հետ խոսեցի, և նա ինձ հետ համաձայնեց, վոր դրա պատճառը Դալտոնն է:

### 18 դեկտեմբերի.

Եսոր ընդհանուր ուրախություն եր, վորովհետեւ հավաքատեղից դպրոց բերեցին Ալլոշկա Զիկինին: Մենք յերկար ժամանակ աղաղակում եինք «ուռա» և ճոճում եինք նրան: Հետո աշկոմի ժողով յեղավ, վորը վորոշեց նրան հոր մոտ ուղարկել, իսկ նրա հետ միասին բանակցությունների համար պետք և գնալինք յես ու Սերյոժկա Բլինովը:

Ալլոշկան շատ նիհար ե ու գունտտ և շարունակ լուսմ ե: Յերեկ նա շատ վատ ե ապրել թե անտապաստանների մոտ, թե հավաքատեղում: Պարապմունքներից հետո մենք նրան տարանք հոր մոտ: Գալիս ենք հալրն զգաստ նստած ե և բզով կոշիկ ե շինում, իսկ մայրը կար ե

անում: Մայրը հենց վոր վոր տեսավ Ալյոշկային, իսկույն աղաղակեց: Իսկ Սերյոժկան ասում և հորը:

— Քաղաքացի Զիկին, այ, մենք ձեր վորդուն բերել ենք ձեզ մոտ: Դպրոցը լեռաշխավորում է, վոր նա կսովորի և ընդհանրապես իրեն լավ կտահի: Միայն դպրոցը պահանջում է, վոր դուք նրան չը-ձեծեք:

Զիկինի հայրը բիզը ցած դրեց և ասում է.

— Դուք վոչ մի լիակտատար իրավունք չունեք իմ կլանքին խառ-նըվելու կուղեմ—կսպանեմ, կուղեմ—կենդանի կթողնեմ: Բայց միայն նա ձեր դպրոցում գողություն անել սկսեց—կնշանակի դուք ել նրան սովորեցրել եք:

— Մեր դպրոցում գողանալ չեն սովորեցնում,—պատասխանեց Սերյոժկան, — իսկ յեթե նա հանցանք ե գործել ապա ալլև չի անի: Միայն, քաղաքացի Զիկին, ինկատի ունեցեք, վոր յեթե թեկուզ մա-տուլ դիաչեք սրան, դուք գործ կունենաք ամբողջ դպրոցի հետ և բա-ցի գրանից գատի տակ կընկնեք:

Յերբ դուրս յեկանք, Սերյոժկայի հետ, դիտմամբ կանգնեցինք նրանց պատուհանի տակ: Տեսանք, թե մայրն ինչպես ե կերակրում Ալյոշկային, իսկ հայրը նրա հետ խոսում է, կարծես թե վոչինչ չի յեղել: Մենք հանգստացանք ու գնացինք:

### 19 դեկտեմբերի.

Դպրոց ևմ գնում, և փողոցում հանգիպեց Լինա Գոն: Մոտենում է ինձ և ասում.

— Վերջին անգամ հարցնում եմ քեզ: դու պիտի խոսես ինձ հետ, թե չե:

— Վերջին անգամ պատասխանում եմ քեզ, վոր ճիշտ ալնպես, ինչ-պես բոլոր աղջիկների հետ:

Նա իսկույն հեռացավ: Այ հիմքը:

Իր կլանքում յերեք ինձ չի հարցել, ու հիմի հանկարծ խելքին փշել և «վերջին անգամ»: Նա ինքն ե իմ մոտից ուրիշ տեղ նստել ու հիմի հանկարծ խոսիր նրա հետ: Եդ յերեկ Սև Զոյան ե ազդում նրան վրա: Զե, միքանի աղջիկ կան—ուղղակի խելազարներ են:

Հետո յեկա դպրոց: Ենտեղ բոլորը նստած են լաբորատորիա-յում և անգիր են անում: Յես սկսեցի մոտենալ տղաներին և հարցնել, թե բաները վոնց եւ Բանից դուրս ե գալիս, վոր ահազին մեծամաս-նության դեկտեմբերի ստուգումներն իմի նման պատրաստ չեն: Իսկ մոտավորապես կեսը գեռնոյեմբերինն ել չի տվել: Են ժամանակիցին հա-վաքեցի տղաներին, մենք գնացինք պետքարան, ծխցինք ու մի ծը-րագիր մտածեցինք:

## 21 դեկտեմբերի.

Եսոր, թեկուզ մինչև առավոտյան ժամը հինգը, կնստեմ, բայց կաշխատեմ բոլորը գրել այնպես, ինչպես յեղավ։

Բանն այն է, վոր գեռ յերեք որ առաջ մենք վորոշեցինք վերջ տալ Դալտոնին և լերեկ համարյա ամբողջ որը պատրաստվում ելինք։ Եսոր, յերբ յերեխաներն սկսեցին հավաքվել դպրոց, բոլոր պատերին թղթեր կամ հասարակ թերթիկներ կպցվեց այս մակագրություններով։

— Կորչի Դալտոնը։

— Գրո՛ղը տանի բուրժուա Դալտոնին։

Տղաներն, ինարկե, բոլորն ել շատ ուրախ ելին։ Խոկույն վաղեցինք նվազարանի մոտ — սովորելու նոր յերգը։ Յես ելի հեղինակել։

Թող վոր արգունը մեր սառչի,

Թող հեծիծանք մենք զգո՞ն,

Ու թո՛ղ փտի ու կորչի՛,

Ու թող կորչի՛ լորդ Դալտոն։

Իսկ յերբ դպաշխները մոտեցան, նրանց գիմավորեցինք ես յերդով։ Դպաշխները, կարծես թե վոչինչ չգիտեն, ցրվեցին լաբորատորիաները։ Բայց վոչվոք չզնաց գեկտեմբերի ստուգությունը տալու, թեև վոմանք պատրաստվել ելին։ Ստուգվելու փոխարեն բոլոր տղաները դուրս թափվեցին բակը։ Ենտեղ արդեն մի յակագրություն կար կախված։ «Սա-լորդ Դալտոնն ե»։ Խրտվիլակն ենպես եր գրված բակի մեջաեղում, վոր պատուաններից յերեսում եր. սկսեցինք նրա շուրջը պարել և «կարմանյոլ» յերգել, Հետո խրտվիլակն այրեցինք։ Վրա վազեց դռնապանը, բայց յերբ տեսավ, վոր վտանգ չկա, ինքն ել սկսեց մեզ հետ ծիծաղել։ Խրտվիլակը բոցավավում եր ճարճատյուն ու ալավ արձակելով։ Իսկ մենք յերգում ելինք։ Հետո ել մենք այս յերգը յերգեցինք։

Ա՛յ զու բուրժու, լորդ անիծված,

Դե՛, հեռացի՛ թ, ե՛ծ քոսոտած։

Ու յերգելով ներս թափվեցինք դպրոց։ Բոլոր դպաշխներն այստեղ սպասում եյին մեզ, ու դահլիճում Զին-Պալնան հարցըց մեզ՝ ուղիւմ ենք արդյոք ընդհանուր ժողով անել, թե արդեն ենպես ենք տրամադրված, վոր ավելի լավ և ցրվենք տները։ Թեև փոքրերից միքանիսն աղաղակում եյին, թե գնանք տուն, բայց մենք ցանկացանք ընդհանուր ժողով անել, են ժամանակ ընդհանուր ժողովի զանգը տվին։

Ժողովից առաջ լես գնացի պետքարան և հանկարծ տեսնում եմ  
միջանցքում ինչ-վոր տոմսակ կա ընկած, Վերցրի և կարդացի.  
«Եղափս ել իմացեք բոլորդ, վոր մենք, լերկու աղջիկ, այլեւ  
չենք ուզում ապրել ի՞նչ և դրա պատճառները.—ահա.—նախ բոլորը  
մեզ վիրավորում ունեղացնում են, չետ մեղնից մեկը ուզում և շուա  
արժանանալ անդրշիրիմլան կլանքին, մլուսն ել—դժբախտ սիրո  
պատճառով: Մենք բոլորին ներում ենք, Խնդրում ենք մեզ լեկեղեցա-  
կան կարգով թաղել: Ու իմ եսորվա նախաճաշը թող վերցնի Կոստյա  
Ռյաբցել: Յես նրան ել եմ ներում: Ով ես տոմսակը կարդա, թող վոչ  
վոքի ցուց չտա: Ու թող մեզ միասին թաղեն, մի գաղաղի մեջ: Իսկ  
յեթե ինքնասպաններին լեկեղեցական կարգով թաղել չի կարելի,  
ապա թող թաղեն ենպես, միայն թե հոգեհանգիստ կատարեն: Մնաք  
բարեւ:

«Հ. Գ. Իսկ յեթե ուզում եք մեր մեռած մարմինները գտնել, ապա  
գնացեք ֆիզիկական լաբորատորիան:

### Լինա Գ. և Զոյա Տ.»:

Յես վրդովկեցի ու նորից վաղեցի դեպի դահլիճը, վոր մեկ ել  
հանկարծ տեսնեմ պատին գնդասեղով ելի մի տօմս և կպցըրած: Յես  
պոկեցի ու կարդացի.

«Մնաք բարեւ, բոլորդ, բոլորդ, բոլորդ, և ծնողներ և աշակերտ-  
ներ—ամբողջ դպրոց: Մնաք բարեւ: Մեր մարմինները ֆիզիկական-  
լաբորատորիայումն են:

### Լինա և Զոյա»:

Ներս վաղեցի դահլիճ: Ենտեղ ընդհանուր ժողովն արդեն սկսվել  
էր: Աղաղակեցի.

— Ենտեղ արեք, ֆիզիկական լաբորատորիա շտապեցեք: Աղջիկ-  
ներն ենտեղ ուզում են ինքնասպան լինել, Գուցե դեռ վրա կհասնենք:

Բոլորը տեղներից վեր թուան և անցան ֆիզիկական լաբորա-  
տորիա—թե դպաշխները, թե աշակերտները: Յես ամենից առաջ ներս  
ընկնողներից մեկն ելի, բայց... ենտեղ վոչվոք չկար:

Իսկույն բոլորն սկսեցին պահարանների մեջ, դարակներում  
փնտռել, կարծես թե նրանք կարող ելին ենտեղ թագնվել: Մեկ ել  
հանկարծ լսարանից մի ձայն լսվեց.

— Եստեղ են: Յերկուսն ել:

Իհարկե, բոլորս թափվեցինք լսարան, և իսկապես—յերկուսն ել  
ենտեղ են, և յերկուսն ել կենդանի: Նրանք նստարանների լեռեր  
նստել ելին և սոսկալի կերպով լաց ելին լինում: Դե, նրանց իսկույն-  
ենտեղից դուրս քաշեցինք. իսկ իմ կոկորդս չորացել եր: Յես միայն  
այժմ նկատեցի, վոր նրանց փնտռելու ամբողջ ժամանակը կարծես  
մեկն ինձ խեղդում եր:

Ղինային ու Զոյային տարան ուսուցչանոց վալերյանկա տալու, իսկ դպաշխներն ու ընկերներս շրջապատեցին ինձ ու հարցուփորձ ըսկը սեղին, թե յես վոնց իմացաւ ինարկե, յես ցուց տվեցի. ինքու տոմսակն իւր, և պատմեցի, թե ինչպես գտաւ.

Են ժամանակ Զին-Պալնան ասաց.

— Սա անկարգութուն և ծովսակները դիտմամբ են զցել. Նըրանք իսկի յել չեն ուզեցել ինքնասպան լինել, այլ ես բոլորը նրա համար են արել վորպեսզի իրենց վրա ուշադրություն դարձնեն: Պետք և հեռացնել նրանց դպրոցից:

Յերբ նա ես բանն ասաց, իմ սիրտը խիստ թեթևացավ, և յես նկատեցի միագամից, վոր աղաներից վոչվոք չներքեց, գեմ չխոսեց Զին-Պալնային: Հետո ուսուցանոցից յեկավ նիկպետոժը և ասաց, վոր ինքը հարցրել ե նրանց, թե ինչ ձեռվ եյին ուզում վերջ տալ իրենց կյանքին, և նրանք խոստովանել են, թե ուզեցել են ածխաճուռվ մեռնել: Դրա համար նրանք վառարանի անցքերը փակել են ժամանակից զուտ—ֆիզիկական լարորատորիայում, ու նստել են հնտեղ: Յեվ իսկապես ֆիզիկականում միքիչ հոտ կար:

— Իսկ ինչժամ յեն ֆիզիկականից գնացել.—հարցնում և Զին-Պալնան:

— Վախեցել են, — պատասխանեց նիկպետոժը ժպտալով, ու բոլորը ծիծաղեցին: Են ժամանակ Զին-Պալնան հարցնում ե մեղ.

— Են վճր անձնասպանը միջանցքում տոմսեր շաղ կտա, են ել հասցեն գրած, իսկ վոր զլխավորն ե՝ կամրացնի պատին:

Բոլոր յերեխաները համաձայնեցին, վոր ճշմարիտ և ասում:

— Կնշանակի, եստեղ անկասկած. կեղծիք կա, դե նրանք հիանալի կերպով գիտեյին, վոր մինչև իրենց մեռնելը մարդ կմտնի ֆիզիկական լարորատորիան, — ասում ե Զին-Պալնան: — Ստիպված եմ կանչել նրանց ծնողներին:

Իսկ այստեղ Ալմակֆիշը կանգնեց և ասում ե.

— Փիլիսոփայական հայեցակետից, քանակապես—դա ժամանակաշանի առատությունն ե, իսկ վորակապես բարու յեվ շարի այն կողմն և գտնվում:

Սա քանիշերորդ անգամն ե՝ յես լսում եմ նրանից ես բանը. պնդում ե գրամափոնի պետ:

Եստեղ նիկպետոժը ձեռքը բարձրացրեց և ասում ե.

— Խնդրում եմ ինձ լսեք, տղերք: Մենք նոր, ազատ դպրոց ենք կառուցում: Դուք և կարդացել եք, և լսել վոր առաջ դպրոցը բոլորովին ենապես չեք, ինչպես այժմ: Ինարկե, նոր դպրոցի կառուցման ճանապարհին ամեն տեսակ դժվարություններ կարող են լինել, ինչպես և ամեն մի նոր գործում: Այս եսոր դուք դալտոն-պլանին դեմ դուրս

Էհկաք: Աշխատանքի ալդ միջոցը ձեզ զուր չի գալիս, Միթե զուք ուշ զում եք, վոր հին դպրոցի պես ամեն ինչ ստիպմամբ սովորեցնեն ձեղ, վոր ձեր ուղեղները ձեր կամքի հակառակ քաշեն դեպի լուսը, Անվիճելի էն, վոր գալտոնով պարապելը դժվար է, զուցե և դալտոնը մեր կյանքին հարմարեցնելու դործում ել շատ սխալներ կան, բայց չե՞ վոր եղ սխալները կարելի յե վերացնել: Նա չի սխալվում, ով չի աշխատում: Նոր զպրոցն աճում ե վոչ թե հանգիստ, ինչպիս ցանկալի էիր, այլ փոթորիկներով և խոչընդուներով: Ա՞ր զուք զեմ զուրս լեկաք և ինքնավարության և գալտոն-պլանին—այս բոլորը խոչընդուներ են: Ցեղ մենք, ձեղ հետ միասին կամաց-կամաց հաղթահարում ենք: Աղջիկները սրանով ուզում եին նոր խոչընդուն հարուցանել մեր զեմ, բայց սա—հիմարաբար, անդիտակցարար եր, և շատ լավ է, վոր զուք ուզում եք ներել նրանց: Բայց յես ուրիշ բան ել չեյի սպասում ձեզանից—նոր ու ազատ մարդկանցից, մարդիկ, վորոնք աճում են հեղափոխությունից, փոթորկալի, բայց յերիտասարդ դարաշրջանից: Մեր վարիչ Զինայիդա Պավլովսան կարծես թե համաձայն չե ներել այդ աղջիկներին: Ցես միանում եմ ձեր խնդրին, յես կարծում եմ, վոր ծնողներին կանչելու ել կարիք չկա, և հատկապես դպրոցից չպետք ե հեռացնել նրանց: Ցես կարծում եմ, տղե՛րք, վոր մենք ձեղ հետ ենպես կարող ենք աղդել նրանց վրա, վոր նրանք ինքնասպանության մասին իսկի չեն մտածիլ, ու մեղ հետ միասին այն գիտակցության կգան, վոր նոր ու ազատ դպրոցում խավարը, հուսահատությունն ու ինքնասպանությունը տեղ չունեն: Այսպե՞ս, ուրիմ, Զինայիդա Պավլովսա, յես ել յերեխաների հետ խնդրում ենք ձեղ—ներեցեք Զոյային և Լինային:

Զին-Պալնան ուզում եր մի բան ասել, բայց եստեղ մենք բոլորս զոյացինք.

— Ներեցե՛ք, կազդե՞նք: Ներեցե՛ք: Ներեցեե՞՛ք:—Այնպես վոր Զին. Պալնան նույնիսկ ականջները փակեց:

Սպասեց, մինչեւ աղմուկը դաղարեց, ձեռքը բարձրացրեց և ասաց:

— Եղ աղջիկներն, իհարկե, պետք ե հեռացվեն: Ցես կարծում եմ՝ լուսբաժինն ել եղ կարծիքին ե: Բայց յես իմ կողմից հիմամածայնելի այս գործին մեծ նշանակություն չտալ և նույնիսկ ինձ վրա վերցնել նրանց յերաշխավորելը, յեթե դպրոցը կհամաձայներ կատարել մի փոքրիկ պայման:

Մենք ականջներս սրեցինք:

— Ի՞նչ պայման:

— Այսպիսի պայման.—սասում ե Զին-Պալնան.—գիտակցաբար վերաբերվել դալտոն-պլանին և անմիտ արարքներով չխանդարել նրա ընթացքը: Համաձայնեցեք ինքներդ, վոր ևսորվա ձեր արարքն ան-

մտություն եր: Ամենաշատը դուք կարող եք ապացուցել նրա գծվառությունը, և վոչ թե նրա անողութ լինելը: Իսկ են եւ, ինթե պետք է մի բան ապացուցել, պետք ե խելացի կարգով անել և վոչ թե խըստ-վիլակ այրելով: Եսպե՞ս, սա յե իմ պայմանը:

Մենք բոլորս լոռում ենք, իսկ Նեկալետոժն ասում ե.

— Հը՛, ինչ կասեք, տղե՛րք, հս պայմանը կարելի լի ընդունել: Համենայն դեպս մեզ հնարավորություն ե արվում խելացի կերպով խորհրդածել դալտոն-պլանի մասին: Յեթե մինչև այժմ եղակիսի խորհրդակցություն չի կալացել, — զբա պատճառը ժամանակ չլինելը և ուրիշ գժվարություններն եյին: Հը՛, ինչ ե, տղե՛րք, ընդունում ենք:

Նայում եմ, շուրջը բոլորն ել ձեռքները բարձրացրել են: Սիրտս սեղմելով, լես ել եմ բարձրացնում:

— Այդ գեպքում —ասում ե Զին-Պալնան — լես Զոլալին և Լինալին սերում եմ և լուսբաժնի հետ բանտկցությունները վերցնում եմ ինձ վրա:

— Ուռուամամ — զոռացինք մենք ենպես, վոր նույնիսկ մեր ականջները զընգացին: — Ճոճել Նիկալետոժին: Ճոճել:

Ու Նիկալետոժը թռավ ողի մեջ:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՌԱՄԱՅԱԿ

### ԱՌԱՋԻՆ ՏԵՏՐ

1 հունվարի 1924 թ.

Տոներին մեր կոմյերիտականների հետ յես մասնակցեցի «կոմյերիտականների ծննդին»—բանվորական ակումբում։ Հավանական է, վոր մեր ըջիչն ել այդ գործարանին կցցեն։ Մենք՝ յես ու Սիլվան զնացինք յերեկոյան ժամը 10-ին, ու դեռ վոչինչ չեր սկսվել, թեև դահլիճը լիքն եր։ Շատ շոգ եր ու նեղվածք։ Ժամը 11-ին դասախոսը չեկալ և սկսեց պատմել զանազան աստվածների մասին։ Գուցեց և հետաքրքրական կլիներ, բայց թե դասախոսի ձայնը կտրվել եր ու հոգնել եր. և բոլորը հետեւմ ելին, թե նա ինչպես ե ջուր խմում։ Հետո նա հանկարծ, դասախոսության կեսին, ժամացուցին նայեց և ասաց. «Ներեցե՞ք, ընկերներ, յես ալստեղ պետք ե վերջացնեմ, վորովհետեւ դեռ հինգ տեղ պետք ե հասնեմ»—բեմից թուավ ու գնաց։ Ես-պես դասախոսությունը կիսատ մնաց։ Իմ կարծիքով՝ յեթե եղպես եր, իսկի չպետք ե ել սկսեր։ Դրանից հետո շատ յերկար ժամանակ վոչինչ չեղավ. իմ քունն արդեն տանում եր, վոր հանկարծ վարագույրը քացվեց, ու սկսվեց ներկայացումը։ Այդ ներկայացման ժամանակ զանազան պետությունների տերտերները վիճում են իրար հետո, թե ուժ աստվածն ե լավ։ Հետո հանկարծ ավելը ձեռքին մի բանվոր ե մըտնում և բոլորին քշում ե։ Զես իմանում, թե րուրժուն ինչի լե եղտեղ քարշ գալիս։ Նա թեև գործ չուներ, բայց բոլորից ավելի լավ եր խաղում և շատ ծիծաղելի յեր։ Ամենից ծիծաղելին այն եր, վոր նրա վարտիքը շալվարի տակից վեր եր ընկնում։ Նա շարունակ վարտիկն ուղղում եր, ու հենց վոր ուղղում եր, ելի իսկուն ընկնում եր։ Դահլիճը թնդում եր ծիծաղից, իմ կարծիքով, յեթե հակակրոնական պրոպագանդա լի, ապա անպայման մի վորեւ ծիծաղելի բան լինի—այն ժամանակ նա կհառնի իր նպատակին։ Թե չե զանազան զեկուցումներն ու դասախոսությունները, մանավանդ ենպիսին, ինչպես յեղավ, կարող են յետ մղել։

Հետո, յես երեկ նոր տարու նախորյակին յեղա ելի մեր դպրոցի

1 աստիճանի ներկայացմանը, և ելի Միբվայի հետո ներկայացնում եյին «Կարմիր Մոխրատիտիկի»։ Իր թե ինչ-վոր յերկու քույրեր են յեղել—բուրժույկաներ, իսկ յերբորդը՝ ըլացարարունի։ Ում հեղինակությունն ե, չգիտեմ, բայց իմ կարծիքով եղապես չի լինում, մանավանդ վոր նրանք յերեքն ել միասին են ապրում։ Հետո իրը թե եղ բուրժույկաները զնում են պարահանդես, իսկ Կարմիր Մոխրատիտիկը մեռում ե ամանները լվանալու։ Հետո կարմիր վերնաշապկով ինչ-վոր մեկը գալիս ե և եղ Մոխրատիտիկին թոռուցիկ և տալիս՝ կարդալու։ Մոխրատիտիկը կարգում ե, հազնում ե քրոջ շորերն ու փախչում։ Յերկրորդ գործողությունը՝ պարահանդես ե.՝ այդ պարահանդեսին պարում են Մոխրատիտիկի քույրերը և ելի ուրիշները—գույնգուռն շորերով։ Յեղ հանկարծ ներս ե վազում Մոխրատիտիկը և նույնպես սկսում ե պարել։ Նրան մոռանում ե իշխանազնը, բայց նա վախենում ե, փախչում և կորցնում ե իր կոշիկը... Հետո, յերրորդ գործողության մեջ իշխանազնը գալիս ե նրանց տուն և սկսում ե կոշիկը վոտքներին չափել։ Վոչչիքի չի գալիս, բայց Մոխրատիտիկին դալիս ե ալդ կոշիկը։ Իշխանազնը պատրաստվում ե նրա հետ ամռանանալ, բայց հանկարծ հայտնվում ե նույն կարմիր վերնաշապկով ագիտատորը, հայտարարում ե, վոր ապստամբությունն սկավել ե, և սկսում ե խփել եղ իշխանազնի վզին։

Իշխանազնը—պռեկ հասարակության միջով,—կարմիր վերնաշապկավորն ել նրա լետեիցն ե ընկնում, իսկ այդ ժամանակ ըեմ են գուրս գալիս պարահանանդեսին բոլոր յեղողները և քույրերի հետ «Ինտերնացիոնալ» են յերգում։ Եստեղ վոչ ճշմարտանման շատ բան կար, բայց, իհարկե, փոքրիկ յերեխանելիք ինչ պետք ե պահանջես, իսկ խաղալը շատ լավ ելին խաղում, այնպես, վոր լես ինքս ել եյի ուղղում բեմի վրա լինել։ Իսկապես, ինչո՞ւ մենք յերբեք ներկայացումներ չենք տալիս։ Պետք ե խոսել նիկալետոֆի հետ, իմ կարծիքով ընդհանրապես ավելի հետաքրքիր ե կինո գնալ, քան թե թատրոն, վորովհետև կինոլում կարիք չկա մտածելու. բայց յերբ ինքդ ես խաղում, — թատրոնում ավելի հետաքրքիր ե.՝ եկրանի վրա չե՞ վոր միայն քո ստվերը կլինի։

Ներկայացումից հետո փոքրերն սկսեցին պարել, Յես իսկունկնացի նրանց դպաշխունու.՝ Մար-Իվաննելի մոտ և ասացի.՝ իսկ դուք գիտե՞ք, ընկեր, վոր պարելն առհասարակ արգելված ե։

Իսկ նա պատասխանեց.

— Նախ, ընկեր Ռյաբցե, դուք մի խառնվեք ալն բանին, ինչ ձեր գործը չե. յերկրորդ աստիճանն ել ե ձեր ձեռքից լաց լինում, իսկ դուք առաջին աստիճանին ել եք խառնվում։ Իսկ յերկրորդ՝ յեթե ձեզ դուր չի գալիս, կարող եք գնալ. Յեղ հետո, յես չգիտեմ, թե առհասարակ դուք եստեղ թինչ եք շինում,

Յես սաստիկ զալրացա, բայց զսպեցի և վորոշեցի զեկուցել թջիջին, չետո նալեցի, թե ինչպես են պարում, և հարցը Սիլվային, թե նա պարել գիտե՞ւ Նա տաց, վոր գիտե, բայց չի սիրում, այնինչ աչքերն ենալես են վառվում, ամբողջ գեմքն ել կարմրել ե, և ժապավենն ել նվազի հետ ծուլ-ծուլ ե լինում: Յես կարծում եմ, վոր լիթե յես եստեղ չլինելի, նա անպայման կակսեր պարել: Ճիշտ ասած, յես ել ինձ ենալես չելի դգում, ինչպես միշտ: Շատ պայծառ լուսավորված եր, բոլոր ճարագները վառած ելին, և նվազը, թեև հասարակ գաշ-նամուր եր, բայց այնպիս եր համակում, վոր ուզում եր մի անսովոր բան անել: Արինակ փայլուն ճառ ասել, կամ զրոշակը ձեռքիդ բոլորից առաջ գնալ: Կամ թեկուզ զլսկոնձի տալ: Բայց մեր ընկերներից, վոչվոք չկար, բացի Սիլվալից, Յեվ հանկարծ Սիլվան ձեռքս բռնում ե ու ասում:

— Վլադիկն, յես այլես վոչ մի կերպ եստեղ չեմ մնալ (մենք եղանակայման ելինք կապել, վոր նա ինձ Վլադիկն պիտի ասի): Դու լիթե ուզում ես, կաց, յես գնում եմ:

Իհարկե յես ել գնացի: Մենակ ձանձրալի յե: Ճանապարհին Սիլվան ասաց ինձ:

— Մարդ շատ բան կուզի, ապա են ժամանակ ել գաղափարախոսությունն ուր կմնա:

Մրա հետ չհամաձայնել չի կարելի:

### 5 հունվարի.

Յես իմ վերաբերմամբ նկատեցի, վոր գիշերները շատ քիչ եմ քնում: Յես սկսեցի փնտուել դրա պատճառը, կարելի է եր կարծել, վոր լորված պարապմունքից ե, բայց ես արձակուրդի ժամանակ յես շատ քիչ ելի պարապում, թեև ստուգումներս մնում ելին, վոր դեկտեմբերը չհաշվենք, նոյեմբերից ել միքանի առարկա: Բավական զրունում և խաղում եմ, այնպես վոր վոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ անքնությանս պատճառը: Յես գնացի Սերլուծկա Բլինովի մոտ և հարցըրե եղ մասին: Նա յել հարցըրեց ինձ.

— Իսկ շատ ես կարդում:

Պատասխանեցի, վոր այս՝ Սերլուծկան ել ասեց, վոր իրը թե գրանից ե, Նրա մոտից գուրս գալով, սկսեցի ինքս ինձ ստուգել: Բանից դուրս ե գալիս, վոր արձակուրդին յես ենքան ել շատ չեմ կարգացել, բայց միքանի կտոր հատկապես հիշում եմ և գիշերները շատ եմ այդ մասին մտածում:

Այս, որինակ, յես մի պատմվածք կարդացի «Ժամադրություն» վերնազրով: Այդ պատմվածքում Փրանսուհի-դաստիարակչուհին մի տղայի ցույց ե տալիս իր վոտքը, ծնկից վեր: Թեև տղան հետ նրա-

Նից փախչում ե, վորովհետեւ ֆրանսուհուց քրտնքի հոտ եր գալիս, բայց և այնպիս եղ տեղը լավ եմ հիշում: Ես պատմվածքը—հանրային մատենադարանի զեղնավուն մի զրքույկ եր: Յեվ ահա թե ինչ ե ստացվում, —վոր աղջիկների կողքին սովորում ես, նրանց հետ կը ուղարկում ես, դզվում ես նրանց հետ, ու դա ամենափոքր ազդեցություն անդամ չի թողնում, բայց եզ մասին մի բան ես կարդում, և արդեն չես կարող քննել: Սա ինչից կարող ե լինել:

Իսկ գլխավորը և զզվելին.—ակամա մտածողությունից հետո— ֆիմ-ֆոմ-արիկ-պոկ:

(Քնագրում այդպիս ե.—Ն. Ո.):

### 11 հունվարի.

«Կոճ»-ում տեղավորված և «Պարոցական սիրելի բառերի» ժողովածու: Ճղղան, զահլաչի, հաստապոյշ, բերանբաց, սրիկա, անասուն, ապուշ, սատանա, գե, խոզ, մոռութ, լիրք, շանվորդի, լկոի, ստոր, սատկած, դմիիչ, գյաղա, իսկ հիմարի և ախմախի մասին—ել ի՞նչ խոսք:

Յեվ հետո իել ծանոթություն ե զրած, թե միքանի բառեր ել պատի թերթում գրել չի կարելի, վորովհետեւ լրագիրն ինքը նրանից կը կարմրեր: Առաջարկում ենք այդ անել «Իքս»-ի «Հավելված»-ին, այսինքն «Ճ—Հ-ին»:

Միջանցքում մեզ հետ խոսակցության բռնվեց Նիկպետոսը: Նա ասում եր, վոր պատի լրագիրը դպրոցում շատ ոգտակար ե, իսկ հետո հարցըրեց:

— Ի՞նչ եք կարծում, ի՞նչ միջոցներով կարելի յե մտքառել այս բառերի զեմ:

Եստեղ մեզնից մեկը բերնից թոցրեց, թե եսպիսի արտահայտությունների մեջ վոչ մի վատ բան չկա: Մլուսները հակառակն ասացին: Նիկպետոսն եսպիսի մի բան առաջարկեց:

— Վատ բառեր գործածելուց միանդամից չես կարող յետ սովորել, բայց կարելի լե վարժվել հետզհետեւ իրեն հետևելով: Որինակ՝ թող աշկոմն արգելի ըստանից գենը բառերի գործածությունը, իսկ և մինչև սատանան կարելի լի:

Մենք ծիծաղեցինք և համաձայնեցինք, վոր կարելի յե վործ ածել—հաստապոյշ, բերանբաց, խոզ, հիմար, ախմախ, սատանա բառերը: Մնացածներն արդեն սատանից գենը կլինեն: Հետաքրքիր ե, թե ինչ դուքս կզա սրանից: Թեեւ սա պաշտօնական ընդհանուր ժեր, ալ հենց ենպես, ուղղակի միջանցքում, և այս ժողովի վորոշումը պարտադիր չեւ:

Հետո Նիկպետոսը հավաքեց մեզնից միքանի հոգու և գնացինք

հասարակագիտական լարորատորիան։ Աղջիկներ չկալին։ Նիկպետոժն ել ասաց։

— Հետո յես ելի կխոսեմ ձեզ հետ մայր հայրոյելու և ուրիշ անպատճառ—պետոք հայոյանքների մասին։ Յես կարծում եմ՝ անպատճառ խոսքեր տակ, —դա նշանակում ե ապականել իր լեզուն։ Ի՞նչ կասեյիք դուք, յեթե լերեխաները դպրոց գալին կեղտոտ, անլվա և միջատները վրաները։

Մենք պատասխանեցինք, վոր, իհարկե, դա չի կարելի։

— Ա՛յ, դե մայր հայրոյելն ել նման պատմություն եւ եղ միենուլն ե, թե դպրոց գուն կեղտի մեջ թաթախված։ Յեվ դա յել նույնալիսի վարակ ե, ինչպես կեղտից ե լինում, միայն մտավոր։ Հին դպրոցը դրա գեմ չկարողացավ մաքառել, վորովհետև այնտեղ աշակերաները ճնշված ելին և գոնե մայր հայրոյելով հայտնում ելին իրենց բողոքը։ Իսկ դուք ինչի՞ գեմ եք բողոքում։

Մենք պատասխան չունելինք և բոլորս ել լոեցինք։ Յես նկատեցի, վոր նիկպետոժը եղ մասին առաջին անգամը չե, վոր խոսում եւ

### 12 հունվարի.

Կաղամբատոժն Ա՛յ, պետք եւ վոր շատ ուրախ լինի։ Այդ բանն ինձ իբրև մի սաստիկ գաղտնիք և նույնիսկ լերդումով հայտնեց Հ-ըդ խմբից Վանյա Պալկինը։ Դեռ վոչինչ չեմ զրի, թե չե ով գիտի ինչ կլինի։ Միայն յես կասկածի մեջ եմ, թե արդյոք սա չի հակասում կոմսոմոլին։

### 13 հունվարի.

Եսոր պարապմունքներից հետո աղջիկներից մեկը նստեց գաշնամուրի մոտ և սկսեց պարի յեղանակ տաքացնել։ Իսկ աղջիկները—թե մեծերը, թե փոքրերը, կարծես խոսքները մեկ արած—սկսեցին վոտքերի շարժումները։

Յես շատ լավ գիտեմ, վոր պարն արգելված ե, ուստի տղաներից միքանիսին համոզեցի, ու սկսեցինք աղջիկներին վոտք զցել։ Եստեղ, իհարկե, ճիշ ու ծըրտոց բարձրացավ, ներս վազեցին դպաշխները, և թռուցիկ ընդհանուր ժողով սկսվեց։ Յես ես տեսակ թռուցիկները շատ ավելի յեմ սիրում, վորովհետև պաշտոնական ժողովի ժամանակ ձանձրույթ ե պատճառում արձանագրությունը, իսկ թռուցիկի ժամանակ աղմուկ ե, բոլորը վոգնորվում են, և միշտ ել վորկե հարվածալին խողը մասին ե լինում։

Զին-Պալնան ամենից առաջ հարցը եց, թե ողաներն ինչու լին պարին դեմ։

— Վորովհետև դա գտղափարախոսորեն անկայունություն ե, —

պատասխանում և Սերլուժկա Բլինովը: Պարը վոչ մի գիտական և խելոք բան չունի իր մեջ, այլ միայն իրար քսվելով սեռական դրզիու և առաջացնում:

Եսուհի Յելնիկիտկան դուրս պրծավ և ասում ե.

— Իսկ իմ կարծիքով տղաները պարին դեմ են, վորովհետեւ իրենք պարել չգիտեն: Թուտրուն ել վոչ մի խելոք ու գիտական բան չի պարունակում, բացի կոպտությունից, սակայն տղաները ֆուտրու խաղում են:

Եսուհեղ բոլոր տղաներն աղաղակեցին, թե ֆուտրուլը—Փիղկուլտուրա յե:

— Եդ գեղքում պարնել Փիղկուլտուրա յե,—ասում ե Սև Զոյան:

— Ե՞—դրա հետ յես ել համաձայն—չեմ, —ասաց Զին-Պալնան: Ինձ թվում ե, թե պարին Փիղկուլտուրա ասել արդեն վոչ մի կերպ չի կարելի: Բայց, համենայն դեպս, պարը զրավիչ զվարճություն ե, և յեթե արգելվում ե, ապա անհրաժեշտ ե մի ուրիշ բան դնել զրտ փոխարեն: Հարցն այն և միայն—թե ինչ: Յես կառաջարկելի այլ կաղմակերպված խաղ խաղալ: Յես կարող եմ ձեռնարկ տալ:

Յես զրան առարկեցի, թե՝

— Նախ սա մանկապարտեղ չի, վոր աղջիկների հետ կլոր պար բըռնենք: Հետո ավելի խելացի զվարճություն կա, վորին, յես կարծում եմ, վոչվոք չի հակառակիլ: Ա՞յլք առաջին աստիճանումն ելի և տեսա, թե փոքրերն ինչպես խաղում ելին բեմի վրա: Յես ինքս ել ուզում ելի բեմ բարձրանալ: Ինչու ներկայացումներ չենք տալիս: Իժ կարծիքով սա անփությություն ե:

— Միանգամայն ճիշտ ե, —պատասխանեց Զին-Պալնան: — մեզ մոտ ուղղակի վոչվոք չկա, վոր դրանով զբաղվի: Յեթե դպրոցի աշխատակիցներից մեկն սկսի այդ բանը—յես դեմ չեմ լինի:

Մենք աղմուկով կպանք Նիկալետոֆին, և նա համաձայնեց և ասաց, վոր միայն հարմար պիեսս կփնտուի:

Դրանից հետո ցրվեցինք, իսկ Վանյա Պալկինը ինձ մի կողմ քաշեց և սկզբում սոսկալի կերպով յերդվեցրեց, վոր յես գաղտնիք կպահեմ: Իսկ հետո ասաց, վոր հին նոր տարու առթիվ կաղամբատոն կլինի, և հասցեն ասաց: Պետք ե գնալ ժամը իննին, իսկ հիմա արդեն ութ և կեսն ե: Հալրիկոն ասաց, վոր գնում ե կինո, լավ տեղ և մի լիմուրդ փող վերցրեց:

14 հունվարի.

Կաղամբատոնի մասին չի կարելի գրել, թե չե յես շատ շատ կգրելի: Բայց դա սարսափելի գաղտնիք ե: Այստեղ տեսա Լինալին և սաստիկ զարմացա:

Դպրոցում պատրապմունքները շարունակվում են իրենց հերթին, և ինձ համար հիմի շատ ավելի հեշտ ե, զորովհետեւ յես ել աշկու չեմ: Նորմերը բոլորը ստուգվեցի և զեկտեմբերի մի մասը:

Եսոր նիկպետուժը մի զիրք եր բերել և մեզ բոլորիս հավաքեց լսարան:

— Ա՛յ, — առում ե — Մլարցան առաջարկում ե ներկալացում կազմակերպել, ու իմ կարծիքով նրա այս նախաձեռնությունը շատ լավ է: Բայց ժամանակակից լավ պիես չկա, ուստի յես առաջարկում եմ ներկալացնել Շեքսպիրի պիեսաներից մեկը — «Համլետ»-ը: Ճիշտ ե, առաջին հայացքից այնտեղ վոչ մի հեղափոխական բան չկա, բայց դա միայն արտաքուստ ե եղածու: Դրա փոխարեն այնտեղ ներքին հսկայական ըողոք կա:

Հետո նա սկսեց ձայնով կարդալ նա շատ լավ ե կարդում, և դուրեկան ե նրան լսելը, միայն թե պիեսայի մեջ սարսափելի շատ իրարանցում կա: Ինարկե, դա կարելի յե ներել, զորովհետեւ պիեսան համարյա հինգհարյուր տարի առաջ ե գրած, և Շեքսպիրը զբել ե թագուհու համար և վոչ թե պրոլետարիատի:

Համենայն գեպս յես կը ըստ, թե լսարանում յես ինչ ասացի Շեքսպիրի սխալների մասին: «Համլետ»-ում սկզբից պատմվում ե, թե ինչպես պահակը կանգնած եր սանդուխքի մոտ, և հայտնվեց վոդին: Հետո գալիս ե Համլետը, և ալդ վոդին սանում ե նրան ով գիտի թե ուր ե այնտեղ սկսում ե պատմել նրան, թե ինչպես իրեն, ալսինքն վոզուն թունավորեցին: Բանից դուրս ե գալիս, վոր դա նրա հոր վոդին ե, և նրա հորը իրոք թունավորել ե հոր յեղայրը — ու ինքը ամուսացել Համլետի մոր հետ և Համլետի հոր տեղ թագավոր դարձել: Ինձ թվում ե, թե եստեղ յերկու բան չեն կապվում: Նախ վոչ մի վոդի չի լինում, իսկ յեթե վոդին հայտնվում ե, ապա յեթե յես Համլետի տեղ իրնելի, կփախչելի և վոչ թե նրա հետ գրույց կանելի, ախար վոգուն վոչ մի զենքով չես կարող հաղթել, յեթե նա ուզենա կովել կամ խեղղել: Ցերկորուգ՝ եղ վոդին դուրս ե տալիս, թե իրեն թունավորել են նրանով, վոր քնած ժամանակը թուշնը լցըել են ականջի մեջ: Եղ ինչ-վոր յես չեմ լսել վոր եղ ձեռվ թունավորեն: Բայց, դե, եղ վոչինչ, գուցեց հինգհարյուր տարի առաջ եղածու եր:

Շեքսպիրի շատ ավելի գլխավոր սխալը հետեւալն ե Ենտեղ Պոլոնիուս կա: սա մի ծերունի յե: Նա Ոֆելիա անունով մի աղջիկ ունի և Լաերտ անունով մի տղա: Համլետը ես Ոֆելիայի հետ ե ընկնում, մի տեսակ սիրահարվում ե նրան: Թեեւ դա շատ պարզ չե: Իսկ Լաերտն ապրում ե Թրանսիբայում, և ծերունին շարունակ անհանգըստանում ե, վոր վորդին ենտեղ ճամպից չշեղվի:

Հետո բոլորն ել սկսում են նկատել, վոր Համլիտն ինչ-վոր իրեն կորցնում ե, և կարծում են, թե դա Ոֆելիայի սիրուցն ե, այնինչ խեղաքես նա ջղայնանում ե վոգու պատճառով և նույնիսկ խեղաքար և ձևանում: Իսկ դա զիտմամբ և ձևանում: Նա ուզում է իմանալ՝ վորդին իրեն ճիշտ ասաց թե խարեց—ես թունավորելու մասին ելի:

Ցեղ ահա խեղաքար Համլետը ներկայացում ե կազմակերպում, ուր ցուց ե արվում, թե ինչպես են նրա հորը՝ թագավորին թունավորում: Իսկ նոր թագավորը, այսինքն Համլետի հորեղբարյուր, Համլետի մոր հետ գալիս են այդ ներկայացմանը: Ա՛յ, գլխավոր կապի բացակայությունը եստեղ ե: Ցես կարծում եմ՝ են ժամանակ վոչ մի խելագարի թույլ չեյին տալ ներկայացում կազմակերպել այլ ուղղակի գժանց կուգարկելին: Ինչ և ե, թագավորն ու թագուհին հանդիսանուում, լսում են այս խեղաքար ներկայացումը, իսկ լեբբանուում են, թե ինչ են ներկայացնում, ապա—պուկ—փախչում են: Իսկ Համլետը դիտմամբ իր խեղագարությունը կատարելապես ցուց է տալիս: Նախ աթոռի տեղ հաստակին ե նստում, լեբբանում ընդհատում և զանազան ախմախություններով, իսկ հետո վեր ե թոշում ու ճչում:

— Ցեղիրուին վիրավորեցին նետով:

Թագավորը սաստիկ զայրանում ե, իսկ Համլետն ել հենց եղ եր ուզում: Նա հիմա հաստատ իմացավ արդեն, վոր դա թագավորն և թունավորել հորը: Թեե բուրժուական ծագութն ուներ Համլետը, համենայն զեպս խելոք տղա յեր: Հետո Համլետը խոսում ե մոր հետ, և թագուհին մի տեսակ ներողություն ե խնդրում, իսկ ծեր քոփակ Պոլոնիուսը թագնվում ե վարագույրի յետեղ և ականջ ե զնում: Համլետը նրան նկատում ե և սրով վարագույրի միջով շամփրում—ինչպես մի մուկը: Դրանից աղջիկը—հենց են Ոֆելիան արդեն իսկապես վոր խելքը թոցնում ե, իսկ վորդին—Լաերտը Թրանսիայից գալիս ե և ուղում ե Համլետին՝ վերջ տալ, վորովհետեւ սա են աշխարհն եր ուղարկել իր հայրիկին: Դրա համար Լաերտը թունավորում ե իր սուրը և Համլետին մենամարտի յե կանչում: Են ժամանակ եղպես եր կոչվում, յերբ յերկուսով իրար գեմ ելին դուրս գալիս: Իսկ վորպեսզի Համլետին հաստատ կերպով սպանի, եստեղ թագավորն ել մի թունավոր բաժակ ե պատրաստում: Միայն մի տեսակ ենպես ե դուրս գալիս, վոր Համլետը շուր ե տալիս Լաերտին, թունավոր բաժակն ել թագուհուն ե հասնում, իսկ հետո Համլետն սպանում ե թագավորին և ինքն ել մեռնում ե: Դրանից առաջ մի տեսարան կա, ուր Համլետը զանգը ձեռքին դատողություններ ե տալիս: Իմ կարծիքով՝ դա արդեն բոլորովին անհեթեթությունն ե: Գանգերի հետ ով զրույց կանի, բացի խեղագարներից: Բայց ախար Համլետը խեղաքար չեր; այլ միայն ձեւանում եր:

Զայների մեծամասնությունը կողմանակից եր, վոր եղ պիեսան ներկալացնենք: Յես ձեռնպահ մնացի, վորովհետեւ յիս կարծում եմ, վոր ժամանակակից մի բան լիներ, ավելի լավ կլիներ: Բարրիկադ-ներ, հեղափոխական պատրար:

Կարդալու ժամանակ Սև Զոյան ենտեղ եր, բայց սուս եր: Իսկ լինան, չզիտեմ ինչու, չկար:

### 16 նունվարի.

Յես մինչեւ հիմա կաղամբատոնի մասին վոչվոքի վոչ մի ծըպ-տուն: Ամենալիստ գաղանիք եւ վենյա Պալկինն ասում ե, վոր ընդ-հանրապես զուրս չեն տալիս: Սա շատ կարեոր եւ:

Այսուամենայնիվ յես կասկածում եմ.—արդյոք համապատաս-խանում ե սա կոմյերիտական գաղափարախոսությանը և ընդհանրա-պես կոմմունիստական պալքարին: Զգիտեմ ինչու այդ տեսակետից յես չեմ վստահում Միլվային: Վենյա Պալկինն ել ե ասում, վոր նրան չպիտի հարտներ վենյան ասում ե, թե նա կարծես են ենակ չի: Ու-րիշ ել վոչվոք չկա, վոր խորհրդակցեմ: Վենյա Պալկինը կոմյերիտա-կան չի, այլ ենպես: Յեթե հին կոմյերիտականներից մեկն ու մեկին հարցնեմ—վայ թե ամբողջ գործը տանուլ տամ: Ուղղակի չզիտեմ ինչ անեմ:

### 17 նունվարի.

Եսոր վերջացավ մեր խոռվության վերջնական ցույցը Դալտոնի դեմ: Հրահանգիչը յեկել եր և ընդհանուր ժողով եր: Քննարկվում եր դպրոցական կարգն ու կանոնը և դալտոն-պլանով աշխատելը: Բայց ժողովը ձանձրալի յեր, և յես համարյա շարունակ պլակատ հյի նկա-րում: Զի՞ն-Պալսան պատմեց, թե մենք ինչպես այրեցինք «լորդ Դալ-տոն»ի խրավիլակը: Իմ կարծիքով դա բոլորովին զուր եր.—յերեխա-յական մի չարաճճիություն եր—իսկ նա իսկուն—հրահանգչին: Հրա-հանգիչը ծիծաղեց, հետո ասաց.

— Այ, դուք ձեզ ու ձեզ ապրում ելիք, և ստիպված չելիք կողմ-նակի մարդիկ կանչել: Իսկ այժմ չկարողացաք իրար հասկանալ. ի-հարկե դպրոցական աշխատավորներն ել են մեղավոր, յերեխաներն ել. և նման ե այն բանին, վոր ստիպված ենք դպրոց մտցնել ան-դպամահատական գործիք—թեկուզ հենց իմ միջամտության ձեռվի: Յես կարծում եմ, վոր ապագայում կարելի յե առանց եղ գործիքի յել կա-ռավարքել: Իսկ այժմ յես ձեզ հարցնում եմ, տղայք... ի՞նչն ե դալ-տոն-պլանի թերությունները, և, ձեր կարծիքով, ի՞նչպես պետք ա-զատվել զբանցից:

Այստեղից Դալտոնի վրա զանազան մեղադրանքներ թափվեցին.

ասում ելին, լարորատորիաներում պիտուկքներ չկան, ժամանակ չի լինում, մանավանդ պաշտոն ունեցողների համար, և ուրիշ ամեն տեսակ մեղադրանքներ: Հետո յիս վերկացաւ:

— Խնդիրը լարորատորիաները չեն, — ասում եմ, — այլ այն, վոր Դալտոնից մարդու գլուխ ցրվում ե, և ձեռքերը դողում են:

Բոլորն ել ինչպես են ծիծաղում:

— Ինչու յեթ ծիծաղում. — հարցնում եմ. — ստիպված եմ յեղել զիշերը չքննել մանավանդ յերբ աշկոմ եյի, և ծիծաղելու բան չկա: Ամեն ինչ այդ գրության մեջ ե: Հետո Դալտոնով ուսումն ավելի վատ և գնում: Առաջ մեր խմբում մնացողներ չելին լինում, իսկ հիմի կան:

— Եդ ով ե. — հարցրեց Զին-Պալնան:

— Յես, — պատասխանեցի յիս, — և նորից բոլորը հոհոացին:

— Եստեղ ել ծիծաղելու բան չկա, — ասացի յիս և չարացա. — Դալտոնը շարունակ կախված ե ինձ վրա, ինչպես հացով լի մի տոպրակ: Ինչ բան ել վոր սկսում եմ, — շարունակ են եմ հիշում, վոր այս ինչ-այս ինչ ստուգումները չեմ տվել: Կամ մաթեմատիկան, կամ բընագիտությունը, կամ գիտագրամմաները չեմ զծել: Պարապելու վոչ տեղ կա, վոչ ժամանակ: Հնար չկա — վոչ կարգալու, վոչ խաղալու...

— Իսկ յես, ինց քեզ եմ շատ անգամ տեսել դասամիջոցին խաղալիս. — գուրս պըճավ եստեղ են ոչ Յենիկիտկան:

— Ե, բնչ — կնշանակի, ձեր կարծիքով, յիս պետք ե ենպես չորս պատի մեջ նստեմ:

Եստեղ հրահանգիչն ասում ե.

— Իսկ Շյաբցե, ինչու ժամանակին չեք տալիս ձեր ստուգումները:

— Չեմ հասցնում, մանավանդ վոր աշկոմ եյի:

Են ժամանակ հրահանգիչը հարցնում ե.

— Զինալիդա; Պավլովսա, մյուսներն ել են յետ մնում:

— Վաչ, դպրոցի մեծանասնությունը կանոնավոր կերպով ե դնում:

Եսպես, յիս խայտառակ յեղա և տեղս նստեցի: Դալտոն-պլանը մնաց: Միենույն ե՝ Դալտոնը ելի կմնար, թեկուզ մեծամանությունը յետ մնար: Միը դպրոցը գեռ ելի են գրության մեջ ե, յերբ ամեն բան դպաշիներն են վորոշում, իսկ աշակերտները ճորտ գլուղացիների պես են, վորոնց մասին նիկակետովը պատմել ե մեղ, ազատ են միայն են ժամանակ, յերբ հրակը կտան: Իսկ հրահանգիչը և բոլոր մյուս իշխանավորները միշտ դպաշխների կողմն են: Իմ կարծիքով մյուս դպրոցներում հսպես չի:

Իսկ վոր ամսնավիրագորականն ե, դա են ե, վոր մեր յերկրորդ աստիճանին ել շարունակում են նայել ինչպես փոքրերի: Գնալիս Զին-Պալնան ասաց.

— Այժմ դպրոցը վերջնականապես իր հունի մեջ և մտել կսովորենք, կսովորենք և կսովորենք: Հիշում եք՝ ում ասածն եւ:

Բոլորն ազագակցին:

— Իենինի, Իենինի:

Սրանով եւ վերջացավ:

18 նունվարի.

Դերերը բաժանեցին և չամլետի դերը Մերյոժկա Բլինովին ընկավ: Յես իսկի ին նրանից վատ չեյի խաղալ: Ու հիմա ստիպված եմ Լաւերտ խաղալ: Թեև ենտեղ ել սուսերամարտություն կա, բայց դե են չի ելի: Գրողը տանիք, Լաւերտ կիսաղամ: Զեղածից ավելի լավ եւ: Եսոր յս արդեն փորձեցի սուսերամարտել և մեռնել Վոչինչ—դուրս ե գալիս:

Աղջիկների նկատմամբ ավելի վատ եւ:

Ցեթե ենտեղ ամեն տեսակ աղախինները չհաշվենք, իսկապես պիեսայում յերկու կանացի դեր կա: — Թագուհին և Ռֆելիան: Յեվ, իհարկե, բոլոր աղջիկներն ուզում ելին Ռֆելիա խաղալ: Զանաղան խմբերից հավաքվեցին յերեսուներկու հոգի: Նիկպետոժն ել, դե, սկսեց մեկը մյուսի յետեկո փորձել, թի վոնց են կարդում, վոնց են կարդում և զանաղան ձևեր անում: Ցերկար ժամանակ չեր իմանում աղջիկներից վորի վրա կանգ առնի և եղակս ել հետաձգեց վաղվան: Ու հենց վոր նա զուրս յեկավ լսարանից, իսկույն սկսվեց իրարանցումը: Բոլոր աղջիկները միասին գոռում են: Մեկն աղաղակում ե: «Դու վոչինչ չես կարողանում, քո նույնիսկ ձայնը չի հարմարվում»: Իսկ մյուսը թե՝ «Իսկ քո հաստկը կարճ եւ: Ցերորդը, թե՝ «Ցեթե ինձ դեր չտան, յես իսկի չեմ ել մասնակցիլ»... Ու բոլորը միասին գոռում են, վոչինչ չի հասկացվում: Ցես առաջարկեցի նրանց վիճակ գցել: Նրանք բոլորը միասին հարձակվեցին ինձ վրա...: հաղիվ փախա լսարանից... Լինան ելի չկար, ասենք նա դպրոց ել չեր յեկել իսկ Սև Զոյան չփորձեց ու իրեն քաշված եր պահում: Նա այժմընդհանրապես շատ քիչ ե հանդիս գալիս, այն գեպքից հետո, յերբ նա ու Լինան ուզում ելին անձնասպանություն գործել և վախեցան: Իսկ Սիլվան գերերը բաժանելուն չեկավ. նա յենթագրում ե, վոր ինքը զրամատիկական տաղանդ չունի: Ցես ամեն կերպ համոզում ելի նրան, բայց նա իսկի... Ասում ե՝ յես փորձել եմ, և վոչինչ դուրս չի յեկել:

19 նունվարի.

Վենկա Պալկինը թեև սուխարեցի լե (նրա հայրը՝ վրաններ վաճառող ե), բայց սովորում ե չորրորդ խմբում և ամենից լավ ե սովորում:

Դպաշխներն ասում են, վոր նա մեծ ընդունակություններ ունի:

Յեվ իսկապես, քանի յես նրան դիմել եմ մի խնդիր լուծելու կամ պատմությունը բացատրելու, նու միշտ շատ լավ և ոգնել ինձ: Ինձ թշվում ե, թե նրա լիրևակայությունը շատ հարուստ է: Անցյալ տարի նա ինձ սկսեց նկարագրել Ամերիկան, և հանկարծ ասում ե, թե ինքըն ենտեղ լեզել ե, այսինքն Ամերիկալում:

Են ժամանակ յես իսկույն չհավատացի նրան, վորովհետեւ զրահամար ախար ամերիկայերեն պետք և գիտենալ, իսկ վենկան ինքն ասում ե, վոր չգիտի: Բայց յես ենակես ցուցյալի, վոր իբր թե հավատացի, ու են ժամանակ Վենկան իբրեւ մի սոսկալի գողանիք հավատնեց ինձ, վոր ինքը նորից ուզում և Ամերիկա գնալ, և զուցեց ինձ ել կտանի իր հետ: Յես են ժամանակ հասկացա, վոր «ուին» ե, բայց ելի ցուցյալ չտվի: Բայց այ կաղամբատոների մասին—չի խարում... Սակայն ինձ շարունակ ենակես և թվում, թե կաղամբատոնը գաղափարախոսությանը չի համապատասխանում:

Եսոր «Համելետ»-ի փորձն ե, և արդեն յերեկոյան պատի «Կոճ»-ի մեջ մի ծաղրանկար կար. Նկարած եր Աերլուծկա Բլինովը, վոր բռունցքները շարժում ե, ու ամեն կողմից հավաքվում են աշակերտները. տակն ել գրած ե.

— Ի՞նչ ե պատահել քաղաքացիներ: Մարդ են մորթել

— Ես ի՞նչ աղաղակ ե:

— Հա, ես «Համելետ» են փորձ անում:

Իսկապես ահազին աղմուկ եր լինում: Աերլուծկան խռպոտ բամբձալին ունի—ու նա անհաշիվ զայրանում ե: Իբրև Ոֆելիա փորձեցին Սև Զոյային, ու Նիկոլետտն ասաց, վոր վոչինչ: Իսկապես նա վատ չի խաղում, բայց ինձ թվում ե, թե կարելի յե ավելի լավ... Յես արդեն բավական վարժվել եմ թուր. (այսինքն փայտ) բանեցնել, ու շատ եյի ուզում բոլորին ցուցյալ բայց բանն եղտեղ չհասավ. չհասցըրինք չորրորդ գործողությունը փորձ անել:

## 22 հունվարի.

Ինձ թվում ե, թե աշխարհում ամեն բան վերջացավ, և յերկրի վրտ սև խավար իջավ: Այժմ արդեն գիշերվա ժամը լիրեքն ե, իսկ յես նստած եմ սեղանի մոտ և վոչ մի բան չեմ կարողանում մտածել ու ըմբռնել: Սկզբում ինձ թվում եր, բայց չե, ճիշտ վոր եղան: Ես Մեր գպրոցական բոլոր գործերը թվում են չնչին ու զզվելի: կարծես թե մենք բոլորս ի՞նչ-վոր մժղուկներ ենք, վորոնց միայն մ անրագիտակով կարելի յե տեսնել:

Սաստիկ սառնամանիքից պատուհանի ապակիները սառել են ու այսպիսի ձեւեր ընդունել, վոր նման են դագաղի վրա յեղող զարդարանքների: Ականջներիս դեռ ելի հնչում ե տխուր յերածշտությունը, իսկ աչքերիս առջև դեռ յերեսում են սգի ժապավենները:

Գլուխս շարունակ ուռչում ե, ու յես վոչինչ չեմ կարողանում ըմբռնել:

Այնուհետև որագրում յերեք յերես ամբողջովին սեվացրած երանակով:

### 30 նունվարի.

Ես յես ուզեցի վոտանավոր գրել ու նկարագրել այն ամենը, ինչ վոր տեսաւ Բայց ենակես դուրս չեկավ, ինչպես պետք եր Դրա համար ինչ-վոր ուրիշ բառեր ե հարկավոր, վոր յես չգիտեմ: Յես ախարդիտեմ, վոր ես որերի ընթացքում յես տասը տարով մեծացա, և այն բառերը, վոր իրեւ իրեխա գուցե կհնարելի, ալժմ չեմ կարողանում:

### 31 նունվարի.

Մինչեւ այժմ դպրոցը գեռ բոլորովին չի կանոնավորվել:

Վ. Ի. Լենինի մահը բոլորիս ենակես հարվածեց և տակն ու վրա արավ սովորական կանոնավոր կյանքը, վոր վոչ պարապմունքները, վոչ զփարճությունները չեն կարողանում կարգի ընկնել:

Ստուգումների մասին դպաշիները չեն ել խոսում: Բոլորին հասկանալի յե, վոր թեև պետք ե սովորել, բայց միանգամից չի սովորվիլ Նիկոլետոֆը վերջին որերս մեզ համար բարձրածայն շատ և կարգում: Աղջիկներն անկյուններում հաճախ վոռնում են:

Ոֆելիայի դերը պետք ե Սև Զոյան խաղա, ալժմ դա վերջնականապես պարզվեց: Եսոր փորձ կար, բայց նա յել չկար: Բոլորը մի տեսակ թմրած ելին կարդում, տրամադրություն չկար:

Զինակիղա Պավլովնան ասում ե, վոր ալժմ ամենակարեորը սովորելն ե, և մենք պետք ե բոլոր ուժներս լարինք, վորպեսզի հաղթահարենք խոչընդոտներին:

Եղ բանը նա ճիշտ ե ասում:

## ՏԵՏՐ ՅԵՐԿՐՈՐԴ

### 3 փետրվարի

«Կոճը» առաջին լերեք խմբերում անկետա յե լցնել տվել այն հարցի մասին, թի՝

— Ի՞նչ ե կյանքի նպատակը:

Այս ուսերին բոլորն ել շատ լուրջ են տրամադրված, ուստի «Կոճը» շատ պատասխաններ ե ստացել: Ամենահետաքրքիրները պատից արտադրում եմ:—

### Ցուացին Պ. Խումբ

1. Պետք ե ապրել սովորելու և իմանալու համար այն, ինչ մինչեւ ալժմ անհայտ ե: (Այ ախմախություն—Վլադլեն Շյաբցկ):

2. Մենք նրա համար ենք ապրում, վոր սովորենք, ուրախանանք, ուանջվենք, ողնենք մերձավորներին։ Բացի դրանից շատ բան կա, վորի համար և ապրում ենք։

### Պռաջին Բ. Խումբ

1. Մենք ապրում ենք և սովորում, վորպեսզի ուժեղ ու քաղաքակիրթ լերկիր ստեղծենք ու ոգնենք մերձավորներին։ Մենք պետք են գիտենանք, վոր ծովը կաթիլներից և կաղմված, ու ամեն մարդ մի կաթիլ է, վոր ապրում է, աշխատում և զանազան մեծ, փոքր ու միջակ գործեր կատարում։ Իսկ լեթե այդ կաթիլը վոչինչ չի շինում, ապա նա պետք է իմանա, վոր խանգարում և ծովին։ Այն ժամանակ նա տեղ չունի ծովում, նա պետք է հեռանա։ Այսպես, պետք և ձգտենք զիտություն ձեռք բերել, վորպեսզի կանգնենք իպաշտպանություն Խորհրդավին Ռուսաստանի՝ ընդդեմ անիծված ըուրժուապիալի։

2. Մենք ապրում ենք նրա համար, վոր հաճույք ստանանք։ Մենք սովորում ենք նրա համար, վոր աշխատանքից հետո, հանդստի ժամանակ բարեկեցիկ պայմաններ ունենանք։ Մենք հաճույք ենք զում հետաքրքիր գրքերի ընթերցանության և հետաքրքիր պատմություններ լսելու ժամանակ։ Առաջադրության ստուգում տալով ել մենք հաճույք ենք զգում։

3. Յես նրա համար եմ ապրում, վորպեսզի սովորեմ և ապագայում կրթված լինեմ։ Յես չեմ ուզում անկիրթ լինել, վորովհետեւ ամեն բան կճնշի ի՞նձ։

### Յերկրորդ Խումբ

1. Սովորելը ոգուտ և բերում պետությանը, ու մասամը ելիրեն։ Եթե յես ինձ ոգուտ չըերեմ, ապա յես կմեռնեմ առանց ապրելու, կնշանակի պետք և ապրել և ոգտակար լինել։

2. Եմ կարծիքով պետք և ապրել ապրելու համար։

3. Աղքատ մարդն ապրում է, չարչարվում է, իր ամբողջ ժամանակը կորցնում և նրա համար, վորպեսզի ապրի. բուրժուա մարդն ել ապրում և նրա համար, վորպեսզի ապրի (ինարկե անզիտակցարար)։ Են մարդը, վորը վորեն հասարակական աշխատանք և կատարում, եղ բանն ելի նրա համար և անում, վորպեսզի կլանիքն ավելի լավ լինի, թեև հաճախ ինքն ընկնում է, զոհվում, բայց ուրիշներն ավելի լավ են ապրում։ Այսպես, ուրեմն, իմ կարծիքով, նրա համար են ապրում, վոր լեթե վոչ իրենց, գոնե ուրիշների կլանքը լավ լինի։ Ու մենք այժմ սովորում ենք, վորպեսզի ինքներս ավելի լավ ապրենք, կամ ուրիշների կյանքն ավելի լավացնենք։ Այդ բանի համար մեզ իրեն որինակ կլինի նորերս վախճանված ուսուցիչ Վլադիմիր Իլիչը։

4. Պետք ե ապրել նրա համար, վոր բավարարություն ու աճուրդի իրենց կարիքներին: (Հետաքրքրի ի իմանալ, թեսա ով և զրել, Ախար եսպիսի պատասխանը ապացուցում է կատարյալ անգիտակցականություն ու են ել վոչ թե մարդու, այլ անասունի:—Վլաղլեն Բյարցե):

5. Կյանքի նպատակն է հաջորդ սերունդների համար հաստատունդիմացկուն ապագա ստեղծել:

6. Պետք ե ապրել նրա համար, վորպեսզի զենքը ձեռներիս պաշտպանենք պրոլետարիատի նվաճումները:

7. Սովորաբար ասում են, վոր կյանքի նպատակն է—աճող սերդնի համար նոր կուլտուրա ստեղծելը: Իմ կարծիքով կյանքի նըսպատակն է անխոռվ ու խաղաղ ապրել, միայն փոքրիկ-թեթե տատանումներով: (Մեր դպրոցում վժրաեղից են եսքան բուրժույներ:—Վլաղլեն Բյարցե):

### Յերրոր Խումբ (մեր)

1. Իհարկե, վոչ թե բերանը բաց նայել, թե ուրիշները ինչպես պայքարում ու հաղթություններ նվաճում, այլ անձամբ պայքարել ու հաղթահարել:

2. Վոչվոքի վոչ մի բանի մասին հաշիվ չտալ, անձամբ ամեն բանի հասնել: (Ո-հո-հո:—Վլաղլեն Բյարցե):

3. «Կոճի» խմբագիրն ես հարցը տալով, հավանականաբար վորոշել ե փիլիսոփայության սահմանները թևակոխել, կամ թե չե՞պարզապես նա սոսկալի ահ ու գողի մեջ ե ընկել մարդկային կյանքի վոչնության առջե: Առաջին դեպքում լավ ե, յերկրորդ դեպքում՝ վտառ Յեվ ահա թե ինչի: «Ակիտք ե ապրել ապրելու համար»—սա տրված հարցի միակ պատասխանն է, վորքան ել տարորինակ ու միակողմանի յե ես պատասխանը: Կյանքի ամբողջ նպատակն ու եյությունը մարդու համար միայն ինքը կյանքն ե, նրա ընթացքը, կյանքի նպատակն ու ելությանը հասնելու համար անհրաժեշտ ե ամենից առաջ սիրել կյանքը, ամբողջապես անձնատուր լինել՝ եսպես կոչված կյանքի շրջապտույտին: Ու միայն են ժամանակ ե զգացվում կյանքի իմաստը, հասկանալի դառնում, թե ինչու պետք ե ապրել: Կյանքն ենպես մի բան ե, վոր տեսության կարիք չի զգում—հակակշռելու մարդու ամբողջ ստեղծագործությունը: Յերբ կյանքի գործնականին հասնեք, կպարզվի ձեզ համար և նրա տեսությունը:

Ես բանը հատկապես կարող ե զգալի լինել ալժմյան լեռուն կյանքի միջոցին, յերբ հեշտությամբ կարելի յե մասնակցել հասարակայնությանը և քաղաքականությանը, կարելի յե ընտրել իր ցանկացածի համեմատ վորեն առարկա և առաջ ու առաջ գնալ, ուրախանալով, վոր ապրում ենք կենդանի ու թարմացած տեսականությամբ:

Առաջ, յերբ աշակերտներին դաս եյին տալիս չոր ու անհետաքրքիր, ու նրանց կյանքը ձանձրալի յէր, նրանք գործ չունենալով նայում ելին լուսնին ու լսում սոխակներին և մտածում եյին մարդկալին կյանքի աննպատակության մասին, ու ենքան եյին մտածում, վոր վոչ միայն կյանքի համը, այլև ապրելու ախորժակն եյին կորցընում, —վերջացնում ելին ինքնասպանությամբ, մի տոմս թողնելով, թե՝ «աշխարհում չարժե ապրել»:

Այս բանը մենք կարող ենք ստուգել նախանեղափոխական գրականությամբ. —կարգացեք Զեխովի «Ձանձրալի պատմությունը», և Անդրեյի «Մարդու կյանքը», ու դուք բարեսրտորեն կծիծաղեք ու կարցնեք. «Միթե իրոք գոլություն են ունեցել այսպիսի տիպեր ու հեղինակներ, վորոնք ալդչափ հեռու յեն յեղել կյանքից ու չեն ըմբռնել կյանքը»: Այս, լեզել են եղափիսի մարդիկ. նրանք չեն ապրել, այլ մտածել են, նրանք ուզում ելին կյանքը գտնել տեսականորեն, ու չեյին գտնում: Յեկ այդ մարդիկ հետազայում սոսկալի կերպով կործանվեցին. նրանք մեր թշվառ, ընկած ինտելլիգենցիալին եյին պատկանում: Ռւստի և, յեթե ես հարցը—նրա մեջ կյանքի նպատակը—հոսկահետական բնույթ ունի, ապա նա միանգամայն անտեղի յե ներկա գործով լի կյանքի մեջ, նա ամբողջովին հնին և պատկանում: Բայց իրրեալող, բնական հարց, նա չի ժխտվում: Յես ցուց չեմ տալիս, որինսակ, և. Տուստոյի դատուղությունները, վոր պնդում իր, թե չարժե մտածել մարդկալին կյանքի իմաստի վրա, քանի վոր մարդս նման և ձիու, վորին զեկավարում և տերը, յերբեք չզիտե, թե ինչու յե քշում տերը: Ընդհակառակը, պետք և հավատալ մարդկալին կյանքի անսահմանությանը: Բայց և այնպես, նույնիսկ, յեթե ուզում եք, տեսականապիս դատելով, մենք ստիպված ենք անհրաժեշտաբար իրական կյանքին դառնալու, մտավոր առաջադիմության հասնելու համար պետք և մեր ուժերը դնենք գիտության զանազան ճյուղերի համար, հետևապես պետք և մտնել կյանքի մեջ: Ով համաձայն չե սրան, ով կյանքը փընտռում և իր հոգում և հավատում և միայն նրա խորությանը, արհամարհում և գործով լի կյանքը, կամ պարզապես իր անհատական վոչչության տարտամ գրությունն և ապրում—նա պետք չե կյանքին. այդպիսի մարդու հոգին (ծանծաղանում ե) յերես և անում, վորովհետեւ նա կարող և խորանալ միայն համակերպվելով, համագործակցելով կյանքի հետ—ալդպիսի մարդը կարող և իր հանգստառության համար, ինչպես ասել և Դոստովեսկու տիպերից մեկը, «խոնարհաբար վերադարձնել աստծուն կյանքի մեջ մտնելու իրավունքի տոմսը»:

(Իմ կարծիքով սա դպաշխաներից մեկն ու մեկն և գրել—Վ. Բյաբցե):

### 5 Փիետրվարի.

Յերեկ կաղամբատոն եր: Չնայած այն ամենին, վոր այնտեղ կար, յես տխուր ելի: Յես շարունակ մտածում ելի կյանքի նպատակի մասին: Եստեղ տհաս կինային, հարցրեցի, թե ինչու չե դպրոց գալիս. նա պատասխանեց.—Թո դորձը չի: Յես ել նրան հիմար ասացի:

### 6 Փիետրվարի.

Եսոր «Համլետի» փորձն եր: Զափաղանց լավ անցավ, ենպես վոր սիրաս մինչև հիմա յել խփում ե ուրախությունից: Սերյոժկա թլինովը մոռնում եր, ինզան նման բղավում, բեմի վրա գժվածի պես ես կողմն-են կողմն ընկնում,—իսկական խելազար: Հետո նա եսպես բան հնարեց—գերեզմանափորի հետ խոսելիս նա գանգը չի ցցում գերեզմանի մեջ, այլ գանգով խփում ե գերեզմանափորին, վորպեսզի դերեզմանի մեջ, այլ գանգով խփում ե գերեզմանափորին, վորպեսզի նրան ել ապացուցի, վոր նա՝ Համլետը խելազար ե: Դա շատ թունդ ե դուրս գալիս:

Իսկ յերբ մենք սուսերամարտում եյինք, ապա յես նրա սուսերը դուրս խեցի ձեռքեցր և վոչ թե նա իմը: Ու եղակա շարունակվեց, մինչև վոր Նիկակտումն ինձ ասաց, վոր ախար սա բեմ ե, ու պետք ե այնպիս անել, ինչպես Շեքսպիրն ե ասել: Բա ինչու Սերյոժկան կար-գին սուսերամարտել չի սովորում:

Սկ Զոյան բոլորովին հայտնի չի թե յերբ, կարողանում եր ամեն գործողության համար նոր շոր հագնել ու ասում եր, թե ներկայաց-ման ժամանակ ել եղակա կանի, իսկ հիմա շորը փոխում ե, վոր վարժվի: Յերբ նա արդեն խելազարվում ե և անիմաստ յերգեր յերգե-լով բեմ ե գալիս, եղտեղ Զոյան ամբողջովին զարդարվել եր թղթե-ծաղիկներով, խառնել ու քրքրել եր մազերը, աչքերը կուլ ելին գնացել և ցած, շատ ցած եր յերգում, ենպես վոր ինձ վրա ուղղակի սարսացուցիչ տպավորություն թողեց: Իսկ հետո նա ինձ շատ ավելի դեղեցիկ թվաց, քան միշտ ե—այ ինչ կնշանակի շորերը փոխել:

Թագուհին տասը նաժիշտ ունի, իսկ մեր բեմը շատ նեղվածք ե, նաժիշտներն ել համարյա շարունակ խռնվում ելին բեմի վրա. ենպես վոր շարժվելու տեղ չկար: Շարունակ կովում եյին և հայնոյում, են-պես վոր եղ պատճառով նույնիսկ փորձը միքանի անգամ ընդհատվեց:

### 8 Փիետրվարի.

Դեռ մի շաբաթ առաջ յես Նեկակտութից խնդրեցի «Գիմնազիատ-ներ» գրքուկը, վորից նա մեզ համար կարդաց Կարտաշիկ և Կորնել մասին: Ու այդ գրքուկում ինձ զարմացրեց մի կտորը, վորտեղ պատ-մում ե, թե թոմա Կարտաշելը տուն վերադառնալիս տեսավ սպասուհի Տանլայի սպիտակ վոտքը ծնկից վեր և... Յես հիմա համարյա չեմ

քնում, ինձ միշտ պատկերանում ե եղ Տանյան և, իհարկե, ֆիմ-ֆոմ-պիկ-պոկ: Սա շատ տանջալից բան ե, զլուխս ծանր ե և համարդարթե չեմ կարողանում պարապել:

### 10 վետրվարի.

«Եքսը» դուրս ցեկավ, ու գրում ե «Կոճ»-ի և նրա անկետայի մասին կյանքի նպատակի վերաբերմամբ: Ենտեղ մի եսպիսի հոգված կա:

### Կյանքի նպատակի մասին մեր գայրոցում

Մոռ ժամանակներս «Կոճը» խոր փիլիսոփալությամբ եր զրադվում և սկզբունքային հարց եր դրել—պարզել ընդհանրապես կյանքի նպատակը: Իսկ «Եքսը», ինչպիս արդեն շատ անգամ գրվել է, ձգտում ե ամեն բան ոգտագործել մեր դպրոցի համար, ուստի և ոգտվելով հանգամանքից, խոսում ե կյանքի նպատակի մասին—մեր դպրոցում: Դրա համար մենք կողտավենք ինգուկտիվ մեթոդով, այսինքն մասնավորից ընդհանուրին կանցնենք, հասառոտարան լինելու համար կվերցնենք այն բոլոր հոսանքների հետական կհաերը, վոր եղ մասին կան դպրոցում, այսինքն նրանց լոգունդները:

1. Իմացիր—ինչ մինչ ալժմ անհայտ ե, որինակ՝ գտիր պերպետուում-մորիլեն:

2. Գիտությունը՝ լույս ե, տգիտությունը—խավար:

3. Կեցցե պարելը:

4. Կեցցե խաղաղ կյանքը թեթև տառանութերով:

5. Բավարարություն տուր քո կարիքներին: Մասնավորապես չըմոռանաս խնչել և գնալ...

6. Մեր պատանեկան հասակում շատ սովորելը վասակար եւ կեցցե պատ ժամանակը:

Իսկ մասնավորից ընդհանուրին անցնելով—բացականչում հնք.

— Զարդիր զբան, մեր փողոցումն ե ապրում, յես ճանաչում եմ դրան:

Իմ կարծիքով սա շատ հիմար բան ե ևնույնիսկ իսկի յել ծիծառելիք չի: Կյանքի նպատակն իմանալով, կիմանաս նաև, թե ինչպիս վարվես: Իսկ շատ, շատ զժվար գրություն ե, յերբ չգիտես, թե ինչպես վարվես:

### 11 վետրվարի.

Յերեկ յես տեսնվեցի իմ թանգարին ընկեր Վանկա Պետուխովի-հետ: Նա այժմ գործարանումն ե, լավ ոռնիկ ե ստանում և պահում ե ամբողջ ընտանիքը: Ինձ ել եր գործարան կանչում, բայց յես պատաս-

խանեցի, վոր նախ պետք ե սովորել: Կյանքի նպատակի մասին խոսեցինք նրա հետո նա պատասխանեց ինձ պարզ ու վորոշ.

— Ապրում ենք նրա համար, վորպեսդի հին, փոտած կարգերի տեղ նոր, պայծառ և ուրախ կարգ ստեղծենք — կոմմունիզմ:

Առաջ էես ել եյի եղանակ մտածում, բայց «Կոճ»-ի անկետան ինձ շփոթեցը:

Հետո մենք խոսեցինք սեռական հարցի մասին: Նա ասաց.

— Ե, մեր գրքարանում իսկի հարց ել չկա: Պարզապես, յեթե մեկին մի աղջիկ գուրք ե գալիս, մոտենում ե ու ասում.

— Մանկա, կամ լինակա, գու ինձ գուրք ես գալիս: Ուզում ես միասին զբունենք: Յեթե չի ուզում, յերեսը շուռ ե տալիս: Իսկ յեթե ուզում ե — զբունում ե:

— Այսինքն ի՞նչպես — իսկական ձեռվլ, — հարցը յես:

— Դե, նա, ինարկե, իսկական: Ինչպես մարդ ու կին: Ախարդ ենպես անհրաժեշտ բան ե, ինչպես ուստելիքը: Առանց ուստելու չես կարող ապրել, առանց դրան ել չես ապրիլ:

— Բա, իսկ յեթե յերեխան...

— Ե՛, իսկ մվ ե յերեխայի մասին մտածում զբունելիս, հիմարի մեկը:

— Դու յել ես եղանակ անում, Վանկա:

— Դե, բա ի՞նչպես:

Ինձ թվում ե, թե նա, գոնե իր մասին, վչում ե:

## 12 Փետրվարի.

Փորձն անցնում ե կատարյալ ընթացքով: Սերյոժկա Բլինովի ձախը բոլորովին կտրվեց, բայց նրա խաղն եսպես ավելի սոսկալի յեղուրս գալիս: Հետո նա շարունակ նոր ու նոր բաներ ե հնարում: Այ, որինակ, եսոր, յերբ թագավորը պետք ե հեռանա բեմից, ապա շամլետն աղաղակում ե.

— Յեղջերուին վիրավորեցին նետով: Սերյոժկան ճշաց ու հարձակվեց թագավորի վրա, բռնեց նրա կոկորդից և սկսեց խեղղել: Յես կարծեցի, թե նա իսկապես խելագարվել ե: Իսկ նիկպետովը վաղեց բեմը, բռնեց Սերյոժկայի ուսերից և հարցըց.

— Ի՞նչ ե պատահել ձեզ:

— Ախարդ չեմ վոր պետք ե ցույց տամ թագավորին, վոր յես խելագար եմ:

— Բայց չեմ վոր Շեքսպիրն եղանակ չի ասում:

— Ե, հետո ի՞նչ վոր, չի ասում: Սա ուժիսոյրական հնարք ե:

— Նախ — ուժիսայորը յես եմ, և վոչ թե գուք, — ասում ե Նիկպետովը, — և պետք ե մեկն ու մեկը կարգադրություն անի: Ու հետո,

յեթե ձեր ասածով վարվենք, տպա Համլետը պետք և պատը բարձրանա և հրդեհի տունը:

— Ռեժիսուրը գերասաններին պետք և ազատություն տա, — պատասխանում ե Սերլոֆկան, — թե չե մենք գերասաններ չենք լինի, այլ պատճենապատանք (մարիոնետկա), կենդանի տիկնիկներ կլինենք:

— Յես ձեզ պատություն եմ տալիս, միայն խնդրում եմ մարդ մի խեղդեք:

— Եստեղ ել են դպաշխները ճնշում, — փնթփնթում եր Սերլոֆկան:

Իմ կարծիքով՝ ինարկի, ռեժիսուրը պետք և ընթացք տա գերասաններին:

Այ, որինակ, յես Լաերու եմ խաղում, և Համլետը խլում ե իմ սուսերը: Իսկ յես այ, եսպես կանելի — սկզբում յես կիւելի Համլետի սուսերը, հետո մեծահոգությամբ թույլ կտալի, վոր նա վերցներ, ու հետո նա խլեր իմ սուսերը:

Եսոր գոլոցից դալիս եմ, ու հայրիկոն ինձ հանդիպում և շփոթված գեմքով հարցնում եմ՝ թնչ և պատահել իսկ նա պատասխանի փոխարեն ինձ մի ինչ-վոր թուղթ և տալիս: Ու նրա ձեռքերը դողում են: Յես սկսեցի կարդալ.

«Ձեր վորդի Կոստանդինի վարքի վրա ուշազրություն դարձըք: Վերջին ժամանակներս նա սաստիկ փոխվել ե գեղի վատը: Կոստյան ենալիսի հասարակության մեջ ե լինում, ուր գինի չե խմում, մինչև վոր բոլորովին հարրի: Բացի զրանից Կոստյան սովորել ե թունդ ծխախոտներ ծիել: Բայց իր բոլոր արարքները մեծ զգուշությամբ ծածկում ե ձեզնից: Կոստյան 2 միլիարդ մտցնելով միքանի տղաների ու աղջիկների հետ ընկերություն են կազմել, վոր նրան ամենենին վայել չե և խիստ փչացած-անըարոյական: Շաբաթ որերը եղ ընկերության բոլոր անդամները հավաքվում են Խվանովսկի պուրակում մի տեղ, ամբողջ գիշերը կատաղի քեփով անցկացնելու — մեծ քանակությամբ գինի խմելով: Ուստի յերեկի Կոստյան շաբաթ գիշերն ավելի բարեձև պատճառով տանը չե գիշերի: Այս ամբողջ նամակը ձեզ կթվա մի հիմար ու անհալատալի հնարովի բան, բայց դուք կարող եք միջոցներ գտնել ստուգելու նրա բովանդակությունը: Կոստյան վաղուց ե սովորել ճարպիկ կերպով խաբել ձեզ, ու միայն դուք կարող եք նրա վրա աղել:

Յես տեղս ու տեղս նստեցի: Հայրիկոն հարցնում ե.

— Կոստյա... ասա ծերունուս... ճիշտ ե ես բոլորը:

— Վոչ, հայրիկո, սուստ ե, — պատասխանում եմ յես, բայց աչքերս զժվում, պատվում են: — Իսկ յեթե դա ճիշտ լիներ, ապա դու արդեն վաղուց նկատած կլինեյիր: Պատահել ե, վոր յես յերբեցե տուն

վերագառնամ, ու ինձնից զինու հոտ գա: Դե, խղճով ասա: Դե, հը:  
— Զե, կարծես թե չի յեղել Բայց ախար լիս հոտ չեմ քաշել:  
— Բայց ախար հայրիկո, դու աչքեր ունեմ թե չեմ: Արտաքինիցու  
չելիքը կարող նկատել: Ձե՞ վոր լիս ամեն որ աչքիդ առաջն եմ:  
— Եդ, գե եղպես ե, բայց դե ելի...

Ծերունին չի հավատում: Ի՞նչպես համոգեմ յես նրան:

— Դե, լիս զինի խմելու ժամանակ ունեմ: Ի՞նքդ զիտես, համա-  
րյա ամեն որ մենք ամեն տեսակ ժողովներ ենք ունենում, շան նման  
հոգնած տուն եմ գալիս և իսկույն գրքերս եմ ձեռքս առնում... մի  
աղատ բոսք չկա... Վոր ծխում եմ, դա ճիշտ ե, միայն քեզ չեյի ու-  
զում ցուց աալ, վորպեսզի չվշտանաս: Իսկ զինու մասին -ոյին եւ  
իսկ իմ ուղեղում.

«Ես վոր սրիկան և գրել Գրված և տպած տառերով և առանց  
ստորագրության, վոր ձեռքը չճանաչվի: Միթե... միթե...»:

Վոչինչ չեմ կարողանում հասկանալ: Իսկ հայրիկոն քալում և  
սենյակում, ձեռքերը զողում են, ու ենպես մեղքս յեկավ, ենպես մեղքս  
յեկավ, վոր ասել չեմ կարող: Մոտեցա, գրկեցի նրան:

— Հայրիկն, — ասում եմ, — հավատա իմ խոսքին, վոր եդ բոլորը  
հեշտ չեւ Ախար յես քեզ յերբեք չեմ խարել ինչո՞ւ հենց հիմա պիտք  
և խարեմ: Դու հանգստացիր և պառկիր քնելու: Իսկ եղուց, թե ու-  
զում ես, արի գպրոց և հարցրու մեր վարիչին, թե յես եղպես բան  
կանեմ, թե չեմ: Համաձայն ես:

Եստեղ նա նայեց իմ աչքերին ու ասաց, վոր վոչ մի տեղ չի գը-  
նալ, առանց են ել հավատում իւ Բայց այ, յես չիանգստացա: Յես  
մեռնեմ, թե չինատագուտեմ ես գործը: Ես մվ և գրել:

Մինչև այժմ քնել չեմ կարողանում: Կյանքիս մեջ առաջին ան-  
գում համոզվեցի, թե ինչքան դժվար բան ե խարել ենպիսի ծերունու,  
ինչպիսին իմն ե:

### 13 վետրվարի.

Այս քեզ բան: Բանից գուրս ե գալիս, վոր եղպիսի նամակ վոչ  
միայն իմ հորն են ուղարկել, այլ և ուրիշ շատ հայրերի ու մայրերի:  
Եսոր վեց հոդի նրանցից գպրոց յեկան և բոլորը Զին-Պալնափի մոտ գը-  
նացին: Զին-Պալնան խսկույն հավաքեց նրանց բոլորի վորդիներին և  
յերկար ժամանակ ինչ-վոր նրանց հետ բացատրում եր, պարզում եր:  
Բոլոր յերեխաները նրա մոտից գուրս յեկան քրտնամխած, ինչպես  
բաղնիքից: Յես խսկուն նրանց հարցութիւր արի, վոչվոք վոչինչ  
չասաց: Վենկա Պալկինը բոլորովին գունատվել եւ վոչվոքի հետ չի  
խոսում: մասձում ե, թե մեկն ու մեկն իմացել ե կաղամբատոնի մասին, և  
շատ ե վախենում, վոր եդ գործի համար իրեն բանը բուրդ կլինի: Իսկ

իմ կարծիքով, այժմ արդեն վախենալու բան չկա: Յեթե բացվի, պետք ե պարզապես ասել—այն, եսպես, եսպես ե: Բայց, համենայն դեպս, պետք ե ձգտել վոր չբացվի:

### 16 փետրվարի.

Դպրոց յիկավ Լինան: Բացակայում եր, իրը թե հիվանդության պատճառով: Նրա աչքերը լացակումած ելին. բանից գուրս և գալիս, վոր նրա հորն ել են ենպիսի նամակ ուղարկել: Ամբողջ որը լաց եր լինում: Վերջապես յես չհամբերեցի, մոաեցա նրան և ասացի:

— Կազմական, բոլորիս գաղտնիքը կբացվի: Ախար վոչվոք վոչ մի բան վորոշ չգիտի. ամեն բան կարգին անց կիենա:

Իսկ նա սկսեց ապելի բարձր զուալ և արցունքի միջից ասում ե ինձ:

— Ես բոլորը քո պատճառով: Ամեն բանի մեղավորը դժւ լիս, դժւ Մենակ դժւ Յեթե դու չինելիր, յես...

Ու բոլորովին գոռաց: Բայց լիս ի՞նչ զործ ունեմ եստեղ—չեմ հասկանում: Ի՞նչ կարող ե լինել իմ մեղքը: Առում ելին, թե նա իմ պատճառով ուզում եր ինքնասպան լինել բայց դա դատարկ բան ե: Իսկ յեթե նույնիսկ եղանակ, ապա յես ի՞նչ մեղավոր եմ, վոր նա սիրահարվել ե ինձ: Իսկ կաղամբատոնի նկատմամբ յես ենքան եմ մեղավոր, ինչքան և ինքը,— զնացել եմ և ուրիշ վոչինչ:

### 17 փետրվարի.

Եսոր Զինայիդա Պավլովնան խնդրեց աշկոմի ժողով գումարել: Անստորագիր նամակների հարցն եր դրել նա:

— Խնդրում իմ,—ասում ե,—նրանց, ովքեր վորեկ բան գիտեն այդ նամակների առաջ գալու մասին, և արդյոք նրանց միջ գեթ մի կաթիլ ճշմարտություն կա—թողասի հոգ մասին ընդհանուր ժողովին: Բոլորը տեսնում են, վոր աշակերտներից շատերը ճնշված են և չեն կարողանում սովորել ինչպես պետք ե:

Պատասխանի տեղ բոլորը լուսում ելին: Եղ ժամանակ յես ծանր ապրումներ ունեցա: Մի կողմից յես կապված ելի սոսկալի լերկումով, ինչպես և մյուսները՝ բոլորը: Իսկ մյուս կողմից յես պարզ տեսնում ելի, վոր հարցը վորեկ կերպ պետք ե վճռել:

— Դե, լավ, —ասում ե Զին-Պալնան. — յես տեսնում եմ, վոր վոչ վոչինչ չգիտե: Այդ գեպքում ես գործը մոռացության կտանք: Յես համոզված եմ, վոր բոլորի մեղավորը անստորագիր նամակներ գրողի հարուստ լերնակալությունն ե: Իմ կողմից յես շատ շնորհակալ կլինել ելի նրանից, այս հեղինակից, յեթե նա իր լերնակայությունը մի վորեկ այլ կողմն ուղղեր և վոչ թե դպրոցական պարապմունքները խանգարելու ուղղությամբ: Բացի զրանից կարծում եմ, վոր պետք ե

շոտակեցնել «Համլետ»-ի ներկալացման պատրաստությունը։ Պետք է ամեն որ փորձ անել ներկալացումը կարող ե բավական թարմացնել ձեր զլուխները և մաքրել ողը, թե չե շատ ճնշված մթնոլորտ եւ

Եստեղ միծամասնությունը ծիծաղեց, և յես ավելի վատ զգացի։ Յես ամաչում ելի հնապես, ինչպիս են ժամանակի լեռը խարում ելի հորս իսկապես, Զին-Պալնան մեզ բոլորիս հավատում եւ և պատրաստ ե միշտ արդարացնել մեզ, իսկ մենք խարում ենք նրան։

Վորոշեցին - վեհարպարի 20-ին ներկալացումը տալ (սա Նիկպետովի համաձայնությամբ), ու ներկալացմանը հրավիրել այն գործարանի բջիջին, վորին մոնք կցված ենք։

### 18 Փետրվարի

Ինչ ուղում ե լինի, յես պետք ե մի յելք գոնեմ սեռական հարցի նկատմամբ, վոր ինձ անասելի տանջեց։ Բանն ենահեղ հասավ, վոր հոռոր, փորձի ժամանակ, լեռը աղջիկները բոլորը ուրիշ շորեր ելին հագել և այլ կերպ սանրվել, ու բեմի վրա տեղը խիստ նեղվածք եր, յես գիտմամբ սկսեցի նրանց ներս խցկել զեպի անկյունը ու վոչ թե չարություն անելու համար, այլ ուրիշ պատճառով։ Աղջիկները շարունակ հայնոյում ելին ինձ, իսկ Նիկպետովը սպառնաց ինձ գուրս անել և իմ տեղ ուրիշին ընդունել, յեթե նույնիսկ գոչ վասաի ներկալացմանը լավ եր, վոր վոչ Նիկպետովը և վոչ ել մի ուրիշը չնկատեցին, վոր սա հասարակ չարաճճիություն չեր։ Ընդհակառակը, բոլորըն աղաղակում եյին, վոր յես վերջերս իբր թե խելոքացել ելի, ու հիմի նորից կտպերս կտրել եմ։

Իսկ յեթե նրանք իմանալին։

### 19 Փետրվարի

Ենպիս պատահեց, վոր յերկի յես հիմա այլևս չեմ կարող խոսել Սիլվայի հետ։ Նույնիսկ չգիտեմ, թե ես բանն ինչպիս գրեմ։ Յես ու Սիլվան միշտ լավ ընկերներ ենք յեղել, այժմ եւ խղճով ասած, յես ուրիշ վոչ մի բան չեմ զգում նրա վերաբերմամբ, բացի ամենաընկերական վերաբերմունքից, բայց կարծես մեկն իմ լեզուն քորեց, ու յես չհամրերեցի։

Սիլվան զգեստավորման հանձնաժողովի գլխավոր անդամն ե, վորովհետև մյուսները վոչինչ չեն անում, ու նա համարյա մենակ սարքեց բոլոր զգեստները։ Դրա համար ել Սիլվան բոլոր փորձերին լինում ե, եսոր ել զլսավոր փորձին ենտեղ եր։ Յեվ ահա, բնագիտական լարորատորիայում, վոր ծառայում ե իբրև զգեստարան, Սիլվան ինձ վրա լաերտի շորերն եր կարում։

Ա՛յ, յես ել հարցնում եմ նրան։

— Սիլվա, ե, դու կարժղ ելիր ինձ հետ զբոսնել, Սա յիս սկըզ-  
բունքորեն ևմ հարցնում:

— Այսինքն, Բնչպես թե զբոսնել, — արցնում և Սիլվան, — ախար-  
մենք միասին շատ ենք զբոսնում:

— Չե, եղան չե, այլ ուրիշ կերպ, իսկական:  
Նա նույնիսկ կարը գաղաքեցրեց:

— Ե՛, մենք միթե իրկապես չենք զբոսնում:

— Դու չես հասկանում, — ասացի յիս ու շատ նեղ դրության մեջ  
ընկա. — զե՞ս, այս, որինակ ինչպես... մարդու կին:

Ցես կարծում ելի նա կրարկանա, բայց նա — վոչինչ, Աչքերը ցած  
զցեց և հարցնում է.

— Ե՛զ, Բնչպես, դու ուզում ես ամուսնանալ ինձ հետ, թեզ հա-  
մար շուտ ե, ինձ համար ավելի ես:

— Ե՛ .. դու չես հասկանում, Սիլվա, — ասացի յիս և մտածում եմ,  
թե ինչպես անեմ, վոր դուրս ծլկվեմ ես սենյակից:

— Դա եղան չե, յիս ամենեին ամուսնալու մասին չեմ խո-  
սում, յիս ուզում ելի ասել... այս... կարող եյիր զբոսնել ինձ հետ...  
այս, այժմ, գեռ դպրոցում:

Նա աչքերը բարձրացրեց և նայեց ինձ.

— Իսկ դու եղ Բնչպես կանես:

— Ե ... այս... որինակ յիս քեզ կհամբուրեմ:

Նա մտածեց և ասում է.

— Դա, յիս, գուցե և թույլ չտամ: Համար թույլ կտամ: Հե-  
տո Բնչ կանես դու:

— Դե, կարի, դռւ չել. — աղաղակեցի յիս, ամբողջ ուժով ձիգ տը-  
վեցի են թելք, վոր նա կարում եր, կորեցի ու դուրս փախս:

Ու ամբողջ փորձի լնթացքում չկարողացա նրա աչքերին նայել:

## 22 փետրվարի.

Մինչև այժմ յես չկարողացա գրել ներկայացման մասին. — շա-  
րունակ զբաղված ելի նամակների հետազոտությամբ: Իսկ ներկայա-  
ցումը շատ լավ հաջողվեց: Սերյոժկա Բլինովը գոռում եր վորոտի նը-  
ման ու փոփորկի պես քշում եր ամենքին բիմից, ենակի վոր թագա-  
վորը նույնիսկ բավական բարձր ասաց նրան — «Ի՞հ, ցածր, զրողը  
տանի»: Հետո վոգին — զս Վենկա Պալկինն եր — շատ հաջող եր: Նա  
ամբողջովին փաթոթված եր սավանի մեջ, դիմքին կավիճ եր քսած,  
իսկ ձայնը գերեզմանից եր գալիս, մանավանդ յերբ նա հատակի տա-  
կից ոռւպորով եր խոսում: Միայն նա պետք ե դուրս սողար հատակում  
պատրաստած ծակի միջից, բայց ծակը փչացավ, ուստի նա ստիպված  
եր դուրս գալ ուղղակի բեմի յետեկից: Ամենից ավելի հուզվում եր նիկ-

պետութը, Նա գիրքը ձեռքին նստած եր կողքահանց և հուշարարի նըման թելազրում եր—դե մենք հուշարարի տեղ չունեյինք: Հետո, յերեխաներն ասում ելին, վոր մոտիկ նստածը կարող եր միանգամից լերկու հոգու լսել,—մեկը կուլիսների լետեից, մյուսը՝ բեմի վրայից: Են, այնուամենակիվ, Սերյոժկալի սուսերը զուրս խլեցի, վորովհետեւ նա սուսերամարտել չգիտե, և վոչվոք չնկատեց, վոր դա ըստ Շեքսապիրի չե:

Աև Զոյան խաղում եր հիմնալի, ամենից լավ: Ասում են, վոր ազգիկներից շատերը նրան նայելիս լաց ելին լինում:

## 25 փետրվարի.

Եսոր Սև Զոյան ինձ զարմացրեց:

Ներկալացումից հետո նա քիթը բարձր եպահում, վորովհետեւ նրան շատ անդամ զուրս կանչեցին: Ընդհանրապես նրա տեսքը փոխվել է: Ել իր սև շորը չի հազնում, ավելի ուրախ ե—ենապես չե, ինչպես առաջ: Իսկ մեռելների մասին ել չի ուզում խոսել, թեև յերբեմն զես հին հիշողութեամբ վոմանք նրան ջզրացնում են (բարկացնում են): Եսովես, ուրիմն, նա ինձ միջանցք կանչեց ու ասաց:

— Գիտե՞ս, յես ուզում եմ քեզ մի գաղտնիք հազորդել:

— Խոնչ գաղտնիք: Խնդրեմ, առանց գաղտնիքների:

— Զե, շատ կարեոր ե: Գիտե՞ս, յես սիրահարված եմ քեզ:

— Եւ. Ե-Ե-ՆՉ:

— Դե, զե, մի կոտրտվիր: Խնդրում եմ, քո մասին ենքան ել շատ մի յերեակացիր, սիրահարվելը մեղնից չի կախված, այլ բնությունից: Ու մի յերեակացիր, թե քո պատճառով յես վորեե բան կանեմ: Ե, միայն յես մտածեցի-մտածեցի ու վորոշեցի ուղղակի ասել քեզ վորովհետեւ զրանով մարդու սիրտ թեթևանում ե: Ու նդ բանը իմ վերաբերմամբ քեզ վոչ մի իրավունք չի տալիս:

— Գնա սառը ջուր խմիր, —ասացի յես ու հեռացա:

## 26 փետրվարի.

Տարորինակ պատմություն: Աղջիկներն սկսել են իրար միջ վըսակը, ու յես սրանից-նրանից լսեցի, վոր ուզում են նորից կաղամբատոնի առթիվ աղմուկ բարձրացնել, Բայց ամենազլխավորն այն ե, վոր յես իմացա, վոր Սիլվան ել նրանց հետ միասին ե: Սիլվայի հետ յես չեմ խսում են ժամանակից, յերբ յես նրան հարց տվի (յես ուզում եի միայն սկզբունքորեն պարզել), ու յերեում ե, վոր նա խուսափում ե ինձնից:

Փսփսոցների մասին իմանալով, յես խորհրդակցեցի Վենկա Պալկինի հետ մենք վորոշեցինք հակահարձակում սկսել:

## 27 Փետրվարի.

Յես սաստիկ ուրախ եմ և գոհ ինքս ինձնից: Համարյա ամբողջ փետրվարը յես չինական դեպքերի մասին զեկուցում եյի պատրաստում, և Նիկպետովը զեկուցումս շատ գովեց:

Իսկ հետո, կարծեմ, յիս շատ եմ նտածել, թէ ով ե զրել անստորագիր նամակները: Դա Գորոխով կեշկան ե. մի ենպես բարձրահասակ լուակլաց տղա յե, իբրկորդ խմբից: Իսկ յես ինչո՞ւ յեմ մտածում, թե դա նայե՞ալ: Իմ ձեռքին յեղած միակ թելք՝ դա հայրիկովի ստացած նամակն ե: Իսկ մեր դպրոցում ամեն մարդ թանաքն իր հետ բերում ե: Ահա յիս ել սկսեցի հետազոտել ամեն մեկի թանաքը: Այս աշխատանքը դժվար եր, վորովհետ ամենքն ել իրենց ուղածը զրելուց հետո, թանաքները պահում են: Դե արի ու հետազոտիր: Բայց եսոր մի որին սարքեցի: Հանկարծ ներս ընկա մաթեմատիկալի լարորատորիան, յերբ միայն յերկրորդ ցիք ելին պարապում—առանց Ալմակիցի, ու ճշացի.

— Շնուռ, թանաքամաններդ տվեք: Ալմակիցն ուղում ե:

Ու ինքս վերցնում եմ առաջին պատահած թանաքամանը (իհարկե, կեշկայինը. յիս գեռ առաջ նկատել եյի, վոր նա գուան մոտ ե նըստում): Ու—պուկ: Կեշկան յետելից ընկնում. — «Ախար կաց, սպասիր, բան եմ գրում», — բայց յիս հիմար չեմ, շուտ մտնում եմ մեր լաբորատորիան, ենտեղ առաջուց սրվակ եմ պատրաստել, կեշկայի թանաքը լցնում եմ մեջը, հանգիստ յետ եմ դառնում, կեշկայի թանաքը տալիս իրեն: Նա կասկածանքով նայեց ինձ, բայց բան չասաց: Իսկ յիս վաղուց եմ գիտում նրան և նկատել եմ, վոր հենց վոր յիս նայում եմ նրան, նա գուշնը զցում ե: Ու հետո յերկրորդ խմբից մենակ նա յե, վոր մասնակցում եր կազմաբատունին: Թանաքը յիս ստուգեցի և շատ նման գուրս յեկավ. թե սա, թե նա կապտավոն են: Հիմա ձեռագիրն ել պետք ե ստուգել, և հարցը պարզ ե: Բայց սա ավելի յե դըժվար, վորովհետեւ նամակն ախար տպագիր տառերով ե զրած:

## 3 մարտի.

Ամեն տեսակ սուտ ու ճիշտ միջոցներով հաջողվեց կեշկա Գորոխովի տեստը ձեռք դցել ու սկսեցի ձեռագրի համեմատությամբ զրաղվել:

Ինձ թվաց, թե նամակի և տեսրակի ձեռագրերն ընդհանուր առմամբ նման են, ու վերկացա ու գնացի կեշկայի հետ խոսելու: Ուղղակի սկսեցի.

— Կեշկա, ծնողներին գոյւ յիս նամակներ գրել:

Նրա գեմքը նույնիսկ բոլորովին այլայլվեց, ու պատասխանում ե.

— Ի՞նչպես թե, սրիկա, խելագարվել ես:

Յես ելի հարձակվեցի.

— Մի վախենար, քո մասին յես ամեն բան գիտեմ:

— Ի՞նչ գիտես, հը՛, ի՞նչ զիտես:

Ու բոռնցքները թափ տվեցի Յես խորհրդավոր տեսք տվեցի ինձ ու հետացաւ Ալժմ ըստ հոգեբանության նա ինքը պետք եղա ինձ մոտ և խոստովանվի:

#### 4 մարտի.

Յես կատարելապես շշկվեցի: Բանն եսպես եր: Յես գնացի Նիկ-պետոժին հունվարի ստուգումը տալու: Պատմության գիրքը բաց ա-րի և տեսնում եմ—ենտեղ մի տոմս և դրած: Բաց արեցի ու վեր թռա-րիս Հեռացաւ, զեպի քեզ ունեցած հին զգացմունքիս պատճառով նախազգուշացնում եմ քեզ, վոր քո և Վեհնկա Պալքինի ղեմ կաղամբա-տոնի պատճառով արշավանք և պատրաստվում: Նրանք ամեն ինչ գի-տեն: Զգուշացիր»:

Բայց յես վեր թռա վոչ թե եղ գրածի պատճառով, այլ նրա հա-մար, վոր և ձեռագիրը, և տպագիր տառերը և թանաքը - բոլորը նույն ելին: Կնշանակի - գա կեշկան չե: Քիչ մնաց, վոր մհնք կովում ելինք, ու դրանից հետո նա ինձ կնախազգուշացնի, — ու հետո եղ ի՞նչ «հին զգացմունք» և են ժամանակ յես գնացի Նիկպետոժի մոտ և ստու-գումը տալու փոխարեն հարցըրի.

— Նիկոլայ Պետրովիչ, յես լավ եմ անում, վոր փորձում եմ իմա-նար թե անստորագիր նամակները տղաներից ով և գրե:

— Իսկ եղ ի՞նչպես եք անում:

— Հետեւում եմ ու հետո յեղբակացություններ հանում:

— Իսկ ի՞նչի համար եք անում դա:

— Վորովինտես նա, ով գրել ե, ընկերներին զավաճանել ե:

— Գիտեք ինչ, Տյարցե, նախ ընկերների նկատմամբ կամագոր խուզարկուի վեր կատարելը ստոր բան ե: Հետո, եղ գործը ախար մո-ռացության և տրված, ել ինչու յես նորից կենդանացնում:

Քիչ մնաց բերնիցս թուցնելի, թե գործը նորից և հանդես գալիս, բայց ժամանակին լեզուս կծեցի:

Հավանական ե՝ իսկապես յես խուզարկություններս թողնեմ. քիչ եր մնում կեշկա Գորոխովի վերաբերմամբ մի հիմար պատմություն եր դուրս գալիս:

Բայց ախար ով և գրել նամակները, ու հետո ես տոմսակն - ինձ:

#### 7 մարտի.

Կարդացի Արցիբաշենի «Սանին»-ը ու հետո կրկին ամբողջ գիշերը չքննեցի ու ելի Փիմ-Փոմ, պիկ-պոկ, չիմա զլուխս սաստիկ ցավում ե, և

ուղղակի չգիտեմ, թե ինչ անեմ: Արդյոք Նիկոլետոնի մոտ չգնամ: Մի տեսակ անհարմար է: Կասի «ընազիտության ըստերին բացատրել են ելի, քթչ ե, ինչ ե»: Բացի գրանից, դե հո յես չեմ կարող ամեն բան նրան պատմել:

Վատն են ե, վոր ես բոլորը մտավոր գրության վրա անդրադառնում ե: Յես հիմա ահա թե ուր եմ հասել: Վերցրի իմ որազրի տեսքը, ենտեղը, վոր պատից արտազրած եր կլանքի նպատակի մասին, ու վորտեղ յես գրել եմ «այ ախմախութլուն»: (Եղ ենտեղ ե, վոր խոսում ե կարիքներին բավարարություն տալու մասին): ու իմ գրածը ջնջեցի: Խսկապես, յեթե մարդ ստիպված ե բավարարություն տալ իր կարիքներին վոչ այնպես, ինչպես բոլորը, նա տանջվում ե են ժամանակ ել և տանջվում, էրբ ամենեին չի կարող իր կարիքներին բավարարություն տալ: Իսկ ապրել ու տանջվել—մթթեն արժե:

Իսկ յերբ եսպիսի մտքեր պաշարեցին ինձ, իսկույն հարցրի ինքս ինձ.

— Իսկ սա վայել ե կոմյերիտականին,—մի մարդու, վոր դնում ե յերիտասարդության առաջապահ գնդում: Վորովհեան յես թեկ կոմյերիտական չեմ, այլ թեկնածու, բայց ինքս ինձ համոզված կոմմունիստ եմ համարում:

Ինձ թվում ե, վոր ընդհանրապես յես շատ բաներ եմ արել, ինչպես կազմամբատոնին մասնակցելը, և են բոլոր ստախոսությունները, վոր հետեւ են նրան, իսկ զլիսավորն, ինարկե, սեռական հարցն ե: Բուրժուազիան ու ինտելիգենցիան սեռուկան հարցը լուծում են հենց ին ձեռվ, ինչպես յես ի՞նչ:—յես բուրժուազ եմ, թե՛ ինտելիգենց եմ: Յես ինձ վոչ ես եմ համարում, վոչ են, ուստի պետք ե եղ հարցը այլ կերպ լուծեմ:

## 12 մարտի

Յես հենց նոր յեկա բջիջի ժողովից, վոր յեղավ գործարանի ակըմբում: Թեե հիմա արգեն շատ ուշ ե, բայց ստիպված եմ բոլորը գրել թե չե կարող եմ մոռանալ: Բջիջում հարլուրհիսուն մարդ եր հառվաքվել, նրանց մեջ մեր գորոցից ընդամենը քսան մարդ, իսկ մնացածները—գործարանից: Սկզբում ամեն ինչ ենպիս եր, ինչպես մեզ մոտ, ու նույնիսկ ավելի ձանձրալի: Երջկոմի տեղեկատուն, հետո—բյուրոյի զեկուցումը... Տղերքը (գործարանի) ձանձրությոց սկսիցին «շուլուղ անել», ու նախագահը շարունակ զսպում եր նրանց: Հետո ըսկըսկեցին ընթացիկ հարցերը, և բոլորն ականջները սրեցին:

Ենտեղ Գուլկինա անունով մի աղջիկ կա—եսպիս նա դիմում եր տվել թիջին, վոր նրան միջոցներ տան արորափ համար: (Սերյոժկա Բլինովին պետք ե հարցնել, թե սա ինչ բան ե, դա, կարծեմ, ենպես

մի բան են անում, վոր տղամարդը կին և զառնում. բժշկականության նոր դյուս ե. ընդէ սնրապես ենպես են սարքում, վոր կինը յերեխա չի ծնում), Յեվ ահա, լեռը եղ հայտարարությունը կարդացին, զահին սոսկալի ազմուկ բարձրացավ. մեկն ազադակում ե—ամեւ մյուսը՝ չտալ Վերկացավ բջիջի քարտուղար Խվանովը — մի ենակն

— Մենք ի՞նչ միջոցներ ունենք, գրողը տանի. վժրտեղից են միջոցները. յեթե ամսավճարները յերեք ամսից հետո լեն մրւծում. զուռով պետք ե պոկիս... Նրա համար մենք վժրտեղից միջոցներ ճարինք. ի՞նչ ե—մենք բանկ ենք, թե ի՞նչ.

Եստեղ մի աղջիկ, սաստիկ բարկացած, վեր թռավ. նա ամեն հարցել մասին խոսում ե, և միշտ բարկացած.

— Եղ մենք վոր ամենքին ել միջոցներ տանք, եղ մրւ կդնաւ. Մեկը մյուսի յիտեից կոկսեն արորտ անել. Ապա ել ով պետք ե յերեխա բերի \*), Վորոշակի առաջարկում եմ—նրան արորտի մասին մի գիրք տալ, թող կարգան.

Եստեղ մյուսներն ել սկսեցին դուռալ.

— Տալ, տալ:

Միայն, իմ կարծիքով, եղ նրանք կատակ եյին անում, վորովհետեւ զե, քարտուղարը սուսերեն ասաց, վոր միջոցներ չկան. Եստեղ ելի մի աղջիկ վեր թռավ ու ասաց.

— Վոչ մի կերպ չի կարելի տալ. նախ վորովհետեւ միջոցներ չըկան. յերկորդի ի՞նչպես ասացին—մենքն ու մեկը յերեխա պետք ե բերի, և յերբորդի ու սա գլխավորն ե, արորտից նա կարող ե մեռնել: Կամ նրան մեծ վնաս կհասնի: Նա ամբողջ կյանքը կարող ե հաշմանդամ մնալ: Ամեն անգամ արորտը հո հաջող չի անցնում:

Զայներ լավեցին, թե չպետք ե տալ. Բայց եստեղ նորից յելակիվանովն ու ասաց.

— Ինչպես ասացի, բջիջի միջոցներից մենք վոչ մի կոպեկ չենք կարող տալ: Բայց, տղերք, վորոշել «չտալ» և ուրիշ վոչինչ, չի կարելի: Միթե չեք հիշում, վոր Գուլկինան մի ուրիշ հայտարարություն ուներ, թե ապրելու տեղ չունի: Բա, նրան մի սենյակ կամ մի անկյուն չպիտի տալ: Պետք ե ուսումնասիրել Գուլկինայի տնտեսական դրությունը, մանավանդ վոր նա ապաստան ե զտել քաղաքի մլուս ծայրում: Իհարկե, արորտ չպետք ե անել, թող ծնի, բայց, համենայն զեպըս, ձեռք քաշել չի կարելի. պետք ե ոգնել: Սենյակ պետք ե փնտուել կամ մի ուրիշ բան: Թվեարկեցին, մի հանձնաժողով ընտրեցին, վոր

\* ) Հավանականարար տեսարկում ե Գուշկինի արձանին:

ուսումնասիրի եղ աղջկա, Գուլիկինալի նլությունը, ու ըսկըցին «Յերիտասարդ զվարդիա» յերգել... կնշանակի վերջացավ:

Յես մենակ ելի տուն գալիս ու շարունակ մտածում ելիս Առաջ նրանց ըջիչի գործարանական կյանքն ու աշխատանքը ինձ մի տեսակ այլ կերպ եր պատկերանում—այս, ինչպես զիշերը գործարանը լուսավորված է լինում ու ամբողջովին մի տեսակ փալլում եւ Բայց բանից գուրս ե գալիս, վոր տղաները նույնպես սիրում են աղմկել ինչպես և մերոնք, և բջիջում դրած հարցերն ել ենքան դժվար չեն հասկանալի Իսկ յես կարծում ելի, թե սախալված կլինեմ լերկար ժամանակ սովորել ու գիտել մինչև վոր բան կհասկանամ:

Յես շատ ուրախ ու թերեւացած ելի զգումն նախ յես մենակ չեմ, և յերկրորդ, կնշանակի յես ել կարող եմ իմ դասակարգին պիտանի լինել Միաժամանակ միտքս ընկան նորից սեռական հարցերը, բայց արդեն ուրիշ տեսակետից: Եստեղ մեծ նշանակություն ունի եղ աղջկա պատմությունը: Վանկա Պետուխովը ասում եր, վոր եղ բոլորը շատ հասարակ, պարզ բան ե, բայց բանից գուրս ե գալիս, վոր իսկի ել պարզ բան չե—յեթե հարցուրհիսուն մարգուց բազկացած բջիջն եղ հարցի առջև փակուղու մեջ ե ընկնում: Այժմ ինձ թվում ե, վոր սեռական հարցի հետ շատ տանջանք կա կապված: Որինուկ՝ եղ արորտը: Աղջիկն ինչո՞ւ պետք ե իր ամբողջ կյանքում հաշմանդամ ապրի:

Իգուր տեղը յես առաջ եղաքես քիչուշագրություն ելի դարձնում գործարանական բջիջի կապի վրա: Ենտեղ շատ բան կարելի յե սովորել: Անպայման կդնամ իվանովի մոտ՝ մի հարցի մասին նրա հետ խորհրդակցելու:

#### 14. մարտի.

Սերյոժկա Բլինովի հետ խոսեցի արորտի մասին, ու նա մանրամասն բացարեց, թե գա ինչ բան ե: Ու ինձ մի լրագիր տվեց, վորտեղ մի պատմվածք կար: Յես կարդացի ու ցուց տվի Վանկա Պետուխովին, ու նա ասաց, վոր պատմվածքը ճիշտ ե: Իսկ իմ կարծիքով դա մի գեղք եւ Յես միանգամայն հավատում եմ, վոր եղ «արորտ»-ները, առանց աղջկանը հաշմանդամ դարձնելու, չեն անցնում: Ավելի լավ ե նրանք լավ ու առողջ լերեխաներ ծնեն:

Փոխարինողներ պետք ե լինեն:

#### 15. մարտի.

Յես արդեն վազուց նկատել ելի, վոր Վենկա Պալկինը դպրոց չի գալիս: Յես կարծում ելի, թե դրա պատճառը կաղամբատոնն եւ Հիմա ինձ թվում ե, վոր ուրիշ պատճառ կա: Բայց յես եղ բանին չեմ խառնըվի: Ինձ թվում ե, թե Նիկոլայոսը ճիշտ եր ասում, և ընկերներին հետեւը ենքան ել ազնիվ զբաղմունք չե:

Քանի վոր Սիլվայից բաժանվեցի, ու վոչլոք չկար, վոր ընկերություն անեյի, ապա ամենից շատ Սև Զոյայի հետ եմ լինում: Նա ինձ խոստովանեց, վոր առաջ ամեն մի դատարկ բանի համար ինձ ատում եր: Յեկ վոր իր զգացմունքներն իմ վերաբերմամբ փոխել և ներկայացումից հետո, յիրը յես շատ ճարպիկ կերպով Սերյոժկա Բլինովի ձեռքից սուսերը դուրս կորպեցի:

Պարապմունքներս առաջ են գնում կանոնավոր: Գլխիս ցավը դադարել և, Փ.Փ.-պ. պ-ն նույնպես: Ամեն առավոտ ձնով զփումն եմ անում:

## 21 մարտի.

Եսոր Սիլվան մոտեցավ ինձ ու ասաց:

— Կոստյա Շյաբցե, յես սակաված եմ քեզ ասել, վոր իմ կարծիքը քո մասին վիրջնականապես փոխել եմ: Առաջ յես կարծում ելի, թե դու իսկական կոմյերիտական ես և մեր գաղափարախոսությանը հավատարիմ: Այժմ տեսնում եմ, վոր դու ուղղակի կեղծել, ձեացը ել ես, և վոր քո այժմէան գաղափարախոսությունն ամեննին չի համապատասխանում կոմյերիտմիությանը:

— Յես յերեք չեմ կեղծել—պատասխանում եմ յես:—Յեկ դու վարտեղից զիտես իմ այժմյան գաղափարախոսությունը:

— Դու եղ բանը հիանալի կերպով զիտես: Բայց ինձ ել հայտնի եմ, թե դուք ինչեր եյիք սարքել, այլ միայն գնացել եմ: Իսկ հետո, կնշանակի եղ դժու յես անստորագիր նամակներ գրել

— Այս դժու զգինի անպիտան, —ասում ե Սիլվան և նայում ե ուղիղ իմ աչքերին:

— Ու դու եղպիսի բան ասացիր: Լավ:

Շուռ յեկավ ու գնում ե:

— Սիլվա, կաց, կաց, բան եմ ասում,—ասում եմ յես:— Իսկապես դու կարծում ես, վոր իմ գաղափարախոսությունը կոմյերիտական չե:

— Յես քեզ հետ իսկի խոսել ել չեմ ուզում:— Ու գնաց:

Յես չափազանց վիրավորվեցի, բայց վոշնչ չկարողացա անել, վորովհետեւ նա մասամբ ճիշտ եր ասում: Թեկ յես յերեք չեմ կեղծել: Բայց, համենայն դեպս, յես երան ցույց կտամ:

## 23 մարտի.

Մի մեծ, բայց վոչ ենքան հասկանալի խայտառակություն պատահեց:

Դալրոց յեկավ կուլտի ծառալողը (տերտերը) — Լինալի հայրը, Նա դուրս կանչեց Զին-Պալնային և յերկար ժամանակ ինչ-վոր բան ելին:

խոսում ու բացատրում: Լիլանայի հայրն ամբողջովին կարմրած մի բան եր ապացուցում Զին-Պալնին, իսկ նա միայն ուսերն եր վեր քաշում: Սա տեղի յիր ունենում զպաշխանոցում, զրա համար ել վոչվոք վոչինչ չեր լսել: Հետո Զին-Պալնան սաստիկ վրդովված Լինայի հոր հետ գնաց և վերադարձավ միայն դասերի վերջին:

Հենց իսկույն ել դպաշխների ժողով հրավիրվեց, և մեզ արձակեցին:

“ 25 մարտի.

Շոտ ծանր կլինի ինձ համար գրել ես բանը, բայց, համենայն դեպս, կզրեմ:

Եսոր հենց վոր դպրոց լեկա, Զին-Պալնան ինձ իր մոտ կանչեց:

— Բյարցե, զու ինձ հետ միանգամայն անկղթօծ կխոսես, — հարցնում ե նա:

— Այս, անկեղծ, — ասում եմ յիս ու ուղիղ նրա աչքերին նայում (սուտ ասելուց զզվեցի):

— Ասացեք, զուք յեղթ եք այն հավաքույթներում, վոր սարքում եր Վենելա Պալկինը:

— Յեղել եմ:

— Իսկի մտքովք անցել ե, վոր զու զըանով վոչ միայն դպրոցական պարապմունքներն ես խանգարել այլ և ամրող դպրոցն եք խալտառակել:

— Կոմիերիտական ազնիվ խոսք եմ տալիս, վոր մտքովս չի անցել:

— Բա զուք ինչ եյիք մտածում դպրոցի ե... այդ յերեսույթների կապի մասին:

— Յես կարծում եյի, վոր յեթե դա դպրոցից զուրս ե կազմակերպվում, ապա... մեկը մլուսի հետ կապ չունի:

— Լավ, ասենք թե ալդակես ե: Իսկ այն, ինչ վոր Լինայի հետ և պատահել, հարունի՞ լի քեզ:

— Յես տեսնում եմ, վոր նա դպրոց չի գտիս, և դա վորոշ կառունի կաղամբատոնի հետ, բայց ազնիվ խոսք եմ ասում, վորոշ վոչինչ չգիտեմ:

— Լինան ստիպված ե թողնել դպրոցը, ու նա Ուկրայինա իք զընում: Յես կարծում եմ, վոր զու կարող ես մեր խոսակցության մասին լոռություն պահպանել այնպես, ինչպես լոռում եյիր ձեր կաղամբատոնի մասին:

— Զինայիդա Պալլովսա, իհարկե, յիս կլում, ասացի յիս, և կուկորդումս մի բան խեղդում եր ինձ, Բայց... Յես կարծում եմ՝ աղջիկներն ամեն բան ինձնից լավ գիտեն:

- Յես արգեն նրանց հետ խոսել եմ, գնացեք:
- Սպասեցեք... Զինալիդա Պավլովսա... ելի մի հարց: Ի՞նչ ե...  
կապ ունի... ես ինչ վոր պատահել ե Լինալին, կապ ունի... սեռական  
հարցի հետ:
- Այս Ռւնի - հաստատուն կերպով ասաց Զինալիդա Պավլովսան:  
Հիմա գնացեք:
- Յես գնացի, բայց վոչ թե դպրոց, այլ տուն:

**Մարտի 25 ի որագրից հետո միքանի յերես շնչած ե:**

**5 ապրիլի.**

Յերեկ յես Լինալից նամակ ստացա.

«Կոստյա Բյարցե: Այժմ յես քեզ չեմ մնջաղըրում վոչ մի բանում  
և հասկանում եմ, վոր ինքս շատ հանցավոր եմ: Կոստյու Բյարցե, յերբ  
դու այս նամակը կստանաս, յես ալնքան հեռու կլինեմ քեզնից, վոր  
յես չեմ ամաչիլ: Այժմ յես նոր կյանք եմ սկսում, իսկ այն բոլորը, հինն,  
տնցածն ու մասալլը յետեռում մնաց և ջնջված ե իմ կյանքից ընդմիշտ:

«Քիացիր, վոր յես Վ. Պ.-ի հետ ընկա քո-պատճառով: Ավելի ճիշտ՝  
քեզ վրա զայրացած լինելու պատճառով և հուսահատությունից, վոր  
դու ինձ հետ կոպիտ ես վարվում, և վոր մեր ինքնասպանությունը են-  
պես հիմար ու ստոր յելք ունեցավ: Արդ բոլորն անցավ, անցավ—  
ու այժմ ինչ լավ ե ինձ համար: Յես քեզ ել խորհուրդ եմ տալիս թող-  
նել եղանակի կյանքը, վորովհետև անթափանց խավարից զատ, դրանից  
ուրիշ բան չես ստանալ: Իսկ ինչպես քո կյանքի, ենպես ել իմ կյան-  
քի ամենագեղեցիկը—գեռ առջեներս եւ:

«Իմացիր նույնպես, վոր բոլոր ծնողներին յես ելի նամակ դրել:  
Յես տանջվում, չարչարգում ելի և ուզում ելի եղ բոլորին վերջ տալ,  
բայց չգիտեմի ինչպես, ու խելքիս եղան փշեց: Դրանից սիրու  
ավելի ծանրացավ: Ու սիայն այսոր, խավարից գեպի լուս ու ազա-  
տություն դուրս գալով, յես ըստոնեցի, թե ինչ հիմարն եմ յեղել:

«Դու իզուր ես Սիլվայի հետ խոսել են մասին: հիշում ես, ենտեղ՝  
զգեստանոցում... Սիլվան եղ տեսակ չեւ իմ ամենածանր հոգեկան  
ապրումների ժամանակ նա ինձ հետեւում և խնամում եր ինչպիս քուլը,  
թեև սկզբում յես նրա հետ կոպիտ ելի:

«Մնաս բարե, Կոստյա Բյարցե: Ապրիլ յերջանիկ և հաշտվիր Սիլ-  
վայի հետ: Իսկ ինձ մոռացիր—ընդմիշտ, ընդմիշտ»:

**Լինա:**

Համենայն գեղս ինչքան զղվելի յի, յերբ ապրել չգիտես:

## 10 ապրիլի.

Եսոր փողոցում պատահեց Վենկա-Պալկան, նորաձև վերարկուն հագին, ծխախոտը բերանին, ձեռնախալտը ձեռքին:

— Հը, Կոստյա,—ասում եմ, — մախուսի նման դեռ թթվածւմ ես, նույն կարասում:

— Այս, դեռ ելի սովորում եմ դպրոցում:

— Բան ես գտել... գիտես ի՞նչ: Եզուց արի ինձ մոտ, իմ ընակարանը: Յես ելի ենտեղ եմ ապրում: Աղջիկներ կլինեն—ձեր դպրոցի աղջիկների պիս թթվածներ չեն, իսկական, բարի աղջիկներ: Նոր գինի յե գուրս յեկել: Արի:

— Ե՛, ի՞նչ կա վոր: ասացի՝ կգամ: Իսկ մերոնցից մարդ կլինի:

— Դե, իհարկե, կլինեն: Բոլոր լավ ընկերները: Կգամ:

— Կգամ: Ցտեսություն:

## 12 ապրիլի.

Ահա ի՞նչպես ելու:

Յես, ի՞նչպես միշտ, Վենկայի մոտ իվանովսկի պուրակը գնացի ժամը իննին: Ենտեղ, նրա մոտ 12 մարդ կար հավաքված: Բոլորը սեղան ելին նստած: Իսկ ծնողները չկալին: Նրանք միշտ, յերբ Վենկան կազմբաատոն և ունենում, ուրիշ տեղ են գնում:

Այժմ յես ամեն բան կարող եմ գրել ուստի—ի՞նչ բան և կաղամբատոննը—դա հարրեցողություն և և աղջիկների հետ ընկեր միայն վոչ ենպես, ի՞նչպես փողոցում նրանց հետ զբունում ենք, այլ նրանց գրեկել համբուրել: Սեղանի մեջտեղը դնում են ձեռթով թթու կաղամբ—բոլորը սիրում են: Հետո բալորը արագ են խըմում ենքան, վոր հարբում են: Յես բացի գրեկվելուց, վոչինչ չեմ տեսել, իսկ հիմա յես գլխի յեմ ընկնում, վոր ավելի վատն ել և լեզել:

Հա, ուրեմն եսպիս—յես յեկա, իսկ նրանք արգեն նստած են, նրանց թվում և մեր դպրոցից յերեք հոգի: Յես իսկի նրանց անուննել չպիտի գրեմ: Բոլորը տղաներ եյին, աղջիկներից վոչվոք չկար: Աղջիկներ կալին, բայց ուրիշներն եյին և ներկված:

Հա, ուրեմն եղանակ: Նրանք բոլորն արգեն կիսահարբած զըռության մեջ եյին: Հենց վոր ինձ տեսան, իսկույն աղաղակեցին՝

— Ա՛, Կոստյան յեկավ: Նրա համար բաժակ լցըրեք, լավ ժամանակ յեկավ: Ա՛յ գործ կրացվի:

— Այս, լավ գործ կլինի, — ասացի յես, վերցրի և հատակին խըփելով փշրեցի ինձ տված բաժակը: — Գործը լավ կդնա, վորովհետեւ յես հասկացել եմ, թե վոր գործերն են լավ, վորը՝ վատ: Դուք, իմ թանգագին դպրոցական ընկերներ, հիմա իսկույն, ինձ հետ կդնաք եստեղից ու ել յերբեք եստեղ վոտք չեք կոխի, վորովհետեւ սա, վոր հիմա

զուք եք անում, վոր յես ել առաջ ելի անում, զզվելի բան եւ Միայն նախ էրկու խոսք կասեմ հստեղ յեղող մնացած քաղաքացիներին:

— Վա, ես ի՞նչ ե, գդվիլ ես տու—տղաղակեց Վենկա Պալկինը:

— Վճչ, յես չեմ խելագարվել, ընդհակառակը, խելքս զլուխս ե իեկել—պատասխանեցի յես: — Վենկա, արդյոք դու հաշվիլ ես, թե քո ես կաղաքատոներով ինչքան կեղտուտ բաներ ես արել: Դու հաշվիլ ես, վոր մի աղջկա գու գիտես, թե ուժ մասին եմ ասում յես—կյանքն ավերել, վոչնչացրել ես: Մեր զպրոցն ել քիչ մնաց քանդում եյիր—հաշվիլ ես: Վճչ, դու արդեն խմիր և անառակությամբ պարապիր քո բարեկամների հետ, բայց մեր զպրոցը հանգիստ թող:

— Ա՛յս, դու, թշվառական սրիկա, — աղաղակեց Վենկան և բռունցք-ներով վրա պըծավ:

Են ժամանտկ յես շիշը շպրտեցի նրա վրա և տղաների հետ դուրս թռանք ենտեղից:

### 15 ապրիլի.

Նույնիսկ ձեռքերս զողում են հոգնածությունից, վորովհետեւ ըստիպված եմ սաստիկ շտապել ստուգութիւններս տալու Զմեովա են բոլոր պատմությունների պատճառով յես բոլոր առարկաները բարձիթողի յեմ արել. իսկ եսոր-եգուց ամառ եւ Յեթե հիմա չտամ ստուգութիւններս, ապա ամառն ել, ինչպես պետք ե, չեմ կարող զբունել: Հալա դեռ ասում են, թե ամառվա զպրոց ել պետք ել լինի:

Առաջ յես կարծում ելի, թե եղ ամառային զպրոցը միայն առաջին աստիճանի համար ե, իսկ յերկրորդի համար վերացած ե, բայց բանից դուրս ե գալիս այժմ, վոր մեղ ել են ծանրաբեռնել: Կնշանակի ելի կսկսվեն եքսկուրսիաները: Սերլոթկա Բլինովն ասում ե, վոր ամառային զպրոցի ժամանակ պետք ե յերեան զա դպաշխների միանգամայն անհամապատասխան լինելը. Նրա կարծիքով ձմեռն ելի մի կերպ կառավարում ելին - զործը տանում ելին, իսկ ամառն անպատճառ չեն կարող:

Յես նոր ընկեր ունեմ—Յուշկա Դրոմովի: Նա առաջ ել մեր զպրոցութիւն եր և նույնիսկ մեր խմբում, բայց յես նրա հետ չելի լինում: Նա շատ ուրախ տղա յե և չի սիրում հարցերի մասին յերկար մտածել: Յես իմ մասին միքանի գաղտնիքներ հայտնեցի նրան. որինակ՝ պատմեցի նրան կաղամբատոնի մասին, բայց նա ասում ե, վոր եղ բոլորը դատարկ բաներ են, և պետք ե, վրբան կարելի յե շուտ, մոռանալ եղ բոլոր բաների մասին:

### 17 ապրիլի.

Դպրոցում շատ տարորինակ յերեսութ ե սկսվել: Յերեկ յես անցնում ելի մաթեմատիկալի լաբորատորիալի մոտով և հանկարծ սոսկալի ծիծաղ եմ լսում... Յես իսկուն ներս վազեցի և տեսնում եմ, Նինկա

Ֆրադկինան և Ստասկա Վելոպոլսկալան—լեռկուան ել չորբորդ խմբից—նստել են իրար դիմաց և հոհոում են: Իմ ծիծաղն ել յեկալ, ու հարցնում եմ.

— Ի՞նչ ե պատահել?

Ու ինքս ել հոհոում եմ: Նրանք ել ավելի լեն ծիծաղում, ու հանկարծ յես նկատեցի, վոր Ստասկալի կոկորդում մի բան ե զլղում: Հետո զլղոցը գարձագի խոխոսց, ու յես վախեցաւ Յես շտապով հերթապահ դպաշխի մոտ վակեցի—Ալմակֆիշն եր,—նրա հետ միասին ներս մտանք, իսկ աղջիկներն ուղղակի խեղղվում են հեկեկոցից: Ալմակֆիշն ասաց, վոր դա հիստերիկա յես, յես վակեցի ջուր ու սրբիչ ընթելու և աղջիկներին յերկուախին ել ուշքի բերինք: Հետո տղաներն ինձ հարցնում եին, թե յես արդյոք չեմ ուղղում նրանց բժշկությամբ ըղբաղվել ենապես, ինչպես ձմեռը Զոյա Տրավսիկովային բժշկեցի: Բայց յես պատասխանեցի, վոր հիմա եղ իմ գործը չի, թող հիմիկվա աշշկոմներն անեն:

Իսկ յես առանց են ել շատ գործ ունեմ: Դեռ սրանից մի ամիս առաջ նահանգական լուսբաժինը մեր գպրոցին ներգրավից անապատանության և անշափահասների սոցիալ-իրավական պաշտպանության (**ԱՄԻՊ**) համար պալքարելու: Ալյոշկա Զիկինի պատմության պատճառով, յերբ վոր նա վեց լիմուրդ եր գողացել, հետո յես նրան տեսել եյի ավերակ ներքնատանը, **ԱՄԻՊ**-ի հետ հարաբերություն ունենալու համար գպրոցն ինձ ընտրեց: Յեվ ահա յես դնում եմ **ԱՄԻՊ**: Ստիպված պետք ել լինենք շատ գործ ունենալ անապատաների հետ և համարյա թե անոգուտ: Ասում են, վոր հասակավորները, յերեք ամիս նրանց հետ աշխատելուց հետո, սանատորիա յեն ընկնում: Իսկ իմ կարծիքով եսպես պետք ե անել, պետք ե կազմակերպել ենպիսի յերեխաների մի խումբ, ինչպիսին յես յեմ, փողոցների ամեն մի հատման տեղում նրանց հետ պետք ե կուլի բռնվել լավ ջարդութշուր անել իրար, ու դրանից հետո նրանց հետ ծխել ու ողի խմել: Եսպեսով նըրանք ավելի սիրով կծանոթանան ու հետո արդեն գրագիտությունը կսկսվի: Կամ թե չե հեքիաթներ պատմել, ինչպես Վանկա Փետուխովըն և անում: Ու են ժամանակ այլևս նյարդային սանատորիաների կարիք չի լինիլ: Եստեղ միայն մի հակաճառություն կա, վոր ժամանակ շատ կիլի, ու մեր տղաները ժամանակ չեն ունենալ սովորելու: Յես այս նախագիծը պատմեցի **ԱՄԻՊ**-ի քարտուղարին, իսկ նա միայն ծիծաղում ե: Ծիծաղելու բան չկար, պետք եր քննության առնել:

Յերբ ինձ վրա ծիծաղում են, տանել չեմ կարող: Համենայն զեպս նրանց միջոցն ել բանի պետք չե, և յես յերեկի **ԱՄԻՊ**-ում այլևս չեմ աշխատիւ:

Ալյոշկա Զիկինի հալը կոմտնտեսության ապրանքատարի տակն

ընկավ, և Զին-Պալսան Ալլուկալին վերցրեց իր մոտ՝ դաստիարակելու Ամբողջ գպրոցը կարծում է, վոր նա շատ լավ ե արել։ Միայն Սերյոժկա Բլինովը պնդում է, վոր նա փառասիրությունից և անում արդ։

## 20 ապրիլի.

Աղջիկների հիմտերիկալի առթիվ աշկոմի ժողով յեղավ, ուր ինձ ել կանչեցին իրրե վկայի եղտեղ ելին և «միլիցիոներները»։ Արդեն մի ամիս և՝ գպրոցում միլիցիա լի մատրած, վորպեսզի աշկոմից վարչական պարտականությունները վերացնեն, Եերկու «միլիցիոներ» պետք ե լինեն։ Նրանք թափառում են ամբողջ գպրոցում—կանոնավոր կերպով, ինչպես ֆրանսիական վոստիկանները կինոյում։ Գոյն տեսքները ենպես հիմարի յեւ։ Յես պատմեցի, թե ինչպես ե պատահել, և գընացի, կարծեմ նրանք եղանք ել վոչինչ չեն վորոշել։

Մենք միքանի անգամ եքսկուրսիա գնացինք այն անկվածալին գործարանը, վորի բջիջին կցված ենք մենք։ Մնացած բաներում բըջիջը և մեր կոմիտեիտական ֆրակցիան համարյա վոչ մի կերպ չի ազդում գպրոցական կյանքի վրա, ու դա, իմ կարծիքով, վատ եւ

## 22 ապրիլի.

Առւղիտորիայում սոսկալի կորվ պատահեց, և Վալոդկա Շմերցին ջարդեցին, արլունլիկ արին։ Վալոդկալին ենքան շուտ-շուտ են ծեծում, վոր մենք նրան «ծեծված» ենք ասում. և «միլիցիոներները», ինարկե, չկարողացան տղաներին զսպել, ու ստիպված յեղանք հերթապահ զպաշխին կանչել։

Հնդհանուր ժողովում քննվում եր ինքնավարության նոր նախագիծը։ Այդ նախագծով առաջարկվում է, վոր աշկոմներն ընտրվեն յերեք ամսով և վոչ թե մի ամսով, ինչպես առաջ եր, վորպեսզի աշկոմները կարողանան գործին լավ հմտանալ. — թե չե գեռ չսովորած, իսկուն փոխվում են Սերյոժկա Բլինովը ասաց, վոր նախ՝ աշկոմն ինչքան յերկար ժամանակով լինի, ենքան ավելի տեր կզգա իշխանության, իսկ յերկրորդ՝ աշկոմն ինչքան ժամանակով ել վոր ընտրվի, թիկուզ մի տարով, յեթե նա յենթակա լի գպաշխներին, ոգուտ չկա, վորովինեան եղակիսի աշկոմը յերբեք վոչ մի հեղինակություն չի ունենալ։ Եղ առթիվ Զին-Պալսան ասաց։

— Յես տեսնում եմ, վոր Բլինովը ելի հինն ե սկսում։ Միթե նա ուզում է, վոր գպրոցը կրկին յերկու մասի բաժանվի—ու դա հենց պարապմունքները վերջանալուց առաջ և ընդհանուր ստուգումները տալու ամենապատասխանատու բոպելին։ Յես կարծում եմ, վոր դա ուղղակի գալնան ազդեցությունն ե նրա վրա։

Սերյոժկան պատասխանեց, վոր զարունն եստեղ վոչ մի զործ չունի, և ինքը պարզապես իր կարծիքը հայտնեց: Բայց վորովհետ բոլորը սոսկալի նյարդայնացել եին, Սերյոժկան ել զարպացավ ու ձախը բարձրացրեց: Եղ ժամանակ Ալմակփիշը հանկարծ ճշաց, վոր վաղուց ե, վոր Բլինովի տեղը գպրոցը չե, ալլ ԲՈՒՀՆ-ը, և աղմուկ առաջ յեկալ: Զի՞ն-Պալնան իր իշխանությամբ փակեց ժողովը:

Դրանից հետո միջանցքում Սերյոժկան խոստացավ, վոր բոլոր դպաշիներին ցույց կտա - և ցույց կտա հանուն սկզբունքի, վոր նա ամենից առաջ հեղափոխական ե, հետո - դպրոցական և այլն:

### 23 ապրիլի.

Լույս տեսավ «Իքու»-ը. մի եսպիսի հոդված կա.

### Շաղպամ

Վարիչն «ինքնավարություն» տեսակի շաղպամ տնկեց: Մեծ, շատ մեծ շաղպամ դուրս յեկավ: Վարիչը բոնեց շաղպամից, քաշեց-քաշեց, շաղպամը հողից չհանեց:

Վարիչն ոգնության կանչեց աշկոմին: Աշկոմը վարիչից, վարիչը շաղպամից, — հա քաշեցին, քաշքաշեցին, շաղպամը հողից չհանեցին: Մը-տածեց աշկոմը ու կանչեց տնտկոմին: Տնտկոմը աշկոմից, աշկոմը վա-րիչից, վարիչը շաղպամից, հա քաշեցին, քաշքաշեցին, շաղպամը հողից չհանեցին:

Կանչեցին սանկոմին: Սանկոմը տնտկոմից, տնտկոմը աշկոմից, աշկոմը վարիչից, վարիչը շաղպամից, հա քաշեցին, քաշքաշեցին, շաղ- պամը հողից չհանեցին:

Սանկոմը կանչեց դպաշխանոցին: Դպաշխանոցը սանկոմից, սան- կոմը տնտկոմից, տնտկոմը աշկոմից, աշկոմը վարիչից, վարիչը շաղպա- մից, հա քաշեցին, քաշքաշեցին, շաղպամը հողից չհանեցին:

Դպաշխանոցը չկարողացավ համբերել և ամբողջ ուժովը մեկ գոռաց:

### — Մի-լի-ցի-ո-ներ:

Միլիցիոներն իսկուն - պատրաստ ե տեղնուտեղը: Միլիցիո- ները դպաշխանոցից, դպաշխանոցը սանկոմից, սանկոմը տնտկոմից, տնտկոմը աշկոմից, աշկոմը վարիչից, վարիչը շաղպամից, հա քաշեցին: Քաշքաշեցին, շաղպամը հողից չհանեցին: Միլիցիոներն ոգնության կան- չեց լեռամսար նախագծին: Նախագիծը միլիցիոներից, միլիցիոները դպաշխանոցից, դպաշխանոցը սանկոմից, սանկոմը տնտկոմից, տնտ- կոմը աշկոմից, աշկոմը վարիչից, վարիչը շաղպամից, հա քաշեցին: Քաշքաշեցին, շաղպամը հողից չհանեցին:

Կանգնել են, քրտնաթաթախ, իսկ շաղպամը դեռ հողումն եւ:

— Սատանան գիտե, լերը կհանեն շաղգամը, — հարցրեց հանդիսատեսներից մեկը:

«Ի՞քա՞ս-ի կարծիքով—յերբեք»:

Իսկուսն են պատի մոտ, վորտեղու իքս-ն եր կախված, միտինգ կազմակերպեց. Սերյոժկա Բլինովը տաք-տաք ճառ եր ասում, և բոլորը համաձայն ելին նրա հետ, վոր, իհարկե, ինչի՞ յե պետք եղականի ինքնավարությունը, վոր վոչինչ չի կարող անել: Յեկ վոր, ընդհանրապես, ավելի լավ ե բոլորովին հրաժարվել ինքնավարությունից: Բայց հենց եղանակ ել վորոշեցին գործը հետաձգել մինչև ստուգումների վերը, իսկ առաջման լուել:

Հետո Սերյոժկան ելի ասում եր, թե քանի վոր մեր դպաշխները չեն համապատասխանում իրենց նշանակությանը, ապա նրանց պետք ե փոխել և վոր միայն են ժամանակ գպրոցը հեղափոխական ուղղով կընթանա, մեզ բոլորիս համար ամեն բան և սովորելն ել հետ կընի: Շատերն եղ բանին համաձայն չեյին: Որինակ՝ յես փորձով համոզվել եմ, վոր Զին-Պալնան և Նիկպետովը միանգամայն համապատասխանում են իրենց նշանակությանը: Իհարկե, Յելնիկիտկայի և մասամբ Ալմակֆիշի դեմ յես բավական բան ունեմ, բայց, համենայն զեզս, նրանք ել լերբեմն ոգուս են բերում: Բայց Սերյոժկան ասում ե, վոր լեթե պետք ե բոլորի դեմ մի բան ձեռնարկել, ապա արդեն բոլորի դեմ:

Դրանից հետո յես ու Նիկպետովը յերկար ժամանակ ման ելինք գալիս գիմնազիայի փողոցում և մտածում-դատում: Նիկպետովն ինքն ինձ կանչեց: Իմիջի ալլոց նա հարցրեց, թե ինչու յես Սիլվայի հետ մոտ չեմ, բարեկամ չեմ: Յես բացառեցի նրան, վոր դա Լինալի պատմությունից հետո յեր: Սիլվան ինչ-վոր բանում կասկածում ե ինձ, իսկ իմ մեղքը միայն այն ե, վոր յես գնացել եմ կաղամբատոներին: Հետո Սիլվան ինձ ասաց, վոր իմ գաղափարախոսությունը կոմյերիտական չեն:

— Այս, լավ աղջիկ ե Սիլվիդա Դուքինինան,—ասաց Նիկպետովն ու հառաջեց:

— Լավ լինելը լավն ե, միայն չար ե—պատասխանեցի յես.—իսկ ձեր կարծիքով ի՞նչն ե նրա լավությունը:

— Նա խստությամբ ե վերաբերվում թե իրեն, թե ուրիշներին, բայց, դրա փոխարեն, յեթե կապվում ե, ապա կապվում ե ամբողջովին... իսկ ձեր կարծիքով, Շյաբցե, յես բախտավոր եմ, թե չե:—հանգարծ, վոչ դես, վոչ դեն, հարցրեց Նիկպետովը:

— Իհարկե յերջանիկ եք:

— Լավ դիտող չեք, Շյաբցե:

— Ե, գիտեք ի՞նչ, Նիկոլայ Պետրովիչ, —ասացի յես,—իմ կարծի-

քով անբախտ ե են մարդը, վոր միանգամալն մենակ ե և վորը, իր մենակությունը մոռանալու համար, ստիպված ե հասարակական աշխատանքի լծվել Հետո ապերջանիկ ե նա, վոր չի իմանում ում խորհուրդ հարցնի:

— Իսկ դու, Շլարցե, լերջանիկ ես:

— Յես թակարդ ընկնող չեմ, Նիկոլաէ Պետրովիչ, — պատասխանեցի յես:

Ցերկուսս ել ծիծաղեցինք ու բաժանվեցինք:

Ապա նա ել ինչո՞ւ պետք ե ապերջանիկ լինի, յեթե բոլորը նըրան սիրում են, հարգում ու գնահատում: Միմիալն Սերյոժկա Բլինովն ե նրա զեմ: Բայց դե, ախար Սերյոժկան բոլոր դպաշխներին ե դեմ:

## 26 ապրիլի.

Յես գնացի ԱՍԻՊ-բաժին, լերբ քարտուղարն ենահեղ չեր, և պարապությունից սկսեցի սեղանի վրալի թղթերը թերթել, ու հանկարծ տեսնեմ, անդրագիտ ձեռագրով զրած մի յերկար թուղթ և հետո հետո ել միասին մեքենալով տպած նրա պատճենը:

Յես արագ կարդացի այդ թուղթը, վոր ինձ շատ զարմացրեց, բայց վորովհետև վոչվոք չկար, վոր խորհուրդ հարցնեմ, յես վորոշեցի արտագրել հիարկե, յես սաստիկ շտապում ելի, վորովհետև վախենում ելի, թե ուր-վոր ե, քարտուղարը ներս կմտնի. բայց և այնպես կարողացա պատճենը գրպանս կոխել:

Ցերբ քարտուղարը հանկարծ ներս մտավ, յես հազիվ վրա հասցըրի թուղթը թղթապանակի մեջ գնել, բայց թղթապանակը բաց մընաց: Քարտուղարը կասկածով նայեց ինձ և հարցնում ե.

— Առանց ինձ եստեղ գուշք ինչ եյինք անում:

— Վոչինչ, Զեղ եյի սպասում:

— Բա թղթապանակն ինչի՞ յե բաց:

— Հենց ենպես, թերթում եյի:

— Յես ձեղ խնդրում եմ զաղտնի գործերի թղթապանակին ձեռք չտալ:

— Իսկ յեթե զաղտնի յեն, ինչո՞ւ յեք դուք սեղանի վրա թափթափվում:

Թարտուղարը սաստիկ նեղացավ ու ասում ե.

— Դուք, ընկեր Շլարցե, աշխատանքի ժամանակ ձեղ ամենեին ենպես չեք պահում, ինչպես պետք եւ, Յեզ ընդհանրապես ել...

— Յեզ ընդհանրապես ել — պատասխանեցի յիս — անելու բան չունեմ եստեղ: Զեղ ասում են, թե անապաստանների հետ ինչ ձեռք պետք ե աշխատել իսկ դուք միալն ծիծաղում եք:

Կոպտություն արեցի և գնացի:

Տանը լես մի անգամ ել կարդացի ևս պատճենը. ինձ համար ամենազարմանալին են ե, վոր հասակավոր տղամարդիկ ել, բանից գուրս և գալիս, վոր սեռական տեսակետից տանջվում են, և վոր դրա համար պատժում են: Վաղն եթ կխորհրդակցեմ Նիկպետոժի հետ, թե չի շատ տանջանք և պատճառում: Եսպիսի թղթեր կարդալ և չի-մանալ, թե եդ թղթում ինչն և ճշմարիտ և ինչը վոչ, իսկ գրքերում եդ մասին վոչինչ չկա գրած:

28 ապրիլի.

Եսոր չորրորդ խմբում մաթեմատիկայի ստուգութն եր: Ստասկա վելեպոլսկալան կտրվել եր, զուրս լեկավ լարորատորիայից, կանգ առավ և հոհուաց: Եղանեղ հավաքվեցին մատս աղջիկները, վոր պետք և ստուգվեյին: Սկզբում նրանք Ստասկալին ուշքի հին բերում, ջուր եւ յին խմեցնում, իսկ հետո իրենք եր Սկսվեց մի ընդհանուր հոհոց և հեղեկոց: Ստասկան ընկավ հատակին և սկսեց թպրտալ, նրա յետե-վից մյուսները – և հետզհետե ավելի ու ավելի: Վրա վազեցին դպաշիս-ները, Յերբ աղջիկներին ուշքի բերին, յես լսեցի, ինչպիս Զին-Պալ-նան ասաց Ալմակփիշին:

— Տասսայական հիստերիա լե, պետք ե միջոցներ ձեռք առնել: Ես պատմությունը համարյա քառորդ ժամ տեսեց:

Դրանից հետո ԱՄԻՊ-ից թոցրած պատճենը ցույց տվի Նիկպե-տոժին և խնդրեցի, վոր բոլորը մանրամասն բացատրի: Նիկպետոժը շատ շփոթվեց և խորհուրդ տվեց՝ եղ թուղթը վոչնչացնել և ստու-գումներով զբաղվել իսկ հետո, յերբ յես սկսեցի պնդել, բացատրեց, վոր եդ բոլորը — սեռական այլասերութն ե, և վոր եղպիսի բան պա-տահում ե, բայց խորհրդալին իշխանությունը մաքառում ե դրա դեմ, այսինքն կազմակերպում ե ֆիզկուլտուրա, դասախոսություններ, բարձրացնում ե ժողովրդի լուսավորությունը և ալլն: Ես բոլորն ինձ ենքան ել չբավարարեց:

Սա լես առաջին անգամն եյի տեսնում, վոր Նիկպետոժը շփոթվեց:

30 ապրիլի.

Յերեկ ֆիզիկայի ստուգումից հետո յել միքանի աղջիկներ ընդհանուր, մասսայական հիստերիկայի յենթարկվեցին:

Իսկ եսոր Շիքս-ում եսպիսի նկատողություն եր գրած.

Հիստերիկական ինստիտուտ.

Հայտնում ենք ընթերցողներին, վոր մեր դպրոցում ուսումնա-կան նոր հիմնարկ ե բացվել — հիստերիկական ինստիտուտ: Ալդադե

ավարտողները տոմսակ են սահնում անարգել ցանցառ որիորդ դառնալու։ Դիտություններից անցնում են՝ բալեր, պարեր, ֆլիրտ և ամեն տեսակի հիստերիկա, սկսած մկան ծվծվոցից մինչև վորոտացող հոհոց։

Այդ հիմնարկում կուրսն ամենահաջող անցնող աղջիկներն են՝ Ն. Ֆ., Ս. Վ., Լ. Դ. և Կ. Բ.։

Հիշյալ ինստիտուտի աշխատանքները թեթևացնելու համար «Իքս»-ն իր կողմից հետևյալ միջոցներն են առաջարկում։

1) Լսարանում վալերիան կաթիլներով լիքը քառասուն դույլանոց փակ տակառ պահել։

2) Գիմնազիայի փողոցում մի յերկաթե արձան տնկել և գրել վրան։

— «Վշտի քանդակումն», վորպեսզի բոլոր ցանկացողները կարողանան, ընկերուհիներին զբաղմունքից չկտրելու համար, արցունքները թափել սույն արձանի վրա։ Արձանը պետք է յերկաթից լինի, վոր արցունքներից չհալվի։

«Իքս»-ը հուկս ունի, վոր այս միջոցները խիստ կկանոնավորեն հետերիկական ինստիտուտի աշխատանքները։

«Իքս»-ի մոտ ահազին ծիծաղ եր բարձրացիկ. աղջիկները սաստիկ կատաղել ելին և հենց Զին-Պալնալիքթի տակ, վոր, նոր եր սկսել կարդալ պատից պոկեցին «Իքս»-ը։ Զին-Պալնան վոտքը գետին խփեց ու ճչաց։

— Ով համարձակվում է խախտել խոսքի ազատությունը դպրոցում, նա այլևս ինձ հետ վոչ մի գործ չի ունենալու իսկուն լրագիրը նորից կախեցեք։

Աղջիկներն իսկուն մի տեղից սկսեակներ (ՔНОՊԿ) ճարեցին և «Իքս»-ը նորից կպցրին։ Իսկ մենք անկլունում ենպես ելինք հըռն հըռում, վոր փորներս ցավեց։

Դրանից հետո իս բոլորովին պատահմամբ մի նորություն իմացա. լսարանին մոտ մի ճճոթած տոմս վերցրի և կարգացի։ Այդ տոմսում Զին-Պալնալիքթի ձեռքով գրված եր հենց նույն նկատողությունը «Հիստերիկական ինստիտուտի» մասին, իսկ մյուս յերեսին ելի նրա ձեռքով — «Իքս»-ի խմբագրությանը։ Այ քեզ բան, Կնշանակի, մեր Զինայիդիշան մասնակցում և «Իքս»-ին։ Ու կնշանակի նա գիտե, թե ունից և կազմված խմբագրությունը, իսկ իս մինչև եսոր ել չգիտեմ։ Իմ կարծիքով սա նույնիսկ սրբկալություն ե իմ վերաբերմամբ։

Եեվ ընդհանրապես, մի տեսակ ենպես և դուրս յեկել, վոր իմ գործերն ենպես են գասավորվել վոր միայն իս գիտեմ։ Ու քանի գնում, եղամիսի գործերն ավելի շատանում են, իսկ խորհրդակցել պարզապես վոչվոքի հետ չեմ կարող. — Սիլվայի հետ չեմ խոսում, Սերյոժ-

կա Բլինովից հեռացա, Նիկպետովը հասակավոր և եինձ չի հասկանա. բա ել մում հետ:

Մնացել են միայն ստուգումներն ու այ, ևս որագիրը Ու հիմա ևս որագիրը կարծես իմ մտերիմ բարեկամը լինի, վորի հետ ամեն, ամեն քան խոսում եմ:

### 10 մայիսի.

Ուստի Ստուգումներիս մեծ մասը տվեցիւ Նիկպետովն ինձ շնորհավորեց և ասաց, վոր յես հիմա ինձ կարող եմ չորրորդ խմբի անդամ համարել Մեր խմբի մեծամասնությունն ել համարյա բոլոր ստուգումները տվեց, նրանց թվում ևս Զոյան ու Սիլվան, Յուշկա Գրոմովը նատեց, հասարակագիտության և մաթեմատիկալի ստուգումները հունվարից մնում ելին, բայց նա ասում ե, վոր իր համար միենույն ե, թե վորտեղ կլինի—յերրորդ խմբում թե չորրորդ։ Միւնույն ե, նա զպրոցը չպիտի ավարտի, այլ կմտնի հեծելազոր զպրոցը։ Նրան գուր ե գալիս, վոր հեծելազորի զինվորները կարմիր շալվարով են ման գալիս Իսկ իմ կարծիքով դա ախտախություն ե, վորովհետեւ միենույն ե, թե ինչ տեսակ շալվարով ման կզաս, թեկուզ հենց առանց շալվարի, միայն տրուսներով։

Ա.ՍԻՊ-ից վերցրած թուղթը յես ցույց տվեցի Յուշկային, իսկ նա ասում ե, վոր զարմանալու վոշինչ չկա, և վոր բոլոր տղամարդիկ եղակիսի բաներով զբաղվում են, և վոր եղ լուղորը դատարկ բաներ են։ Յեթե նա նույնպիսի վերաբերմունք ունենար իր կլանքում սկսական հարցի նկատմամբ ինչպես յես, ապա, իհարկե, վոր նա եղակի չեր դատիլ։

### 15 մայիսի.

Եսոր Զին-Պալնան հայտարարեց, վոր ամառային դպրոցին աշակերտներից նրանք կմասնակցին, վորոնք ամառը մնալու յեն քաղաքում, իսկ ով վոր գնալու տեղ ունի, թող գնաւ Հետո նա բացատրեց, վոր ինքը պետք ե ղեկավարի ամառային դպրոցը և հրաժարվում ե արձակուրդից։ Պարապմունքները կկազմին։—1) քաղաքի մոտ վորեւ գյուղի հետազոտությունը և նրա շեֆությունը։ 2) գավառագիտական թանգարանի աշխատակիցների հետ հնություններ հանելուն մասնակցելը։ 3) բնագիտական եքսկուրսիաներ։ 4) հասարակագիտական եքսկուրսիաներ, վոր կլինեն ալցելելով զանազան թանգարաններ և հին կալվածքներ։ Դպաշխներն ամեն մեկն իր մասնագիտության նկատմամբ ղեկավարող կլինի։

Ամառալին դպրոցը կսկսվի հունիսի 1-ից, յերբ վերջնականապես կպարզվի շրջանավարտների և հաջորդ դասարանները փոխադրվողների հարցը։

## 20 մայիսի.

Յուտրուլ խաղալիս կոշիկներս բոլորովին քըքըել եմ և վորպեսդի հայրիկոյին ծախսի տակ չգցեմ, ամեն լերեկո հասարակ ու մոմածթելերով կարում, կարկատում եմ: Կոշկակարն ասում ե, վոր միկնույն ե, պետք ե նորը գնել: Կոշիկների պատճառով զբելու խակի ժամանակ չի լինում:

## 31 մայիսի.

Յուշկա Գրոմովը Մարիա անունով մի քույր ունի: Նա արդեն մեծ աղջիկ ե, բայց շարունակ մեղ—լերեխաներիս ե քսմալում: Նրանից անուշանոտ ոծանելիքի հոտ ե գալիս, ինչպես տակառից: Նրա քիթը բոլորովին սպիտակ ե: Յուշկան ասում ե, վոր նա պուլըրա յեքսում, իսկ նրա քիթն իսկապես կապտած ե: Յես կսառւգեմ արք: Նրանց հայրը կատու քերթող ե: Նա մի ինչ-վոր տեղ կատուներ ե գնում, հետո նրանց մորթը քերթում ե և վաճառում ե հացի: Իմ հայրիկոն ել ե ճանաչում նրան, միայն ասում ե, վոր կատվի մորթը անգործնական ե—թափվում ե:

Ես Մարիան ինձ շարունակ խղճում ե, «վորբիկ»: Ե ասում ե քաղցրավենիքով թել ե խմեցնում, ենպես վոր Յուշկան նույնիսկ սկսեց ինձ կազլոնի վորք ասել: Դա միքիչ վիրավորական ե, բայց կարծես մի տեսակ դուր ե գալիս:

Կոմյերիտմիությունը ամառն ակմբային աշխատանքները դադարեցնում ե: Յես թեև գործարան-ակումբը սակավ եյի գնում, բայց, համենայն դեպս, մի տեսակ ափսոսում եմ: Բացի զրանից ամառը Սերովժկա Բլինովը գնում ե Տամբովի նահանգը, իսկ Ակ Զոյան գնում ե իր ծնողների մոտ՝ Լենինգրադ:

Ցերեբենն ինձ թվում ե, վոր յես բոլորովին մերկ գետնի վրա մենակ եմ ման գալիս, և բացարձակապես շուրջս վոչվոք չկա—ու շատ եմ խղճում ինքս ինձ:

## ԱՄԱՐԱՅԻՆ ՅԵՌԱՄԱՅԱԿ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՏՐ

Յ նունիսի.

Եսոր Զին-Պալնան բացատրեց ամառալին դպրոցի ևն առաջա-դրությունները, վոր տրվում են իր կողմից: Դա ամենից առաջ, ամեն տեսակիամից, կամ, ինչպես ինքն և ասում, կոմպլեքս լեզանակով, Գու-լովկինո գլուղի հետազոտությունն ե, վոր քաղաքից հինգ վերստ հե-ռավորության վրա յեւ: Գյուղացիների հետ պետք ե կապ հաստատել նրանց մոտ գունչներս չցցել, իբր թե մենք քաղաքացի լենք, ուսում-նասիրել նրանց կենցաղը, միաժամանակ նրանց բացատրություններ տալ իրենց հետաքրքրող բոլոր խնդիրների մասին, չափել գլուղի լար-նությունն ու յերկարությունը, ընդհանրապես նրանց և քաղաքի մի-ջև միացնող ողակ ծառալիեւ: Սա—առաջին: Յերկրորդ—հետեւ և գրի առնել գեղջկական յերգերը, հերքիաթները, ավանդություններն ու հավասարիքները (միաժամանակ նկարել գլուղական շորերի տարագ-ները, բայց սա ավելի շուտ վերաբերում ե կենցաղին): Իբրև որինակ, թե ինչպես ե լինում ժողովրդական գլուցազներգությունը, Զին-Պալնան կարդաց մեզ համար ֆիննական «Կալեվալա» պոեմալից մի-քանի կտոր: Սա ժողովրդական ավանդությունների հնապիսի հա-վաքող եր—Ռունիբերգը, վոր վոտքով շրջել և ամբողջ Ֆինլանդիան և հավաքել ե զանազան հերիաթներ իսկ նրանց բանաստեղծ Լենըոտը դրա համաձայն պոեմա լեւ գրել: Ու եդ բոլորը վոչ թե յերեքհարլուր տարի տուած է յեղել—Շիքսպիրի ժամանակ, այլ անցյալ դարում— կնշանակի հարլուր տարի յի, վոչ ավելի: Գուցե Ռունիբերգը պետք ե իմանար եդ բոլորը, բայց թե մեր ինչին և պետք—չեմ հասկանում: Միթե վորոնե մեկին կարող են հետաքրքրել ենպիսի վայրենի նախա-պաշարություններ, ինչպիս ալքերն ու սատանաները: Ես ենպես եմ կար-ծում, վոր իրենք գլուղացիներն ել ենքան շատ չեն հավատում ես բո-լոր ախմախություններին: Իմ կարծիքով սրանք ժողովրդի տգիտու-թյունիցն են, և գրի առնելու կարիք չկա: Ավելի շուտ պետք ե գլու-

զում ելեկտրականություն և կոռուպերացիա մտցնել, և սոցիալիզմ կլինիքաց թաց Զին-Պալնան պնդում ե, թե պետք ե եղ բոլորը զրի առնել, թեկուզ հենց նրա համար, վոր շրւտով ելեկտրական լուսի տակ եղ բոլորը կանհետանա, այնունետև վոչ մի կերպ չես կարող դանել իսկ իմ կարծիքով իսկի վոչվոք ել չի աշխատիլ դանել, Յես ես բոլորն ասացի Զին-Պալնային, իսկ նա ասում ե, վոր չես չեմ սիրում իմ մայրենի լեզուն—ամեն տեսակ քտղաքակրթության արմատը, Դրանից հետո յես հակաճառելու բան չունեմի և ստիպված ելի զրի առնել ամեն տեսակ ավանդություններ:

Բացի գրանից պետք ե նաև զավառազիտական թանգարանի աշխատանքներին մասնակցել—ամեն տեսակ բլուրներ փորել Զին-Պալնան ասում ե, վոր քաղաքից ութ ու կես վերստ հեռու մի մեծ քաղաք կա, վոր քաղկացած ե միքանի բլուրներից: Գրավառազիտական թանգարանը մտածում ե, վոր ենտեղ իրենց զենքերի, ձիաների ու կանանց հետ ռազմիկներ կան թաղած: Ապա պետք ե փորել հանել և ուղարկել թանգարան: Սա շատ կարենոր առաջադրություն ե, մանավանդ զենքերի նկատմամբ: Կհանենք հենց ենտեղ—բլուրների վրա—որինակելի կոփվ կսարքենք: Բաց յես կարծում եմ, վոր ընդհանրապես, նույնիսկ ամբողջ ամառը, բոլոր առաջադրությունները կատարել չի լինիլ վորովհետև մյուս զավախներն ել առաջադրություններ կտան:

Նիկպետոփը հիվանդության պատճառով լերկու ամիս արձակուրդ ե գնացել, Գնալուց առաջ նա շարունակ Սիլվայի հետ եր ման գալիս և խոսում: Յես սաստիկ վիրավորվում ելի, վոր ինձ հետ չեր ման գալիս:

Այժմ կատարելապես վոչվոք չկա, վոր հետը խոսեմ:

#### 4 հունիսի.

Բնագիտության մասին Յելնիկիտկայի հետ ժողով անելուց հետո մի միջադեպ պատահեց, վոր ինձ շատ վրկովեց: Յերբ յես լարորատորիայից դուրս յեկա, տեսա, վոր Վալոդկա Շմերցը խփում և Սիլվայի մեջքին Սիլվան սկզբում պաշտպանվում եր, իսկ յես ուղղում եյի անտարեր կերպով անցնել կողքից, յերբ հանկարծ լսում եմ, վոր Սիլվան շատ լուրջ ձախով աղաղակում ե.

— Կոստյա Ռյաբցե, ոգնիր ինձ:

Յես ուղում եյի հեռանալ, բայց եղ ժամանակ Սիլվան հուսահատ ճշաց.

— Վլադլեն, ոգնիր...

Վալոդիա Շմերցը ենպես ե հռնում, վոր խփելը նույնիսկ թողեց և հարցնում ե.

— Ե, ևս ի՞նչ վկազլեն ե:

Եստեղ լես շուռ յեկա, մի ենպես ուտեցըրի, վոր նա կլիկոնձի տվեց, բայց հետո վեր թռավ և հարձակվեց վրաս, Բայց իմ հինգ յեղբարն ենպես հասավ նրան, վոր նա յետ թռավ դեպի գուռը, թքեց դեպի ինձ, բռունցքը շարժեց և գնաց:

Եստեղ Սիլվան ասաց.

— Ցես քո հանդեպ մեղավոր եմ. հիմա լես ամեն բան գիտեմ, ներիր:

Ցես պատասխանեցի.

— Դու առաջ ել ամեն բան գիտելիր, ու լես քեզ ներելու բան չունեմ:

— Վահ վաչ, յես միայն հիմա իմացա նիկուալ Պետրովիչից, — արի ելի առաջվա նման բարեկամ լինենք:

— Առաջվա նման բարեկամ լինել չենք կարող. — Հոր կերպով պատասխանեցի յես ու գնացի: Կարծեմ նա լաց յեղավ:

7 հունիսի.

Յերեկ մենք առաջին անգամ գնացինք Գոլովկինու: Գլուղացիները բանջարանոցներումն եյին: Նրանք ընդհանրապես ավելի շատ բանջարարությամբ են պարապում: Ինձ վիճակվեց ուսումնասիրել կենցաղը: Ցես ել մոտեցա մի գեղջկուհու, վոր շիթիլ եր տնկում, և ասացի:

— Մորաքույր, Ըույլ տվեք ձեղ ոգնեմ:

— Իսկ դու ով ես:

— Մենք քաղաքից եքսկուրսիա յենք յեկել:

— Զլինի աշակերտներ եք:

— Աշակերտներ ենք:

— Հա, ես ժամանակներս ելի եյին աշակերտներ յեկել. նրանք յերկրաչափներ եյին: Հա, նրանք Արինա մորաքրոջ սնդուկն ու սպիտակեղենը տարել եյին:

— Մենք իսաբերաներ չենք:

— Ե, ով գիտե, թե դուք ովքեր եք: Լավ կանես հեռանաս, չխանդարես ինձ:

— Իսկ դու, մորաքույր, ստունաներին հավատժւմ ես:

Եստեղ նա կանգնեց, ձեռքերի հողը մաքրեց և ենպես գոռաց.

— Պետրաման... Պետր:

Ու եստեղ ցանկապատի յետեից, յեղանը ձեռքին մի գլուղացի դուրս յեկավ ու ուղիղ դեպի մեզ: Իսկ են կինն ասում են:

— Այ, եստեղ, ինչ-վոր մի աշակերտ ե յեկել — չես հասկանում թե ինչի, սատանաներից ե խոսում:

Եստեղ յես սիրտ առա և ասում եմ.

— Ե, չե, իսկի յել սատանաներից չեմ խոսում, յես կարող եմ ձեզ ելեկտրականացման մասին պատմել, ու ուղիղի մասին, ու հետո կարող եմ ոգնել վորեն կերպ:

— Հը, կնշանակի դաշինք, զոգում—պատասխանում և զյուղացին,—Ե՛, ի՞նչ կա վոր, դա լավ բան ե, մենք դեմ չենք, չեթե դործի մասին ե: Միայն, սիրելիս, լավ կանես՝ կիրակի որը գաս, կիրակի որերը մեր մողովուրդն աղատ ե:

Եղանակ յես եդ բակից զատարկ գուրս յեկա: Տների յետեռից եմ գնում, ամեն տեղ բանջարանոցներում կանայք ու յերեխաները փորփըրում են: Մեկ ել հանկարծ վրաս հարձակվեց մի բրդոտ շուն և սոսկալի հաջոցով սկսեց պտտվել շուրջու: Յես, ի՞նչպես սովորաբար եղաղիսի դեպքերում անում են, ենպես ձևացրի, իբր թե գետնից քար եմ վերցնում, բայց նա չհանդարտվեց: Ընդհակառակը, նրա լետեից միքանի հատ ել գուրս թռան ինձ վրա: Իսկ յես ել լսել եյի, վոր եղաղիսի դեպքերում պետք ե շան վրա միզել, և շունը կհեռանա: Յես ել, քանի վոր շատ շներ ելին, սկսեցի ամրող ուժով պտտվել և ամեն կողմի վրա միզել, աշխատելով շների վրա միզել:

— Վա, ես ի՞նչ ե, Թօ ե զողումը, —հարցնում ե յետերիցս մի ձայն, և տեսնում եմ՝ են յեղանը ձեռքիս զյուղացին:

Նա քշեց շներին ու յես առաջ գնացի: Բայց գեռ լերկու բակ ել չելի անցել, վոր շները նորից հարձակվեցին, և նրանցից մեկը բռնեց իմ շալվարը:

Եստեղ յես զալրացա, ցանկապատից մի ձող հանեցի և սկսեցի պաշտպանվել:

Մի ձայն եմ լսում.

— Գցիր, գցիր փայտը, քեզ ասում են՝ վեր գցիր, կպատուտեն:

Յես ձողը գցեցի: մի ի՞նչ-վոր զյուղացի մոտեցավ, հարցնում ե.

— Ի՞նչ ես ուղում:

— Յես յեկել եմ ձեր գյուղն ուսումնասիրեմ:

— Եստեղ, տների յետեռում ուսումնասիրելու բան չկա—պատասխանում ե գյուղացին: — Ման են զալիս, հիտազոտնւմ են... Եղ ի՞նչի՞ յես ցանկապատը ջարդում. հո դուչես տնկել դու ել իրավունք չունես քանդելու:

Ու հանկարծ թփուտների միջից զլուխը դուրս հանեց մի կին և ձչում ե.

— Կճրի, կճրի, անիծված: Եստեղ են զալիս, տես Ե, վոր իրինա մոքրի սնդուկը չփախցնեն... Վանկա՛, Վա՞նկը՝ հանկարծ գոռաց նա անասելի կերպով—սագի ճուտերը համարդիր, սագի ճուտերը...

Գյուղից հազիվ դուրս փախա դեպի մեծ ճանապարհը: Մյուս

տղաների հետ ել նույնն եր պատահել: Տղաներից յիրկուսին, վոր ռուլետով ուղեցել են չափել քիչ և մնացել ծեծեն:

## 10 հունիսի.

Կարծես թե ինձ հետ սկսում ե կրկնվել նույնը, ինչ վոր ձմեռը, բայց արդեն ևս անզամ յես չեյի մեղավոր: Բացի դրանից հիմա յես եղ բանին գիտակցաբար եմ վերաբերվում, քան ձմեռը, վորովհետև նախ լինայի հետ պատահած դեսլքը, ապա—վորովհետև, ինչպես յերեսում և Ա.Ս.Պ.-ից պոկած թղթից, ինչ-վոր բաների համար պատժում են: Ամենավատն այն ե, վոր Նիկակետովմն արձակուրդ ե գնացել: Յուշկա Գրոմովին յես եղ հարցերում վստահանալ չեմ կարող: Ել մարդ չկա, վորի հետ յես խորհրդակցեմ, վորովհետև յես բոլորովին մենակ եմ: Այս թե վոնց ե բանը. ևսա շարունակվում ե միքանի որ:

Յուշկայի քույրը՝ Մարիան մտածել ե մի ներկայացում կազմակերպել—Զեխովի «Առաջարկությունը»:—Այդ ներկայացման ժամանակ յես պետք ե փեսայի դերը խաղամ, իսկ Մարիան—հարսնացուի: Ես պիեսան ժամանակակից չե և բավական ախմախ բան ե—կալվածատերերի մասին, բայց յես համաձայնեցի, վորովհետև ուղում եմ ընդհանրապես փորձել ինձ իբրև դերասան: Հստ դերի յես պետք ե համբուրկեմ Մարիայի հետ: Փորձի ժամանակ յես նրան գրկեցի և համբուրեցի, իսկ նա ասում ե.

— Թու, ամբողջովին փոխքոտեց... Ե՛, դու միթե համբուրել չգիտես:

Եղտեղ հինգ մարդ կար. նրանք բոլորը հոհոացին, իսկ Յուշկա Գրոմովը գոռում ե.

— Հը՛ը՛... կալվածատեցիր, կարմըրեցիր:

Եხս զայրացա ու ասացի, վոր ներկայացմանը չեմ մասնակցի և հենց հիմա գնում եմ տուն: Եստեղ բոլորը շրջապատեցին ինձ, սկսեցին խնդրել, վոր մնամ, իսկ Յուշկան ինձ մի անկյուն քաշեց և ասում ե.

— Դու փոքրիկ ես, ինչ ե, հիմարի մեկը, թէ հենց ախմախ ես ձևանում: Միթե չես տեսնում, վոր Մարիան քսմսվում ե քեզ:

Եხս միանգամից իսկի չհասկացա ել թե ինչ ե ուղում ասել նա. բայց եստեղ վրա թռավ Մարիան, Յուշկային ենպես բրթեց, վոր նա մի կողմը թռավ, ու ինքը շնչում ե.

— Ի՞նչ հիմար տղա յես, կոստյա, ախար դե, դա դժբախտություն չե, վոր դու չգիտես: յես քեզ կսովորեցնեմ: Ուզնեմ ես, ուզնեմ ես, իրիկունն արի մեր այգին:

Իսկ նրանց տան յետեւ մի փոքրիկ ալգի կա: Եხս մտածեցի և մնացի: Միենուին ե, առանց ել ժամանակ շատ կա:

Իսկ յերեկոյան գնում եմ նրանց այզին, Մարիան և արդեն ենտեղ ե. թափանցիկ շոր ե հագել, ու շրջազգեստն ել կարճ եւ Նա խկույն կպավ ինձ և ասում ե.

— Դե, դու նախ բերանիդ ջուրը հավաքիր, շրթունքներդ՝ սեղմիր և շրթունքներդ կպցրու իմ թշին:

Բայց յես զիտմած համբուրեցի վոչ թե նրա թուշը, այլ քիթը նա շշնջում ե. «Հիմար, եստեղ չե», իսկ յես համենայն զեպս կարողացա նկատել, վոր նրա քթի վրա շրթունքներիս տեղը մնաց: Հետո նա սկսեց սովորեցնել ինձ շրթունքները համբուրել բայց դա հնքան ել դուրեկան չե, վրովինետե նրա ատամները կինամոնազույն են, ու բայց ո՞ծանելիքի հոտից, ծխախոտի հոտ ել և գալիս: Յեվ խկապես, նա ծխախոտ ծխախոտի յետեից բերանն ե խցկում: Հետո նա ինձ մի մութ անկուն տարավ, նստեցրեց ինչ-վոր նստարանի, իսկ ինքը նստեց իմ ծնկներին: Բայց եստեղ յես զգացի, վոր ինչ-վոր շատ վատ շան հոտ և գալիս, և ասացի:

— Թուէ, մենք ես ի՞նչ տեղ ենք նստել, եստեղ զզիկի հոտ և գալիս:

Իսկ նա զրկեց ինձ և ասում ե ուղիղ տկանջիս.

— Եդ վոչինչ, եստեղ հորս կատվի մորթիներն են կախ տված, դու ուշադրություն մի դարձնիր.

Բայց, ի՞նչպիս կարելի յեր ուշադրություն չդարձնել, յերբ կարծես արտաքնոցի վրա յենք նստած, կամ ավելի վատ: Յես զոռով նրան զեն շպրտեցի և զնացի, բայց նա չվիրավորվեց:

Դրանից հետո յես ելի միքանի անգամ յեղել իմ նրա մոտ: Շառունակ համբուրվում ելինք, փոքրիկների նման: Շատ ել դուրեկան բան չի:

Բայց եդ բոլորը վոչինչ, յեթե ամեն անգամ եղավսի դեպքից հետո Փ-Փ պ-պ չիներ: Դրանով յես շատ իմ տանջվում, մանավանդ յերբ հիշում իմ ԱՍԻՊ-ի թուղթը:

### 15 նունիսի.

Ալյոշկա Զիկինն այժմ ապրում է Զին-Պալնալի մոտ և բոլորովին փոխվել եւ ինարկե, քանի վոր նա բարեկամություն եր անում անապաստանների հետ, սաստիկ յետ մնաց և ստիպված ե յերկըորդ տարին մնալ յերրորդ խմբում: Նա լզար ե, գունատ ու շարունակ լրու:

Զին-Պալնան կոմտնտից նրա մոր համար նպաստ կարողացավ ստանալ, պառազն յեկավ շնորհակալություն հայտնելու և ուզում եր Զին: Պալնայի վոտքերն ընկնել, մի բան, վոր սաստիկ վրդովել եր Զին-Պալնալին: Յես միքանի անգամ փոքրեցի զրույց անել Ալյոշկալի հետ, բայց նա ավելի շատ մըթմըթում ե քթի տակ, քան թե խոսում:

Յերեք որ սրանից առաջ մենք Յելնիկիտկայի հետ եքսկուրսիա գնացինք: Եքսկուրսիան ընդհանուր առմամբ բնագիտական եր, բայց ենուես դուրս յելավ, վոր ստիպված ելինք հասարակագիտությանն ել կպչել, իսկ հասարակագիտությունից Յելնիկիտկան վոչինչ չի հասկանում, ու գրանից մի միջադեպ պատահեց: Գնացել եյինք համարյա ամբողջ մեր յերրորդ խումբը (այժմ չորրորդ) ու միքանի հոգի յել լերկորդիցից: Եսատեղ ճանապարհին ամեն տեսակ սիրային գործեր եյին լինում: Որինակ՝ Վալոդկա Շմերցը ամբողջ ճանապարհին Նինա Թրագկինացի հետ կանոնած եր վազոնի նախասենյակում: Տղերքն ել դիտմամբ անցնում ելին նրանց մոտով, իրը թե արտաքնոց են գնում. մեկը դուրս եր գալիս, մյուսն եր մտնում: Վալոդկան, իհարկե, չարանում եր—ու նրա հախնե, տեղն ե նրան, Հարբի Լուլդի նման բոլոր աղջիկների լետեկիցն ե ընկնում և սիրաբանում: Նինկան Փոթկացնում եր մեզ վրա. զե մեզ ել եղ եր պետք: Հետո Յելնիկիտկան ասում ե, վոր յերգենք, վորովհետև եքսկուրսիայի ժամանակ միշտ յերգում են: Մենք ասացինք, թե ի՞նչ յերգենք, նա ասաց—մի վորեն յերգ: Մենք ել մի հիմար յերգ սկսեցինք: Կոնդուկտորն անցավ, կասկածանքով նաև մեզ և ասաց. «Իսկ յես կարծեցի, թե արգելակը կտրվեց»: Ըստ հանրապես ճանապարհին ուրախ եր:

Հետո, յերբ «Մոլնիչնոյե» հասանք, Յելնիկիտկան իսկուն գնաց աղջիկներին բնագիտություն բացարելու, իսկ տղաներս գնացինք Փուտրոլ խաղալու, Եղանակ շարունակվեց, մինչև վոր տղաները մի փորտու բռնեցին: Բոլորն ել գիտեն, վոր լորտուն չի կծում, բայց, համենայն դեպս, միջադեպ պատահեց: Լորտուն քարշ տվին Յելնիկիտկայի մոտ և հարցնում են (ծիծաղելու համար):

— Յելենա Նիկիտիշնա, ես ի՞նչ ո՞ծ ե:

— Հա, դա,—ասում ե Յելնիկիտկան,—դա լորտու յե, աֆրիկական բուայի ազգականը:

— կծում ե դա:

— Վաչ, նրա խալթոցն անվնաս ե:

Են ժամանակ Յուշկա Գրոմովը, վորի ձեռքին գտնվում եր լորտուն, մոտենում ե Յելնիկիտկային ու ասում ե:

— Յելենա Նիկիտիշնա, բռնեցեք ձեռքով:

— Ի՞նչ մա:

— Վորպեսզի ապացուցես, վոր չի կծում:

Ու լորտուն խցկում ե նրա ձեռքը, լորտուն ել վոլոր. մոլոր ե գալիս: Յելնիկիտկան սաստիկ ճշաց, բոլոր աղջիկներն ել նրա յետեկից:

— Դեն գցիր, իսկույն գեն գցիր,—աղաղակում ե Յելնիկիտկան—չհամարձակվես ձեռքիդ բռնած մոտենալ:

Յուշկան գցեց, բայց վոչ թե գետին, այլ նինկա Ֆրադկինայի վրա։ Նա ենպես և զլուխը պտտում, ննպես և զոսում-զոչում, իսկ մենք բոլորս,—պմւկու Յելնիկիտկան խոստացավ մեղ ընդհանուր ժողովի նյութ գարձնելու Թող անի։ Նա ամեն որ մի բան և առնում ժողով, ենպես վոր հիմա նրա վրա ել ուշագրություն չեն գարձնում։ Նրա ներկայությամբ վոչ մի ուրախ կամ ծիծաղելի բան չի կարելի անել, իսկ աղջիկները նրա մոտ ենպես են թթվում ու համեստանում, վոր կարծես հրեշտակի ճուտեր լինեն։

Հետո մենք զնացինք մի կալվածք։ Այդ կալվածքը խորհ. աընտեսություն ե, այսինքն նրա անսասունների բակը, իսկ զլսավոր տունն ու նրա մասերը պահպանված են իբրև ցուցազրական թանգարան, ու եստեղ եքսկուրսիաներ են զալիս տեսնելու, թե առաջ ինչպես եյին ապրում աղաները, կարվածատերերն ու բուրժույները, իհարկե, մենք ել ուզեցինք տեսնելու իսկ Յելնիկիտկան ասում ե.

— Քանի վոր եքսկուրսիայի նպատակը ընական պատմությունն ե, ապա կարիք չկա ուրիշ բանով զբաղվելու Ռւստի զնանք գոմը։ Յես ենտեղ բոլոր հետաքրքիր բաները կրացատրեկմ ձեզ։

Իսկ թնչ հետաքրքիր բան կարող ե լինել ենտեղ—զանազան յեղներ ու կովեր տեսնելու Ռւրիշ բան, յեթե մենք լինեյինք նրանց խնամած-աճեցրած։ Ռւստի աղաներն ասում են։

— Զենք գնա։

Վիճեցինք-վիճեցինք, ու մեկ ել ապակի գոներից դուրս յեկալ մութ դույնի Փրենչ հազած մեկը։ Ենքան ել շատ ծեր չեր, բայց մի տեսակ մռայլ եր, ու ասում ե.

— Իմիջի այլոց, չե՞ք ցանկանում արդիոք դիտել պալատը։

Յելնիկիտկան հարցնում ե.

— Իսկ դուք վարիչն եք, հմա։

— Այս, — ասում ե Փրենչը, — յես եստեղ գլխավորն եմ։

Իսկ նրա ձայնը խռպոտ ե, փչացած գրամաֆոնի նման, ու կորդոպում շարունակ ջուր ե զլլում։

— Ենպես վոր դուք ամեն բան կարմու եք բացատրել մեղ, — հարցընում ե Յելնիկիտկան։

— Բոլորը — մազ առ մազ, — պատասխանում ե վարիչը. իսկ թնչը վուքի վրա կանգնել չի կարողանում։

— Դե, եդ դեպքում, գնանք, տղերք, — ասում ե Յելնիկիտկան դժգո՞ն ձայնով։ Եդ կնշանակի, նա վախենում եր, վոր չի կարող բացարել դրա համար ել չեր գնում։

Ու վարիչը տարավ մեղ բոլոր սենյակներով։

— Եստեղ — ասում ե — կալվածատեր, նորին պայծառափայլությունը՝ պարոն Ռւրուսովը ճաշում եր, իսկ եստեղ նորին պայծառափայ-

լութրունը թել եր խմում։ Իսկ եստեղ նորին պայծառափայլութլունը հանգստանում եր իսկ եստեղ...

Արդեն նույնիսկ Յելնիկիտկան չհամբերեց։

— Եղ ի՞նչ «նորին պայծառափայլություն» ե ե, — ասում եւ — եստեղ ձեր առջև խորհրդալին լերեխաներ են (եղ մենք ենք եւ — լերեխաները)։ Նրանք չգիտեն եղ զանազան տեսակի կոչումները։ Դուք ավելի պարզ ձեռվ, քաղաքացի վարի։

— Կարելի լա, — ասում ե վարիչը, իսկ ինքը զկոտում եւ — Բայց միայն սա հսպիսի կարգադրութլուն ե լեղեւ, վոր կո-ըու-լո-ըիտ-ը պահպանվի։ Ա՛, համեցնք, տեսեք՝ եստեղ պատերը իրը ֆոն են ներկած։ Իսկ հրեշտակները, վոր թաշում են — դրանք ամուրներ են։ Իսկ ես սեղանը ֆրաֆորի պակալուց եւ Խնդրում ենք մատներդ չկպցնեք, թե չե վոմանք մատները կպցնում են, ու փոշի լե առաջանում։

Ու եղ ժամանակ ենպես ե զկոտում։

— Թուհ, զկոտոցս չի կտրում, — ասում եւ — Յերկի սոխ շատ եմ կերեւ, իսկուն կդամ, իսկ դուք եստեղ սպասեցեք։

Ու գնաց։

— Ինչ տարորինակ վարիչ ե, — ասում ե Յելնիկիտկան։

— Ավելի լավ ե դուք ինքներդ բացատրեք մեզ, Յելենա Նիկիտիշնա, — ասում եմ իսու։

— Յեթե զնաք, Ռյաբց, շարունակ քիթներդ խոթում եք ենտեղ, վոր ձեր գործը չե, — պատասխանում ե Յելնիկիտկան, — զա դեռ չի նշանակում, վոր յես ել պետք ե եղանես անեմ։

Ահա վարիչն յեկավ, սկսեց բացատրեւ ու յես նկատեցի, վոր նրանից արգեն վոչ թե սոխի հոտ ե գալիս, այլ մի ուրիշ բանի։

— Են ի՞նչ ե, առաստաղինը, — հարցնում են տղաները։

— Առաստաղինը — բացատրում ե վարիչը — Վենիրա աստվածուն ին ե, իսկ նրա շուրջը կառքով սլանում ե Բուլկան հովիվը, իսկ վոր հովիվ ե, եղ իմացվում ե նրանից, վոր ձեռքին մտրակ կա։ Իսկ սա նշանավոր աֆրիկացի արքեստագետի նկար ե։

— Իսկ նկարչի անունն ի՞նչ եր, — հարցնում են տղաները։

— Մոռացել եմ, — պատասխանում ե վարիչը, — ամեն բան հիշել չես կարող։

— Էիկ, — այդ ժամանակ լսվեց լետեկից։ (Դա Յուզկա Գրոմովը զկոտաց), եղ ժամանակ վարիչը նստեց մի կարմիր բազկաթոռի, աշքերը ծածկեց և ասում ե։

— Զավակներս, զավակներս, ե դուք, կարմիր մանկավարժություն — ուսուցչունի Ներեցեք, իմ աչքերի շղթան կտրտվեց։

— Դա ի՞նչ շղթա յե, — հարցնում ե Յելնիկիտկան։

— Աղամանգե, — պատասխանում ե վարիչը: — Բայց դա վոչինչ: Ես հրմա վեր կկենամ: Շատ սոխ ուտելն ինձ վաս ե:

Ու խկապես վեր կացավ: առաջ գնացինք: Յեկանք մի հսկալական գաճիճ՝ լերգեցիկ խմբի հատուկ տեղով, մեջտեղը մի շատ մեծ ջահ ե կախված շորեւ պատյանով, իսկ պատռհանները կարծես ֆուտրու խաղալու հրապարակներ լինելին:

— Իսկ եստեզ, — ասում ե վարիչը, — նորին պայծառափայլություն պարոն Ռւբուսովը ինքն իրեն մորթեց:

— Բա ինչու մորթեց, — հետաքրքրվեցին տղաները:

— Տեսիլք տեսավ:

— Ի՞նչ տեսիլք:

— Սպիտակ տիկին, — սարսափելի ձայնով ասում ե վարիչը, — ու եդ սպիտակ տիկինը ենպես նրբազգաց եր, ենպես - ասենք, քաջ, վոր պարոն Ռւբուսովը տանել չկարողացավ:

— Վայ, — ցած ձայնով ասում ե աղջիկներից մեկը:

— Քաղաքացի վարիչ, — եստեղ ասում ե Յելնիկիտկան, — հույս ունեմ, վոր գուք ինքներդ ել ենքան հասկանում եք, վոր դա նախապաշարմունք ե, վոր իսկույն եեթ կրացատրեք լերեխաններին եղալիսէ տեսիլքների ամբողջ անմտությունը:

— Ընկ, — պատասխանում ե վարիչը: — Սոխը հոգիս հանեց ու պրծավ: Իսկ միթե յես մեզավոր եմ, վոր մեզ հրամայված ե ամեն բան բացատրել ենպես, ինչպես յեղել ե, Յես ներկա չեմ յեղել ինքս չեմ տեսել, յես ել բան չունեմ ասելու: Բայց, համենայն դեպուներեցեք ինձ — վուլզն իմ աչքի առջև այրվեց: — Ու հենվեց պատին:

— Եդ լինչ գուռզ ե, — հարցնում ե Յելնիկիտկան, ու լերեռում ե, վոր ինքը բարկանում ե:

— Եպուզիխան, — պատասխանում ե վարիչը, — իսկ ձեզ, քաղաքացունի, իթե իմ բացատրությունը դուք չե գալիս, ապա կարող եք ինքներդ բացատրել:

— Ճիշտ ե, ճիշտ ե, դուք բացատրեցեք, Յելենա Նիկիտիչնա, — աղաղակեց տղաների մի մասը, ինարկե չարություն անելու համար:

— Վհչ, թող վարիչը բացատրի, — աղաղակում են մյուսները:

— Քվեարկում եմ, — աղաղակեցի յես: — Ով կողմնակից ե Յելենա Նիկիտիչնալին, ինդրում եմ ձեռք բարձրացնի:

Մեծամասնությունը բարձրացրեց:

Այ թե գաղաղից հա Յելնիկիտկան:

— Յես — ասում ե — վոչինչ չեմ սկսիլ բացատրել, և ընդհանրապես սա խայտառակություն ե, ու մենք իսկույն գնում ենք եստեղից:

— Ինչու յեք գնում, — ասում ե վարիչը: — Ձեզ հետ ինձ համար ուրախ ե...

Սակայն Յելնիկիտկան զայրացավ և պահանջեց՝ իսկույն կտոյարան գնալը չենց վոր դռանը մոտեցանք—ինչ սոսկալի անձրեւ դալիս, իսկ մինչեւ կալարանը յերեք վերստ եւ:

— Ե՛, ինչ, սպասենք,—ասում ե Յելնիկիտկան:

Յես դռնից դուրս նայեցի ու տեսա՝ յերկինքն ամբողջովին թխապապատ եւ իսկ վարեչը յետեւ կանգնած եւ ասում ե.

— Ե՛, ինչու գնաք վոր, բոլորովին կթըջվեք, չոր տեղ չի մնալ, Ավելի լավ ե մնաք գիշերը: Խոտ կը բերենք սենյակները, իսկ ով ուզի, խոտանոցը կը արձրանա: Իսկույն խորհ, տնտեսությունից, ինչքան ուզեք, կաթ կը բերեմ:

— Իսկ հաց կարելի լե՞ ճարել, — անվճռական ձեռվ հարցնում ե Յելնիկիտկան:

— Ուզում ես՝ տասը փութ, — պատասխանում ե վարեչը: — Յես, հարգելի ուսուցչուհի, յեթե ուզենամ, ապա կարող եմ կատարյալ խնձուք սարքել: Զե՞ք ուզում:

Ու մատով թխալացրեց կոկորդին:

— Յես չեմ հասկանում, թե դուք ինչ եք խոսում, — չար ձայնով պատասխանում ե Յելնիկիտկան: — Բայց ինկատի ունենալով, վոր անձրեւ ե դալիս, և յերեխաները կարող են մրսել, ապա ճար չկա: Մաֆպած հնք գիշերը մնալ եստեղ: Նեղություն քաշեցեք, տղաներին ցուց տվեք, թե գիշերելու համար վհրատեղից խոտ վերցնեն, վորովհետեւ յես չեմ թողնի խոտանոցում գիշերելու: Ու բացի դրանից—կաթ ու հաց տվեք: Մենք կվճարենք:

Մենք սկսեցինք խնդրել, վոր թույլ տա խոտանոցում գիշերելու, բայց նա հայտարարեց, վոր թույլ չի տա, վորովհետեւ ով գիտե, թե ինչեր կարող ենք անել, և վոր յեթե մենք խոտանոց գնանք, ապա ինքն իսկույն կգնա և մեղ մենակ կթողնի: Թես մենք իսկի յել չելինք վախենում, բայց ստիպված ելինք հնագանդեք վորովհետեւ կարող եք դպրոցական խորհրդի հետ աղմուկ առաջանալ: Ես բանը Յելնիկիտկայի համար ավելի վատ յեղավ:

Յերբ վարեչը կաթի ու խոտի գնաց, Յելնիկիտկան ասում ե մեղ.

— Ես վարեչը շատ տարորինակ մարդ ե, ու յես տեսնում եմ, վոր վերին հարկը շարժված ե: Ուստի յես շատ եմ խընդըռում ձեզ նրա հետ վոչ մի խոսակցություն ու հարաբերություն չունենալ: Իհարկե, դուք կուզենաք նրա հետ ընկերություն հաստատել, բայց լավ իմացեք, յես թույլ չեմ տա:

Նա ինչ կարող ե մեղ թույլ տալ կամ թույլ չտալ: Յեթե նա եղ բանը չասաց մեղ, գուցե և վոչինչ չկար, իսկ ալժմ մենք վորոշեցինք նրան ու աղջիկներին վախեցնել:

Անձրեւ դեռ չեր դադարել՝ ենպես վոր այգում վազվել չեր կա-

բելի, ու մենք դահլիճում սալկա ելինք խաղում Շուտով մթնեց, ու վրովինեա լույս չկար, ապա ակոմա ստիպված ելինք պառկելու Աղ ջիկներն ու Յելնիկիտական պառկեցին մի սենյակում, մենք՝ մլուս Դե, ինարկե, ամեն տեսակ պատմություններ ու իրարանցում, ենպես վոր Յելնիկիտական միքանի անզամ աղաղակեցի Յերը բոլորը միքիչ լուցին, Յուշկա Գրամովը շշնջում ե ինձ.

— Ժամանակ ե.

Իսկ մենք արգեն իրիկվանից վերցրել ելինք են սավանը, վորի մեջ, եքսկուռսիայի համար, պաշար ելինք բերել քաղաքից Յուշկան արդ սավանը զցեց վրան, ու մենք, վորպեսզի ձայն չլսվի, գողունի մտանք դահլիճ, վերջնականապես պարմանավորվելու և փորձ անհեռու չենց վոր մանում ենք դահլիճ, հանկարծ տեսնում ենք՝ դահլիճի ծայրում հազիվ նկատելի լույս և փայլում Յես նույնիսկ վախեցա, ենքան անսպասելի յեր Յուշկան իսկուն բռնեց ձեռքս:

— Կաց, Կոստյո, — են թնչ ե ենտեղի:

— Դա, հավանականարար, վարիչն ե.

— Իսկ յես նույնիսկ վախեցա: Գնանք, տեսնենք ինչ ե շինում ենտեղ:

Մենք ծածուկ մոտեցանք լուսին, ու եղանակ նկատեցինք, վոր նա գալիս և յերգեցիկ խմբի համար յեղած սենյակի տակի վոռքը իկ գոնից, վոր մենք առաջ չելինք նկատելու Սկզբում շատ յերկուղալի յեր: Դուռը շատ քիչ բաց եր, ենպես վոր կարելի յեր ներս նայելու Յես ել նայեցի: Տեսնում եմ — մի պրիմուս կա — վրան չայնիկ. չայնիկի քթից մի յերկար խողովակ և անցկացրած, հետո մի թաս և դրածիսկ թասի տակ շիշ: Պրիմուսը վառվում ե, իսկ վարիչը կողքին նստած, քնած ե:

— Ես նա արագ ե քաշում, — շշնջում ե ինձ Յուշկան: Յես գիտեմ, իմ մորաքույրն ել եղանակ և քաշում: Տես, տես, արգեն կես շիշ լցվել ե:

Յես առաջ շարժվեցի, վոր ավելի լավ տեսնեմ, եղ ժամանակ դուռը ճըռաց, վարիչը ցնցվեց ու աշքերը բաց արավ: Մայր հարհուց, կռացավ շիշ վրա, թասի մոտ ինչ-վոր բան ուղղեց ու նորից նստեց:

— Յես հիմա կոնհոամ, — ասում ե Յուշկան: — ուժ չունեմ համբերելու:

Իմ ծիծաղն ել սաստիկ գալիս ե, նույնիսկ քիթս բռնել հմ: Հանկարծ Յուշկան ելենպես փոթկացրեց: Վարիչը վեր թռավ և ուղիղ դեպի դուռը: Մենք կպանք դռան տակին, իսկ վարիչը դուռը լայն բաց արեց և նայում ե դահլիճում:

— Ելի նա ման ե գալիս, դիտում ե, գնթփնթում և վարիչը քթի տակին:

— Դե, լավ, յես նըան կըռնեմ, ծամերը կպոկեմ:

Յես վախեցա. սա ես ունեմ և սպառնում բռնելու իսկ Յուշկան բը-  
ռունցքով կողքիս հրում եւ Յես ենպիսի դրության մեջ չեմ, վոր ծի-  
ծագեմ, Վարիչը շուռ յեկավ գեպի սենյակը, կոացավ, վերցրեց շիշը,  
հենց ուզում եր կուլ տալ, վոր Յուշկան փոթկաց, ու ենպես ուժեղ,  
վոր գահլիճումն ել լսվեց:

— Եղ ով ե,—զոռաց վարիչը և դուրս թռավ դահլիճ, Նայեց մեր  
կողմը ու ենպես և զոռում: Ու վաղ տվեց գեպի ենտեղ, վորտեղ մե-  
րոնք քնած են:

Յուշկան վարիկենապես սավանը վերցրեց վրայից, ու մենք  
թռանք յերդիչների հրապարակը: Ճաղերի յետեր նստեցինք և նայում  
ենք: Իսկ են սենյակներում, վորտեղ մերոնք եյին, աղմուկ բարձրա-  
ցավ: Ու ամենից բարձր գոռում և Յելնիկիտկան: Ա՞յ, տեսնում ենք,  
դահլիճն և վաղում վարիչը (իսկ եղ ժամանակ անձրել դադարել եր  
և լուսինը գուրս յեկել ենպես վոր յերենում եր), իսկ նրա յետեց—  
տղաները, Ամենից հետո՝ Յելնիկիտկան՝ վերարկվում փաթաթված:

— Ա՞յ, ենտեղ, ենտեղ, —մեր կողմն և ցույց տալիս վարիչը: — Նա  
ենտեղ եր կանգնած: Բարձրահասակ, յերկա՛ր, համարյա առաստաղին  
եր համառում:

— Բայց եղ ով ե՝ նա. — Հարցնում են յերեխաները:

— Սպիտակ տիկինը:

— Բայց դուք լմվ տեսաք, — հարցնում և Վոլոդկա Շմերցը (յես  
ձայնից ճանաչեցի): Գուցե յերազմակ տեսար:

— Յերազմա: Տեսա, ինչպես քեզ—պատասխանում ե վարիչը: —  
Միաւն հիմա նա ենտեղ չի. Թափառում ե մյուս սենյակներում:

— Դե վոր չկա, ուրեմն պետք ե գնալ, քնելու—քնկոտ ձայնով ա-  
ռում և Յելնիկիտկան: Դուք ել, մեկ ել վոր յերեա, ծառային կանչե-  
ցեք ու մեզ հանգիստ թողեք. թե չե դուք իմ բոլոր յերեխաներին  
կվախեցնեք:

— Ն-ներողություն, ուսուցչուհի. — պատասխանում ե վարիչը: — Թե  
վոր ձեզ եղաքես բան պատահի, ձեր հարազատ հորն ել կզարթեցնեք,  
ուր մնաց թե...

Դրանից հետո յերեխաներն ու Յելնիկիտկան գնացին, իսկ վա-  
րիչը վերցրեց ճրագը, բոլոր անկյունները նայեց և գնաց իր սե-  
նյակը:

Յես ու Յուշկան մի տասն բոպի նստեցինք և սկսեցինք զգուշ  
իշնել դահլիճ: Սանդուխքի կեսն ել չելինք իջել, վոր տեսանք, թե  
ինչպես հակառակ կողմն յեղող գոնից, մի ինչ-վոր ստվեր ե շարժ-  
վում: Յես քիչ մնաց ճշալի, իսկ Յուշկան բռնեց ձեռքս:

— Ե՞ս ով ե,— շնչում ե նա, ու ձայնից յերենում ե, վոր վախե-  
նում ե:

Խսկ ստվերը առաջ յեկավ գեպի մեջտեղը, շուռ յեկավ և ուղղակի գեպի մեզ և գալիս: Ին սիրաը նույնիսկ կանգ առավ—հնապես անձայն եր զնում նա Բայց նա վոչ թե գեպի սանդուխքներն յեկավ, ալ շարժվեց գեպի են սենյակը, ուր վարիչն եր նստած: Մենք քաղցանք—ի՞նչ պետք և պատահի: Ու հանկարծ գղրդոց լավից, ի՞նչ-վոր մռնչոց, հարված, ու ստվերը կրկին դուրս թուավ:

— Եղ ի՞նչ ե, ա՞յ դու թշվառ հարբեցող,—զոսում եր ստվերը ամբողջ տնովը մեկ: Հիմի եր, ա՞յ, վորտեղ և մտել՝ արագ քաշելու Ու գեռ կովում ել ե: Սպասիր գնաւ, ես բոլորը վարիչին կապատմեմ, թող մի գա: Ես ի՞նչ բան ե, այ մարդիկ, մտել և նկուղը, քաշում և ու խմում: Քաշում ե—ու խը-ըմում...

— Ին լոիր, սատանի ծնունդ, —խոխոացնում եր վարիչը, բռնելով ստվերի ոձիքից: Զե՞ս հանկանում ի՞նչ ե. եստեղ եքսկուրսիա չի դիշերում.... Բոլորին կարթնացնես, իսկ յես պատասխան պիտի տամ: Թէ չե ծամերդ կպոկեմ—են խաչը կպոկեմ:

Եղ միջոցին յես ու Յուշկան սանդուխքներից ցած թուանք ու վաղեցինք գեպի մեր սենյակը: Ստվերն իսկուն լոեց:

— Ա՞յ, տեսնում ես, — ասաց մեր յետեկց վարիչը, — յերեի յերի-խաներն արտաքնոց են զնացել և բոլորը լսեցին: Ինձ խալտառակ կանես, թշվառական:

Խսկ յես ու Յուշկան խրվել ենք խոտի մեջ և ծիծաղում ենք ենապես, վոր լացներս գալիս ե, կարծես հիստերիկա լինենք. — ենապես, վոր Յելնիկիտկան աղջկերանց սենյակի դուռը բաց արավ և հանդիսավոր կերպով ասաց.

— Ինարկե դա Ռյաբցեն ե: Բայց անհոգ կաց Ռյաբցի, սա քեզ եժան չի նստիլ: Սա վրդովկեցուցիչ անկարգություն ե: Յես նույնիսկ խոսք չեմ գտնում:

— Յես բոլորովին ել հոգս չեմ քաշում, — պատասխանեցի յես, ու միանգամից ծիծաղս ծանձրուկթի փոխվեց:

Առավոտը մեզ զարթեցրեց մի ի՞նչ-վոր մարդ, կապուտ ակնոցներով, և հարցրեց մեզ, թե ի՞նչպես ենք քնել: Բանից դուրս յեկավ, վոր դա իսկական վարիչն ե և հենց նոր և յեկել քաղաքից: Խսկ նա պարզապես ծառան ե, դրա համար եր ենպես ծիծաղելի բացատրում: Ու հետո իսկական վարիչն ասաց մեզ, վոր եղ ծառան ծառայել և դեռ կալվածտեր Ուրուսովի ժամանակ, և վոր, յերեի ստիպված կլինեն վոնդել նրան: Ու սա արդեն առաջին անգամը չե, վոր ի՞նքն իրեն վարիչի տեղ և զնում:

Յետ գառնալիս, ճառապարհին մենք շարունակ ծիծաղում ելինք Յելնիկիտկայի վրա, վոր նա հարբած ծառային վարիչի տեղ եր դըել և լուրջ գեմքով լսում եր նրա բացատրությունները, Դե, դու բնագիտությունը գիտես, ել քիթդ հասարակագիտության մեջ մի խոթիր:

Զնայած վոր Զին-Պալնան շարունակ ալլալլված ու գունատ ե,— հիվանդ ե, ինչ և նա, — յերեկ կրկին եքսկուրսիա զնացինք Գոլովկինու Նա շատ տխուր վախճան կարող եր ունենալ, յեթե Զին-Պալնայի պաղարյունությունը չլիներ: Յես դիտմամբ զնացի մեր գործարանային բջիջը, ու թեև քարտուղարն ենտեղ չեր, համենայն դեպս բջիջի անունից մի մանդատ վերցրի Դոլովկինովի կոմսոմոլի վրա, ուր խնդրվում եր, վոր ինձ աջակցություն ցույց տան գյուղական կենցաղն ուսումնասիրելու գործում:

Կերակի յեր, զրա համար ել գյուղում զրոսանք եր: Գյուղացիներից շատերն արդեն առավոտից հարրած եյին, իսկ կոմյերիտականները, հակառակի պես, շրջան ելին զնացել ինչ-վոր ժողովի: իսկ դա քսանհինդ վերստ ե: Ու ահա թե ինչ գուրս յեկավ գրանից:

Զին-Պալնան փնտոնց նախագահին և խնդրեց նրա աջակցությունը: Նա ինքը չեկավ, այլ ուղարկեց վորդուն, մի 15 տարեկան պատանու: Մենք սկսեցինք չափել, գործի զրինք ոռուետկան, ամեն կողմից կանաչք, աղջիկներ, պատանիներ, յերեխաներ շրջապատեցին մեզ և դիտում են: Յես վորոշեցի ողտղել այս հանդամանքից, և քանի մյուս տղաները ոռուետկալով են զբաղված—սկսեցի ուսումնասիրել կենցաղը: Իրա համար յես մոտեցա աղջիկներին և նրանց հետ խոսակցություն սկսեցի: Նրանք հոհուում ելին ու մեկը մյուսի յետեր պահվում, իսկ յես շարունակ ստիպում եյի նրանց, վոր մի յերգ յերգեն: Նրանք ասում են, վոր չպիտեն:

— Իսկ ձեզնից մվ ե չարք տեսել, — հարցնուած եմ յես:

— Այ, հրես չարքն ե ելի, կանգնած, — պատասխանից մեկը և մատով ցույց տվեց ինձ: Հանկարծ պատանիներից մեկը մոտենում ե ինձ և տառամ.

— Դու մեր աղջիկներին շատ մի մոտենալ. դու դրա համար ես յեկել, ինչ ե:

Են ժամանակ յես հանում եմ իմ մանդատը և ցույց տալիս նըրան: Նա նայեց ու ասաց.

— Ես մեր մասին չի դրած: Յերբ վոր դու կոնցոմոլ ես, գնակոնցոմոլի մոտ, բայց աղջիկներին ստիպելու բան չունիս:

Յես ուղում ելի նրա հետ վեճի բռնվել, բայց տեսնում եմ, վոր նրանք ինձ շրջապատել են, իսկ մերոնց մեջ ինչ-վոր իրարանցում կա:

Զափում ելին տների յետեկի բանջարանոցները, իսկ նրանք— զյուղական յերեխաները, վորոնք խմբված եյին ոռուետկայի շուրջը, մտան մեկի բանջարանոցը և բուկսերը պոկոտեցին ու մերոնց վրա զբին: Մի մորաքույր դուրս թռավ, սկսեց աղաղակել: Ու բռունցքներով հարձակվում ե ուղղակի Զին-Պալնայի վրա և աղաղակում.

— Վոր գուշ վարժուհի յես, ովետք և նայես սրանց:  
Զին-Պալնան հանդիսատ պատասխանում ե.

— Յես ձեր գյուղի յերեխաների համար պատասխանառու չեմ,  
իսկ իմոնքը հստեղ ինձ մոտ են յեղել:

— Ե՞ս ի՞նչ ե տառմ, յես չտեսմ, ի՞նչ եւ ԱՌ, հենց են, ալ հենց  
նա քաղեց:

Ու ցույց տվեց ինձ:

— Ի՞նչի՞ յես սուտ ասում, մորաքուլը, — աղաղակեցի յես զայրա-  
ցած: — Յես լերը մտա քո բանջարանոցը:

— Նա հստեղ աղջիկների յետեկցն ել եր ընկեր — գոռզոռացին  
տղերքը:

Եստեղ Զին-Պալնան մի ենազես բղավեց վորոտալից բասով, վոր  
յես նուլնիսկ նրանից եղան չելի սպասում:

— Ի՞նչպես համարձակվեցիր, Րաբցե, ստիպել աղջիկներին:

Աղմուկը միանդամից լրեց, իսկ յես լուռ հանեցի մանզասու և  
տվեցի Զին-Պալնալին:

— Ե՞ս, հետո ի՞նչ, — հարցնում ե Զին-Պալնան:

— Են, վոր յեթե յես ուսումնասիրում եմ կենցաղը, իրավունք  
ունեմ, վոր խնդրեմ յերգեր յերգեն, թե չե:

Եստեղ մոտեցավ մի վիթխարի գլուղացի, վոր շարունակ լսում  
եր ու նայում: Յեվ ասաց.

— Շառից հեռու գնացեք, դուք հստեղ զործ չունեք:  
Իսկ աղջիկները հեռվից աղաղակում են.

— Շատ ենք խնդրում. կրունկներդ շուռ տվեք,  
Մի ի՞նչ-վոր հարրած դղուղացի յել խառնվեց.

— Յես նրանց ճանաչում եմ — նրանք հարկի համար են, լերկ-  
րա-չափ-ներ են: Դուրս արեք, կորչեն հստեղից:

— Հասցրն գրանց վգակոթին, դներս արա, թե չե կփետավոր-  
վենք:

Իսկ են կինը, վորի բանջարանոցից բան եյին քաղել վրա յե  
թռչում Զին-Պալնային և բռնում նրա շորի թեից: Եստեղ վորտեղից-  
վորտեղ հասնում ե Ալյոշկա Զիկինը: Բռնում ե կնոջ ձեռքից և մեր  
կողմը հրում:

— Ե՞ս ի՞նչ բան ե, ալ յես ձեղ մատաղ, ձեռք են բարձրացնում  
մեղ վրա, — գոռաց եղ կնիկը, իսկ մի յերկար տղա բռնեց Ալյոշկայի  
ուսից:

— Կացեք, — ելի ենազիսի ձայնով բղավեց Զին-Պալնան, ու նըա  
միակ գեղնած ատամը փալեց ժանիքի նման:

— Թողեք, բան եմ ասում:

Ու կրկին բոլորը լոեցին:

— Ա՛յ գուրք վոչ մի բան կարդին չեք հարցնում, — ասում ե Զին-  
Պալնան ուսուցչի ձայնով, —ու կոիվ եք սարքում: Մենք ձեր բարին  
ենք ուզում: Ուզում ենք քաղաքի ձեր շեֆը լինել, իսկ դրա համար  
հարկավոր ե պլանտ (եսպես ել ասաց—պլանտ) կազմել:

— Ե՛, հետո դրանից թիւ գուրս կդա, — հարցնում են ցածրաձայն  
լեռեից:

— Ա՛յ, Են կլինի, — պատասխանում ե Զին-Պալնան, — վոր քաղա-  
քում ոզնական կունենաք, մեկ, կիմանաք, թե վորտեղ դիմեք—իեր-  
կոնւմ Մենք միշտ կոգնենք ձեղ—իերեք: Ձեղ համար լրագիր կուղար-  
կենք—չորս: Կոգնենք, վոր սերմանման վարկ ստանաք—հինդ: Ա՛յ,  
դա յե ոշեփը:

— Ե՛, բա ինչու, քաղաքացուհի, սկզբից միանգամից չասա-  
ցիր.— հարցնում ե բարձրահասակ գյուղացին:

— Ե՛, զուք իսկի հարցը՞ք վոր,— պատասխանում ե Զին-Պալնան:  
— Հետո, մեզ ուղարկել են ձեր նախագահի մոտ, իսկ նա, տես, քիթը  
շուռ ե տվել հետներս խոսել չի ուզում:

— Հա, նա եղպիս ե, — ուրախ ասաց մի հարբած մարդ: — ասում ե,  
«խորհրդային իշխանությունը յս եմ»:

— Դե, ալ, աեսնք, — ասում ե Զին-Պալնան, — հիմա մենք գնում  
ենք, միենույն ե, զուք մեզ խանգարեցիք աշխատելու: Դե, առայժմ  
ցանություն, յեկեք մեր դպրոցը, մեր հասցեն կթողնենք ձեղ մոտ:  
Մենք ել ուրիշ անգամ կզանք: Դնանք, տղայք:

— Իսկ իս բանջարանոցը, — հարցնում եր կինը:

— Դե, Աֆիմյա մորքուր, անցկաց, գործ կունենաս, ինչ լորու,  
գաղարի ժամանակ ե... Բա զու չես տեսնում, — խոսում ե հարբածը, —  
հուսումնականներ են. դժւ ինչ ես: Հասկացիք, թե բանը վոնց ե:

Փոքը յերեխաները մեզ ուղեկցեցին հեռու, մինչև դաշտի ծայրը,  
ու շարունակ աղաղակում ելին:

— Շեկը... վշեկը...

Ցերը դպրոց յեկանք, Զին-Պալնան ասաց.

— Ինչ վոր ասված ե, ընկերներ, իհարկե պետք ե կատարել:

— Կանենք, կանենք, — աղաղակեցին բոլորը:

## 10 հուլիսի.

— Յես ալժմ համոզվեցի, վոր լորդ Դալտոնը մասամբ արդարացի  
լեր, վոր իր պլանը հնարում եր: Իհարկե, մարդ պետք ե ամեն բան  
ինքն իմանա, թե չե ուրիշներից լսածն ամենեին են չի, ինչ վոր իս-  
կականն ե:

Ցերեկ Գրոմովսերի տանը ներկայացում եր: «Առաջարկությունն»  
ելին խաղում: Ներկայացումից հետո Գրոմովսերի հայրը բոլորին ընթ-

թիքի պահեց, ու ընթրիքի ժամանակ բոլորը զինի կյին խմում, նըրանց թվում և յես Ընթրիքից հետո բոլորը յերկար ժամանակ նստած եյին, իսկ հետո Մարիան ինձ նախասենյակ կանչեց, Ենտեղ սոսկալի մութն եր. յես զլուխս դռանը խփեցի և պողող արեցի, բայց լուցի, յերեկ են պատճառով, վոր զինուց զլուխս սաստիկ պատվում եր.

Հետո Մարիան ինձ իր յետեկից քարշ տվեց ինչ-վոր անկյուն կամ նկուղ:

Յերբ ամեն ինչ վերջացավ, յես հանկարծ ինչ-վոր սատկած այծի հոտ զգացի, ու քիչ մեաց սիրտս խառնի:

— Թուհ, ես ինչ զզվելի բան ե,—ասում եմ Մարիային.—Ես ինչ վատ հոտ ե գալիս:

— Հա, եդ հորս մորթիներն են դարսած, զու ուշազրություն մի դարձնիր, — շնչում և Մարիան: — Եղագես բարձրաձայն մի զոսա:

Բայց յես ել չկարողացա տանել ու տուն գնացի: Ճանապարհին զլուխս պատույտ եր գալիս ու սիրտս խփում եր, ու շատ զզվելի յեր ու ամենից ափելի յես չելի ուղում, վոր ես մասին Սիլվան իմանա:

Ասենք, իսկապես, նա վհնց կարող է իմանալ: Յուշկայի հետ նա համարյա չի խոսում ու վերջերս ավելի շատ Վալողկա Շմերցի հետ և լինում: Յես նույնիսկ չեմ հասկանում, թե Սիլվան ինչ ե գտել նրա մեջ: Իսկ զլխավորն են ե, վոր Սիլվան չի յել նկատում, վոր Վալողկան բոլոր աղջիկների հետ ել քարշ ե գալիս, ու ինքն ել եդ շարքի մեջ ե ընկել: Իսկ դա պիտք ե վոր վիրավորական լինի կանացի ինքնասիրության համար, մանավանդ Սիլվալի: Վորովհետև Սիլվան շատ հըպարտ ե. ով գիտե, գուցե, մեր աղջիկներից ամենահպարտն ե:

### 13 նույնիսի.

Եսոր յես, ինչպես շեֆ, գնացի Գոլովկինո, և համենայն դեպս հետո վերցրի Վանկա Պետուխովին. նա արձակուրդում ե: Ճանապարհին մենք ելի տեսական հարցի մասին եյինք խոսում: Յես նրան պատմեցի ԱՍԻՊ-ում ձեռք բերած թղթի մասին ու հարցրի նրա կարծիքն եղ մասին:

— Իհարկե—ասում ե Վանկան—եղ տեսակ կեղտոտ, զզվելի բաներ անողներ ել կլինեն, բայց ախար եդ բոլորը հին ուեժիմի ժառանգությունն ե:

Հիմա վոչ մի անբնական բան չի հարկավոր, ամեն բան կարելի: յե պարզ ու բնական:

Յես նրան ասացի, վոր նույնիսկ կարգին չես՝ հասկանում են խոսքերը, վոր կա (թղթում), բայց կարծում եմ, վոր «պարզն» ել զզվելի յե, մանավանդ հետո:

— Զգիտեմ, կնշանակի դու սովոր չես, — ասում ե Վանկան: — Հետո յեւ ինարկե, կարեռն են ե, թե ում հետ ես կապվում:

— Ե՛, յիթե, որինակ, յերկու անգամ մեծ ե քեղնից:

— Դա - նողկալի կանալք են, — ասում ե Վանկան, — ու չես կարող հասկանալ, թե ինչ են ուզում նրանք:

Մոսելով զնացինք ու իսկի չնկատեցինք, թե ինչպես հասանք Գոլովկինու:

Ենտեղ գլուղի մոտի դաշտում գլուղի աղջիկներն զբունում ելին (շաբաթ յերեկո յեր): Նրանք շատ հիանալի պարում եյին. մեկը մյուսից բոնում եր, ու հայդմա-պատվում ելին: Իսկ շուրջը յերիտասարդները, վորը հարմոնիկը ձեռքին, վորն ենպես:

Կարելի՞ յե նայել, — հարցնում ե Վանկան:

— Իսկ ծխախոտ ունե՞ք — պատասխանում են նրանք:

— Ինչպես չե:

Ծխացինք: Են տղաներն ել ասում են.

— Նայեցնք: Ինչքան ուզում եք:

Հետո բոլորը մոտեցան մեզ ու նալում են մեզ. յես մի տեսակ ամաչեցի:

— Իսկ ընկերս հեքիաթ պատմել գիտե, — ասում ե Վանկան:

Յես արմունկով նրան կողքին խփեցի, իսկ աղջիկներն ասացին ինձ:

— Պատմեցեք, ընկեր, մի հետաքրքիր հեքիաթ:

— Ե՛, յես չգիտեմ, նա սուտ ե ասում:

Վանկան բոլորովին լուրջ դարձավ ինձ.

— Կյանքիս մեջ յերբեք սուտ չեմ խոսացել:

Են ժամանակ յես մտածեցի ու սկսեցի.

— ԱՌ, աշխարհում ֆինլանդիա անունով մի յերկիր կա: Եդ յերկրում շատ լիճ ու քար կա, հետո ենտեղ հսկաներ կային...

Ու հետո զնաց տկալեվալլա: Տեսնեմ մեծ մասը նստել են իմ շուրջը և լսում են: Իհարկե, յես շատ անուններ գիտակցաբար բաց ելի թողնում, բայց հավատալիքներն ասում ելի, ինչպես, որինակ, գորտին խփել չե կարելի: Ու հենց վոր պատմեցի, թե Փինլանդացիների հավատով գորտերն առաջ մարդիկ են յեղեւ աղջիկներից մեկը ծափ տվեց ու կամաց ասում ե.

— Վա՞յ, վա՞յ, վայ, իսկ մենք մընաբնում թաղում ենք:

— Եդ ինչո՞ւ համար, — հարցնում եմ յես:

— Վոսկրով գրավելու — աղաղակեցին տղաները հոհուալով: — Ասյուտկա, դու հեմ ելիր ուզում գրավել — Ստյովկային, հմ:

Հետո մենք նրանց հետ միասին յերգեցինք ու պարեցինք (թեկ յետ կլանքումս յերբեք չեմ պարել, բայց նրանց հետ ուրախ եր): Իսկ յետ գալիս, ճանապարհին Վանկան ասում ե.

— Յեթե ուզենայինք, կարելի յեր մնալ և տմբողջ գիշերը նրանց հետ զրոսնել: Թեզ վճռ դուր դուր յեկավ:

Բայց իսկ չեյլ ուզում եղ մասին խոսելու Վանկան ամեն բանի, արդեն շատ պարզ, շնավարի յե նայում:

### 18 հուլիսի.

Եսոր հայրիկոն հարցնում ե ինձ.

— Կոստյա, հա, ճիշտ ե, վոր ձեր վարիչը, են Զինոչկան, Զիկինի նողաստից ոգտվում ե:

— Ի՞նչ ես ասում, դա ի՞նչ բան ե, — ասում եմ յես և աչքերս չուած նայում եմ նրան:

— Ե՛, ի՞նչ կա եղանդ վորություն ե, — հայրիկոն Զին. Պալնան յերբեք ալղպիսի բան չի անիր: Ախար դա կնշանակի ազգատ պառավից վերցնել:

Ու հետո են ի՞նչքան փող ե վոր:

— Ասում են քսան ա, մի բան ել ալելի:

— Թքիր նրա յերեսին, ով վոր ասում ե:

### 20 հուլիսի.

Գավառուգիտական թանգարանի առաջարկությամբ յերեկ մենք ուսւարացին զնացինք ցույց տված մեծ քաղաքի տեղը, — Պերիուշկովովուղի մոսու Յերբ մենք ենանդ հասանք, թանգարանի աշխատակիցներն արդեն ենանդ ելին և փորում եյին: Մենք միքիչ հանգստացանք, նախաճաշեցինք ու սկսեցինք նույնպես փորել: Ժամանակը շատ դանդաղ եր անցնում, շոգը շարունակ զգալի յեր դառնում, ենպես վոր մենք նույնիսկ անթե շապիկներս ել հանեցինք:

Հանկարծ Յուշկայի բահի տակ մի բան զբնաց, ու նա հողից մի ի՞նչ-վոր ողակ հանեց: Գլխավոր աշխատակիցը նալեց և ասաց:

— Ես պարզապես կոճակ եմ:

Արդեն ուզում եյին ել եղ թումբը չփորել, վոր հանկարծ սկսեցին վոսկրներ պատահել: Յես ել մի վոսկը հանեցի, և աշխատակիցը վորոշեց, վոր դա ձիռ վոսկը ե: Արդեն բավական մեծ կույտ վուկը ըներ եյինք հավաքել, վոր հանկարծ մի հինգ մարդ մոտեցան և հարցնում են:

— Դուք փորելու թույլավություն ունեք:

— Իհարկե ունենք, — պատասխանում են աշխատակիցները,

Թույլավությունը ցույց տվին, բայց զուլացիք ասում են:

— Մենք չենք կարող թույլ տալ վորովհետեւ դուք գանձ եք փորում, դուք իրավունք չունեք մեր հողը փորելու

Յերկար ժամանակ վիճում ելին ու հալհողում, մինչեւ վոր սկսեցին սպառնալը թե ամբողջ Պերխուշկովոն կհավաքեն ու մեզ կքշեն։ Են ժամանակ աշխատակիցներից մեկն ասում ե.

— Յերկար միասին փորենք. այ. մենք տասնլորդ մարդ ենք ու բոլորս ել բահ ունենք, ձեզ ել բահեր կտանք։ Ամբողջ վոսկին—ինչ վոր գտնենք—ձեզ, իսկ մնացածը՝ մեզ։ Իսկ լեթե չեք ուզում, ամբողջ Պերխուշկովոն կանչեցեք։

Տղաները խորհուրդ արին ու յերևում եր, վոր չելին ուզում բոլորի հետ բաժանելի Բահերը վերցրին ու մեզ հետ սկսեցին փորել Միայն յես նկատեցի, վոր նրանք մի տեսակ մի կողմի վրա լեն փորում, և վոչ թե ենտեղ, վորտեղ մենք։ Աշխատակիցները միքանի անգամ նրանց ասացին, բայց ելի իրենց ասածն եյին անում, իսկ մեր տեղում շարունակ վոսկը եր հա վոսկը, վոր դուրս եր գալիս։

— Տարորինակ բան ե, — ասում ե աշխատակիցներից մեկը, — լիր-բեք, վոչ մի թմբում եսքան կենդանիների վոսկը չի լիրեացել։

Ասենք տղաները լերկար չփորեցին։ Հետո բահերը վեր գցեցին ու գնացին։ Մեկը գնալիս հարցնում ե.

— Բա վոսկորներն ինչներիդ ե պետք։

— Մեզ վոսկըներն ել են հետաքրքրում, — ասում են աշխատակիցները։ — Վոսկըներով կարելի յե իմանալ թե թումբը լերը ե կաղմըվել ուրիշ շատ բան ել կարելի յե իմանալ։

— Դե վոր ըթենց ա, գնացեք, այ, են փոսը, — ասաց գյուղացին։ — Էստեղ միայն ձիաներ են թաղած, իսկ ենտեղ կովեր ել կան։

— Եղ ինչ ձիաներ են, — հարցնում են աշխատակիցները։

— Այ, սրանից տասը տարի առաջ անասունների ազար (ժանտախտ) ընկավ, — պատասխանում ե գյուղացին։ Ենպես վոր եստեղ եյին թաղում, են փոսումն ել։ Միայն ենտեղ ավելի թաղեցին։

Ենպես վոր ստիպված լեղանք ուրիշ թումբ անցնել։ Իսկ ենտեղ ինչքան ել վոր քանդեցինք, միայն մի ցարական տասշահանոց գըտանք։

Աշխատակիցներն ասում են, վոր թանգարանի ծրագրում ինչ-վոր սիսել ե յեղել—են թմբերը չեն նշան արել։ Իսկ իմ կարծիքով նախ պետք եր գյուղացիներից հարցուփորձով իմանալ, իսկ ապա հետո փորել։

## 22 հովիսի.

Դպրոցն սկսել ե կենդանանալ, Ավելի ու ավելի աշակերտներ են հավաքվում, իմիջի ալոց, լեկել ե Սերյոժկա Բլինովը։ Լուրջ իսոսակցություն ունեցանք։

— Յես վերջնականապես վորոշեցի—ասում ե Սերյոժկան—դըպ-

բոցում հեղափոխություն կատարել։ Բոլորին հայտնի յե, վոր մեր դպաշխաները չեն համապատասխանում իրենց նշանակությանը։ Առողջու կենդանի վսկի լե պետք, և վոչ թե են մեռածությունը, վորով մեզ կերակրում են։

— Զգիտեմ, — պատասխանում եմ, — կարծում եմ, վոր դա լինին չեն, Պետք և սովորել և վորքան կարելի լե շուտ մտնել բարձրագույն դպրոց։

— Հը, զու, լսել եմ, — ասում ե Սերյոժկան, — ուզում ես որինակելի յերեխաների շաբաթ մտնել։

Եսաեղ յես սաստիկ զայրացա, ու մենք հայհոյեցինք իրար։

Իսկ հիմա հայրիկոն նորից կպավ ելի Զին-Պալնայի մասին։

— Իսկ կոշկակար Զիկինի կինը հարեանների մոտ դուրս ե տաւլիս, իբր թե նրա նպաստը լրիվ չեն տալիս։

— Հավանականաբար ինչ-վոր տոկուններ են յետ պահում, — ասացի յես։

— Զե, — ասում ե հայրիկոն, — եղ իբր թե Ալյոշկային պահելու համար և յետ պահում ձեր վարիչը։ Կոշկակարի կինը դուրս ե տալիս, վոր իբր թե ինքն ել կարող ե Ալյոշկային եղպես հագցնել ու կերակրել յեթե իր նպաստը լրիվ կերպով իրեն տան։

— Են ախար եղ բոլորը կատարյալ հիմարություն ե, հայրիկոն Յես քեզ ասացի ու հիմա յել ասում եմ, վոր Զինայիդա Պավլովնան վոչ մի կոպեկ չի վերցնել։

— Եղ հո եղպեկ ե, իհարկե, բայց դե ելի, արի ու դու նրա քերանը փակի։ Նա սպառնում ե մինչեւ դատարան հասցնել գործը։

— Այ քեզ անտաշ, հիմար կին……

### 25 հուլիսի.

Դպրոցում կարծես բոմբ տրաքեց, եղ տեսուչն եր լեկել, թանի վոր հուլիսի վերջն ե, տպա ամբողջ դպրոցի կեսից ավելին արդեն հավաքվել է, Հենց եսոր պետք ե քաղաքի մոտի անտառը զնալինք ընդհանուր զբունքի, բայց դրա փոխարեն տեսչի հետ ընդհանուր ժողով ունեցանք։

Տեսուչն սկսեց են բանից, վոր հայտարարեց, թե ամբողջ դպրոցի ընդհանուր վերաքննություն պետք ե լինի, և վոր ալդ վերաքննությանը պիտի մասնակցեն և դպաշխների ներկայացուցիչը, և աշակերտների։ Մենք յերկար ժամանակ աղաղակում ելինք, բայց մեծամասնությունը Սերյոժկա Բլինովի կողմն ելին, իսկ դպաշխներից, չգիտեմ ինչու, անցավ Յելնիկիտկան։

Աշակերտների մեջ հենց իսկույն լուր տարածվեց — յես արդեն եղ չգիտեմ, թե վորտեղից, — վոր մեր դպրոցի մասին պարսավագիր են տվել, ու իբր թե եղ պարսավագում գրած ե, վոր դպրոցը բուրժուա-

կան թեքում ունի, և վոր դպաշխները չեն համապատասխանում իրենց կոչմանը: Յես սաստիկ վրզովքեցի, բայց յերեխաների մի մասն սկսեցին երար մեջ քչփչալ, նրանց մեջ և Աերլուծկալի փոքր յեղբայրը՝ Գրիշկա Բլինովը: Յես իսկույն մի յերկուսին ուղարկեցի եղ քչփչացողների մոտ, հինգ րոպե հետո իմացա, վոր նրանք ուզում են, հետազոտության գեղքում, դպաշխների մասին զանազան անարդարություններ հալտարարեն, վոր իրը թե մեր դպաշխներն իրենց հին գպրոցի մանկավարժների նման են պահում: Յես սկսեցի բարձրաձայն հակառակն ազիտացիս անել, բայց աշակերտների մեծ մասը վոչ գեղի ինձ ելին հակվում, վոչ գեղի նրանց, այլ սպասողական զրության մեջ եյին:

Գրիշկա Բլինովը հասարակագիտությունից, մաթեմատիկայից և ուսուաց լեզվից կտրվել եր ու գրա համար ել յերկրորդ տարին մնացել եր յերկրորդ խմբում:

### 26 հուլիսի.

Վերաքննիչ հանձնաժողովը նիստեր և անում ուսուցչանոցում: Իհարկե, մեզ վոչինչ չեն ասում, իսկ Սերյոժկա Բլինովն իրեն այնպես ե պահում, վոր կարծես գծվել եւ: Գրիշկա Բլինովի կողմանիցները շատանում են, իսկ իմը՝ ելի առաջիկ չափ են: Յերբ լես լսարանի մոտով անցնում եյի, ներս նայեցի և տեսա, վոր Սիլվան և Վալուէկա Շմերցը լերկուսով նստած են ենտեղ: Յես մեկ ուզեցի նրանց հարցը-նել, թե նրանք մւշ կողմնակիցներն են, թե թե Գրիշկա Բլինովի, մեկ ել հետո հանգիստ թողի նրանց: Հետո, յերբ արդեն միքանի քայլ հեռացա, հիշեցի, վոր առաջ միշտ եսպիսի գծվար գեղքերում Սիլվան իմ հավատարիմ ընկերն ու ոգնականն եր, իսկ հիմա վոչ մի հենարան չունեմ: Յես շատ վշտացա ու վիրավորվեցի, վորովհետեւ Սիլվայի հանդիպ յես յերբեք, վոչ մի բանով մեղավոր չելի, մեղավոր չեմ այժմ: Յես յերկար ժամանակ ման եյի գալիս գպրոցի բակում, հետո գնացի տուն, բայց վոչ մի տեղ ինձ հանգիստ չելի զգում:

Սիլվան ինչ կարող եր գնել նրանում:

### 27 հուլիսի.

Գնացի Մարիամի մոտ: Զզվելի յե, զզվելի յե:

### 28 հուլիսի.

Մի վոտանավոր զրեցի, թեև շատ հիմար բան եւ:

Հիշում եմ յես քո սասածը խելացի,

Մեր լուռ ուխտը այս աղմուկում գպրոցի.

Եղ դեռ վոչինչ վոր խոսում ես ուրշի հետ,

Զե, առանց քեզ յես վոչինչ եմ առհավետ:

Սա ինչ ե, լմկ վոտանավոր ե, թե՞ վատ:

Տեսուչն աշակերտներից վոմանց կանչում և հարցուփորձ և առում լիրեխանների հետ յեղած փոխարարելությունների մասին:

Դպաշխաններն այս որերին շարունակ վրդովված են: Նիկպետովն յեկավ, սկսեց ինձ հարցուփորձ անել, իսկ յես չկարողացա վոչ մի բան կարգին պատմել նրան, վորովհետեւ իմ գլուխն ուրիշ բանով և զրադված:

— Սա վրդովվեցուցիչ բան ե, վոր տեսուչն եղանակ և վարվում, — ասաց Նիկպետովը: — Նա ամենից առաջ պետք և դպրոցական խորհուրդ հրավիրեր:

Եղ խոսակցությունից համարյա անմիջապես հետո ինձ տեսչի մոտ կանչեցին: Այստեղ բացի տեսչից նստած եր բոլորովին զունատ Ցելիկիտկան և աչքերը ցած զցած Սերյոժկա Բլինովը:

— Ասացեք մեզ, ընկ. Բյարցե, — ասաց տեսուչը, — թուչ ձեր վարիչի և աշակերտության հարարերության մասին:

— Դպրոցական խորհրդում կամեմ ձեզ, ընկեր, — պատասխանեցի յես:

— Յես լիազորություն ունեմ, — ասում և տեսուչը:

— Այ հենց դպրոցական խորհրդին ել ցույց կտաք, — ասացի յես ու դուրս յեկա: Դրանից հետո յես փնտոեցի Ու Զոյային և ասացի:

— Հիշում ես, թե զու գարնանն ինչ ասացիր ինձ:

— Այս, հիշում եմ, — պատասխանում ե Զոյան ու աչքերը չուած նայում ե ինձ:

— Կնշանակի յես ըստ ամենալինի կարող եմ վստահել քեզ: Այ, իս վոտանավորը կարգա—քեզ չի վերաբերում դա—և ասա քո կարծիքը:

— Վոր իմ մասին չե, յես այդ լավ գիտեմ, — յերկարացրեց Զոյան ու սկսեց մաքումը կարդալ վոտանավորը: Նա կարդում եր լիրկար, միքանի անդամ. յերեւում եր, վոր ամեն սի բառի մասին մտածում ե:

Ինձ համար, իհարկե, շատ հետաքրքիր եր նրա կարծիքը, իսկ նա լսում եր: Վերջապես հարցնում եմ.

— Հը, ի՞նչ ե, ուզում իս անդիր անհել:

Ու եստեղ յես տեսա, վոր նա ցածրաձայն վոռնում ե: Ու հանկարծ արագ-արագ ասում ե:

— Դու իրավունք չունեցիր ես վոտանավորն ինձ տալու, քանի վոր դա ուրշի յեր նվիրված:

Յես թուղթը վերցրի նրա ձեռքից ու կամաց հեռացա. սատանան կհասկանա եղ աղջիկներին:

Իսկ գիտնազիայի փողոցում իմ դեմ ու դիմացն յեկան Վալոդ-

կա Շմերցն ու Սիլվան: Յես թողի, նրանք կողքովս անցան ու յետև ներիցն ասացի:

— Մի կաղն յերկու կոնդից (հաշմ) ավելի լավ է\*):

— Ի՞նչ ես մեջ ընկնում, Րյացես, —պատասխանում ե Վալոդ կան: — Յես քո գործերին չեմ խառնվում:

— Դե լավ, վերջ, —ասացի յես ու հեռացաւ: Իսկ Սիլվան կանգնել ու զարմացած նախում ե ինձ:

### 30 հուլիսի.

Վերաքննիչ հանձնաժողովը դեռ շարունակում ե իր գործը, ու ասում են, վոր դպաշխները կհնտրոն բողոք են ուղարկել վոր իբր թե ենպես, ցուցով ուզում են հեռանալ դպրոցից: Յես տղաներից միքանիսի հետ խոսեցի, ու մենք վորոշեցինք վորոշ միջոցների դիմել:

Իսկ ինձ հետ այ թե ինչ պատահեց: Գնացի Գրունդմերի տուն: Մարիան ելի մենակ եր, Յերբ նա ուզեց ելի ինձ զրկել ու սկսեց խոսել, թե խողի բնավորություն ունեմ, յերկար ժամանակ իր մոտ չեմ գնացել, ապա յես ասացի նրան:

— Յես կարծում եմ, վոր ես բոլորը սեռական այլասերումն ե:

— Ե՞ղ ինչու, —հարցըրեց նա, աչքերը չոելով:

— Գնանք, յես քեզ մի բան կկարդամ. — ասացի յես, ու մենք դուրս յեկանք ալգին:

Ենտեղ յես հանեցի և բարձրածայն կարդացի նրա համար են թուղթը, վորը յես վերցրել ելի ԱՍԻՊ-ից: Մարիան ամբողջովին կարմըրից և ասաց:

— Ե՞ղ ինչ զզվելի բաներ են:

— Իմ ու քո արածն ել զզվելի յե:

— Ե՛, ինչու, — ասում ե Մարիան, և նույնիսկ պուդրու տակից յերեսում ե, թե ինչպես ե նրա քիթը կարմըրել — Յես կարծում ելի, թե քեզ հումար դուրեկան ե:

— Վհչ, — ասացի յես վճռականորեն, — յես չեմ ուզում կյանքում հոգեկան հիվանդ լինեմ: Ցտեսություն:

— Դու հիմար յերեխա յես, և ուրիշ վոչինչ:

— Դե լավ, վերջ:

— Դու իսկի յել իրավունք չունես ինձնից հեռանալու: Ես են ժամանակները չե: Յես քեզնից ալիմննտ կպահանջեմ:

Նա ելի ինչ-վոր բան աղաղակեց, բայց յես արդեն գնացի:

Իսկ ալիմնտի համար յերեխա պետք ե լինի: Յես եղ ուսկանն ընկնողը չեմ:

\*.) Առած եւ:

Եսոր վճռական որն եր: Յես գեռ առավոտից ում հարկավոր եը նախազգուշացրի, իսկ ժամը 4-ին ընդհանուր ժողով գումարվեց—դըպ-րոցական խորհրդի և վերաքննող հանձնաժողովի ժողովին բացի Յելնիկիտկալից, ուրիշ վաշ մի զպաշխ չեկավ:

Յես բոլոր հավատարիմ ազաներին հավաքիցի շուրջն և բոնհցինք առաջին նստարանները հենց նախազանության առջել. իսկ Յուշկա Գրոմովին, իրուեւ լավ գոռացողի, նստեցրի վերաքննիչ հանձնաժողովի սեղանի յետել:

Նախ՝ սկսեց խոսել տեսուչը:

—Այ—ասում ե,—ընկերներ, յես հանդիսանում եմ ալստեղ ձեր առջեւ իրուեւ տեսչական ինստիտուտի ներկայացուցիչ, վոր կենտրոնի անունից կոչված և հսկել զպրոցական հիմնարկների կլանքին և պետք յեղած գեղգում խառնվել աշխատանքին, վորպեսզի իշարը գործ զըրված գեղգերը լուծարի: Չեմ կարող ասել, թե ձեր զպրոցում նկատվում են պարզ իշարը գործ զնելու գեղգեր, բայց ցավ ի սիրտ, համենալն դեպս, պետք և ասեմ, վոր զպրոցը վոչ ցանկալի թիւրումն և ստացել... Այսպես թե ալնպես, վերաքննող հանձնաժողովը, վոր կազմվել եր իմ նախազահությամբ, այս վորոշմանն և յեկել...

—Յես չեմ ստորագրել,—հանկարծ ճչաց Յելնիկիտկան, գունատվեց և ընկալ աթոռի թիկունքին: Խսկույն նաշատիր բերին, նրան հոս քաշել ավին. նա ուշքի յեկավ:

—Այսպես, ուրիշն, ընկերներ, —շարունակեց տեսուչը, —այդ վորումն ասում ե, ամենից առաջ, վոր ձեր զպրոցի զպրոցական աշխատավորներն ենքան ել չեն համապատասխանում իրենց կոչմանը...

Բայց եստեղ յես նշան տվեցի:

—Կորչի... եղակես չի... սիսալ ե...—աղաղակեցին իմ տղաներն ամեն կողմից:

Նախազան Ստասկա Վելոպոլսկայան սկսեց թափահարել զանգը ինչքան ուժ ուներ, բայց լուսթյուն չեր տիրում, մինչև յերկրորդ նշանը տվի, ալնպես վոր իմ կողմնակիցները միանդամից լուցին: Միայն յետեկի նստարաններից Գրիշկա Բլինովի կտրված ձայնը լսվեց.

—Լըրություն ե, Բյարցե:

Յես վերկացա և ասում եմ.

—Խնդրմ չդիպչել անձնափորությունների:

—Բացի գրանից, ընկերներ, վերաքննող հանձնաժողովը, —շարունակեց տեսուչը, —վորոշեց ընդհանուր ժողով բերել իհարկե փաստերը լուսարաննելուց հետո, այն խնդիրը, թե արդյոք զպրոցում կարմղ են միալ այն զպրոցական աշխատավորները, վոր ենքան ել հեկություն չունեն...

Բայց եստեղ յիս նորից նշան տվի: Յերբ աղմուկը միքիչ դադարեց: Սերյոժկա Բլինովը վեր կացավ և ասում ե.

— Յես այստեղ հանդես եմ դալիս յերկու կերպ: Նախ՝ իբրև ձեր ընկերը, ապա՝ վերաքննող հանձնաժողովի ձեր ընտրած անդամը...

— Ի՞նչ ե, գու յերկզլիսանի արծիվ ես, ինչ ե, — աղաղակեցի յես:

— Համենայն դեպս վոչ միզլիսանի ոճ, վոր տաքացել ե իմ կըրծքին (չգիտեմ, թե զրանով ինչ եր ուղում ասել): Ընկերներ, յես պաշտպանում եմ վերաքննող հանձնաժողովի առաջարկը հետեւյալ պատճառաբանություններով. մեր ինքնավարությունը յերկու վոտքով կաղում ե և վոչ մի նշանակություն չունի, դասավանդությունը տարվում ե խառնիխուռը և կյանքից կտրված: Դպրոցը վոչ մի արդյունաբերության հետ կապված չի...

— Եղ ինչու առաջ լուսում ելիք, Բլինով, — ճղճղալով աղաղակեց Յելիկիտկան: — Չե՞ վոր գուք բջիջի անդամ եք...

— Յեթե զուք, ընկերներ, — ասաց տեսուչը — համաձայն եք միքիչ հանդիսատ լսելու, ապա յես կզեկուցեմ ձեզ հատեկալը. այստեղ չի առաջարկվում վերջնական վորոշում անել, վոր կենտրոնից ե կախված, այլ միայն խորհրդակցել առաջադրած հարցերի մասին ու արձանագրել դըպրոցի կարծիքը:

— Ներկցիք, — ասացի յես, — եստեղ մեղ հետ նստած ե այն գործարանի ըջիջի քարտուղարը, վորին կցված ենք մենք, բայց նա թող հետո ասի, իսկ այժմ՝ յես կասեմ: Սերյոժկա Բլինովը բա դժւ ելիք մեղ հետ Սոլնեչնում գիշերողը. գու սպիտակ տիկնոջը տեսմբ: Դժւ ելիք, վոր միջամտեցիք, յերբ գուղացիք մեղ ուղում ելին մահակաջարդ անելի Սերյոժկա Բլինով, են դժւ ելիք, վոր արձակուրդից հրաժարվեցիր և ամբողջ ամիսը մնացիր մեղ հետ, ինչպես Զին-Պալնան: Են դժւ ելիք, վոր Ալյոշկա Զիկինին վերցրիր քեզ մոտ՝ դաստիարակելու, յերբ նրա հայրը մեռավ: Են դժւ ելիք, Սերյոժկա, վոր բացատրում ելիք մեղ հուզող բոլոր խնդիրները, վորից մեր գլուխը կարող եր տըրաքել ու մեր ձեռքերը դողալ, ինչպես Նիկոլայ Պետրովիչը: Ա՛յ, ասում ես, վոր դպրոցը կտրված ե կյանքից... իսկ են ժամանակ, յերբ մենք ամառը մեր կյանքը սոսկալի վտանգի յենթարկելով հետազոտում ելինք գլուղը, ընական նյութեր ելինք հավաքում, ոգնում ելինք բըլուրների պեղումներին, — մւր ելիք գու Խոտի մեջ փորիդ վրա թափալ՝ վիճակ ելիք: Կնշանակի գու, Սերյոժկա, համապատասխանում ես քո կոչմանը, իսկ Զինայիդա Պավլովնան — չե՞ Եսպես ե, հմ, քո կարծիքով:

Եստեղ արդեն յես վոչ մի նշան չտվի, բայց միհնույն ե, սոսկալի աղմուկ բարձրացավ. վոմանք իմ կողմն ելին, վոմանք՝ հակառակ: Բջիջի քարտուղարը խոսք խնդրեց և ասաց.

— Իսկ յես, այ, համաձայն չեմ ընկեր տեսչին. նա բանավոր չէ

կյուններում փսփսում են ու խորհրդավոր տեսք ընդունում, հետո բանից գուրս ե զալիս, վոր մի կատարյալ տիմարություն եւ.

Որինակ՝ սկսեցին պատմել թե անցյալ տարի Մոսկվայում հսպի-սի մի գեղք և պատահել. Մնակիրյով բժշկի մոտ վարդագույն շորերով մի աղջիկ և յեկել ու ասել, վոր նրա մայրը հիվանդ ե, ու բժիշկը զա նրան տեսնելու: Հասցեն թողել և ու գնացել. Հենց վոր նա գնացել ե, բժիշկն ուղեցել և հիվանդության մասին մանրամասնություններ հարցնի, վոր իմանա, թե ինչ գեղ վերցնի իր հետ. Ահա բժիշկը կանչում և ազախնին և հրամայում է յետ զարձնել աղջկանը. Աղախինն ասում ն, վոր ինքը վոչ մի աղջիկ չի տեսել. Են ժամանակ բժիշկը սանդուխքներից ցածից կանչում և գոնապահին, բայց գոնապահն ել ասում ե, թե աղջիկ չի տեսել. Բժիշկը զարմանքից ապուշ կտրած, գնում և թողած հասցելով և խսկապես ենաեղ մի հիվանդ կին և զըտնում: Նա սկսում է բժշկել հիվանդին, իսկ հիվանդը հարցնում է, թե վորտեղից ե իմացել իր հասցեն: Են ժամանակ բժիշկն ասում է, վոր նրա աղջիկն և ասել կինն սկսում և լաց լինել և ասել, վոր նրա աղջիկն ես յերեք որ և մեռել ե, և վոր նրա մարմինը գեռ զրված և հարեան սենյակում, վորովհետեւ ուժ չունի թաղելու: Բժիշկն անցնում և հարեան սենյակը և տեսնում է, վոր իրոք սեղանի վրա պառկած և հենց այն վարդագույն շորերով աղջիկը, վոր լեկել եր իր մոտ:

Այս պատմությունից գուրս ե զալիս, վոր մեռելները մահից հետո կարող են ման զար զբոսնել. Յերբ ես բանն ինձ պատմեցին, յես միայն թքեցի:

### 7 ոգոստավի.

Մի անհաճու պատմություն պատահեց. այն հայ ընդհարվեցի Զին-Պալնայի հետ. Բանն այն ե, վոր լիս ել բոլորի նման խոստացել եմ կանոնավոր հաճախել զպրոց, իսկ եսոր Փուտրովի հրամարակում ուշացացաց ու գպրոց յեկա են ժամանակ, իերբ բոլոր խմբերն արգեն վերջացել ելին:

Հենց ճանապարհին ինձ պատահեց Զին-Պալնան ու ասում ե, վոր ինձնից եղախիսի բան չեր սպասում: Հարցըր՝ ինչ չեր սպասում:

Նա պատասխանում է.

— Կարգապահության խախտումն ու խմբակների խանգարում:

Եսու ասացի, վոր հիմա զեռ ամառ ե, ու միանգամայն ընակեան ե, վոր ավելի շատ աղատ ողում լինենք, քան թե շենքի մեջ, և վոր անհրաժեշտ ե, վորքան կարելի լի, շատ զբաղվել ֆիզկուլտուրալով:

Իսկ Զին-Պալնան վրա բերեց, թե դա պիտք և կազմակերպված անել, և վոր միանգամ խոստանալուց հետո չի կարելի խախտել. Բայց դրանից, նրա կարծիքով Փուտրուն ամենեին ել ֆիզկուլտուրա չի,

— Սպասիր, Կոստյու: Դու պետք ե վերջնականապես հաշտվես Միլվայի հետ: Գնահատիր, վորեղ բանը յես ասացի:

Իսկ յետեր կանգնել ե Միլվան, նայում ե ինձ և ասում:

— Հը՛, թնչ ե վոր, Վլադլեն...

Ես բռնիցի նրա ձեռքը:

### 5 ողուսոսի.

Դպրոցում առանձնապես բան չկա անելու, ուստի յես համարյա ամբողջ ժամանակս ֆուտրովի հրապարակումն եմ անցկացնում: Կոշիկ շատ շմաշելու համար յես լերկորդ կամանդայումն եմ: Յուշկա Գրոմովըն ել ե մեղ հետ խաղում, բայց անկարգապահ ե և զեկավարի պատվերները չի կատարում:

### 6 ողուսոսի.

Այժմ համարյա ամբողջ դպրոցը հավաքվել ե, ու ընդհանուր ժողովում Զին-Պալնան առաջարկեց ամեն որ գալ ե դպաշխների հետ կանոնավոր պարապել: Ով վոր կուզի, կարող ե չգալ, բայց եքսկուրսիաներին ու զրուանքներին կարող ե մասնակցել: Միայն թե նա, ով գալու լի, չպետք ե բացակայի պարապմունքից ու հենց հիմիկավանից խոսք պիտի տա, վոր կհաճախի դպրոց: Ահագին մեծամասնությունը համաձայնվեց, վորովհետև պարապմունքները վոչ թե ծրագրով պետք ե առաջ տարվեն, այլ խմբակային կարգով: Վոմանք ուղիղութ կպարապեն, այսինքն զպրոցում ռադիո-ընդունարան կդնեն (սա Ալմակֆիշի հետ), վոմանք Նիկպետոսի հետ ներկայացումներ կտան: Զին-Պալնան առաջարկեց սհմինարներ ունենալ Պուշկինի մասին: Այդ ժամանակ նա ասաց, վոր Պուշկինն ենպես մեծ բանաստեղծ ե, վոր մեղք չի լինիլ նրա զրվածքները թեկուղ անգիր զիտնալը: Ի միջի ալլոց Վալորդկա Շմերցը հարցրեց, թե Պուշկինին ինչու սպանեցին, ու Զին-Պալնան բացարեց, վոր Դանտես անունով մեկը նրա կնոջ յետերից ե ընկել, Պուշկինն ել ստիպված ե յեղել դուելի կանչել նրան: Դուելը Պուշկինի համար վողբերգական յեղավ: Իսկ յեթե յես Պուշկինի տեղ լինելի, եղ Դանտեսին վոչ թե գուելի կհրավիրելի, ալլ մի կողմը կկանչելի և քիթուպունզը արյունլվա կանելի, իսկ յեթե նա ելի շարունակեր, փորից ցած ֆուտրուի ձեռով մի լավ կհասցնելի, են ժամանակ նա յերկի կղաղաքեր հետեւ: Եղ Դանտեսը յերեկ խալառակ սրբիկալի մեկն ե յեղել, մեր Վալորդկա Շմերցի նման, վոր հերթով բոլոր աղջիկների հետ ե ընկնում, և վորին բոլորը ծեծում են:

Մեր դպրոցում ինչ-վոր զանազան մտացածին լուրեր են սկսել տարածվել, և, իհարկե, առաջին տեղը աղջիկներն են: Նրանք ան-

կյուններում փսփսում են ու խորհրդավոր տեսք ընդունում, հետո բանից գուրս ե զալիս, վոր մի կատարյալ տիմարություն եւ.

Որինակ՝ սկսեցին պատմել թե անցյալ տարի Մոսկվայում հսպի-սի մի գեղք և պատահել Սննդիրով բժշկի մոտ վարդագույն շորերով մի աղջիկ և յեկել ու ասել, վոր նրա մայրը հիվանդ ե, ու բժիշկը զա նրան տեսնելու: Հասցեն թողել և ու գնացել Հենց վոր նա գնացել ե, բժիշկն ուղեցել և հիվանդության մասին մանրամասնություններ հարցնի, վոր իմանա, թե ինչ գեղ վերցնի իր հետ Ահա բժիշկը կանչում և ազախնին և հրամայում է յետ զարձնել աղջկանը: Աղախինն ասում ե, վոր ինքը վոչ մի աղջիկ չի տեսել Են ժամանակ բժիշկը սանդուխքներից ցածից կանչում և զոնապահնին, բայց զոնապահն ել ասում ե, թե աղջիկ չի տեսել Բժիշկը զարմանքից ապուշ կտրած, գնում և թողած հասցելով և խսկապես ենտեղ մի հիվանդ կին և զըտնում: Նա սկսում է բժշկել հիվանդին, իսկ հիվանդը հարցնում է, թե վորտեղից ե իմացել իր հասցեն: Են ժամանակ բժիշկն ասում է, վոր նրա աղջիկն և ասել կինն սկսում և լաց լինել և ասել, վոր նրա աղջիկն ես յերեք որ և մեռել ե, և վոր նրա մարմինը գեռ զրված և հարեան սենյակում, վորովհետեւ ուժ չունի թաղելու: Բժիշկն անցնում և հարեան սենյակը և տեսնում է, վոր իրոք սեղանի վրա պառկած և հենց այն վարդագույն շորերով աղջիկը, վոր լեկել եր իր մոտ:

Այս պատմությունից գուրս ե զալիս, վոր մեռելները մահից հետո կարող են ման զար զբոսնել: Յերբ ես բանն ինձ պատմեցին, յես միայն թքեցի:

### 7 ոգոստով.

Մի անհաճու պատմություն պատահեց. այն հայ ընդհարվեցի Զին-Պալնացի հետ: Բանն այն է, վոր լիս ել բոլորի նման խոստացել եմ կանոնավոր հաճախել զպրոց, իսկ եսոր Փուտրովի հրամարակում ուշացացաց ու գպրոց յեկա են ժամանակ, իերբ բոլոր խմբերն արգեն վերջացել ելին:

Հենց ճանապարհին ինձ պատահեց Զին-Պալնան ու ասում ե, վոր ինձնից եղախիսի բան չեր սպասում: Հարցըր՝ ինչ չեր սպասում:

Նա պատասխանում է.

— Կարգապահության խախտումն ու խմբակների խանգարում:

Եսու ասացի, վոր հիմա զեռ ամառ ե, ու միանգամայն ընակեան ե, վոր ավելի շատ ազատ ողում լինենք, քան թե շենքի մեջ, և վոր անհրաժեշտ ե, վորքան կարելի լի, շատ զբաղվել ֆիզկուլտուրալով:

Իսկ Զին-Պալնան վրա բերեց, թե դա պիտք և կազմակերպված անել, և վոր միանգամ խոստանալուց հետո չի կարելի խախտել: Բայց դրանից, նրա կարծիքով Փուտրուն ամենեին ել ֆիզկուլտուրա չի,

ալ մի շատ վնասակար խաղ, վոր կարելի լի համեմատել ծխելու կամ հարբեցողության հետ. Այդ խաղն ենակես և քաշում մարդուս, վոր փուտրովից պոկվել չի լինում, և դրա որինակը լիս եմ.

Յես պատասխանեցի և սկսեցի ապացուցել վոր փուտրովը կողէնեկտիվ զգացում և դաստիարակում և կազմվածքն ամեն կողմից զարդացնում ե, բայց Զին-Պալնան խսկույն և աթագաց ասաց, վոր, ընդհակառակը, կատարյալ հակառակ արդյունք և տեսնում.—լիթե լիս իմ կողէնեկտիվ պարապմունքներին չիմ հաճախում փուտրովի պատճառով, ապա փուտրովը ել ինչ կողեկտիվ զգացում և դաստիարակում:

Մի խոսքով՝ շատ անհաճո՞ւ ի՞ր, և փուտրովի պատճառով ել պետք և պարբեր:

Յես միքիչ շրջեցի գպրոցում և հենց ուզում եիր հեռանալը վոր հանկարծ Սիլվան ինձ կանչեց ու իրար հետ նստեցինք լսարանում ու սկսեցինք զրուց անել. Յես պատմեցի նրան փուտրովի և Զին-Պալնալի մասին, ու Սիլվան ասաց, վոր իր կարծիքով Զին-Պալնան իրավացի յե, և վոր տղաները չափազանց տարվում են փուտրովի. Յես սկսեցի վիճել, բայց եղ բովելին Սև Զոյան դուռը բաց արավ և խորհրդավոր ձեռվ ասում ե.

— Կոստյա Ռյաբցե, յես ուզում եմ քեզ հետ խոսել:

Յես խսկույն վեր կացա և գնացի: Նա ինձ տարավ բակը, ենտեղ մենք նստեցինք, ու նա ասում ե.

— Յես ուզում եմ քեզ մի պատմություն պատմել: Դու, իհարկե, ներիր ինձ, վոր ընդհատեցի ձեր քնքուշ խոսակցությունը, բայց ընդհանրապես Սիլվայի հետ քո առանձնանալը կարող և կասկած առաջացնել վոչ միայն աշակերտների, այլ և դպաշխների մեջ: Իսկ լիս թեև սիրում եմ Սիլվային, սակայն վերջին ժամանակները նրա վարքը ինձ դուք չի գալիս:

Եստեղ լիս զարբացա ու ասացի:

— Յեթի դու եղանես պիտի խոսես, ապա կորի ուղի լիդիր: Սիլվայի հետ յես վոչ մի քնքուշ խոսակցություն չունեի և չունեմ, ու յես Սիլվային նայում եմ իրք ընկերոջ: Ու Սիլվայի եղ ինչ առանձին վարքի մասին ես խոսում: Եղ ինչ կասկածներ են: Եղ ըոլորը տիմարություն ե, ու յես չգիտեմ, թե դու ինչ մեր զայրացած Սիլվայի վրա:

— Հանդստացիր ունստիր, — ասում ե Զոյան: — Յես քեզ նրա համար կանչեցի, վոր մի պատմություն անեմ: Դե լսիր: Յերեկ հարավից յեկալ իմ յեղբայրը: Ու նա մի փանտաստիկ պատմություն պատմեց, վոր իրը թե պատհել ե իր լեզոր հետ, վորից հետո լեզորս արձակուրդ են տվել, ու նա տուն ե լեկել, — վերջացրեց Զոյան:

— Եղ ե բոլոր:

- Բոլորը սա յեւ
- Իսկ մեռած աղջկա մասին. են ել քո սարքածն եւ
- Բա դու ի՞նչ ես կարծում: Մեռած աղջիկը կարժղ եր բժշկեցած գնաբը
- Դե, յես եզպես ել գիտեյի՛ Դու լիս:
- Յես վերկացա, գնացի և ձայն եմ տալիս.
- Սիրվա՛ Սիրվամ...
- Իսկ Սև Զոյան յիտեիցս գալիս և և փնթփնթում.
- Սիրվան չկա: Ե՛, Սիրվան գնացել եւ
- Ու ինչքան ել փնտուցի Սիրվային, նրան գպրոցում չկտա: Յերկի տուն եր գնացել: Իսկ Զոյան յիտեիցս գալիս և ու ինձ ջղրացնում.
- Նա իսկի չի ել սպասել: Դու շատ պետքն ես նրա:
- Են ժամանակ կարծես թե զլխումս պարզվեց, ու յես հասկացա, վոր Զոյան դիմամար ինձ Սիրվայից հեռացրեց. բայց թե չզիտեմ ինչ նպատակով: Յես չարացա, Զոյային կարմիր-բանակայինի մի բաժին ուտեցրի, նա լաց լեզավ, իսկ յես գնացի տուն:

#### 8 ողոսոսի.

Յերկար ընդհատումից հետո անսպասելի կերպով լուկս տեսալ «իքս»-ը, Ենտեղ մի ամբողջ ահազին պոհմա յե դրված և ցուց ե տալիս, թե ինչպես կարելի յե համառոտ-կրճատած խոսել կամ զրել:

Եղ շատ լավ ե, բայց ով ե զրել: Յես ու Կոլկա Պալտուսովը հենց խկույն ևեթ պայմանավորվեցինք, վոր իրար հետ տելեֆոն-լեզվով խոսենք: Յել արագ ե, և հարմար, և վոչվոք չի հասկանալ:

#### 9 ողոսոսի.

Յես չեմ սիրում ենալիսի աղջիկների, վորոնց ապուշ կարելի լե ասել. իսկ եղ տեսակները մեծամասնությունն են: Բայց արդեն յեթե տղաներից մեկն և արժանանում եղ կոչմանը, դա Յուշկա Գրունդին և: Նա բոլորին դուրս և տվելի իմ և Մարիալի մասին: Ամենեւին չեմ հասկանում, թե ինչն եր քաշում նրա լեզուն: Իսկ ով առանց պատճառի դուրս ե տալիս, դա հիմարության նշան ե:

Իսկ եսոր նա եսպիսի բան արավ: Հանկարծ ներս և ընկնում ֆիզիկական լաբորատորիան (վոչ մի դպաշխ չկար) և գոռում ե ինչ-քան կարող ե:

— Նիկպետոժը Ստասկա Վելոպուսկու վրա գժվել ա:

Եստեղ բոլոր յերեխաներն սկսեցին հարցուփորձ անել, թե նա եղ ինչպես իմացավ, մանավանդ աղջիկները վրա թափկեցին, ու Յուշկան պատմեց, վոր Նիկպետոժն ու Ստասկան սկզբում բակումը

ման ելին դալիս, իսկ հետո մտել են փայտանոցը, ու Նիկպետոֆը Ստասկալի ձեռքից բռնած՝ շատ մեծ հափշտակութիւմը ինչ-վոր բան եր համոզում նրան։

Իսկ Յուշկան թաղնվել և փայտանոցի մյուս ծալրում ու շարունակ ականջ գրել։

Ենթե Յուշկան իմ ու Մարիալի մասին արդեն առաջուց գուրս տված չլիներ, գրւցի թե յես իսկի վոչ մի ուշադրություն չդարձնելի. բայց այժմ միանգամբ պարզվեց ինձ համար, վոր Յուշկան ապուշ բամբասանքների սիրահար ե, և վոր նրան վոչ մի բանում վստահել չի կարելի։

Եսոր սկսվեցին մեր սեմինարները Զին-Պալնալի հետ՝ Պուշկինի մասին։ Զին-Պալնան մանրամասն պատմեց Պուշկինի կենսագրությունը, ուղրանից հետո Վալորդկա Շմերցն աչքի ընկալ։ Նա հանկարծ հարցընում ե.

— Իսկ ի՞նչ եր զգում Պուշկինը, յերբ նրա կինը փորով եր։  
Եստեղ Զին-Պալնան պատասխանում ե.

— Շմերց, յեթե քո եդ հարցը հետաքրքրությունից բղխեր, գուցե թե յես կպատասխանելի քեզ, բայց վորովհետև սրիկալությունից ե բղխում, ապա մեզնից մեկն ու մեկը լարանից պետք ե հեռանա, կամ գնաւ, Շմերց, կամ յիս։

Եստեղ Վալորդկան սկսեց արդարանալ, թե իսկի յել սրիկալությունից չե, վոր ինքը կարգացնել և Պուշկինի նամակներում, թե ինչպես Պուշկինը զբում ե իր կնոջը. «Քանի վոր դու փորով ես...», բայց բոլոր աշակերտներն աղաղակեցին.

— Դուքս կորի, Շմերց, Սա բակ չե, լսարան ե։  
Ու Վալորդկան ստիպված եր ամոթով հեռանալ։

## 10 ոգոստովի.

Եսոր Փուտրոլի հրապարակում Յուշկա Գրոմովս առանց վորեն պատճառի սկսեց գուգոռալ Նիկպետոֆի և Ստասկալի մասին։ Սա արդեն ուղղակի հիմարություն ե, վորովհետև Փուտրոլիստներից շատ-շատերը մեր դպրոցից չեն, դրա համար ել յես Յուշկային ասացի, վոր տիմարություններ չանի։

— Ե, ի՞նչ կանես ինձ վոր. — հարցրեց Յուշկան։  
— Քիթդ կջարդեմ։  
— Փորձիր, — ասաց Յուշկան։

Եսս չսկսեցի փորձել ալլ կոլկա Պալտուսովի հետ պայմանավորվեցի և խաղի ժամանակ յես նրա վոտքերի տակն ընկա, իսկ կոլկան այնպես հրեց նրան, վոր նա թռավ ու ջարդուիշուր յեղավ։

— Վայ-այ-այ-այ։ Ես, գիտեմ, Բյարցել դիտմամբ ե ջարդում։

Այնինչ բոլորը տեսան, վոր հրողը Պալտուսով եր, ու վոչլոք ուշագրություն չդարձրեց, միայն իւազի հրամանատարը նկատողություն արագ կոլկային՝ կոպիտ խազալու համար իսկ Յուշկան ենակե եր ջարդվեր վոր չեր կարողանում գնալ, ենակե վոր տղաները պատգարակով քարշ տվին տուն:

Հետ յերբ յես ու կոլկան տուն ելինք գնում, նա ասաց.

— Շաշը:

Մենք մեր պալմանի համաձայն տեկնգրաֆ-լեզվի մասին բացառություն չպիտի հարցնեյինք: Պետք ե ինքներս զիսի ընկնեյինք: Յես գլուխս կոտրեցի-կոտրեցի, բայց չկարողացա հասկանաւ թե եղ ինչ «Շաշը» եւ:

— Շաշը շուլալի՞ր, — հարցրի:

— Վհչ, — պատասխանեց կոլկան:

— Շարունակ շնորհքնի:

— Ե՛, չե: Ի՞նչպես չես հասկանում եւ: Շատ շնորհակալ եմ: Են ժամանակ յես վորոշեցի կոլկային պարտ չմնալ ու ճանապարհին շարունակ մտածում եյի: Բաժանվելիս յես ասացի:

— Հոկտատհավ կոպալ:

— Կոպալն\*) ինչի՞ համար, — ցրված հարցրեց կոլկան:

— Ե՛, յես կոպալ չեմ տեսել, այլ հոկտատհավ կոպալ: Թեզ ցըտեսություն եմ ասում: Դի՞:

Կոլկան մտածեց, մտածեց և գոռաց:

— Հոկտեմբերը պատվիրել ե չավաննալից կոստանդին Պալիսնոսին:

Եստեղ յես ծիծաղեցի:

— Հոկտեմբերն ով ե, վժրահղից դոար, եղ կոստանդին Պալիսնոսին վժրահղից կպցրիր. Կոստանդինն ի՞նչ գործ ունի:

— Եպ անունով յես մի հորեղբայր ունեմ: Մի՞ խանդարիր: Նա շուկայում հին շորեր ե ծախում: Գուցե դա մի հին հատուկ անուն ե. — Հոկտատհավ:

— Զե՞ն, հատուկ անուն չե՞: Դա տեկնգրաֆի բառ ե:

Տեսնելով, վոր կոլկան չի կարող իմանալ յես քիթ ցուց տվի: Նրան և ուզում եմի տուն գնալ: Բայց կոլկան ենակիսի սոսկալի հետաքրքրությամբ կպատի ինձ, վոր յես համենայն ղեպս ասացի: Յերկար ժամանակ չելի ուզում, հետո ձանձրացա և ուղղակի կոլկայի յերեսին դուռացի:

— Հոկտեմբերի պատգամներին հավատարիմ կոլկա Պալտուսով: Այս ինչ կնշանակի Հոկտատհավ կոպալ: Զե՞ն, քո շաշը-ն ե ալ...

Եսպես յես նըան հաղթեցի:

\*.) Կոպալ կնշանակի կարճ ձեռնափայտ:

Մեզ մոտ մի աղջիկ կա Պելկա անունով:

Նա շատ հաստ է, և նրան միշտ ել բոլորն ել սղմում են: Սղմում, քշում են մի անկյուն, իսկ նա ենահղից ձկան նման ճղճղում է: Ես միայն ենպես ասում են, թե ձկան նման, թե չե իսկապես ձուկը հո-չի կարող ճղճղալ:

Եսոր մենք Պելկալին մի անլուն սղմեցինք, մեկ ել հանկարծ, վորտեղից վորաեղ, ներս և թռչում Յելնիկիտկան և սկսում է մեղ վրա-գուռալ, վոր դա ալլանդակ բան է, վոր նա մեզ բոլորիս դպրոցական-խորհուրդ և ընդհանուր ժողով կտանի, ու քիչ և մնում ժողկոմխորհո-ւն ժամանակ յես հարցնում եմ նրան:

— Բայց, իսկապես ասած, մենք թնչ արինք վոր:

— Դուք ամելի լավ պիտի զիտենաք եղ, — աղաղակում և Յելնի-կիտկան, — եստեղ կեղծավորություն անելու բան չկա, քանի վոր ամեն-ինչ ափաշշկարա յե:

Ու եստեղ միքանի մեծ աղջիկներ ել թափվեցին ու սկսեցին ի-րար առաջ կտրելով աղաղակել, թե իրը տղաները սոսկալի կերպով կապները կարել են ու աղջիկների չեակեցն են ընկնում: Են ժամա-նակ յես չհամբերեցի և պատասխանում եմ, վոր եղ բոլորը լիրը ստախոսություն ե, և վոր Պելկալին միշտ ել բոլորն ել սղմում են, և իրեք վոչվոք եղտեղ մի առանձին բան չի նկատել եստեղ յես են ել ասացի, վոր Յելնիկիտկան ուղղակի կատաղել ե: Այն ժամանակ Յել-նիկիտկան աղջիկներին հավաքեց իր շուրջը, ինչպես թուխոը իր ճուռերին և հա լիսավոր կերպով հալտարարեց:

— Շյաբցան ելի ցույց ե տալիս իրեն իր ամբողջ մեծությամբ: Յես կարծում եմ, թե նա ուղղվել ե, բայց ես վերին աստիճանի զալրա-ցուցիչ այլանդակությունը ապացուցում ե, թե դեպի ուր են տանում Շյաբցի մտքերը:

Ու եստեղ նրանք բոլորը Պելկալի թեկրից բռնեցին ու քարշ ավին տարան — երեխ գանգատվելու:

Տաս բոպեյլց հետո Նիկպետոժն լեկավ, բոլոր տղաներին հավա-քեց լսարան, ու կրկին մի ամբողջ դասախոսություն սկսեց սեռական հարցի մասին: Հետո նա մի գրքույկ հանեց ու սկսեց կարդալ Տուր-գենեի «Առաջին սեր» պատմվածքը, — թե ինչպես մի փոքրիկ տղա խիստ սիրահարվում ե մի հասակավոր կնոջ: Մենք յերկար հոհում ելինք, հետո յես հարցնում եմ Նիկպետոժին:

— Նիկոլայ, Պետրովիչ, եղ բոլորը ինչժւ համար կարդացիք մեզ:

— Ա՞յ, նրա համար, վոր ձեղ ցույց տամ, թե իսկական, գաղա-փարական սերը, գեղարվեստական արտագրության մեջ ինչպես ե ար-տացոլվել:

— Իսկ ինչն, դուք կարծում եք, Նիկոլայ Պետրովիչ, վոր մենք  
եղ բանը չգիտե՞նք:

Նիկապետովը նեղն ընկալ:

— Եղ, այ, տեսնում եք, դպրոցական աշխատավորներից վոմանք  
կարծում են, վոր ձեր արածները և սեռական հարցի նկատմամբ ձեր  
հայացքները ուղղեց ընթացք չունեն:

— Իսկ զրա համար ի՞նչ ապացուցներ կան, — հարցնում եմ յես:

— Ա՛յ, որինակ, ձեր վերաբերմունքը Եւնա Որլովայի նկատմամբ  
(դա Պելկային են եղած ասում), Դպրոցական աշխատավորները կար-  
ծում են, վոր եղ վերաբերմունքը հիվանդոտ թեքումն և ստացել:

— Դե, դա, իհարկե, Յելենա Նիկիտիշնան ե, — հարցնում եմ յես:

— Հենց բանն ել են ե, վոր միայն Յելենա Նիկիտիշնան չե, այլ և  
վարիչը, և Ֆիշերը և Լյուգովիկա Կարլովնան (նա լերդ և զաս տալիս)՝  
եղածն են կարծում:

— Բայց ախար մենք ի՞նչ մի առանձին բան արեցինք, — զալրա-  
ցա յես: — Եղ վոր Պելկային սղմանմ եյինք, Եստեղ վոչ մի առանձին  
բան չկա, Նրան միշտ ել ամենքն ել սղմում են, և յերբեք վոչ մի մի-  
ջաղեկ չի յեղել:

— Վճէ, Եւնա Որլովային անկյուն քշելու վրա դպրոցական աշ-  
խատավորներն ուշադրություն են դարձել, — ասում ե Նիկապետովը: —  
Դրությունն ավելի յե վատանում նրանով, վոր ինքը Եւնա Որլո-  
վան չի ընդդիմանում այդ սղմելուն: Յերել ձեզ, Բյարցե, հայտնի յե,  
վոր ընդհանրապես կարել յե կատակել այն աղջիկների հետ, վորոնք  
դեմ վոչինչ չունեն: Ալժմ վորոշված ե վերջ տալ այդ բանին, ու բա-  
ցի գրանից զբաղվել ձեզ հետ մարքսիստական ետիկայի և մորալի  
խնդիրներով:

Յես հասա Նիկապետովի յետևից, յերը նա գնում եր, ու հարցը:

— Իսկ դուք ինքներդ ի՞նչ եք կարծում, Նիկոլայ Պետրովիչ, Եւ-  
նա Որլովայի նկատմամբ իսկապես մենք լուրջ կերպով հանցավոր  
ենք, թե չե:

— Առանձնապես հանցավոր չեմ համարում ձեզ, Բյարցե, — պատաս-  
խանում ե Նիկապետովը, — բայց կարծում եմ, վոր լավ կլիներ զսպելիք  
ձեզ և չսղմեյիք Որլովային: Բանն այն ե, վոր Յելենա Նիկիտիշնան  
պնդում ե, իբր թե դուք, Բյարցե, ընդունակ եք աղջիկներից մեկին  
ապականելու փշացնելու, վորովհետեւ իբր թե ամառը դուք Գրումովի  
քրոջ հետ իսկական ռոման եք ունեցել:

— Իսկ նա վմբակեղից զիտե, հարցը յես և զգացի, վոր կար-  
մըրում եմ. (շատ նեղ գրության մեջ ընկա):

— Ուրեմն կնշանակի իսկապես մի բան յեղել ե, Բյարցե, — հար-  
ցըրեց Նիկապետովը և շատ լուրջ նայեց ինձ:

— Այսինքն, ի՞նչպես թե «խակապիս», — հարցը ի յես: — Իմ կտրծիքով դա վոչվոքի չի վերաբերում: Միթե ձեզ գուր կդար, Նիկոլայ Պետրովիչ յիթե ձեր մասին վոչ ես, վոչ են, ոկսել եյին բամբառանքներ տարածել, թե գուք սիրահարված եք Ստանկա Վելոպոլսկայի վրա, ու որա նման զանազան բաներ:

— Ի՞նչպես, բայց միթե խոսում են, — արագ հարցը եց Նիկապետովը, և թվաց, թե նա վախեցավ:

— Այ, տեսնում եք, ձեզ ել գուր չի գալիս, — ասացի յես. — Եդ բոլորը բամբառանքներ են, ու կան մարդիկ, վոր քիթները խոթում են վոչվոքի չվերաբերող գործերի մեջ: Իմ կարծիքով, սա իսկի յել վոչ մի մարքսիստական ետիկա կամ մորալ չե:

— Ինարկե, եղ գու ճիշտ ևս ասում, — շփոթված ասաց Նիկապետովը. — բամբառանքները հին կարգերի և անիծլալ անցյալի մնացորդներն են: Դա գործին մերձենալու միանդամալն մեշանականությունն եւ ապացուցում: Յես, որինակ, յերբեք ձեզնից չեմ թագցրել, Շյարցե, վոր Սիլվիդա Դուրինինան ինձ դուր ե գալիս հենց իբրև մարդ, և վոչ ամենեին իբրև աղջիկ: Նույնպես եմ վերաբերվում և Վելոպոլսկային: Բավական տարօրինակ բան կլիներ, յեթե յես դպրոցում սկսելի ռումաններ սարքել:

— Սիլվան եստեղ վոչ մի գործ չունի, — պատասխանեցի յես: — Յերբեք, վոչվոք չի համարձակվի ասել, վոր իմ ու Սիլվալի միջև մի քան կա, բացի զուտ ընկերական հարաբերությունից: Ու հետո, յես ու Սիլվան այնքան նվիրված ենք համաշխարհային հեղափոխության, վոր անձնական հարաբերությունը յերկըրդական, յերրորդական և նույնիսկ տասերորդական տեղ են բռնում:

— Միանդամայն ճիշտ ե, — ասաց Նիկապետովը: — Մանավանդ վոր, յես ենքան եմ հարգում Դուրինինալին, վոր չեմ կարող մտքովս անցկացնել, թե վորեն մեկը նրա նկատմամբ սահմանից կանցնի: Սակայն, բայց և այնպիս, Շյարցե, դուք չեք կարող ասել ինձ, ընկերաբ, մեր ճեղ, թի ով ե տարածում եղ հիմար բամբառանքը իմ և Վելոպոլսկայի մասին:

— Եդ յես արդեն չեմ ասիլ, Նիկոլայ Պետրովիչ վորովհետեւ չեղոր եղ մարդուն դուք կսկսեք հուալ տալ հասարակա...»

Եդ արդեն յերբեք — աղաղակեց Նիկապետովը և նույնիսկ ամբողջովին կարմրեց: — Յես յերբեք հասարակական և անձնական գործերը իմի չեմ խառնում: Ասենք ինձ համար կարեորը բամբառանքչու անունը չե, այլ գլխավորապես են հարցը՝ դա տղաներցի՞ ե, թե՞ մեծերից, որինակ՝ դպրոցական աշխատավորներից:

— Տղաներից, — պատասխանեցի յես:

— Լավ, շնորհակալ եմ ձեզնից, Շյարցե, — ասաց Նիկապետովը բաժանվելիս:

— Համենալին զեպս, հավատացած յեղեք, վոր Որլովալի միջա-  
դեպում յես կպաշտպանեմ քո շահերը. վորովինետև միանդամալին հա-  
վատացած եմ, վոր եղ ամբողջ պատմությունը մի ծեղ չարժե՛:

— Դե, շըքեղ,—ասացի յես բաժանվելիս:

— Իսկ դա ի՞նչպիս հասկանամ.—հարցըց Նիկոլետոֆը:

— Շնորհակալ եմ քեզնից—փոխանակ շնորհակալության. իսկ շը-  
նորհ դա կրոնական բառ ե:

— Ե՛, շուտ եք սկսել աղճատել մեր լեզուն,—դժգոհությամբ ա-  
սաց Նիկոլետոֆը:—Առանց են ել այժմ ավելի յեն աղավազում, քան  
ովետք ն:

— Յես վոչ միայն աղճատում եմ, Նիկոլայ Պետրովիչ, այս ըս-  
տեղծում եմ:

— Ե՛...ենքան ել կարեոր ստեղծագործություն չե, —ասաց Նիկ-  
ոլետոֆը, ու մենք բաժանվեցինք:

## 12 ոգոսոսի.

Եսոր ամառալին այդում ներկայտցնում ելին «Կարմեն» ոպե-  
րան, ու յես ու Սիլվան գնացել ելինք: Յես առաջ արհամարհանքով ելի-  
վերաբերվում ողերային, վորովինետև յերբ խոսակցության ժամանակ  
յերզում են, մեծ անբավականություն ե ստացվում, բացի դրանից բա-  
ռերը վորոշելն ել գժվար ե:

— Բայց սոսկալի բան ե խանդը, —ասաց Սիլվան ներկալա-  
ցումից հետո, յերբ տուն ելինք դառնում:—Բա դու դիտես, վոր քո  
նկատմամբ յես խանդում ելի:

Յես աչքերս ստամիկ չուցեցի:

— Վայ, մի՞թե... ու շփոթվեցի:

— Ի՞նչ «միթե»: Յես հասկանում եմ, թե դու ինչ ես ուզում ա-  
սել: Բայց ինկատի ունեցիր (յես դա անձնական փորձով դիտեմ), վոր  
խանդելու համար ամեննեին անհրաժեշտ չե ուրիշ... ավելի զորեղ ըղ-  
գացմունք: Կարելի յե խանդ զգալ բոլորովին անմեղ մարդկանց նը-  
կատմամբ: Որինակ, քո նկատմամբ յես խանդում ելի Նիկոլետոֆին, և  
նույնիսկ իրերին: Յես, դիտես, քո նկատմամբ ամենից ավելի ինչին  
եմ խանդում: Քո որագրին: Աւ յեթե դու չես ուզում յես տանջվեմ,  
պետք ե տաս ինձ՝ կարդամ:

Դրանից հետո մենք յերկար ժամանակ լուռ քալում ելինք: Իհարկե,  
յես խկի չելի ցանկանալ, վոր Սիլվան իմ որագրի պատճառով տանջվեր,  
բայց մլուս կողմից—չե վոր յես որագիրը չելի կարող նրան տալ կար-  
գալու: Դա միենալին ե, թե նրա հետ սկսել զրուց անել ամենազարտնի  
բաների մասին, վոր մենակ ժամանակդ ել վախենում ես մտածել:

Հանկարծ Սիլվան ասում ե.

— Կնշանակի դու ինձ բոլորովին չես... հարգում, Յեթե հարգելիս լինելիք, եղածիս լերկար չեյլիր սկսիլ մտածել՝ որագիրդ տամ թե չտառ ինձ:

— Եսիր, Սիլվա, —ասացի յես, —որագիրն ախար, դե դա մարդուս ամենազագունի բանն եւ Դու պարզապես ուզում ես, վոր յես իմ ամբողջ հոգին հակառակ կողմի վրա շուռ տամ քո առջե, իսկ իմ հոգում շատ ենպիսի բաներ կան, վոր դու չես կարող իմանալ:

Են ժամանակ հանկարծ, արագ գնալիս, Սիլվան կանգ առաջ ու տառւմ ե.

— Դե, ցտեսություն:

— Վա, ախար դու, դեռ պիտի դաս:

— Յերբ մեր միջև վոչ մի ընդհանուր բան չկա, ել ինչու համար պեաք և միասին զնանք, —ասում ե Սիլվան: — Դու քո ճանապարհով գնա, յես ել իմ ճանապարհով կդնամ:

— Կաց, Սիլվա, եդ ինչպես թե՝ «մեր միջև ընդհանուր վոչ մի բան չկա»: Դա ախմախություն եւ Մեր միջև նույնիսկ շատ ընդհանուր բան կա: Բայց ախար դու ու չես ուզի, վոր յես հանկարծ բոլորովին մերկանամ քո առջե:

— Դե, յեթե դու արդեն սկսեցիր ամեն տեսակ զզվելի բաներ ասել, են ժամանակ յես ինքս չեմ ուզի, վոր մեր միջև վորեւ ընդհանուր բան լինի:

Յես նույնիսկ միքիչ վիրավորվեցի:

— Յես վոչ մի զզվելի բան չեմ ասում: Յես նույնիսկ չգիտեմ, թե դու ինչու դա զզվելի բան համարեցիր: Իսկ վոր իբր յես քեզ չեմ հարցում, այ, դե լաիր:

Ու եստեղ յես կարդացի նրան իմ վոտանավորը.

Հիշում եմ յես քո ասածը խելացի,

Մեր լուռ ուխտը ես աղմուկում դպրոցի:

Եդ դեռ վոչինչ, վոր խոսում ես ուրշի հետ,

Չե՛, առանց քեզ յես վոչինչ եմ առնավետ:

— Ե, հետո ի՞նչ վոր, —ասում ե Սիլվան: — Դա շատ վատ վոտանավոր ե: Թո որագիրն անհամեմատ ավելի հետաքրքիր կլինի: Միթե դու ինձ ենքան փոքրիկ աղջիկ ես համարում, վոր նույնիսկ կարծում ես, թե չեմ կարող լուրջ վերաբերվել Բայց ասենք, սպասիր: Իսկ յեթե յես իմ որագիրը քեզ տամ, դու քոնը կտմս ինձ կարդալու:

— Բայց միթե դու որագիր ունես:

— Քեզ, —ընդգծեց Սիլվան, — քեզ կարող եմ ասել, վոր ունեմ:

— Ու դու կտմս ինձ, վոր կարդամ:

— Իհարկե կտամ: Վորովհետև յես քեզ իմ բարեկամն եմ համարում: Միայն են պայմանով, վոր դու յել քոնը տաս ինձ:

— Կարելի՞ յե մինչև վաղը մտածել. — հարցը յես:

— Եղ արդեն չե: Եղափիսի բաները վաղվան չեն հետաձգում: Յես կարծում ելի, թե դու տղամարդ ես. բանից դուքս ե գալիս, վոր դու յերեխա յես:

Թեև շատ տանջալի յեր ինձ համար, բայց մյուս կողմից շատ ելի ուզում Սիլվայի որագիրը կարդալ: Ասացի:

— Միայն դու պետք ե խոսք տաս ինձ, վոր վնչվոքի և յերբեք, հասկանում ես: Ու բացի դրանից, նույնիսկ հենց ինձ հետ եղ մասին չխոսես: Իրը թե դու իսկի չես ել կարդացել:

— Խոսք եմ տալիս, — հանդիսավոր կերպով ասաց Սիլվան: — Յեկ վորպեսզի ապացուցեմ, վոր յես միայն հետաքրքրությունից չեմ զըսդված, վաղը յես առաջինը կրերեմ իմ որագիրը՝ քեզ տալու:

### 13 ոպուսովի.

Քանի վոր մեր աշակերտներից շատերն ելին յեղել «Կարմեն»-ի ներկայացմանը, ապա ուզեցինք եղ ոպերան մեր դպրոցում ել խաղալ: Յես վերցը տորբեազորի վերը յերգելու (յես արդեն փորձեցի), իսկ դոն-Խովեն կարող եր յերգել Կոլկա Պալտուսովը, վորը շատ ուժեղ դիսկանտ ե և միանդամայն կարող ե տենոր համարվել:

Բայց Լյուդվիկա Կարլովսան ասաց, վոր «Կարմեն»-ը և ընդհանուրապես մեծերի ոպերան մեզ համար անպետք ե չենք կարող խաղալ: Նա հենց ենտեղ իր թղթապանակից հանեց «Սունկերի իբարանցումը» վերնագրով մանկական ոպերան և առաջարկեց ներկայացնել: Հենց եղանակ ել մեզ նա համար նվազեց: Զանազան ախմախ բաներ տեսել եմ յես բեմի վրա, բայց յերբեք չեմ մտածել, վոր կարող ե բեմի համար զրվել են ել յերաժշտությամբ, մի եղափիսի տխմար բան: Որինակ՝ սկսվում ե նըանով, վոր Շաղգամ թագուհին ասում ե:

Ալ իմ տեր,

Մեծ սիսեռ,

Զուր ես խնդում,

Զուր պարծենում.

Ժամ չի անցնում

իրարանցում...

Թե սա ինչ ե նշանակում, յես չեմ հասկանում, և կարծում եմ, վոր վոչվոք չի հասկանա: Յես լսեցի, լսեցի և յերգեցի իմը.

Յես շաշ-ը,

Յես շը-քեզ,

Դճ, ասա,

Տեսնեմ քեզ:

Լուղվիկա կարլովսան ինձ հարցնում ե, թե դա ինչ է նշանակում, չես ել պատասխանելու փոխարեն ասում եմ, թե թող առաջ ինքը բացատրի ինձ իր հենց եղ «Սունկերի իրարանցումը»: Մանավանդ վոր եղ ոպերան խաղալիս կարող են մեր լենթաշեֆ գյուղացիները գալ և վոչինչ չեն ըմբռնիլ: Են ժամանակ Լուղվիկա կարլովսան ասաց, վոր նախ իր կարծիքով «Սունկերի իրարանցումը» շատ ծիծաղելի ոպերա է, ու յեթե չեմ ուզում մասնակցել, չխանգարեմ: Յես գնացի, ու նրա մոտ մնացին միայն առաջին խմբերից՝ փոքրերը: Սիլվան ասաց, վոր որագիրը մոռացել է, վաղը կրերի:

#### 14 ողոատոսի.

Յես հենց նոր կարդացի Սիլվակի որագիրը և կարծում եմ, վոր Սիլվան ինչ-վոր բան թագցնում է ինձնից: Իհարկե, որագիրը շատ հետաքրքրական է, բայց լրիվ չեւ Ու չի լել կարելի հասկանալ, թե նրա թերին վորաեղ է, վորովհետև Սիլվան ինձ նման ամսաթվերով չի գրում, այլ ուղղակի շարքով իրար յետեից:

Են ժամանակ յես ել նրան իմ ամբողջ որագիրը չիմ տալ, այլ միայն առաջին յեռամյակի տետրը:

Պատեղ բյաբցեվի տերում գրված է մի փոքր տեօրակ՝ տողած բղից կարած — այս վերնագրով.

**ՅԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԶՈՐՐՈՐԴ ԽՄԲԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻ  
ՍԻԼՖԻԴԱ (ՅԵՎԴՈԿԻԱ) ԴՈՒԲԻՆԻՆԱՅԻ ՏԵՏՐ.**

Տետրն սկսվում է Յեսենինի վոտանավորով.

«Չիմ խղճում, չեմ կանչում, չեմ լալիս»:

Ապա դրված են Տյուտչեի, Բալմոնտի, Բունինի վոտանավորները և Ապուխտինի «Խելագարը»: Վոտանավորներից հետո—ընագիրն է՝

— Յես ուզում եմ և պետք է ամեն բան, ամեն բան, ինքս փորձեմ, ինքս իմանամ:

\*

Կյանքը գրականության մեջ ուրիշ բան է, իսկ իսկապես—բոլորովին, բոլորովին ուրիշ: Ու դա հեշտ է, դուքսեկան, յերբ յերեակայությամբ ես ապրում, և վոչ իրաք-իսկապես: Բայց դրա դեմ պետք է մաքառել:

\*

— Ի՞նչ է մեր կյանքը — վեպ:

— Ո՞վ է հեղինակը—անհայտ է:

Կարդում ենք հանգեհանդ

Ծիծաղում, լալիս, քնում:

Մբթե կարելի յե հավատաւ, վոր այս բանը գրել և Կարամզինը գեռ տասնութերորդ դարում...Այնինչ սա Կարամզինն և գրել, նա առաջ եպիգրաֆներ եր գրում, իսկ հետո պատմություն գրեց:

\*

Զ. Պ. ասում ե, վոր յես գրական վոճ ունեմ: Յես նրան հարցրի, թե կլանքի մեջ ինչի՞ յե հարկավոր դա, իսկ նա ասաց, վոր վոճը մարդու քաղաքակիրթ լինելն և ապացուցում: Քաղաքակիրթ մարդու հորիզոնը լալն եւ

\*

Իմ՝ փոխհարաբերությունը Ստասկա Վ.-ի, ինչպես և առաջ Լինա Գ.-ի հետ այն ե, վոր նրանց սրախ զեղումների թափելու մի ողանցք եմ դառնում: Եղ բանն ինձ համար վոչ դուրեկան և և վոչ անզուրեկան: Այլ ենպես, կարծես թե անտարբեր եմ: Ստասկալի վիշտն ինձ ենքան ել դառը չի թվում, և վոչ ել նրա արցունքներն ենքան ալրոդ: Լինան շատ ավելի զորեղ պատճառաբանություններ ուներ տանջվելու, քան Ստասկան: Ու համենայն զեպս, ինչ ել վոր լինի... ամենածանր, ամենազժվար ըոսպեներին, յերբ յես դիտել եմ ինձ, ապա համոզվել եմ, վոր «առաջ մեզ, հետո մերոնց», և վոր կյանքը շատ ավելի սոսկալի յե, քան ես ժամանակավոր փորձանքները:

Յես ըմբռնեցի, վոր կյանքը սոսկալի բան և գեռ առաջ, հինգ տարի սրանից առաջ,—հավանականաբար գիտակցական կյանքիս ըսկըզից: Ու յես ենպես եմ կարծում, վոր եղ նույն բանն ըմբռնել են բոլոր իմ հասակի պատանիներն ու աղջիկները, կամ լեթե չեն հասկացել, ապա զգացել են. բայց դա միենուուն եւ: Բայց բացի գրանից մեր ամբողջ սերունդը մի ուրիշ բան ել ե. սովորել: Նա սովորել ե, վոր կյանքն ինչքան ել սոսկալի յե, այնուամենայնիվ կարելի յե և պետք ե նրա զեմ պայքարել և նրան հաղթահարել: Են ժամանակ նա եղպես սոսկալի չի լինում և նույնիսկ կարծես պայծառ կողմեր և ունենում: Ասենք, ես բոլոր մաքերն իմս չեն, բայց են ել արդեն լավ ե, վոր հասել են իմ գիտակցությանը և ամրապնդել են իմ մեջ:

Օս ուժ և տալիս կյանքի նկատմամբ և հնարավորություն նրա զեմ պայքարելու: Համենայն զեպս յես լերբեք այնպիսի այլանդակման չեմ հասնի, վոր սարքեցին Լինան ու Զոյան: Նրանց սարքածն ընդհանրապես ել հիմար բան եր, իսկ վոր չհաջողվեց, ել ավելի հիմար բան դուրս յեկավ: Իսկ աշխարհում ամենավատ բանն են ե, վոր մարդ բոլորի առջև հիմար դրության մեջ և ընկնում:

\*

Յերբ յես մենակ եմ մնում, իմ ամբողջ հոգին լցվում և մի տարորինակ զգացմունքով—յերկրից բոլորովին վերանում եմ, ու կարծես թե ինչ-վոր յեթերից դուրս ճախրում եմ: Եղ բանը հաճախ և պատահում մանավանդ լուսնյակ գիշերները:

Յես հւմ եմ պետք: Յերբեմն ինձ թվում ե, վոր յես ամեննին, վոչվորի պետք չեմ: Ու ահա են ժամանակ սկսում ես տեսնդորեն - աենդորեն փնտռել մի ենպիսի մարդու, վորին պետք ես դու: Դրա համար ել յես ողանցք եմ:

Իսկ յես գրագետ եմ, վորովհետեւ իմ հայրը գրաշար եւ Մանկությունից—սհնյակում—զրքեր եմ տեսել. հինգ տարեկանից սովորել եմ կարդալ: Կենցաղն ե վորոշում զիտակցությունը:

\*

Գրածս ամբողջը կարդացի և մտածեցի: Յես ամեն ինչ անում եմ նախած տրամադրությանս: Յես կարող եմ և լաց լինել, միայն եղ բանը յերբեք, վոչվոր չի իմանալ: Կամ, որինակ, յես ամենաանզուսպ կերպով հոճուում եմ: Եղակիսի դեսպերում յես իմ ամբողջ ուժով ձգտում եմ զապել ինձ.—վորովհետեւ յեթե անձնատուը լինես, ապա ել իսկի չես կարող ինքդ քեզ զեկավարել:

Յերեկ ինձ մոտ եր Ստասիկա Վելոպոլսկայան, ու նորից պատմեց իր ուսմանի մասին: Իմ կարծիքով նա բոլորովին իզուր ե են մարդուն տանջում: Միենալին ե, նա վոչ մի թ՛նէն չի մտնի, վորովհետեւ նա կիսագրադետ ե, և հինգերորդ խումբն ել զուր կավարտի: Ավելի լավ ե մարդու գնա - պրծանք, զնաց:

\*

Հենց նոր վերջացավ հորս ու մորս սարքած խայտառակությունը: Հայրս խմած յեկավ ու սկսից հայհոյել մորս: Հետո նրանք կպան: Մայրս աղաղակում ե. «Դռւնկա, ոգնիքը»: Իսկ հայրս աղաղակում ե. «Սիրֆիդա, դնա, —յերբ հասակավորները ցնծում են, յերեխաներն ենտեղ գործ չունեն»: Շատ զզկելի յեր, ու յեթե հայրս չգնար, չգիտեմ թե ինչ կանելի:

\*

«Պատերազմ և խաղաղությունը» վերջացըի: Շատ կուզենալի նատաշա Ռոստովան լինելի, բայց զգում եմ, վոր չեմ կարող ենպիսին լինել: Նատաշան—իսկական, լի կյանք ունի, բայց նա եղ ե, ուրիշ վոչինչ: Հատ եղ գրքի ենպես ե դուրս գալիս, վոր կնոջ խնդիրը եղ լինելն ի: Ինձ թվում ե, թե նատաշան գաղափարախոսական հարցեր ել ուներ, բայց Տոլստոյը իբրև կալվածատիր ու գրափ (Փեղութիղմի ներկայացուցիչ), թագցրել ե եղ:

Իմ կարծիքով Կոստյա Ռ. միքիչ նման ե Նիկոլայ Ռոստովին, միայն ենպես հիմար չի: Իսկ Զուա Տրամսիկովան նման ե իշխանու-

Նի Մարիա Բոլկոնսկային, միայն ավելի գեղեցիկ եւ Թեե, մյուս կողմից, Զոյալի գեղեցկությունն ինձ դուք չի զալիս: Նրա գեղեցկությունը շատ տարորինակ եւ Ու հետո նա անփութ և սանրվում: Ընդհանրապես, գեղեցկության մասին զանազան կարծիքներ կարող են լինել Որինակ, յես չեմ հասկանում, թե հայտնի մարդը ինչ ե զտել Ստասկա Վ.-ի մեջ: Նրա քիթը պաճո յի, ոչ կողմի մի ատամը չկա, ու հետո՝ յերբ ման ե զալիս, զինվորի նմոն ձեռքերը թափահարում եւ իսկ հայտնի մարդը ուզգակի բոցավավում եւ:

Յես շատ լավ եմ հասկանում, վոր են, ինչ վոր յես հիմա զբում եմ, մեշշանականությունն եւ, բայց զրանից ազատվել չեմ կարողանում:

\*

Այս զբա համար մարդ ինքն իրեն շարունակ պիտի պատճի – են ժամանակ կազատվի: Յեթե յես աշխատեի դործարանում և վոչ թե սովորելի յերկրորդ աստիճանի գալրոցում, գուցե ինձ համար ավելի հեշտ կլիներ, բայց սա լել – վոչ հավանականաբար, վորովհետեւ յես շատ փաստեր գիտեմ են գործարանի կյանքից, վորին կցված ե մեր կոմիտեիտական ֆրակցիան: Եղ փաստերից մեկն եսպես եւ Մի տասնուվեց տարեկան աղջիկ ամուսնացել և մի տղայի հետ, վորը նույնպես նույն գործարանում աշխատում եւ Ռոլորն սկսեցին նրան ծաղրել իմ կարծիքով դա լել մեշշանականություն եւ: Յերբ իշխանությունը թուլ ե տալիս տասնուվեց տարեկան մարդու գնաւը, թող ինչքան ուզում են մարդու գնան:

\*

Թեե յես վոչ մի պայմանով այժմ չեյի ամուսնանալ (բայց իրավունք ունեմ, վորովհետեւ արգեն հունիսին տասնուվեց տարիս լրացալ): Յես զանազան ամուսնություններ եմ դիտել և տեսել եմ, վոր մեծ մասամբ ծանր ե ընթանում, և ծնողներիս որինակը աչքիս առաջն եւ: Ախար հայրս առաջ չեր խմում, իսկ հիմա, ինչ վոր մորս հետ տարբեր համոզմունքի յեն, սկսել ե խմել Բայց մյուս կողմից յես ամեն բան պիտի փորձեմ: Մինչև յես ամեն բան չփորձեմ, չեմ հանդստանալ:

Բայց և այնպես, մյուս կողմից յես շատ լավ եմ հասկանում, վոր պետք ե զսպել և զեկավարել իրեն: Յեվ ան իմ մեջ պայքարում են յերկուուժ. ու թե զրանցից վորը կհաղթի, յես չգիտեմ: Յես նույնիսկ ինքս ինձ համար – այն ուժին, վոր զսպում ե ինձ զանազան փորձերի – Դունկա յեմ անվանում, իսկ այն՝ վոր զսպում ե, Միլֆիտա: Միլֆիդան ուժեղ ե, իսկ Դունկան – անպետք, զզվելի, զաղափարախոսորեն անկայուն մի աղջիկ:

ԱՌ, հիմա գաղափարախոսության մասին։ Գաղափարախոսությունն ոգնում ե ապրելու—դա ճիշտ ե։ Միայն միշտ չես իմանում, թե ճշմարտությունը վոր կողմ ե։ ԱՌ, որինակ, պարը, Յես մինչև հիմա կարծում ելի, վոր պարել չի կարելի, ու հանկարծ գնացի գործարանի ակումբը և տեսնում եմ—ենտեղ պարում են Խոկ յիս գործով գնացել եյի բջիջի քարտուղար Խվանովի մոտ, և իդեալ հարցը նում եմ։

— Միթե կարելի յե պարել։

Խոկ նա պատասխանում ե։

— Յերբեք վոչվոք ել չի արգելել։

— ԵՌ, ապա ինչո՞ւ առաջ ասում եին, թե պարելը մեշանականություն ե, և ինչպես մեր յերկրորդ աստիճանցիներից մեկն ասաց—միայն սեռական շփումն ե իրար։

— ԵՌ, շատ են գիտնական դարձել բոլորն ել, — ասաց Խվանովը։ — Մենք յերբեք վարդապետ չենք դառնալու։ Ուզում ես զվարճանալ—զվարճացիր, միայն ուրիշներին վնաս մի հասցնիր։

Արի ու եստեղ բան հասկացիր։ Շատ դժվար ե գաղափարախոսությունը հասկանալ։ Ամեն մի գրական յերկ կարելի յե կարդալ միքանի անգամ ու հետո մտածել եղ մասին, իսկ վորեն կենսական հարց պետք ե անհապաղ լուծել։

Ամենից հաճախ դժվար դրության մեջ մարդ լինում ե գպրոցում, ու եստեղ պետք ե միշտ ինքու հասկանաս, վորովինետե վոչվոք չկա, վոր խորհրդակցես և ժամանակ ել չկա։ Մանավանդ յերբ վորեն ընդհարում ե լինում գպրոցական աշխատավորների հետ կամ խոռվություն—ըունաւ։

Խոկ մեր գպրոցում խռովություններ հաճախ են լինում, ու յերբ տեսուչն յեկել եր, նա ասաց, վոր մեր գպրոցը դպրոց չե, այլ թոկից փախածների հավաքույթ։ Իհարկե, դա ճիշտ չե, Իհարկե, անկարգություններ հաճախ են լինում, բայց չե՞ վոր մենք հեղափոխական դարաշրջանում ենք ապրում, և եղպես ել պետք ե լինի։

Զին. Փալնան Պուշկինի մասին սեմինարներ ե անում, և շատ հետաքրքրական ե նրա հետ պարապելը։ Հիմա նա մեզ տվել ե «Յեվդենիյ Ռնեգինի» վերլուծությունը։ Եղպիսի բաներում ամենից առաջ ուշադրություն ես դարձնում գաղափարախոսության վրա։ Իհարկե Ռնեգինը հղփացած ե Փեղալա-ընական-բուրժուա-կալվածատիրական գաղափարախոսությամբ, (սա շատ յերկար ե, բայց այլ կերպ չես կարող արտահայտել, վորովինետե եստեղ—ընական տնտեսություն ե)։

հստեղ Պուշկինի համար անպատվարեր վոչ մի բան չկա, վորովհետեւ Պուշկինի ժամանակ դեռ պրոլետարիատի դիկտատուրա և խորհրդացին իշխանություն չկար. են ժամանակ ցարիզմ եր, ու նրա ներկայացուցիչ Նիկոլայ Աճաջում եր Պուշկինին. այսպես, որինակ, նրան աքսորեց Թիջնե, իսկ հետո հայրենիք: Միայն այս, ինչն ե ինձ համար անհասկանալի:—Պուշկինը ուրախ եր, ու զարմանալի իե, վոր հարավային տաք արյուն ունենալով, նա կարողացել ե գրել եղագիսի սարը և անհիբրդ մի յերկ, ինչպիսին «Յեզդինի Ռնեպին» եւ Զին-Պալնան ասում ե, վոր Պուշկինի դարաշրջանում յերիտասարդ աղջիկ-ները հափշտակվում եյին Տատյանալի պատկերով: Եղ բանն ինձ համար բոլորովին անհասկանալի յե, թե ինչպես, են ֆեոդալա-բուրժուականականալի Տատյանան կարող եր իդեալ համար-վել Յես լենթագրում եմ, վոր են ժամանակ եղագիսի կանալք չեն լեզել, և Տատյանալին Պուշկինն ե հնարել իր գլխից, վորովհետեւ նա ոռմանամիկ եր: Հենց Ռնեպինի վերաբերմամբ ել լիս կասկածում եմ:

Բայց ինձ համար գժվար ե դատել, վորովհետեւ լիս տղամարդու հոգերանությունը չգիտեմ: Յես լերեք և վոչ մի պայմանով չելի ուղենալ Տատյանա լինել ու եղագիսին չեմ ել լինի, վորովհետեւ լերը զգացմունքով անկեղծ ե, պետք ե անձնատուր լինես նրան, և վոչ թե խեղդես քո մեջ: Ու ընդհանրապես Տատյանան—իմ եղեալը չի: Նրա մեջ ամեններն հեղափոխական պայքար չկար: Իսկ առանց հեղափոխական պայքարի կյանքը կյանք չե: Բայց մյուս կողմից, Տատյանան մասամբ ինձ դուր ե գալիս, վորովհետեւ նա կարողանում եր ըստ ցանկության ղեկավարել իր զգացմունքները. իսկ դա մեծ նշանակություն ունի, ու եղ բանն ինձ հաջողվում ե միայն արտաքուստ, իսկ իմ ներսը շարունակ պայքար ե: Տատյանալի համար, իհարկե, ավելի հեշտ եր, վորովհետեւ նա միաժամանակ վորեւ հոկտեմբերիկ կամ Սիլֆիդա չեր, ու նա միայն այն եր անում, ինչ վոր բնա-կալվածատիրական բարոյականությունը թելադրում եր նրան:

(Նիկոլայ Պետրովիչին և եղան ասում):

\*

Մեր աղջիկների մեծ մասն ուղում են կյանքի մեջ կիսու-դերասանուհիներ կամ պարողուհիներ լինել: Սովորելու մասին քիչ են մտածում:—միայն թե ստուգումը տան, թեկուղ գլխներումը վոչինչ չմնա: Միանգամայն հասկանալի իե, վոր աղջիկների մեծ մասը նույնպիսի կիսագրագետներ են, ինչպիսին Ստասկա Վ.-Ն: Մի աղջիկ ասաց ինձ (նա հինգերորդ խմբիցն ե). «Դպրոցը կավարտեմ, կիսու-աստղ կդառնամ, կզնամ Ամերիկա: Ահա իմ ծրապիրը կյանքի նկատմամբ»: Իսկ աղջիկների փոքր մասն ուղում ե դպրոցն ավարտելուց գործարան մտնել՝ դասակարգի հետ մերվելու համար:

Զոյս Տրավորիկովան ինձ հետեւում եւ Դպրոցում վորտեղ լես եմ ինուում, ենտեղ ել նա: Ի՞նչ և ուզում նա ինձնից:

16 ոգոստոսի.

Յես գնացել եյի գործարան, բջիջի ժողովին, ու ենտեղ ասացին, վոր հասարակական աշխատանքները մեր գովրոցում թուլլ են կազմակերպված, և վոր եղ բանի մեղավորը մենք յերկրորդ աստիճանցիներս ենք, և ամեններն ել դպաշխները չեն, ինչպես մեղնում սովորաբար կարծում ենք: Սերլուժկա Բլինովը հակածառեց, վոր մենք վոչինչ չենք կարող անել, վորովհետև դպրոցում ամեն ինչ դպաշխների հրամանով և ընթանում, և նույնիսկ ենափիսի գործը, ինչպիսին ինքնավարությունն ե, «գպաշխների գավազանների վրա հենված հաշմանդամի» յի նմանում: Բլինովին պատասխանեցին, վոր եդտեղ ել ելի մենք ինքներս ենք մեղավոր, վորովհետև բավականաչափ ակտիվ չենք, ու բացի այդ կան մի շարք հասարակական աշխատանքներ: Սերլուժկան ասաց, վոր մենք պատի թերթ և խմբակներ ունենք: Են ժամանակ նրան նկատեցին, վոր պիոներական աշխատանքն անկազմակերպ ե, և վոր մեր պիոներները (բոլորը ցածր խմբերից են) միայն նրանով են զբաղվում, վոր յերաժշտությամբ քայլում են դահլիճում, մեկ ել—խաղում են: Ու բացի պիոներական աշխատանքից հասարակական գործունեյություն ել գոյություն ունի: Սերլուժկան ուզում եր հակածառել բայց նրան ասացին, վոր անգործունեյությունը խոսքով արդարացնելը Մի խոսքով՝ մեզ հուպ տվին, և պետք ե ձեռք ու վոտք հավաքել:

17 ոգոստոսի.

Յես Սիլվալին ասացի, վոր նա ինձ իր որագիրը լրիվ չի տվել ու նա լսեց: Կնշանակի ճիշտ ե, Յես նրան են ել ասացի, վոր որագիրը կպահեմ ինձ մոտ, վորովհետև դեռ ինչպես հարկն ե լավ չեմ կարդացել: Հետո յես տվեցի նրան են յերեք տեսրու, վոր յես գրել ելի առաջին յեռամյակին: Նախորոք յես բոլորը կարդացի ու տեսա, վոր ենտեղ ենափիսի մի բան չկա, վոր կարելի չինչի նրան տալ կարդալու: Հետաքրքիր ե, թե նա ինչ կասի կարդալուց հետո:

18 ոգոստոսի.

Պելկալին սեղմելու գործը անցանկալի ընույթ ե ստանում: Բանից դուրս ե գալիս, վոր միքանի դպաշխժողովներ են նվիրել դրան

(Նիկպետոժն իրը գաղտնիք ասաց ինձ), ու Զին-Պալնան պահանջել եր վոր հասարակական-ցուցադրական դատ լինի ըոլոր նրանց Նկատմամբ, ով դրանով զբաղվել է (կնշանակի տղաներից մեծ մասի): Բայց Յելնիկիտկան հայտարարել եր, վոր յեթե Ծարցից չլինի, մյուս տղաները զրանով չեն զրազվի, ու յեթե պետք է դատել, տպա միայն ինձ պետք ե դատել: Պելկան շարունակ կարմրած ու ուռած և ման զալիս, վորովհետո միքանի անգամ նրան դպաշխների մոռ են կանչել. Սիլվան ել ասում եր, թե Պելկան շատ ե հալարտանում, վոր իր պատճառով եղանիս աղմուկ ե բարձրացել, Յես Նիկպետոժին հարցրի, թե ինչ կլինի, նա ել պատասխանեց, վոր բացի հասարակական հանդիմանությունից վոչինչ չի սպասվում, Յեկ բացի զրանից նա ասաց, վոր ինքը կապաշապանի ինձ: Ու ելի խորհուրդ տվեց, վոր յես իմ ընկերներից ել պաշտպան ընտրեմ:

Յես մտածեցի և Սիլվային ասացի, վոր չզիտեմ ում ընտրեմ: Խոկ Սիլվան ասաց, թե արդյոք յես դեմ չեմ լինի, յեթե ինքը լինի պաշտպան:

— Ապա գու ինձ ինչպես պիտի պաշտպանես, — հարցրի յես: — Դե, ա՞յ, ենտեղ կտեսնես, եղ արդեն քո գործը չի. — պատասխանեց Սիլվան՝ միայն թե գու համաձայնիր:

Յես համաձայնեցի:

### 19 ոգուստովի.

Խաղի ժամանակ ինձ ջարդեցին ու հիմա կաղում եմ: Բայց և այնպես գովրոց գնում եմ: Խոկ խփողը. Յուշկա Գրոմովն եր, վոր ըստ խաղի որենքի, խոկի իրավունք չուներ թռչել ինձ վրա: Յերբ վոտքիս ցավը կանցնի, յես նրան ցույց կտամ, թե ինչպես պիտք ե թռչել:

### 20 ոգուստովի.

Եսոր դպրոցում մի սոսկալի խալտառակություն պատահեց: Պետք ե ամեն բան կարգով գրել, վոր ինձ համար ել հեշտ լինի:

Պուշկինի մասին լսարանում սեմինար եր, Դեռ առաջուց Զին-Պալնան մեղ տվել եր զրելու «Յելվենի Ռնեգինի» մասին: Մենք ըստ լորս գրեցինք և արդին յերեք որ առաջ տվեցինք իրեն: (Խոկ սեմինարին մասնակցում են յերկու բարձր խմբերը՝ չորրորդը և հինգերորդը):

Մեկ ել եսոր հանկարծ, յերբ ըոլորս հավաքվել ելինք, ներթուավ Զին-Պալնան, խորհրդավոր տեսքով նստեց սեղանի մոտ, մես զրած տեսրակներն ու թերթիկները փոեց սեղանի վրա ու լուռ նար լեց մեզ:

Մենք ել նրան: Եգակիս անցավ յերեք րոպե, ու յես սկսեցի հա-

զալ, Վալողիկա Շմերցը փոթկացրեց: Են ժամանակ Զին-Պալնան հանկարծ ասաց.

— Ցիթե Ալեքսանդր Սերգեյիկիչ Պուշկինը կենդանի լիներ, առաջ հավանականաբար նա յերկրորդ անգամ կմեռներ, յիթե կարդար թեկուղ միան մի տասերորդ մասը այն անհավատալի անհեթեթության, վոր գուք խծրծել եք եսաեղ, Յես բառեր չեմ գտնում: Զեր սիրած լեզվով ասած՝ սատանան զիտե, թե ոս ինչ բան ե: Ասենք չե: Յես սիսալվում եմ, — սա սատանից ել շատ ավելի դենն ե:

Մենք սկզբում խաղաղվում-հանգստանուս երինք, բայց հետո սատանից գենը» լսելով, հոհուցինք: Իսկ Զին-Պալնան շարունակեց.

— Ճիշտ ե, բոլորն ել աչքի չեն ընկել: Կան համեմատաբար հաջող շարադրություններ, բայց գրանք, ինչպես և ամեն մի բացառություն, ընդգծում են միայն ընդհանուր կանոնը: Այ, որինակ, անհեթեթության մի նմուշ...

Նա մի տեսքը բաց արավ և սկսեց բարձրաձայն կարդալ.

«Պուշկինը մարքսիստ եր և վիպասան: Այդ գեղքի առթիվ նա Յևգենիի Ռնեգին» վերնագրով մի ամբողջ վեպ գրեց: Ենտեղ նա ձգտել ե սավեր գցել գասակարգերի են պայքարի վրա, վոր կար են ժամանակ, Բայց համենայն դեպս Պուշկինը բուրժույթ եր, ուստի և պրոլետարիատի մասին վոչինչ չի գրել, այլ միայն՝ բուրժուազիալի... Հետո նա ամուսնացավ և առաջին աստիճանի համար մի հեքիաթ գրեց «Սալլման թագավորի և հրա Բալդի ծառալի մասին հեքիաթ» անունով: Հետո նրան սպանեցին ու թաղեցին, բայց «Յեվգենիի Ռնեգինը» կարելի է կարդալ և այժմ....»:

Մենք արդեն վաղուց խրխնջում երինք խելազարների նման, իսկ Զին-Պալնան նալում ե մեզ առանց ծիծաղելու և հետո ասում ե.

— Ում վրա յեք ծիծաղում: Զեկ վրա յեք ծիծաղում: Սա Գողովի գրվածներից ե, վոր յերեի դուք նույնչափ ուշադիր եք կարդացել, վորչափ և Պուշկինինը:

— Միթե բոլորինն եղանակ ե, Զինալիդա Պալլովսա, — տեղից հարցը եց Սիլվան:

— Յես արդեն ասացի, վոր բացառություններ կան, — պատասխանեց Զին-Պալնան, — բայց դա ընդհանուր պատկերը չի փոխում: Այ, կրկին «Ռնեգինի» մի մերկ վերլուծություն, վոր արժե սկզբից մինչև վերջը կարդալ:

Եստեղ նա ինչ-վոր թերթիկ վերցրեց և կարդաց.

«Յեվգենին մի տնտեսապես քայլացլած աղայի վորդի յեր. նա գնաց իր անկյունը և տեսավ, վոր հորեղբայրը պառկած ե սեղանի վրա: Նա սկսեց գրավվել գլուղով, բայց շուտով թողեց իր գրավելը

և հիասթափվեց։ Տատյանան կալվածատիրուհի էր։ Նա վեպեր եր կարդում, աղախինսներին ծեծում եր և կորսետ եր հազնում։ Նա հավշտակվեց Ոնեգինով և իր զայտին հրամայեց նրան նամակ գրեր Դալակը նամակն իր թոռին տվեց, ուղարկեց հարևանի մոտ։ Տատյանան շատ հափշտակվեց Ոնեգինով, նա միշտ նրա գլխավերեն եր։ Նրանք գնում երին աղքատների մոտ և տանջվում եին վշտով։ Բայց Տատյանային պաշտպան կանգնեց բանաստ։ Լենսկին, Լենսկին ամեն բանում հակառակ եր Յեղիկենին, նրանք ամեն որ կովում եյին։ Մի անգամ Ոնեգինը ատըր-ճանակով թրխկացրեց նրան և տեղուատեղն սպանեց։ Դրանից հետո Տատյանան ամուսնացավ իր բարեկամ գեներալի հետ և ապրում եր նույնիսկ շատ հարուստ՝ ամեն որ խնջույքներով եր զրազվում եարքունիքում ել ընդունված եր։ Նրա մարդը հաշմանդամ եր։ Յեղիկենին սորից տեսավ Տատյանային և շատ հափշտակվեց, նա նրա վերաբկուն հազցըրեց, հանեց։ Յեղիկենին յեկավ նրա մոտ և իր զգացմունքներն արտահարուեց, բայց Տատյանան ասաց, վոր գեներալի հետ ամուսնացած և և նրան հավատարիմ կլինի։ Սրանով Յեղիկենին իր բացատրությունը պրծավ։

— Դա Ստասկո Վելոպուսկայան և գրել։ Հանկարծ տեղից աղաղեց Յուշկա Գրոմովը, — ինքս տեսա, վոր նա եղ թերթիկի վրա գրեց։

Հենց վոր նա ևս ճշաց, հոհոցը դադարեց։ Ստասկո Վելոպուսկայան վեր թուավ, վոտքը թափ տվեց, ամբողջովին կարմրեց, ուղում եր մի բան ասել բայց աչքերից արցունքը թափվեց, ու նա գուրս թուավ լսարանից։ Բայց բանը զրանով չվերջացավ։

— Դե, այ տեսնում եք, Գրոմով, թե վորտեղ և հասցնում անգուստ լեղուն, — ասաց Զին-Պալնան, լսելով։ — Զեզ սկ խնդրեց ամբողջ լսարանովը մեկ գոռալ Դրանով դուք Վելոպուսկայի զրազիտությունը չեք բարձրացնի ու չեք ստիպի, վոր նա ավելի լավ սովորի։ Միայն գուցե են հետեանքը կունենա, վոր Վելոպուսկայան ել զպրոց չի գալ։

Բայց եստեղ ինձ դարձացրեց Սիլվան։ Նա հանկարծ վեր թուավ և ասաց.

— Վաչ, Զինայիդա Պավլովսա, եղպեսի բաների մասին հրապարակուն սկսած և խորհրդակցել դատել։ Յեթե եղպիսի փաստերի մոտից անտարեր կերպով անցնենք, ապա հենց իերկորդ աստիճանի դպրոցն ինքն ել պետք չեմ...

Եստեղ աղջիկներն ամեն կողմից հարձակվեցին Սիլվալի վրա, բայց Սիլվան շարունակեց։

— Վոր ես բանն աղջիկներին դուք չի գալիս, միենույն և, ինձ չի լուցնի։ Ու միանգամայն հասկանալի յե, թե ինչու չի դուք գալիս։

Ով վոր թատրոնական ստուդիայով ավելի յե հետաքրքրվում, թող հնաեղ գնա: Սովորել ցանկացող շատերը կան, վորոնք դպրոցից դուրս են մնացել: Տեղ պետք է տալ նրանց:

Եստեղ ազջիկների մեծամասնությունը վեր թռավ, ու սկսեցին ինչ-վոր ճղճղալ, բայց ենպես աղմուկ եր, վոր չեր հասկացվում, թե ինչ են ասում:

Միքանիսը փայլատակող աչքերով հարձակվեցին Սիլվայի վրա, ենպես վոր մեկին նույնիսկ բռունցք ցույց տվի մեջքիս յետերը: Բայց ազջիկները չելին հանգստանում: Են ժամանակ Զին-Պալ-Նան սաստիկ ամուր թխկացրեց բոռնցքով սեղանին և վոաքը գհատին խփեց.

— Դա դարեցէք ճշալ: Հիշեցեք, վոր սա դպրոց եւ—Ռւ հուզմունքից նույնիսկ ամրոջովին կարմրեց: Իսկ յես նկատեցի, վոր նրան դուր է դալիս եսպիսի աղմուկը, թեև ենպես և ցույց տալիս, վոր իր չարանում եւ:

Յերբ բոլորը քիչ-շատ լռեցին, Զին-Պալնան առաջարկեց նախադահան ընտրել և վիճաբանություն սկսել են մասին, թե Գրումովս իրավունք ուներ, թե չե, վոր Ստասիկա Վելոպոլսկայի անունը տվեց:

— Բայց վորովհետեւ խոսքն անձնավորությունների մասին եւ, — ասաց Զին-Պալնան, — ապա յես կառաջարկելի հարցը միքիչ ավելի լայն դնել այն եւ՝ յերկրորդ աստիճանի: Հինգերորդ խմբում արդյոք ներելիք յե ենպիսի անգրագիտություն, վոր յես պարզել եմ «Յեզիրենի» Ռուսիան շարադրություն տալով:

Սիրովծկա Բլինովը, վոր մինչ այդ լռել եր, տեղիցն ասաց.

— Մենք եստեղ սովորելու յենք յեկել, և վոչ թե վիճաբանություն սարքելու:

— Եւ, Բլինով, — պատասխանեց Զին-Պալնան, — խոսսովանում եմ, վոր դուք ինձ զարմացնում եք: Դուք վոր ենքան կողմանակից եք ամեն մի հարցի բազմակողմանի քննության, և դուք դեմ եք վիճաբանության: Ասենք, յեթե մեծամասնությունը նույն կարծիքին եւ, յես հրաժարվում եմ իմ առաջարկությունից և պատրսում եմ յերկրորդ անգամ պատմել ձեզ Պուշկինի և նրա գրվածքների մասին: Յեթե դուք կրարենանեք հիշել, անցյալ տարի Պուշկինին նվիրվեց յերկու ամիս: Վելոպոլսկայի հարցն ստիպված ենք դնել դպրոցական խորհրդի և գըպ-րացի ընդհանուր ժողովի քննության:

— Վաչ, վհչ—ասում ե Սիլվան, — Բլինովի ասածը դեռ պարտավորեցուցիչ չե մեզ բոլորիս համար: Որինակ՝ յես կարծում եմ, վոր Վելոպոլսկայի հարցը պետք է քննության առնել անհապաղ և նույնիսկ պետք ե բանաձև հանել՝ ցույց տալով են միջոցները, վոր պետք ե ձեռք առնի դպրոցը:

Սկսեցին քվեարկել, և դուրս յեկավ, վոր կւսը թեր ե, իսկ մէռու կեսը՝ գեմ Են ժամանակ Սերլուֆկա Բլինովը վեր կացավ և ասում ե.

— Յես գնում եմ, Եստեղ ենպիսի մի միջոց գործադրվեց, վոր սովորաբար գործադրում են մեր դպրոցական աշխատավորները, Հենց քվեարկությունից առաջ Զինայիդա Պավլովսան սպառնաց զպրոցական խորհրդի և ընդհանուր ժողովի անունով Բնական ե, վոր նրա առաջարկությունը վորոց քանակով ձայն ստացավ, և չնայելով ժողովի ներքին դիմադրությանը, վիճաբանությունը, համենայն դեպս, տեղի կունենա: Եղաղիսի սպառնալիքներին կարելի յե ասել բռնություն, բարոյական ճնշում, իսկ են վիճաբանությանը, վոր բռնությամբ և սարքած, յես չեմ ուզում մասնակցել:

— Վոր լավ տրամաբանություն ունես, Բլինով, խոսք չի կարող լինել — պատտասխանում և Զին-Պալնան, — բայց համաձայնեցեք ինքներդ, վոր ենպիսի յերկույթներ, ինչպիսիք են Վելոպոլսկայի շարադրությունը և Գրոմովի վարմունքը, չեն կարող անհետեանք թողնել վոչ աշակերտները և վոչ դպրոցական աշխատավորները: Ի՞նչ կհրամայելիք անել, Յես մի միջոց եմ առաջարկում, վոր հետագալում ուղեցուց կարող ե լինել մի միջոց, վոր, թվում ե թե, խելացի յե և հավաքվածների մի մասի համար ընդունելի, — զուք ասում եք՝ յիկել ենք սովորելու և վոչ թե վիճաբանություն սարքելու Դպրոցական խորհրդին և ընդհանուր ժողովին դիմելը դուք բռնություն եք անվանում: Կարելի յե կարծել, վոր դուք, Բլինով, ընդհանրապես ուզում եք հարցը քնացնել, և ինչ-վոր պատճառով չեք ուզում, վոր նա լուծումն ստանա:

— Դե թաղ գուրս գնա, — Եստեղ աղաղակեցի յես տեղիցս: — Եսպիսի: Վեճեր լսելն ամենաձանձրակի բանն ե, և վոչինչ չի կարող ատալ մեղ: Կամ վիճաբանություն սկսեցեք, կամ դասերը, ես անհերթիթությանը վերջ տվեք:

— Իհարկե, ճիշտ ե, — աղաղակեցին տղաները, — կամ մեկը, կամ մյուսը:

Աղջիկներից միքանիսը գնացին Բլինովի յետեկից, բայց մեծամասնությունը մեաց և վորոշեցին վիճաբանություն բանալ: Ինձ ընտրեցին նախագահա:

Զինայիդա Պավլովսան գնաց, նստեց աշակերտական նստարանին, իսկ յես նրա տեղը: Առաջինը խոսք վերցրեց Յուշկա Գրոմովը:

— Յես իմ արածի մեջ վոչ սի հանցանք չեմ տեսնում, — ասաց նա: — Ե, Եղաղիդ ինչ կա, վոր յես ասացի, թե Ստասկան ե դրել: Թողնա եղաղիսի շարադրություն չգրեր:

— Ե, դու յել մի գոռա, յերբ քեզ չեն հարցնում: Հստ ելության չե: Նստեցեք, Գրոմով, ձեզ կկանչին, — ասացի յես:

Եստեղ Յուշկան սկսեց զայրանալ, թե յես լավ չեմ նախագահում, վոր յես իրավունք չունեմ նկատողություն անելու, բայց նրա վրա դուացին, ու նա նստեց, Հետո խոսք վերցրեց Սիլվան:

— Յես զգում եմ, --ասաց նա, . վոր իմ յելուկթով աղջիկների մի մասին իմ զեմ գրգռեցի, բայց առանց եղ չեր կարելի, Յես նրանց բարիքն եմ ուզում և վոչ չարիքը: Միքանի ամսից հետո հինգերորդ խումբը պետք է ԲՈՒՀ-երը մանի, ընդհանրապես իսկական կյանք մանի: Այս բնչ կտանեն նրանք իրենց հետ-ենտեղ. ԲՈՒՀ-երը: Զե՞ վոր այն, ինչ վոր եսոր մեզ համար կարդաց Զինալիդա Պավլովնան, նույնիսկ անկուտուրականություն անվանել չի կարելի, դա ուղղակի վայրենի աղիտություն եւ: Ամենավատն այն ե, վոր եղ նոուն Վելոպոլսկայան կարեռը չի համարել՝ խորհրդակցել դպրոցական աշխատավորներից վորեն մեկի հետ, կամ աշակերտներից մեկի հետ, վոր առարկան իրենից ավելի լավ գիտե: Նա, ինչպես փոքրերն են ասում, «առ բախտ» վերցրել ու գրել ե, գուցեց թե անցնի: Իմ կոնկրետ առաջարկությունն ե, --թող մեր հինգերորդ խումբը, քանի դեռ չի ավարտել, ուշադրություն դարձնի և իր անզրագիտությունը վերացնի:

Հետո խոսք խնդրեց Վալողկա Շմերցը: Հենց վոր նոր վեր կացավ, յես իսկույն զգացի, վոր նա մի սրիկալություն պիտի անի:

— Զինալիդա Պավլովնան ասաց, — ասում ե Վալողկան, — վոր Պուշկինը իրերորդ անգամ կմեռներ, յեթե կարդար մեր շարադրությունները: Իսկ յես կարծում եմ, — ե, մեռնում եր, թող մեռներ, քանի վոր նա բուրժուական ծագում ուներ, իսկ մենք, ինչպես յերգի մեջ կա, «բանվորների և գյուղացիների նոր գլարդիան հնք»...

— Դանցութին չի վերաբերում, ընկեր Շմերց, — ասացի յես: — Նեղություն կրեցեք թեմայից չեռանալ և անհամություն չսարքել: Հակառակ դեպքում յես ձեղ կզրկեմ ձայնից:

— Լավ, յես ըստ ելության կխոսնեմ, — ասում ե Վալողկան: — Այսպես. — իմ կարծիքով Գրոմովին իրավունք ուներ «Ռնեգինի» մասին գրած շարադրության հեղինակի անունը տալ, վորովհետև, յեթե Վելոպոլսկայան հինգերորդ խմբում յերկար զրուցում ե դպաշիների հետ, և նույնիսկ առանձին, ապա դա դեռ չի նշանակում, թե նա շատ կը թված ե...

— Հետորդին ձայնից զրկում եմ, — ասացի յես: — Եղ եր պակաս, վոր դու, Վալողկա, սկսելիք նստեղ զանազան բամբասանքներ սարքել:

Շմերցը մի տեսակ տարօրինակ կերպով հռհռաց ու նստեց տեղը: Իսկ յես նրա իստեկից ասում եմ.

— Իսկ յեթե դուք, Շմերց, — ընդհանրապես ձեզ լավ չեք պահիւ ապա կիսնգրեմ, վոր թողնեք ժողովը:

— Եղ շատ չես քաղաքավարի, Բյարցե, — պատասխանեց Վալողկա Շմերցը:

— Յերեի ուզում ես դպրոցական խորհրդի մեջ ընկնել:

Յես չարացաւ:

— Նախագահի անձի դեմ ակնարկներ անելու համար, խընդրում եմ ձեզ, Շմերց, թողնել ժողովը:

— Յես ինչ վոր պոգուրուօք չեմ, վոր հենց ենպես, գնամ ժողովից:

— Եդ թնչ «պոգուրուշա» յեւ Գնա, հեռացիր:

— Դե լավ, յես կգնամ: Իսկ պոգուրուշա—դա Պուշկինի նամակներից ե. Թլաբցկ, խորհուրդ եմ տալիս քեզ կարդալ, վերացրուքո անգրագիտությունը:

Ու գնաց: Իմ կարծիքով նա եդ բոլորը դիտմամբ սարքեց, վորպեսզի բոլորի առջև ապացուցի, վոր յես չեմ կարդացել Պուշկինի նամակները:

Դրանից հետո խոսք առավ մեծ աղջիկներից մեկն ու սկսեց խոսել Սիլվայի դեմ: Բացի զրանից, ասաց նա անզրագետ լինելու համար վոչ թե աշակերտաներն են մեզավոր, այլ գաղաշխները (վորին մասսամբ համաձայն եմ յես), և վոր եղափիսի անզրագետներին խմբեցնեումբ չպետք եր վոխազրիլ: Նա բավական հանգիստ եր խոսում և հավանականաբար վիճարանությունն եղափես ել կվերջանար առանց վորեն միջադեպի, բայց հստեղ պատահեց հետևելուը:

Արագ քայլերով լսարան մտավ Նիկպետովը, նալից շուրջը, տեսավ, վոր Զին-Պալնան նստած և աշակերտական նստարանին, կողքին նստեց և սկսեց շնչալով տաք-տաք խոսել նրա հետ: Զին-Պալնան բացասաբար շարժում եր գլուխը և նույնպես տաք-տաք պատասխանում եր նրան: Վերջիներջո բոլորը լոեցին և սկսեցին հարցական ձեռվ նայել նրանց յերկուսին:

Ու հանկարծ նիկպետովը ձախնը բարձրացնում ե ու վրդովված ասում:

— Բայց միթե զա մանկավարժական միջոց ե.—բոլորի ներկալությունը մի մեծահասակ աղջկա անպատճել և լացի ու հիստերիկալի հասցնել:

Զին-Պալնան հանգիստ ձախնով, բայց նույնպես բարձրաձայն պատասխանում ե.

— Եստեղ եդ մասին խոսել չարժե, Նիկոլայ Պետրովիչ, ուսուցչանոցում կխոսենք:

— Վայ, զա միանգամայն սխալ ե,—ասում ե Նիկպետովը և ուզում եր շարունակել, բայց հստեղ յես սիրտ արի ու ասացի.

— Նիկոլայ Պետրովիչ, թեև յես ձեզ շատ եմ հարգում, բայց յես ձեղ ձայն չեմ տվել, ուստի յեթք ուզում եք մասնավոր խոսակցությամբ զբաղվել, ապա գնացեք միջանցքը: Եստեղ վիճարանություն ե:

— ԱՌա, հստեղ վիճարանություն ե, ներեցեք, յես չգիտեյի — պատասխանեց Նիկպետոնդը և դուրս լեկավ լսարանից, Զին-Պալնան ել նրա յատեկից: Հենց վոր նրանք դուրս գնացին, բոլորը տեղներիցը դուրս թափեցին, ու լիս ինչքան ել բռունցքով ծուծեցի սեղանին, չը-կարողաց կարգը վերականգնել: Աղջիկները մի անկունում խմբվեցին և սկսեցին փափսալ, իսկ Սիլվան մոռեցավ ինձ և ասում ե.

— Իմ կարծիքով մանք արագ քայլերով դուռմ ենք գեպի մեշ-չանականությունն ի՞նչպես պետք ե ազատվել սրանից:

— Իսկ ի՞նչն ես դու մեշչանականություն համարում:

— Այ-այ-միթի սա վիճարանություն ե: Ու բացի դրանից, հենց նոր լիս ինքս ինձ բոնեցի-մի զզվելի մատածողությամբ: Յերբ Նիկպետոնդը ներս մտավ, լիս համարյա հավատացած ելի, վոր նա ներս կմտնի...

— Յես ել:

— Դե ահսու Հենց սա մեշչանականություն ե: Գուանք հստեղից:

Դպաշխների սենյակում տաք վեճ կար. բոլոր դպաշխները հա-վաքված եյին հնտեղ, ու Նիկպետոնդի ձայնն ամենից բարձր եր լը-վում: Փոքրերից իմացա, վոր Ստասկա Վելոպոլսկայան հիստերիկա յի ընկել և տուն ե գնացել:

Աշակերտները մի տեսակ տարորինակ սոկվեցին: Յես վորոշեցի, վոր ամենալավա են ե, վոր գնամ ֆուտբոլի հրապարակը: Եղանակ ել արեցի:

## 24 ողուսուի.

Դպրոցում շարունակ համառ լուրեր են պտտվում, վոր դպաշխ-ների միջև կատարյալ անջատում կա, և վոր Նիկպետոնդն ուղղում ե թողնել դպրոցը: Յեվ իբր թե բոլոր մյուս դպաշխները Զին-Պալնալի կողմն են, իսկ Նիկպետոնդը մենակ ե: Աշակերտներից շտակը Նիկ-պետոնդի կողմն են, իսկ աղջիկները — համարյա բոլորը:

Ամեն բան մի տեսակ տարորինակ խառնվել ե. որինակ՝ յես հի-մա չգիտեմ, թե ինչ անեմ և ում կողմը լինեմ: Իսկ Սիլվան ամբող-ջապես Զին-Պալնալի կողմն ե, վորովհետե, նրա կարծիքով, Նիկպետոնդը ինչպիսի դպացումներ ել տածելիս լիներ գեպի Ստասկան, պետք ե արդարությունը պաշտպաներ ու պարզապես խոստվաներ, վոր Ստաս-կան իրավունք չուներ եղանակի շարադրություն գրելու, և վոր ընդ-հանրապես հինգերորդ խումբը Ստասկայի տեղը չի:

Յես դրա հետ համաձայն եմ, բայց մյուս կողմից յես նախ շատ եմ սիրում Նիկպետոնդին, և յերկրորդ՝ սկզբունքով յես միշտ փոքրամաս-նության կողմանակից եմ: Իսկ եստեղ, թեև աշակերտության մեծամաս-նությունը Նիկպետոնդի կողմն ե, բայց դպաշխների մեծամասնությու-

Նը դեմ ե և, իհարկե, նրանք կհաղթեն, վորովհետև լեռը գպաշխները մհծամասնություն են կազմում, միշտ նրանք են հաղթում:

Հարցն ինձ համար հետեւյալին ե հանգում, Սիլվան թե նիկալե-  
տոժը Միրվան ասում ե, վոր յիթե յես նիկալետոժի կողմը պահեմ,  
ապա դա կնշանակի, վոր յես անսկրբունք մարդ եմ:

Ես հարցը միանգամից վորոշել չե կարելի—պետք ե մտածել:  
Աւատի յես վորոշեցի գեռ վոչ մի կողմին չմիանամ, մինչեւ վոր չզբա-  
նեմ եղ հարցի խկական պատասխանը:

## 26 ոզուսուի.

Քանի վոր նոր ուսումնական տարին շուտով սկսվելու լե, յես ու  
Միրվան գնացինք բջիջի քարտուղար Խվանովի մոտ, վորագեղի իմա-  
նանք, թե մեզ յերբ պետք ե թեկնածությունից իսկական կոմյերիտ  
փոխազրեն Խվանովի ասաց, վոր բջիջի ժողովում կդնի, կարելի չե, և  
գուցե ամենալին հավանականությամբ մեզ յերկուսիս ել հաստատեն,  
բայց դա քիչ ե: Եսունզ նա ավելացրեց, վոր, իր կարծիքով, մենք  
յերկուսս ել, յիթե ուղենանք, կարող ենք ակարիլիսաներ լինել վորով-  
հետեւ ավյալներ կան: Դա ինձ շատ դուր յեկավ: Հետո Խվանովի ասաց,  
վոր բանը ցուցանակը չե, բանն են չե, վոր կոմյերիտներ Կոչվենք,  
այլ վոր իսկապես կոմյերիտներ լինենք: Իսկ դրա համար պետք ե  
դպրոցում աշխատանքը կարենը բարձրության հասցնել: Ենս ասացի,  
վոր իմ կարծիքով աշխատանքը պետք ե բարձրացնի ըն չի քարտու-  
ղար Միրյոժկա Բլինովը.

— Ա՛յ, ըրա հետ արդեն համաձայն չեմ,— ասաց Խվանովը: — Նախ  
ձեր Բլինովը կարգին ախմախն ե: Իսկ յերկրորդ, յեթե ըոլոր կոմյե-  
րիտներն ամեն բան քարտուղարի վրա ցցեն, ապա ամենաշնորհքով  
քարտուղարն ել աշխատելուց կորաքի, այնինչ մուսաները պարապ  
կթափառեն: Բանական բան չե՝ ամեն ինչ քարտուղարի վրա ցցել:  
Մանավանդ վոր պետությունը ձեզ հնարավորություն ե տալիս քա-  
ղաքակիրթ մարդկանց շարքն անցնել, և զուք պետք ե արգարաց-  
նեք եղ վստահությունը հենց հիմա, և պետք ե ցույց տավ վոր  
դուք առաջապահ գնդի մեջ եք: Իսկ դրա համար անհրաժեշտ ե,  
վոր ինքներդ աշխատեք ձեր ըոլոր ուժերով և քարտուղարի վրա  
չցցեք:

— Ա՛յ, ընկեր Խվանով, յես ուղում եյի հարցնել: — ասաց Սիլ-  
վան: — Դուք նոր հիշեցիք քաղաքակիրթ մարդկանց, և վոր պետու-  
թյունը մեզ հնարավորություն ե տալիս նրանց շարքն անցնել: Ա՛յ  
հարցն ինչն ե: Մեր ավելի զարգացած աղջկներն ուղում են, դպրոցն  
ավարտելուց հետո, գործարան գտն: Գուցե թե ավելի լավ կլիներ, յի-  
թե նրանք, առանց ավարտելու, գային գործարան:

— Իսկ ինչի՞ համար են գործարան գալիս, — հարցը եց Իվանովը: — Գործարանում ինչ պետք է անեն նրանք:

— Ինարկե աշխատեն, — պատասխանեց Սիլվան: — Յեվ ընդհանրապես նրա համար, վոր ձուլվեն դասակարգի հետ:

— Ինչպ. ե՞ս. — զարմանալով հարցը Իվանովը:

— Զուլվել դասակարգի հետ: Պրոլետարուհիներ դառնալ:

— Բայց դա ախար շատ զժվար և՝ լերկորդ աստիճանից հետո գործարանում աշխատել: Ու բացի դրանից, գործարանում փոքր հասկից են ոկտում:

— Դժվարությունները կարելի յե հաղթահարել:

— Ի՞նչ իսոսք, կարելի յե Յեվ, ինարկե, գուցե և ոգտակար կլիներ, վոր ձեր որիորդները մեջքները ծռելին, — մտածկուա ասաց Իվանովը: — Բայց ախար հսպես բան կա: Բանական կլինի այդ: Ալսինքն են մտքով, թե արգուք դա յեռանդի խելացի ծախսումն կլինի: Ախար հսպես թե ենալիս ձեզ բոլորիդ վրա ժողովրդական ահագին փողեր և զրած: Ու եդ փողերը ծախսած ե, վորպիսզի գուշ կարողանաք ձեր մասնագիտությամբ ոգուտ բերել: Իսկ գուշ հանկարծ ձեր եդ բոլոր ընող կես ճանապարհին թողնում եք և սկսում եք գործարանային բանվորուհի դառնալ: Կնշանակի ձեզ վրա կրկին մի հավելվալ ավելորդ յեռանդ պետք ե մսխի: — դա գործարանում ձեզ վարժեցնելու համար: Իսկ պետությունն ավելորդ յեռանդ չունի: Բացի դրանից մենք բազմաթիվ, հաճախ վորակյալ գործազուրկները ունենք: Ու մենք փոխանակ գործազուրկներին աշխատանքով բավարս բելու, պետք և ժամանակակից յեռանդ գործադրենք ձեզ նուրից սովորեցնելու, սատանի բաժին դարձնելով են բոլորը, ինչ վոր առաջ եր ծախսած: Վաչ, ընկերներ: Դա բանի նման չե: Մեզ բժիշկներ, ուսուցիչներ, ճարտարապետներ են հարկավոր, այլի միջին վորակի տեխնիկներ: Մենք ել վճրտեղից կստանանք եդ մարդկանց, յեթե վոչ յերկրորդ աստիճանից կամ լոթնամներից: Դրա համար ել դործարան մտնելն առայժմ պետք ե թողնել:

— Կնշանակի մեր բոլորի առջև փակ են գործարանի գոները, — ճնշված ձայնով հարցը եց Սիլվան:

— Փակը փակ չեն, — պատասխանեց Իվանովը: — Շատ վոր պնդեք, ինարկե, կարելի յե և ընդունել Յեթե մերը չե, ապա ուրիշը: Բայց գուշ հարցը ձեր առջև վորոշ պիտի դնեք: — Արդի՞ք դա խելացի յե: Զե՞ վոր գուշ պիտակից մարդիկ եք և վոչ չոլից բռնած: Ու քանի վոր գուշ գիտակից եք և պատկերացնում եք խորհրդային պետության դժվար գրությունը, գուշ պետք ե վոչ թե ավելացնեք դժվարությունները, այլ լուծարքի յենթարկեք:

Են ժամանակ յիս հարցը, թե Իվանովը ինչպես և ողատկերաց-

Նում մեր աշխատանքը դպրոցում, ու մենք ինչ պետք ե անենք, վոր աշխատանքն իր բարձրության վրա դնենք:

— Դպրոցում գուք վոչ մի աշխատանք չեք տարել — պատասխանեցի իվանովը, ու չես սաստիկ վիրավորվեցի: Գոնե արդունքները չեն յերեսում: Իսկ աշխատանքը լավ գնելու համար պետք ե շատախոսությանը վերջ տալ և դործի կպչել:

Են ճամանակ յս հարցը, թե, որինակ յսու Սիլվան ինչ կառող եյինք անել:

— Իսկ ձեր պիսներները կազմակերպված են, — հարցը իվանովը:

— Այսինքն, թնչպես թե կազմակերպված են: Նրանք հանդիսավոր յերգում են տալիս, հետո քալում են, վզկապներ են կըում, հանգիւներին մասնակցում են, հետո....

— Այ, հենց եղ ե, վոր վզկապ են կըում:

Այժմ գպրցցներում ամեն տեղ պիսներական ֆորպոստներ են կազմակերպում այն տղաներից, վորոնք ծանրաբեռնված չեն: Ֆորպոստները գպրցցներին պետք ե մասնակից դարձնեն յերկրի հասարակական-քաղաքական կյանքին, կանոնավորին ինքնավարությունը, ուսուցիչներին ոգնեն, նույնիսկ մինչև անգամ ուսումնական դործի մեջ, այլև քաղաքականապես, Փիզիկապես և հակակրոնական վողով դաստիարակեն յերեխաներին: Այ, վորք ել ձեռնարկեցեք ձեզ մոտ եղախիք փորպոսա կազմակերպել:

Դրանից հետո մենք գնացինք:

## 27 ոգոստով.

Յեղավ իմ գատը — Պելկալի գործով:

Ամեն ինչ շատ հանդիսավոր եր: Դատարանի նախագահ ընտըրվեց Սերյոժկա Բլինովը, թեև նա չեմուչում արավ, բայց վիրշիվերջորավական ակամա հանձն առավ: Մեղաքը ողները յերկու հոգի ելին՝ Ալմակիշը և Նինկա Թրաղկինան: Պաշտպանները՝ նույնպես յերկուսն ելին՝ Նիկալետոսն ու Սիլվան:

Ինձ համար առանձին նստարան գրեցին, նույնպես և Պելկալի համար: Հետո տասն և յերկու ատենակալներ ընտըրեցին — վեց տղա, վեց աղջիկ: Յերբ յես տեսա, վոր ատենակալներ ընտըրվեցին Վալորդկա Շմերցը, Յուշկա Գրոմովը ու նրանց բարեկամներից ելի միքանի հոգի, յես վորոշեցի, վոր բանս բուրդ եւ Դատը բաց արավ Սերյոժկա Բլինովը:

Նա ասաց.

— Լսվում ե Կոստյա Ռյաբցեի մեղաղբական գործն այն մասին, վոր նա կազմակերպել ե գպրցում միանդամալն անթույլատրելի մի

իրարանցում — տուժող Յելենա Որլովալի նկատմամբ, Կոստյա Բյարցև,  
դու ընդունած ես քո հանցանքը:

— Ի՞նչն ե մեղքս, — հարցրի յես. — վոր աղմուկ եմ հանել՝ խոստո-  
վանում եմ, բայց հանցանք չեմ տեսնում, — բոլորն ել սղմում ելին:

— Ո՞վքեր բոլորը:

— Բոլոր տղաները:

— Իսկ դու առաջնորդը կամ նախաձեռնողն ելիր:

— Եղիսի բան չկա:

— Ապա, քո կարծիքով, մվ եր նախաձեռնողը:

— Վոչվոք: Պարզապես սղմում ելինք: Դա եղակես խաղ ե:

— Բայց ախար խսդի ժամանակ առաջնորդ ելինում. որինակ՝ փուտրովի ժամանակ հրամանատար:

— Ֆուտրով կաղմակերպված խաղ ե, իսկ սա անկաղմակերպ:

— Դե լավ! Առայժմ բավական եւ Լինա Որլովա, դու քեզ տու-  
ժող ես համարում:

Պելկան լոռում ե:

— Դե, ի՞նչ ե, Որլովա, — պաշտոնական տոնով հարցնում ե Սե-  
րյոժկան: — Բոլորը քեզ են սպասում:

— Նա սղմում եր, — հաղիկ լսելի ձայնով շշումե Պ լիտան:

Բոլորն հնպես են հռնութւու: Սերյոժկան զանգահարում եւ:

— Հանդիսականներ, ձեզ վարելուչ պահեցնք, թ՛ չե ժողովի  
դահլիճը կմաքրեմ:

— Որլովա, դու քեզ տուժմած ես համարում:

— Ե՛, դե, եղիսի բան չկա: — գոռաց կոլկա Պալտուսովը հան-  
դիսականների միջից: — Նա պարզապես խոստվանում ե, վոր սըղ-  
մում եր:

— Պալտուսով, յեթե մեկ ել ճշաս, կհեռանաս ժողովի դահլի-  
ճից, չը՞, ի՞նչ ե, Որլովա, եդ բանը քեզ դժւր եր գալիս:

— Դուք չեր գալիս, — շշում ե Պելկան:

— Ապա ինչու դու չելիր դիմում հերթապահ դոկու... դպրոցա-  
կան աշխատավորին:

— Վախենում ելի:

— Ինչի՞ց ելիր վախենում:

— Համ, ինչի՞ց... — շշում ե Պելկան, — կջարդեն:

Նորից բոլորը հռնուցին: Սերյոժկան ասում ե.

— Եդ գատարկ բան ե, Որլովա: Դու մեր դպրոցում վժրտեղ ես  
տեսել, վոր տղաներն աղջիկներին ծեծեն:

— Շատ անգամ. — պատասխանում ե Պելկան:

— Թույլ տվեք մի հարց. — խառնվեց Զին-Պալնան հասարակու-  
թլունից: — Ասացեք տեսնեմ, Որլովա, իսկ ինչու եդ կոիմների մասին

տեղեկություն չի տրվում դպրոցական աշխատավորներին, և ինչպէս եղ մասին վոչվոք չգիտեն:

— Բայց ախար դա խաղ ե, —պատասխանում ե Պելկան, —ևնպես ել պատահում ե, վոր աղջկներն են ծեծում տղաներին:

— Դե, առայժմ բավական ե, Որլովա, ասոց Սերյոժկա Բլինովը. —Այժմ վկաները, Դատարանը միայն մի վկա յե կանչում —քաղաքացի Կառլովային, վորն եդ որը հերթապահ դաշ… դպրոցական աշխատավոր ե լեզել Յելենա Նիկիտիշնա, ինչ կարող եք ասել ես գործի մասին:

— Յես այն կարող եմ ասել, ասում ե Յելենիկիտկան, —վոր Բյարցեր, իրրե մի անբարույական տղա, անպայման են խմբի գլխավորն եր, վոր հարձակվել եր Որլովալի վրա: Են, ինչ վոր թե նա, թե Որլովան խաղ են անվանում, իսկի յել խաղ չե, այլ մի այլանդակություն: Դպրոցում դա անթույլատրելի լի: Յեթե դա Բյարցեր չլիներ, գեռ ելի կարելի լիր կարծել, վոր դա մանկական մի անմեղ չարաճիություն եւ Բայց Բյարցեր մասին ուրիշ տեղեկություններ կան:

— Ե՞ւ, ուրիշ տեղեկությունների մասին մենք չենք խոսի, —ասոց Սերյոժկան:

— Ելի թվ եւուում վկայող ցուցմունք տալ:

— Յես, —ասում ե Կոլկա Պալտուսովը:

— Հը, դու թնչ կարող ես ասել Դե շուտ արա, ասա: Եսաեղ հանկարծ Սիրվան՝

— Յես բողոքում եմ, վոր նախագահը վկաներ ե մեջ քաշում:

— Դե լավ, —պատասխանում ե Սերյոժկան, —բոլորին մեջ քաշելու կարիք չկա: Պալտուսով, ասա:

— Այ ինչ, —սկսեց Կոլկան. —Եդ բանին յես ել եմ մասնակցել ու չեմ հասկանում, ինչու միայն Բյարցերին են դատում: Սովորական ազմուկ եր. և յեթե պետք ե դատել, ապա պետք ե դատել ամրող դպրոցին և որական միքանի անգամ: Թող իրենք դպաշխները հիշեն՝ իրենք ել ազմուկ հանել են թե չե, յերը փոքր են լեղել, կամ թեկուզ հենց յերկրորդ աստիճանում:

— Դպրոցական աշխատավորներն՝ ասա, Պալտուսով, ուղղեց Սերյոժկան:

— Լով դպրոցական աշխատավորները, եդ միենուն եւ Գրականության մեջ ել կա, թե ինչպիս եյին ազմուկ անում: Միայն առաջնրանց մեծ իշխանություն եր տրված. ազմուկ անելու համար հին դպրոցում ուսուցիչները ծեծում ու ջարդում ելին աշակերտաներին, իսկ հիմա չի կարելի, նրանք ել դատ են հնարել…

— Դատը վոչվոք չի հնարել —խոսությամբ ընդհատեց Սերյոժ-

կան.—դատը խորհրդալին հասարակության կազմակերպված ձեերից մեկն եւ ԴՅ, բավական եւ Խոսքը տրվում եւ մեղադրողներին. Ալեքսանդր Մաքսիմովիչ, համեցեաք...

Ու հանկարծ Ալմակփիշն անսպասելի կերպով հայտարարում եւ  
— Եხս հրաժարվում եմ խոսելուց, վորովհետեւ գործն առանց են  
եւ պարզ եւ:

Բոլորը տարակուսանքով նայեցին նրան. Դրանից հետո հանդիս յեկավ Նինկա Ֆրագկինան՝ յերկրորդ մեղադրողը:

— Եხս—ասում եւ պահանջում եմ, վոր Կոստյա Շարցեին պատժեն վորքան կարելի յեւ խիստ. որինակ՝ դպրոցից դուրս անեն. Վորովհետեւ նա իր ձեռքերին շատ եւ ազատություն տալիս և չի կարող վորեւ աղջկա մոտով անցնել, առանց նրա մեջքին հասցնելու:

— Իսկ դու անցյալ շաբաթ իմ մազերը քաշեցիր,— ասում եմ յես:

— Մեղադրաւ, քեզ հետո խոսք կտանք, իսկ ալժմ լոիր.—սա Սերյոժկան առաց:

— Եხս մի անդամ, իսկ դու ինձ քանի-քանի անդամ. — ասում եւ Նինկան—Հետո նա յերեխ շարունակ սարքում եւ, վոր Լինս Որլովյին սղմենն. Նրանք բոլորն ասում են, վոր Լինսի ճղղալն իրենց դուր եւ գալիս լավ, իսկ յեթե նրանց զուր գա, թե յես ինչպես եմ գոռում, կամ յես չուստիկով ինչպես եմ նրանց յերեսին հասցնում, ուրեմն նըրանք ինձ ել պիտի սղմենն. Իսկ դա այլանդակություն կլինի, յեթե նրանք սկսեն բոլոր աղջիկներին սղմել Ուստի յես պահանջում եմ, վոր Շյարցեին կարգին պատժեն, ու յեթե դպրոցից չհեռացնեն, գոնե մաթեմատիկական հարցուր խնդիր տան և ստիպեն, վոր նա մի շաբթում վճռի:

— Ուսմոնքով չեն պատժում, — ասաց Սերյոժկան:

— Այժմ թող խոսեն պաշտպանները: Դու յես առաջինը, Դուքինինա:

— Կարող եմ և յես, — ասաց Սիլվան և վիր թռավ տեղիցը: Նայեցի նրան և շնանաշեցի. աչքերը վառվում եյին, մազերը զանգրացել և շաղ ելին յեկել:

— Ցեթե—ասում եւ—Շյարցեին հեռացնենք, ապա պետք եւ հեռացնել և մյուս բոլոր տղաներին. Թող մինակ աղջիկները մնան: Վորովհետեւ թե Ֆրագկինան, վոր մեղադրում եր Շյարցեին, թե մյուսները բոլորը շատ լավ են հասկանում, վոր միայն Շյարցեը չի մեղավոր, այլ բոլոր տղաները: Թի սիջանցքում, թե դահլիճում շարունակ անկարգություն եւ, ու չես կարող հասկանաւ, թե ով ում եւ ծեծում, կամ ով ում հետ եւ աղմէում, անկարգություն անում: Բայց եստեղ մենք դեմ կգնանք խորհրդալին գաղափարախոսությանը, վորը միատեղ սովորելը մտցրել եւ նրա համար, վոր ազատազրի կնոջը և սեռերի հա-

վասարություն մտցնի: Ի՞նարկե, կարող ե պատահել, վոր Ռյաբցիը ձեռքերն ավելի լե բանեցնում, քան մյուսները, բայց դրանից չի հետևում, վոր մենք պետք ե խախտենք հեղափոխության հաստատած կարգը և աղջիկներին և տղաներին ջոկենք: Ինչու վոչփոք ինձ չի մտահեռում վոչ սիրալիությամբ և վոչ ծեծ ու կովով: Վորովհիտե յես չեմ ուզում եղ բանը և յերեք թուրլ չեմ տալիս: Ենպես ել մյուսները, Փօխանակ Ռյաբցին դատապարտելու, յես առաջարկում եմ դատապարտել բոլոր աղջիկներին, վորոնք սիրում են անկարգություն, և առաջարկում եմ հեռացնել մյուսներին...

— Այժմ, Նիկոլայ Պետրովիչին, — ասաց Սերյոժկան:

— Ասենք Դուքինինալից հետո յես ել ասելու բան չունեմ, — ասաց Նիկակետոֆը, — բայց, համենայն դեպու, կարող եմ ավելացնել: Ամեն մարդու մեջ պայքարում են յերկու սիկզբն բարին և չարը: Մարդիկ ժամանակին մարմացրել են եղ և հակադրիլ. — աստված և ստանա, լույս և խավար և ալին: Կրականության մեջ ել կտ եդ բանը. կարելի լի որինակ բերել և Շեքսպիրից: Այժմ, իթե մենք ուզում ենք դատապարտել Ռյաբցի արարքը, վորը — յես համաձայն եմ Դուքինինալի հետ, մի առանձին բան չե, — սովորական զպրոցական անկարգություն եւ: Բայց նույնիսկ յենթադրենք, վոր Ռյաբցի մեջ մի չարաճճիություն կա, — վորը ժամանակի ընթացքում կցնդի ծխի սկսու: Իսկ մեղադրիլով նրան, դուք կհրեք նրան հակառակ կողմը: Իսկ չե՞ վոր, մեր կարծիքով, Ռյաբցի մեջ բարին ավելի լի, քան չարը...

Եսաեղ հանկարծ տեղիցը ցատկում ե Ալմակֆիշը: — Թուրլ տվեք մի խոսք, — ճշում ե նա: — Յես իբր մեղադրող ուզում եմ հակաճառիկ պաշտպանին: Եսաեղ Նիկոլայ Պետրովիչը խոսեց բարու և չարի մասին, և վոր Ռյաբցի մեջ բարին ավելի յե, քան չարը: Յես պնդում եմ և հաստատում, վոր Վորակապես Ռյաբցի արարքը բարու յեկարի են կողմեն ե, իսկ բանակապես նա հանդիսանում ե ժամանակաօքանի առաջարկությունը: Յես վերջացրի:

Եսպես, վոչփոք ել չհասկացավ, թի նա ինչ եր ուզում ասել:

— Զեր վերջին խոսքն ե, մեղադրությալ — ասաց Սերյոժկա Բլինովը:

— Յես ինձ չիմ արգարացնի, — ասացի յես: — Յես մեղադրու չեմ, ու բոլորն ել զիտեն եղ, ուստի յեթե յես սկսեմ արդարանալ, կնշանակի կպաշտպանիմ ես կատակերգությունը: Բայց մի, ինչ եմ ուզում ասել, Եսաեղ սկզբում Նիկոլայ Պետրովիչը, իսկ հետո Ալեքսանդր Մաքսիմովիչը, խոսում եյին բարու և չարի մասին: Քաղզագիտությունից յերեւում ե, վոր վոչ մի բարի ու չար գոյություն չունեն, այլ ամեն ինչ տնտեսական հարաբերությունից ե կախված: իսկ բարին ու չարը, դա — իդեալիզմն ե: Որինակ, յես կարծում եմ, վոր իմ մեջ

վոչ մի բարի ու չար բան չկա. լեռը լիս կուշտ եմ—բարի լեմ, իսկ յերբ քաղցած եմ են ժամանակ ավելի չար եմ, ու յեթե մեկը զահլես տանի, կարող եմ և դնաքել. Ահա բոլորը:

Ասենակալները գնացին խորհրդակցիլու ուղիղ հինգ րոպե: Յերբ նրանք դուրս յեկան, իմ սիրան ուղղակի կանգ առավ.—իսկ յեթե հանկարծ վճռած լինեն, վոր գալրոցից հեռացնեն: Բայց Վալորդկա Շմերցը կարգաց.

— . . . Բյարցկին նկատողություն անհել նրա վարքի համար, և սղմելը գաղարեցնել. իսկ Որլովալին և մյուս աղջիկներին նույնպես նկատողություն անել վորպեսզի թուլ չտան իրենց մոտենալ և սղմել:

Ամեն ինչ Սիլվակի ասածի համաձայն լիդավ:

## 28 ոգոստոսի.

Նոր պատի թերթ լուկս տեսավ, առանց համարի և ստորագրությունների «Նիկոլետոսին պաշտպանություն» վերնագրով:

Բանի վոր յես գեռ մինչև ալժմ չեմ վորոշել, թե վոր կողմին միանամ, ապա յես ալդ թերթին վոչ միայն չեմ մասնակցում, այլև խեկի չդիտեմ ել, թե ով ե հրատարակում: Սիլվան ել չգիտի: Եղանել մի շատ լավ, սրամիտ ու լերգիծական հողված կար—լեզվի քոսի և նրան բժշկելու մասինո եղ բոլորը շատ լավ, միանգամայն համաձայն եմ, բայց իմ ներքին պալքարն որորի վրա ավելի տանջալից ե դառնում: Վար կողմն անցնեմ՝ Նիկոլետոսի, թե հակառակ: Լուրեր են պըտըտում, վոր Նիկոլետոսը վերջնականապես և առանց այլեալլության կզնա: Առանց նրան դպրոցը կդատարկվի: Յես իմ տարակուսանքների մասին ասացի Սիլվակին: Նա ասում ե, վոր իր համար ել ծանր ե, բայց ամենից առաջ—սկզբունքը: Բացի դրանից Սիլվան ասաց, վոր արդեն վազուց հայտնի է, վոր պատմության մեջ անհատը վոչ մի գեր չի խաղում: Իսկ դա ճիշտ ե...

## 29 ոգոստոսի.

Վերջապես յես վորոշեցի և ուղղակի դիմեցի Նիկոլետոսին:

— Նիկոլայ Պետրովիչ—հարցը, — լեռը անհատականն ու հասարակականն ընդհարվում են, եղ դեպքում վորին պետք և նախապատվություն տալ:

— Հասարակականին, — պատասխանեց Նիկոլետոսը:

— Եղան ուստի... յես չեմ կարող ձեր կողմնակիցների մեջ լինել: Թեև դա ինձ համար շատ ծանր ե, բայց ստիպված եմ հակառակ կողմը լինել:

— Վոչ մի կողմ ել պիտք չե, — ասաց Նիկոլետովը, և ինձ թվաց,  
վոր նրա համար ծանր ե խոսելը: — Յես գիտեմ, վոր յես... արդարացցի  
չեմ: Յես հեռանում եմ դպրոցից: Յես միասնական անհատակա-  
նը հասարակականից վեր դասեցի:

Քիչ մնաց լսց լինելի: Մեր խոսակցությունը դրանով ել վեր-  
ջացավ:


### 30 ոպուտով.

Յես ու Սիրիան կոմյերիտական ենք: Բոլոր մարմինները հաս-  
տանել են: Մեզ հանձնարարված և դպրոցում պիոններական փոր-  
պոստ կազմակերպել: Դա - մեր առաջին կուսարտականությունն ե:  
Եսոր վերջնականապես հայտնի յեղավ, զոր Ն. Պ. Աժեղովը հե-  
ռանում և դպրոցից: Յես նրա մոտ - բնակարանը կղնամ:

### 1 սեպտեմբերի.

Յես դպրոցական խորհրդի մեջ մտա Փորպոստի կողմից: Պիոններ-  
ներն ինձ ճոճում եյին: Ինչ-վոր բանի համար փոքր լերեխանները սի-  
րում են ինձ:


Կեցցե մեր Փորպոստը:





ԳԻՆԵ 80ԿՊԴ.





(604.)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գործ.



220038760

A

II  
38760

